





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

Л. Г. ДАНЕГЯН

ТРУД АРАКЕЛА ДАВРИЖЕЦИ КАК  
ПЕРВОИСТОЧНИК ПО ИСТОРИИ  
СЕФЕВИДСКОГО ИРАНА XVII ВЕКА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1978


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Լ. Գ. ԴԱՆԵՂՅԱՆ

ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ ԵՐԿԸ  
ՈՐՊԵՍ ՍԵՖՅԱՆ ԻՐԱՆԻ XVII ԴԱՐԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԱՔՅՈՒՐ

A  
61374

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1978



Աշխատությունը նվիրված է XVII դ. հայ պատմագրության խոշորագույն ներկայացուցիչ Առաքել Դավրիժեցու «Պատմության» ուսումնասիրությանը՝ իրանագիտական տեսանկյունից: Վեր է հանված սկզբնաղբյուրի կարևորությունը և գիտական արժեքը Իրանի XVII դ. առաջին վեց տասնամյակների քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության առանձին հարցերի լուսարանման համար: Պարսկալեզու պատմական երկերի, ինչպես նաև ռուսական, թուրքական, արևմտասեփրոպական և այլ աղբյուրների ու հետազոտությունների հետ բաղդատման միջոցով բացահայտված է այն նորը, որ բովանդակում է Դավրիժեցու երկը Իրանի պատմության, հայ-իրանական հարաբերությունների վերաբերյալ, տրված է ներշնչված շրջանի Իրանի պատմության մի շարք հարցերի հանդամանալից վերլուծությունը: Միաժամանակ ի հայտ են բերված այն անճշտությունները և միտումնավոր մոտեցման փաստերը, որոնք տեղ են գտել որոշ հեղինակների աշխատություններում տվյալ շրջանի Իրանի պատմության տարբեր հարցերի վերաբերյալ:

Պատասխանատու խմբագիր՝  
պատմ. գիտ. դոկտոր Վ. Ա. ԲԱՅՐՈՒՐԴՅԱՆ  
Գիրքը հրատարակության են երաշխավորել  
պատմ. գիտ. դոկտորներ Հ. Մ. ԵԳԱՆՅԱՆԸ և  
Հ. Դ. ՓԱՓԱՋՅԱՆԸ

10601  
Գ  $\frac{703}{021-78}$  41—77

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1978

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Սեֆյան հարստութեան տիրապետութեան ժամանակահատվածը (1502—1722) Իրանի պատմութեան հետաքրքիր շրջաններից է և շարունակ եղել է հետազոտութեան առարկա: Գրվել են մեծ թվով աշխատութիւններ՝ նվիրված այդ շրջանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմութեան տարբեր հարցերի ուսումնասիրութեանը: Այդուհանդերձ, նըշված հարյուրամյակների պատմութեան շատ հարցեր դեռևս կարոտ են գիտական սպառիչ լուսաբանութեան:

Սեֆյան Իրանի պատմութեան տարբեր բնագավառների մասին առկա են բազմաթիվ և բազմալեզու աղբյուրներ, որոնցից, սակայն, քչերն են գիտական մշակման ենթարկվել: Չնայած պատմութեան առանձին հարցերի միտումնավոր մեկնաբանութեանը, ինչպես պարսկալեզու պատմական երկերը (Հասան-բեկ Ռումլու, Մուհամմադ Յուսուֆ, Իսքանդար-բեկ Թուրքեման, Մուհամմադ Թահիր Վահիդ և այլն), այնպես էլ թուրքական աղբյուրները (Քյաթիբ Չելեբի, Մուստաֆա Նայիմա, Իբրահիմ Փեշևի և այլն) հսկայական փաստական նյութ են պարունակում և քննական հետազոտութեան դեպքում մեծ ավանդ կարող են մուծել Իրանի պատմութեան ուսումնասիրութեան գործում:

Արժեքավոր են նաև ռուս և արևմտաեվրոպական ճանապարհորդների, վաճառականների, դիվանագետների (Կոտով, Պիեդրո դելա Վալե, Տավերնյե, Գուվեա, Շարդեն, Օլեարիուս, Ռաֆայել դյու Ման և այլք) ուղեգրութիւնները: Չնայած փաստերի արտացոլման միակողմանիութեանը և, որոշ դեպ-

քերում, միտումնավորությանը, նրանցում ևս կարելի է գտնել մանրամասն ու կարևոր տվյալներ իրանի մասին:

Իբրև պատմական սկզբնաղբյուրներ՝ նշանակալի գիտական արժեք ունեն նաև մեզ հասած պարսկերեն արխիվային պաշտոնական փաստաթղթերը<sup>1</sup>, մասնավորապես պարսից շահերի հրովարտականները:

Իրանի պատմության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն նաև հայկական աղբյուրները (պատմական հրկեր, ժամանակագրություններ, օրագրեր, հիշատակարաններ և այլն), որոնց բնորոշ հատկանիշներից է օտար երկրների ու ժողովուրդների վերաբերյալ հարուստ նյութերի ընդգրկումը: Ղ. Ալիշանի արտահայտությամբ՝ «օտարք ոչ միայն նոր ծանօթութիւններ գտնեն մերայոց բով, այլ և իրենց արդէն ունեցածին լրումն և ուղղագրութիւն սխալանաց»<sup>2</sup>: Մյուս կողմից, դրանք զերծ են պալատական ներքողագրական պատմագրությանը բնորոշ թերություններից և կողմնակալությունից: Բնականաբար, հայկական աղբյուրների այս արժեքավոր կողմերը վաղուց ի վեր գրավել են ուսումնասիրողների ուշադրությունը, և այսօր հրապարակի վրա են մի ամբողջ շարք մենագրություններ ու հոդվածներ, որոնցում քննության են առնվում հայկական աղբյուրները տարբեր երկրների ու ժողովուրդների մասին (Վրաստան, Ադրբեջան, Լեհաստան, մոնղոլներ, Թուրքիա, Հնդկաստան, Բյուզանդիա և այլն), սակայն իրանն այդ տեսակետից մնացել է ստվերի մեջ: Մինչդեռ, որքանով հայ ժողովրդի պատմությունը սերտորեն առնչվում է իրանի պատմության հետ,

<sup>1</sup> Տե՛ս «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտականք», կազմեց՝ Հ. Դ. Փափազյան, պր. 1 (ԺԾ—ԺՁ դդ.), Երևան, 1956, պր. 2 (1601—1650 թթ.), Երևան, 1959 (այսուհետև՝ ՄՊ2), Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, II, Կալվածագրեր», պր. 1 (ԺԴ—ԺՁ դդ.), կազմեց՝ Հ. Դ. Փափազյան, Երևան, 1968, М. Хубуа, Персидские Фирманы и Указы Музея Грузии, I, Тбилиси, 1949; Персидские исторические документы в книгохранилищах Грузии, кн. I-вып. 1—3, Тбилиси, 1961—1965; Н. Busse, Untersuchungen zum islamischen Kanzleiwesen, Kairo, 1959 և այլն:

<sup>2</sup> Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, մասն Ա, էջ 14:

վերջինս պատշաճ արտացոլում է դեռել հայ մատենագրու-  
թյան մեջ՝ նրա սկզբնավորումից ի վեր:

Իրանի պատմության վերաբերյալ նյութերով առանձ-  
նապես հարուստ է XV—XVIII դդ. հայ պատմագրությունը:  
Զարարիա Քանաքեոցու, Գրիգոր Դարանաղցու, Զաքարիա  
Ազուլեցու, Աբրահամ Կրետացու, Աբրահամ Երևանցու, Սի-  
մեոն Երևանցու, Խաչատուր Զուղայեցու և այլոց երկերն  
աչքի են ընկնում ոչ միայն Իրանի պատմության վերաբերյալ  
նյութերի մեծ ծավալի ընդգրկմամբ, այլև տվյալների հա-  
վաստիությամբ և անաչառությամբ: Այդ հատկանիշները  
հիմք են տալիս վստահորեն հենվելու նշված աղբյուրների  
հաղորդումների վրա և նրանցով հավաստելու կամ հերքելու  
այլ աղբյուրների տվյալները:

Իրանի մասին հայկական աղբյուրների տեղեկություն-  
ների կարևորությունը նշում են նաև Իրանի պատմաբանները:  
Այսպես, Սաիդ Նաֆիսու կարծիքով Իրանի պատմությունը  
չի կարող գրվել առանց հայկական աղբյուրների<sup>3</sup>:

Այս բոլորով հանդերձ, Իրանի պատմության վերաբեր-  
յալ հայկական աղբյուրների հետազոտումը դեռևս հեռու է  
բավարար լինելուց<sup>4</sup>: Այդ իսկ պատճառով չափազանց կարե-  
վոր է Իրանի XVII դ. պատմության այնպիսի արժեքավոր  
սկզբնաղբյուրի ուսումնասիրությունը, ինչպիսին Առաքել  
Դավրիժեցու «Պատմությունն» է<sup>5</sup>:

<sup>3</sup> سعید نفیسی، منابع تاریخ ایران پیشی از اسلام و «Sb» مورخین آرمینی (مجله «شرق»، شماره دوم، دوره اول، ۱۳۰۹، ص ۷۸-۷۱)

<sup>4</sup> Կարելի է նշել այդ ուղղությամբ կատարված հատուկն ոչ մեծ ուսումնասիրություններ կամ թարգմանություններ, ինչպես՝ К. Патканов, Опыт истории династии Сасанидов по сведениям, сообщаемым армянскими писателями, СПб., 1863; С. Тер-Аветисян, Походы Тамас-Кули-хана (Надир-шаха) и избрание его шахом в описании Акопа Шамахеци, Тифлис, 1932; Թ. Ավգալբեկյան, «Աբ - ի - Գուրան ջրանցքը Պարսկաստանում ու համանուն արիքուրան հարկը (հայ աղբյուրների հա-մաձայն)» («Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1), Ռ. Տիտանյան, Վարդան Օձնեցին պարսիկների 1795—1797 թթ. Անդրկովկաս կատարած արշավանքի մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3):

<sup>5</sup> Այն հայտնի է նաև «Գիրք Պատմութեանց» և «Պատմագիրք» վերնագրերով:

Հայաստանի պատմութեանը նվիրված լինելով հանդերձ, այն հարուստ նյութ է պարունակում նաև մի շարք այլ երկրների, մասնավորապես Իրանի պատմութեան վերաբերյալ: Պատահական չէ, որ որոշ ձեռագրերում այս երկն անվանվում է «Պատմութիւն Պարսից թագաւորացն»<sup>6</sup>: Պատահական չէ նաև, որ Իրանին վերաբերող շատ ուսումնասիրութիւններում օգտագործվում են Դավրիժեցու տվյալները: Սակայն, նախ, դա արվում է միայն մասնակիորեն և, բացի դրանից, միշտ չէ, որ այդ տեղեկութիւնները վերցվում են ճշգրտորեն, որը և բացասաբար է անդրադառնում պատմիչի տվյալների վերլուծման վրա: Բոլոր այս հանգամանքները վաղուց ի վեր ստեղծել են Առաքել Դավրիժեցու երկն իրանագիտական տեսանկյունից հետազոտելու անհրաժեշտութիւն: Այդ նպատակը հետապնդելով, ներկա աշխատութեան մեջ փորձ ենք արել ի մի բերել և խմբավորել Իրանի քաղաքական ու սոցիալ-տնտեսական պատմութեան վերաբերյալ Դավրիժեցու տվյալները, վեր հանել նրանց գիտական արժեքը, պարզել նրանց հավաստիութեան աստիճանը և այլ աղբյուրների (մասնավորապես՝ հայկական, պարսկական, թուրքական, ռուսական, արևմտաեվրոպական ու վրացական) հետ բաղդատելու միջոցով ցույց տալ, թե ինչ նորութիւն են պարունակում այդ տվյալներն Իրանի նշված շրջանի պատմութեան լուսաբանման համար, որոշ դեպքերում Դավրիժեցու և այլ աղբյուրների օգնութեամբ հյուսելով Իրանի անցյալի առանձին էջերի պատմութիւնը: Դավրիժեցու տրվյալների այդպիսի համեմատական ուսումնասիրութիւնը կարևոր է առավելապես նրանով, որ հնարավորութիւն է ընձեռում բացահայտելու այլ աղբյուրներում առկա որոշ անճշտութիւններ և առանձին հեղինակների, մասնավորապես բուրժուական պատմագրութեան ներկայացուցիչների երկերում դրոււորված միտումնավոր մոտեցման փաստեր:

<sup>6</sup> Տե՛ս, օրինակ՝ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ՝ Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 2271, էջ 214ա (այսուհետև՝ Մատենադարան):

## ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑԻՆ ԵՎ ՆՐԱ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

XVII դարը հայոց պատմութեան մեջ ոչ միայն նշանա-  
վորվեց որպէս քաղաքական աղետալի անցքերի և խոշոր  
տնդաշարժերի փոթորկահուլզ ժամանակաշրջան, այլև բերեց  
տնտեսական ու մշակութային կյանքի որոշ աշխուժացում:  
Այս իմաստով XVII դարն անվանվում է հարաբերական  
վերանորոգման, վերակենդանացման դար, որին նախորդել  
էր ավերածութիւնների, սուլի, գերեվարութեան ամբողջ մի  
հարյուրամյակ. պատմաբեմ էին դուրս եկել երկու ասիական  
հզոր տերութիւններ՝ Սեֆյան Իրանն ու Օսմանյան Թուրքիան,  
որոնց միջև տասնամյակներ շարունակվող պատերազմական  
գործողութիւնների ընթացքում ավերվում էին Հայաստանի  
և հարևան երկրների ընդարձակ շրջաններ, իսկ բնակչու-  
թիւնը ենթարկվում կոտորածի, գերեվարութեան:

Սեֆեաների և օսմանցիների բախումը նոր ուժով  
բռնկվեց XVII դ. սկզբին, երբ Իրանը, հասնելով տնտեսական  
ու քաղաքական որոշակի վերելքի, նոր թափ հաղորդեց իր  
պայքարին ընդդեմ վաղեմի թշնամու Ռազմական գործողու-  
թիւնների թատերաբեմը կրկին Հայաստանն ու Ադրբեջանն  
էին:

Քաղաքական ու տնտեսական ծանր կացութիւնը իր  
կնիքն էր դնում կյանքի բոլոր բնագավառների վրա: Հա-  
յաստանում տիրապետում էր համատարած անկումային վի-

ճակ, ոչ միայն նյութական, այլև մտավոր աղքատություն, վանքերի, հետևապես և վանական դպրութեան օջախների ավերում ու ամայացում, ուսումնա-կրթական գործի կասեցում, պատմագրութեան ամլութիւն: XVI դարը շտապ ոչ մի պատմագիր. այդ շրջանի մասին մեզ տեղեկութիւն հաղորդող հայկական աղբյուրները մի քանի ժամանակագրութիւններ ու ձեռագրերի հիշատակարաններ են և չափածո գործեր, որոնք կցկտուր վկայութիւններ են տալիս երկրում տիրող անիշխանութեան և բնակչութեան ողբերգական վիճակի մասին:

XVII դ. առաջին տասնամյակներից այդ պատկերը որոշ շափով փոխվում է: Մի կողմից՝ անընդհատ փորձութիւններն ու կործանման վտանգը հայ ժողովրդի մեջ ուժեղացնում են ինքնապաշտպանութեան բնազդը և շարիքին դիմագրավելու ոգին, և այդ մղձավանջային դարաշրջանում հայ ժողովուրդը իր մեջ ուժ ու կորով է գտնում մտավոր վերածնութեան համար: Մյուս կողմից՝ ստեղծված համեմատաբար խաղաղ իրադրութիւնը (մասնավորապես 1639 թ. իրանա-թուրքական հաշտութեան պայմանագրից հետո) բարենպաստ պայմաններ է ստեղծում ինչպես քայքայված գյուղատնտեսութեան, արհեստագործութեան, առևտրի, քաղաքների վերականգնման, այնպես և հոգևոր կյանքի վերելքի համար: Սկսվում է կրթական ու մշակութային մի նշանակալից շարժում, որի առաջին կայծը Որոտանի ձորում Տաթևի վանքի մոտ 1610 թ. հիմնված հանրահռչակ Մեծ Անապատն էր կամ Սյունյաց դպրոցը: Չնայած իր կարճ կյանքին, այն պատմական մեծ դեր խաղաց, միաժամանակ դառնալով այլ կրթական հաստատութիւնների կորիզը:

Շուտով Սյունյաց դպրոցին է միանում Բաղեշի նորաստեղծ դպրոցը, ապա հաստատվում են նոր անապատներ, որտեղ անդուլ կերպով ուսումնասիրում էին հայ հին մատենագրութիւնը, ինչպես նաև արտաքին գիտութիւնները՝ քերականութիւն, տրամաբանութիւն, ճարտասանութիւն, փիլիսոփայութիւն:

Դպրոցներ են հիմնվում ոչ միայն Հայաստանում, այլև հարևան երկրների հայաշատ կենտրոններում: Ուշադրության արժանի է հաշատուր Կեսարացի և Սիմեոն Զուղայեցի վարդապետների հիմնադրած դպրոցը Նոր Զուղայում, որը հաստատվեց Ամենափրկիչ վանքում և հսկայական հասարակական դեր խաղաց, մասնավորապես պայքարելով կաթոլիկ բարոզիչների, հայերի մեջ կաթոլիկություն տարածելու ուղղությամբ նրանց ծավալած գործունեության դեմ:

Խոշոր նշանակություն է ունենում հայ ժողովրդի հոգեվոր կենտրոնի՝ Էջմիածնի դիրքի ամրապնդումը: Երկրի տնտեսական կյանքի վերելքի շնորհիվ աշխուժանում է վանական տնտեսությունը, վերանորոգվում է Էջմիածինը, ընդարձակվում նրա կալվածքային տնտեսությունը, ամրապնդվում են նրա ինքնավարական, վակֆային հողատիրական և այլ իրավունքները:

Ի վերջո, կրթական-մշակութային կյանքի վերելքի պայմաններում աշխուժանում է ձեռագրերի ընդօրինակման գործը, ինչպես նաև վերակենդանանում է հայ պատմագրությունը ի դեմս Առաքել Դավրիժեցու:

Այս պայմաններում Դավրիժեցի պատմագրի ծնունդը օրինաչափ ու անհրաժեշտ երևույթ էր, և նրա «Պատմությունը» օրգանական շարունակությունն էր սկսված նորոգություն:

XVII դ. հանդես եկան նաև այլ պատմիչներ ու ժամանակագիրներ, սակայն նրանց երկերը ո՛չ բովանդակությամբ և ո՛չ մասնավանդ իրենց պատմագրական արժանիքներով չկարողացան հասնել Դավրիժեցու երկի մեծությանը: Դավրիժեցին հղավ հայ միջնադարյան հարուստ պատմագրության վերջին խոշոր երախտավորը:

\* \* \*

Առաքել Դավրիժեցու կենսագրությունից քիչ բան է մեզ հայտնի: Նրա կյանքի և գործունեության մասին որոշ տեղեկություններ են պարունակում իր իսկ հիշատակարանը, «Պատմությունը», ինչպես նաև մի քանի այլ աղբյուրներ:

Պատմիչի ծննդյան թվականը հայտնի չէ<sup>1</sup>: Պարզ է, միայն, որ նա ծնվել է XVI դ. վերջին: Դա ակնհայտ է նրա հիշատակարանից, որից տեղեկանում ենք, որ նա իր «Պատմությունը» գրել է շատ ծեր հասակում, երբ «ի լուսոյ աչքս պակասեալ և ի պնտութենէ ձեռքս թուլացեալ դողայր...»<sup>2</sup>: Նույն միտքը հեղինակը հայտնում է Մ (50-րդ) գլխում, որտեղ նորից գանգատվում է ծերությունից ու հայտնում, որ ինքը կարելույն չափ աճապարում է, որպեսզի գործն անավարտ չմնա<sup>3</sup>: Դա վերաբերում է 1651—1662 թթ., երբ, նույն հիշատակարանի վկայությամբ, գրվել է «Պատմությունը»: Հետևաբար, հեղինակը պետք է ծնված լինի XVI դ. վերջին:

Պատմագրի ծննդավայրը Ատրպատականի Թավրիզ (Դավրեժ) քաղաքն է<sup>4</sup>: Իր ընտանիքի մասին Դավրիժեցին ոչինչ չի հիշատակում: Մեծացել և սովորել է էջմիածնում, որտեղ և հիմնականում ապրել ու գործել է: Հիշատակարանը նաև վկայում է, որ պատմիչը եղել է Փիլիպոս կաթողիկոսի (1633—1655) աշակերտը<sup>5</sup>: Այդ մասին հիշատակվում է նաև «Պատմության» լԲ (32-րդ) գլխում: Այստեղից իսկ տեղեկանում ենք նաև, որ պատմիչի աշակերտն է եղել Վարդան

<sup>1</sup> Մեր որոնումները ևս ապարդյուն եղան. ոչ մի սկզբնաղբյուրում հնարավոր չեղավ գտնել Դավրիժեցու ծննդյան ստույգ թվականը:

<sup>2</sup> «Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցոյ», Վաղարշապատ, 1896, էջ 671 (այսուհետև՝ Դավրիժեցի):

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 562:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 668. այդ է վկայում նաև հեղինակի անվանումը՝ Դավրիժեցի:

<sup>2</sup> Աճառյանի հաղորդմամբ՝ Առաքել վարդապետի տունը և գերդաստանի շառավիղներից մնում են մինչև այժմ Թավրիզում (Ղալայի Ս. Աստվածածին և կեղեցու նրբանցքում) և կրում «Պատմագրյան» ազգանունը (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 216, հմմտ. Հ. Առաքելյան, Պարսկաստանի հայերը: Նրանց անցյալը, ներկան և ապագան, մասն Ա, Վիեննա, 1911, էջ 20):

<sup>5</sup> Դավրիժեցի, էջ 668:

Մակվեցին: 1636—1637 թթ. Դավրիժեցին եղել է Հովհաննավանքի առաջնորդը<sup>6</sup>:

Դավրիժեցին իր ժամանակի ուայալ անձնավորություններից էր: Այդ են վկայում և՛ նրա ժամանակակիցները, և՛ նրա երկրը: Վերջինիս մեջ հաճախակի արվող պատմական էքսկուրսիաները և համեմատությունները խոսում են հեղինակի լայն մտահորիզոնի և մեծ պատրաստության մասին: Ժամանակի գիտության ու արվեստի մասին հեղինակի տված տեղեկություններից երևում է, որ նա քաջատեղյակ է եղել դրանց և թարգմանաբար կարդացել է արժեքավոր երկեր, որոնց մեջ՝ «յոյժ համեղ և ախորժ» գրքեր<sup>7</sup>:

Զաքարիա Քանաքեռցու վկայությամբ բանիմաց վարդապետներից էր «Թաւրիզեցի Առաքեալ վարդապետն՝ որ տեղեակ էր ամենայն պատմագրաց, որ և արար զպատմութիւնս աւերման աշխարհիս Արարատեան ի մեծ Շահ-Աբասէն...»<sup>8</sup>: Նույնն է վկայում և Դավիթ Բաղիշեցու «Ժամանակագրությունը», որտեղ Հակոբ Զուղայեցու կաթողիկոսության օրոք էջմիածնի միաբանների շարքում նշվում է նաև Առաքել Դավրիժեցու անունը և ավելացվում. «Սոքա ամենեքեան սիւնք եկեղեցոյ և անօթք հոգոյն սրբոյ, անյաղթ փիլիսոփայք»<sup>9</sup>:

Ստեփանոս Լեհացին իր թարգմանություններից մեկի հիշատակարանում գրում է. «...Զայնու ժամանակաւ բազումք էին երեւելիք վարդապետք, քաջաբանք, բանաստեղծք, աստուածային գրոց քաջ գիտունք եւ հմուտք, յորոց մի էր եւ

<sup>6</sup> Զաքարիա Քանաքեռցու այս վկայությունը Մատենադարանի մի շարք ձեռագրերում ի հայտ է բերել Մ. Օ. Դարբինյանը (տե՛ս Закарий Канакерци, Хроника, пер. с арм., предисл. и коммент. М. О. Дарбинян-Меликян, М., 1969, стр. 263).

<sup>7</sup> Դավրիժեցի, էջ 409:

<sup>8</sup> «Զաքարիայ Սարկաազի Պատմագրութիւն», հ. 9, Վաղարշապատ, 1870, էջ 4 (այսուհետև՝ Զաքարիա Քանաքեռցի):

<sup>9</sup> Տե՛ս «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, հ. II, Երևան, 1956, էջ 361:

Առաքեալ վարդապետն քաջ րաբունի եւ վիպասան, որ զժամանակագրութիւնս հայրապետաց եւ թագաւորաց գեղեցկայարմար բանիւք դրոշմեաց եւ իւր յիշատակ անշնչելի եթող»<sup>10</sup>:

«Պատմությունից» կարելի է քաղել շատ փաստեր, որոնք վկայում են, որ պատմիչն իր կյանքի ընթացքում քիչ չի ճամփորդել և՛ որպես նվիրակ, և՛ իր երկը գրելու նպատակով: 1658 թ. նա եղել է Հակոբ Զուղայեցի կաթողիկոսին ուղեկցողների թվում, որը Սպահան էր մեկնել՝ նվիրակության: 1645-ին Դավրիժեցին ուղարկվել է «յաշխարհն Յունաց»՝ իբրև նվիրակ<sup>11</sup>: Ըստ «Պատմության» տվյալների, Դավրիժեցին եղել է Նախիջևանում, Ամասիայում, Սեբաստիայում, Սպահանում և Զուղայում, Ուոհայում, Անկյուրիայում, Հալեպում, Երուսաղեմում, իր խոսքերով ասած՝ «յամենայն քաղաքս և ի գիւղս, եթէ յարեւից և թէ յարեւմտից»<sup>12</sup>: Այդ ճամփորդությունների ընթացքում պատմիչը գրի էր առնում իր տեսածը: Նկատի ունենալով Դավրիժեցու հեղինակությունն ու պատրաստվածությունը, Փիլիպոս կաթողիկոսը նրան հորդորել է գրել ժամանակի իրադարձությունների մասին: Դավրիժեցին սկզբից խուսափել է նման դժվարին ձեռնարկումից, սակայն, ի վերջո, հանձն է առել և 1651—1662 թթ. (3 տարվա ընդմիջումով)<sup>13</sup> գրել իր «Պատմությունը»: Այն մասին, որ երկը գրվել է 11 տարվա ընթացքում, հեղինակը նշում է «Պատմության» 50-րդ գլուխում, որտեղ կարդում ենք. «...Արդէն ի մետասան ամն մտի, որ աշխատիմ ի վերայ այսր պատմագրիս, վասն զի հարիւր թուին (1651) սկիզբն արարի գրել, և արդ ի հարիւր

<sup>10</sup> Տե՛ս «Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց Վիեննա», կազմեց՝ Յ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 716:

<sup>11</sup> Դավրիժեցի, էջ 414:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 416:

<sup>13</sup> Սկսած 1655 թ., երբ Փիլիպոս կաթողիկոսը վախճանվում է, Դավրիժեցին, հուսահատվելով դժվարություններից, դադարում է գրել, սակայն 1658-ին, արդեն Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի հրամանով, պատմիչը շարունակում է անավարտ գործը:

և ի տասն և մէկ թիւն (1662) մտի, և տակաւին աշխատիմ ի վերայ սորա»<sup>14</sup>: Իսկ հիշատակարանը որոշակիորեն վկայում է, որ գրքի շարադրումն ավարտվել է 1662 թ.<sup>15</sup>: Նկատենք, սակայն, որ Դավրիժեցու երկում կան տեղեկություններ՝ գրված 1662-ից հետո, քանի որ դրանք վերաբերում են այդ թվականին հաջորդող տարիներին<sup>16</sup>: Ենթադրում ենք, որ նման տեղեկություններն ավելացվել են «Պատմության» ավարտից հետո, և որ այդ գործում հեղինակի մասնակցությունը բացառված չէ:

Երկի մի մասը գրվել է, ինչպես նշվեց, հեղինակի շրջագայությունների ընթացքում, բայց սկիզբը և վերջը՝ էջմիածնում:

«Պատմությունը» գրելու դրդիչ մեծ ուժ է եղել հեղինակի ձգտումը՝ գալիք սերունդներին պատմելու հայ ժողովրդի ծանր ճակատագիրը, նրա առօրյան, մաքառումներն ու հարատևելու տենչը: Հայ ժողովրդի անլուր տառապանքներին ակնատես պատմիչը շի կարողացել չարձագանքել և գրի չառնել «ղաւերս Հայաստան աշխարհին, և զնուաղիւն մերոյս ազգին, և զչարութիւն մահմետականաց...»<sup>17</sup>:

Այդ է պատճառը, որ տարիների հոգնատանջ աշխատանքը և բազմաթիվ դժվարությունները չեն կասեցրել հեղինակի ջանքերը՝ ավարտի հասցնելու նվիրական գործը, դրան տրամադրելով անգամ սեփական միջոցները<sup>18</sup>: Նույնիսկ աշխատության ավարտից հետո էլ հեղինակը ջանասիրաբար հոգացել է, որպեսզի այն բազմացվի, այդ գործին օժանդակելով և՛ նյութապես, և՛ բարոյապես: «Պատմության» 1666 թ. ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում կարդում ենք, որ ձեռագիրն ընդօրինակվել է «հոգաբարձութեամբ, ծախիւք և արդեամբ» Առաքեալ վարդապետի, որ է նոյն ինքն այս պատմագրքիս շինողն և արարողն, ... որ յո-

<sup>14</sup> Դավրիժեցի, էջ 562:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 670:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 585, 650, 665:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 669:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 670:

լով ջանիւ և բազում հոգաբարձութեամբ ծախէ ինչս և ձե-  
ռամբ գրչաց գրել տայ»<sup>19</sup>:

«Պատմութիւնից» բացի Դավրիժեցու գրչին են պատ-  
կանում նաև տաղեր. «Տաղ վասն մահրամայի»՝ գրված  
1653 թ. և «Տաղ անուշ և գեղեցկազան», երկուսն էլ կրոնա-  
կան բովանդակութեամբ<sup>20</sup>: Դավրիժեցին վախճանվել է  
1670 թ.՝ էջմիածնում: Այդ է վկայում Մայր Աթոռի միաբա-  
նութեան գերեզմանատանը գտնվող նրա տապանաքարը, որի  
վրա գրված է. «Պատմագիրն այս է տապան Առաքել վար-  
դապետին ՌՃԺԹ (1670) թուին»:

\* \* \*

Դավրիժեցու երկը բաղկացած է 56 գլխից և մի քանի  
չհամարակալված գլուխներից<sup>21</sup>: Այն սկսվում է հեղինակի  
փոքրիկ նախադրութեամբ և ավարտվում «Պատմութիւնն»  
ընդօրինակողների երկու հիշատակարանով: Բացի առան-  
ձին դեպքերից (օրինակ՝ XVII դ. սկզբի քաղաքական անցու-  
դարձերի պատմութիւնը), երկում ժամանակագրական  
կարգը չի պահպանված: Նյութերը որոշ չափով խմբավորված  
են: Այսպես՝ XVII դ. առաջին կեսի քաղաքական դեպքերի  
նկարագրութեանը նվիրված են առաջին 8 գլուխները, որոնց  
հաջորդում է վրաստանի հետ կապված իրադարձութիւննե-  
րը՝ ընդգրկող 4 գլուխ. կամ՝ միմյանց հաջորդող 5 գլուխնե-  
րում տրվում են նահատակութիւնների դեպքերը և այլն:  
Սակայն դա միայն մասնակի սիստեմավորում է, քանի որ  
որոշակի հարցի նվիրված գլխում կարելի է գտնել այդ  
հարցի հետ ամենևին առնչութիւն չունեցող փաստեր. մյուս  
կողմից, միևնույն խնդրին վերաբերող փաստերը երբեմն

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 673, հմմտ. Մ. Պոտոույան, Հայ հանրագիտակ, հ. Ա, Բուխարեստ, 1938, էջ 213:

<sup>20</sup> Դավրիժեցու այս տաղերի ձեռագրերի և տարբեր հրատարակութիւն-  
ների մասին տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտութիւն, հ. Ա, Երևան, 1959, էջ 1152—1153:

<sup>21</sup> Խոսքը 1896 թ. հրատարակութեան մասին է: «Պատմութիւնն»  
հրատարակութիւնների և ձեռագրերի տարբերութիւնների մասին տե՛ս  
ստորև:

սփռված են գրեթե ողջ գրքով մեկ: Ըստ երևույթին, հեղինակի համար շահազանց դժվար է եղել տարբեր տարիներին ու զանազան վայրերում ժողոված փաստերն ի մի բերել ու խմբավորել և այդ պատճառով նա չի կարողացել խուսափել նյութի ցրվածությունից և որոշ կրկնություններից:

Իրանի վերաբերյալ տեղեկությունները տրված են ինչպես առանձին գլուխներով, այնպես էլ զանազան հարցերին նվիրված գլուխներում՝ այլ տվյալների հետ միախառն:

«Պատմության» մեջ տեղ են գտել նաև այլ հեղինակների պատկանող գլուխներ ու հատվածներ: ԾԴ (54-րդ) գլուխը, որ վերնագրված է «Պատմութիւն Աղուանից աշխարհին արարեալ Սարեցի Յովհանէս վարդապետին», Հովհանիսիկ Սարեցու XVI դ. անխորագիր ժամանակագրությունն է, որի ձեռագրերն այժմ պահվում են Մատենադարանում<sup>22</sup>:

Թանկարժեք քարերին նվիրված ԾԴ (53-րդ) գլխի մի մասի<sup>23</sup> հեղինակն է ոմն հալեպցի հայ քահանա՝ Սարգիս անվամբ,՝ ակնագործ և ակնավաճառ, որ տիրապետում էր մի քանի լեզուների և Դավրիժեցու խնդրանքով շարադրել է իր իմացածը թանկարժեք քարերի վերաբերյալ: Այս հատվածը, ինչպես և սույն գլխի շարունակությունը, որը նույնպես թանկարժեք քարերին է վերաբերում, Դավրիժեցիին զետեղել է իր գրքում «վասն օգտի ընթերցողաց, ի փառս Աստուծոյ»<sup>24</sup>:

Ծ (50-րդ) գլուխը<sup>25</sup> նույնպես այլ հեղինակի՝ Կոստանդնուպոլսի մեծ հրդեհի ականատես Ստեփանոս վարդապետի գրչին է պատկանում:

Դավրիժեցունը շէ նաև ԼԲ (32-րդ) գլխին հաջորդող՝ «Այլ եւս կարգ վարդապետաց» վերնագրով հատվածը, քանի որ այստեղ վարդապետների անունների շարքը վերջանում է


<sup>22</sup> Այս ժամանակագրության համեմատական բնագիրն ու նրա հեղինակի մասին մանրամասն տեղեկությունները տես «Մանր ժամանակագրություններ», Վ. II, էջ 235—239:

<sup>23</sup> «Վասն անուանց և որպիսութեանց պատուական ականց»:

<sup>24</sup> Դավրիժեցի, էջ 596:

<sup>25</sup> «Յաղագս մասնական հրկիզութեան, որ եղև Կոստանդնուպոլսի մեծ քաղաքին»:

A 61374



հետևյալ խոսքերով. «Եւ ես նուաստ Կարապետ բանի սպասաւոր Բաղիշեցի ի գեղջէն Փարխնդոյ...»<sup>26</sup>:

Այլ հեղինակների գրչին պատկանող նյութեր օգտագործելիս Դավրիժեցին ընդհանրապես բարեխղճորեն նշում է նրանց անունները, հաճախ նույնիսկ որոշ տեղեկություններ հաղորդելով նրանց մասին: Այս հանգամանքը թույլ է տալիս ենթադրելու, որ գրքում հեղինակի իմացությամբ մուծված անհարազատ այլ գլուխներ թերևս չկան:

Որոշ հետազոտողներ այլ հեղինակի են վերագրում նաև ԾԵ (55-րդ) գլխին հաջորդող կեղծ մեսիա Սաբեթայի պատմությունը<sup>27</sup>: Անվիճելի է, որ այդ գլուխն ավելացվել է «Պատմության» ավարտից հետո, այն պարզ պատճառով, որ նրանում հիշատակվում են 1667 թ. դեպքեր: Սակայն մի շարք հանգամանքներ, որոնց մասին նշվում է «Պատմության» 3-րդ հրատարակության առաջաբանում, խոսում են այն ենթադրության օգտին, որ սույն գլխի հեղինակը Դավրիժեցին է<sup>28</sup>:

Դավրիժեցին տվել է 60 տարվա պատմություն՝ (1602—1662 թթ.): Սակայն, ինչպես ասվեց, գրքում հանդիպում ենք և ավելի ուշ, ինչպես նաև առավել վաղ շրջանի վերաբերյալ տեղեկությունների: Դավրիժեցու երկի ամենավաղ շրջանի տեղեկությունը վերաբերում է 561 թ., իսկ ամենաուշ շրջանինը՝ 1668 թ.<sup>29</sup>:

<sup>26</sup> Դավրիժեցի, էջ 441:

<sup>27</sup> «Պատմութիւն անցից հրէից ազգին և Սապէթայ անուն շատին, որ ասէր թէ ես եմ Քրիստոսն փրկիչ հրէից ազգին...»:

<sup>28</sup> Տե՛ս Դավրիժեցի, էջ Ը: Ավելացնենք, որ Դավրիժեցին այս գլխում հաղորդում է Սաբեթայի՝ հրեաներին ուղղված շրջաբերական նամակի մասին, նշելով, որ այն հայերեն է թարգմանվել «ձեռամբ ունեմ ճարտար դպրի Երեմիա կոչեցելոյ» (էջ 659), իմա՝ Երեմիա Քյոմուրճյանի, որի հեղինակությամբ լույս տեսած գրքույկը Սաբեթայի մասին (տե՛ս Է. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961, էջ 44) թերևս աղբյուր է ծառայել Դավրիժեցու համար:

<sup>29</sup> Գ. Զարբհանայանի «Պատմութիւն հայերէն դպրութեան» աշխատության մեջ (հ. Բ, Վենետիկ, 1878) նշված է (էջ 176), որ Դավրիժեցու «Պատմության» մեջ դեպքերը հասցվում են մինչև 1692 թ.: Հավանաբար դա տպագրական սխալ է:

Հայ ժողովրդի XVII դ. առաջին կեսի պատմութեանը նվիրված լինելով հանդերձ, Դավրիժեցու երկն ընդգրկում է սովյալների շատ ավելի լայն շրջանակ, որը մեզ իրավունք է տալիս այդ աշխատութունը դիտելու որպես սկզբնաղբյուր ոչ միայն Հայաստանի, այլև Ադրբեջանի, Վրաստանի և հատկապես Իրանի ու Թուրքիայի, ինչպես նաև լեհահայ գաղութի պատմութեան տարբեր հարցերի վերաբերյալ:

Բնականաբար, «Պատմութունն» առաջին հերթին բովանդակում է հայ ժողովրդի վիճակի նկարագրերը. մեկը մյուսին հաջորդող արհավիրքների, շահ Աբբաս Ա-ի և Ջղալօղլի Սինան-փաշայի արշավանքների, ժողովրդի զանգվածային տեղահանութեան, ապա այդ բոլորի հետևանքը հանդիսացող համատարած սովի և հայոց ազգային-եկեղեցական կենտրոնի՝ էջմիածնի, անկումային վիճակի սրտաշարժ պատմութունը: Ապա գալիս են լուսավոր էջեր. «Նորոգութունն». այդպես է անվանում պատմիչը հայ հոգևոր կյանքի աշխուժացումը և նոր սկսված մտավոր-մշակութային շարժումը, պատմելով մասնավորապես էջմիածնի կաթողիկոսարանի վերելքի, ծայր առած շինարարական աշխատանքների, գրական-կրթական շարժման մասին: Երկում մանրամասն տեղեկութուններ են հաղորդվում նաև տարբեր երկրներում (Իրան, Թուրքիա, լեհաստան) գտնվող հայկական համայնքների մասին, ընդգծելով հատկապես այդ պետութունների վարած քաղաքականութունը ազգային փոքրամասնութիւնների նկատմամբ:

Առանձին բաժին է հատկացված մահմեդականների կողմից պարտադրվող հավատորացութեանը և այդ հողի վրա տեղի ունեցող նահատակութիւնների հրաշապատում նկարագրութեանը:

Դավրիժեցու երկը արժեքավոր աղբյուր է նաև XVI դ. վերջին և XVII դ. սկզբին Թուրքիայում ծայր առած՝ ջալալիների հզոր շարժման ուսումնասիրութեան համար և տալիս է հանգամանալից տեղեկութիւններ ապստամբ փաշաների,

ջալալիական շարժումների տարածման վայրերի ու ժամանակի և այն հետևանքների մասին, որ ունեցան դրանք աշխատավորական զանգվածների համար:

«Պատմութիւնը» պարունակում է պարսից շահերի և օսմանյան սուլթանների ժամանակագրութեան՝ «ազգաբանութեան» մի քանի համառոտ տարբերակներ:

Երկն աչքի է ընկնում տվյալների բազմազանութեամբ, որտեղ պատերազմական գործողութիւնների, երկրի ներքին վիճակի, տիրակալների քաղաքականութեան կողքին տեղեկութիւններ են հաղորդվում քաղաքների, արհեստների, ժողովրդի կենցաղի ու սովորութիւնների, տարբեր գործիչների կյանքի, թանկարժեք քարերի, բնութեան երևութիւնների և այլ՝ ամենատարբեր հարցերի մասին, ընդգրկելով նաև հրաշապատում զրույցներ ու առասպելներ:

Իրանի պատմութեան մասին Դավրիժեցու տեղեկութիւնները վերաբերում են ինչպես քաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական կյանքին: «Պատմութեան» մեջ լայնորեն արտացոլված են XVII դ. սկզբին ծավալված իրանաթուրքական պատերազմների մանրամասնութիւնները, որոնց նկարագրութեան ընթացքում հեղինակն անդրադառնում է ոչ միայն հայ, այլև հարևան ժողովուրդների աշխատավորական զանգվածների վիճակին. մի հանգամանք, որով Դավրիժեցին բարձր է դասվում մյուս՝ մասնավորապես պարսիկ և թուրք պատմագիրներից, որոնք մեծ մասամբ նկարագրում են թագավորների արշավանքները, տարած հաղթանակները, չհիշելով կամ միայն թուցիկ կերպով հիշելով պատերազմներից տուժող ժողովրդական լայն զանգվածների կրած տառապանքները: Դավրիժեցու երկում համեմատաբար թույլ են արտացոլված իրանի սոցիալ-տնտեսական կյանքին վերաբերող հարցերը, որոնք արժարժված են միայն հարևանցիորեն, քաղաքական անցուդարձերի նկարագրութեանն առընթեր: Այսուհանդերձ, «Պատմութեան» տվյալները իրանի քաղաքների, արհեստների, շահի պալատի, վարչական և հարկային սիստեմների ու հարակից այլ հարցերի վերաբերյալ զուրկ չեն կարևորութիւնից:

Դավրիժեցիին մեծ ուշադրութիւնն է նվիրում իրանահայ, գաղութի կյանքի պատկերմանը, նկարագրելով ինչպես ժողովրդական զանգվածների, այնպես էլ բարձրաստիճան հոգևորականութեան ու խոջայութեան վիճակը, նրանց դերը իրանի հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքում, մասնավորապես հայ առևտրական դասի ակտիվ գործունեութիւնը, նրա փոխհարաբերութիւնները կառավարող շրջանների հետ, ապա վերջիններիս քաղաքականութիւնը հայ աշխատավորական զանգվածների նկատմամբ:

\* \* \*

Դավրիժեցիին իր նկարագրած դեպքերի մեծ մասի ժամանակակիցն ու ակնատեսն է եղել: Նախ դրանում է նրա երկի մեծ արժեքը: Իր պատմութեան հավաստիութիւնը շեշտելու մտահոգութեամբ նա հարկ է համարել հաճախ ընդգծել՝ «տեսաբ աշօք մերովք» և կամ՝ «պարտ վարկանիմ մեզ ակնատես եղելոցս ոչ զանց առնել...»<sup>30</sup>:

Դեպքերի մի մասն էլ պատմիչը շարադրել է ըստ ակնատեսների կամ դեպքերի անմիջական մասնակիցների պատմածների, որոնք, ինչպես ասվեց, գրի է առել իր շրջագայութիւնների ժամանակ: Դավրիժեցիին արձանագրել է թուրք-պարսկական պատերազմների սարսափը տեսած, սովի, գաղթի և զանազան այլ աղետների ենթարկված մարդկանց անմիջական, դեռևս թարմ հիշողութիւններն ու տպավորութիւնները:

«Պատմութեան» մեջ հաճախակի են այսպիսի հավաստիացումները՝ «զոր տեսողքն պատմեցին ինձ» կամ՝ «զոր ինչ լուար յակնատես պատմողաց՝ զայն գրեմք»<sup>31</sup>: Այս հանդամանքը հիմք է տալիս վստահութեամբ ընդունելու Դավրիժեցու հաղորդումները: «Նրա մէջ (Դավրիժեցու «Պատմութեան» — Ն. Դ.) հաղորդուած փաստերին մենք պետք

<sup>30</sup> Դավրիժեցի, էջ 213, 409...

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 89, 86:

է ամենայն վստահութեամբ հաւատ ընծայենք,—գրում է Ն. Առաքելյանը,—որովհետեւ ինքը պատմագիրը կա՛մ ականատես է եղել, կա՛մ լսել է ականատեսներէց»<sup>32</sup>:

Դավրիժեցիին օգտագործել է նաև գրավոր աղբյուրներ՝ ավետարանների, ճաշոցների, հայսամվուրքների հիշատակարաններ, կոնդակներ, պատմական երկեր, կրոնական-դավանաբանական գործեր: «Այլ և յամենայն եկեղեցիս՝ ուր և պատահէաք,—գրում է հեղինակը,—զամենայն գրոց անդրէն եղելոց գլխատակարանսն ընթեռնուաք»<sup>33</sup>: Դավրիժեցիին մեջ է բերում Թավրիզում, Սպահանում, Սեբաստիայում, Չհարմըհալի Վաստիկան գյուղում, Ուռհայում, Անկյուրիայի Սուրբ Հոգի եկեղեցում և այլուր գտնված հիշատակարաններ:

Հեղինակը գրավոր աղբյուրներից ոչ բոլորն է օգտագործել, զի մի դուցէ լիցի երկարութիւն բանիցն, ձանձրութիւն ընթերցողացն...»<sup>34</sup>:

Մի քանի հիշատակությունից երևում է, որ Դավրիժեցուն լավ ծանոթ են եղել նաև Հովհան Օձնեցու (VIII դ.) և Թովմա Մեծոփեցու (XV դ.) գործերը<sup>35</sup>:

Իրանին վերաբերող տեղեկությունների մեծ մասը պատմիչը գրել է կա՛մ ականատեսների հաղորդումների, կա՛մ անձնական հիշողությունների հիման վրա: Երբեմն օգտագործել է նաև գրավոր աղբյուրներ, մասնավորապես Սպահանում գտնված հիշատակարաններ:

Արդյոք Դավրիժեցիին օգտվե՞լ է պարսից պալատական պատմիչ Իսֆանդար-բեկ Թուրքեմանի (Մունշու) «Աբբասյան աշխարհազարդ պատմությունը» գործից, որը գրվել է դեռևս

32 Ն. Առաքելյան, նշվ. աշխ., մասն Ա, էջ 20:

33 Դավրիժեցի, էջ 416:

34 Նույն տեղում, էջ 426: Ռուբեն վարդապետի «Առաքել Դավրիժեցի» հոդվածում թյուրիմացաբար նշվում է, թե Դավրիժեցին շունեք Բենքի տակ որևէ գրական հիշատակարան, որևէ պատմական աղբյուր, գեթ դեպքերի ժամանակագրութուն կամ որևէ ուղեցույց» (տե՛ս «Էջմիածին», 1944, № 10—12, էջ 39):

35 Տե՛ս Դավրիժեցի, էջ 299, 325....:

շահ Աբրահամ Ա-ի (1537—1629) կենդանության օրոք, և որի հաղորդած փաստերից շատերը նույնությամբ համընկնում են Դավրիժեցու տվյալների հետ: Վերջին հանգամանքը որոշ հետազոտողների հիմք է տվել հնարավոր համարելու, որ Դավրիժեցին օգտվել է Իսբանդար Մունշու երկից: Գոյություն ունի և հակառակ կարծիքը, որը, սակայն, հայտնվում է սոսկ իբրև ենթադրություն և կամ որպես ապացույց նշվում է Դավրիժեցու պարսկերեն շիմանալը<sup>36</sup>: Իրոք, ոչ մի փաստ չի վկայում, որ Դավրիժեցին պարսկերեն է իմացել: Ոչ մի հիմք չունենք նաև ենթադրելու, թե պատմիչը պարսկերենին տիրապետող թարգմանիչ է ունեցել:

Կան, սակայն, առավել խոստով փաստեր, որոնք թույլ չեն տալիս տվյալների նույնության հիման վրա կապ տեսնելու Դավրիժեցու և Իսբանդար Մունշու միջև: Միևնույն փաստերի հաղորդման ու մեկնաբանման մեջ Դավրիժեցին միանգամայն ուրույն է. ըստ որում, ոչ միայն այն դեպքերում, երբ կարող է խոսք լինել Իսբանդար Մունշու միտումնավոր մոտեցման և այն մասին, որ Դավրիժեցին, թերևս տեղեկությունը վերցնելով Մունշուց, յուրովի է մեկնաբանում այն (օրինակ. հայերի դաղթի և կամ նրանց բռնի մահմեդականացման փաստերը կան և՛ մեկ, և՛ մյուս պատմիչի մոտ, սակայն բոլորովին տարբեր գույներով)<sup>37</sup>, այլև այն ժամանակ, երբ տվյալները, այսպես ասած, շեղոք են, և ոչինչ չէր խանգարի Դավրիժեցուն՝ Մունշուց վերցնելու դրանք: Այսպես, երկու պատմիչներն էլ հաղորդում են ջալալիների մասին, հիշատակելով միանման շատ փաստեր: Դավրիժեցին ջալալիների առաջնորդների անունները թվելիս գրում է. «Թաուլն

<sup>36</sup> Տե՛ս Н. Пигулевская [и др.], История Ирана с древнейших времен до конца XVIII в., Л., 1958, стр. 270; Կ. Կուցիա, «Թարիխ-ե ալամ արայ-ե Աբրահի» (Մերձավոր Արևելքի պատմության հարցեր) (Վրացերեն), Թբիլիսի, 1963, էջ 236):

<sup>37</sup> Տե՛ս «اسکندر بیگ ترکمان (منشی)»، تاریخ عالم آرای عباسی، ۹۷۱-۹۷۰، ۶۶۶-۶۶۷، ۱۳۳۰ ج ۲، تهران، (اسکندر منشی (այսուհետև) «اسکندر منشی»)، ۹۷۱-۹۷۰، ۶۶۶-۶۶۷، ۱۳۳۰ ج ۲، تهران، (այսուհետև) «اسکندر منشی»)، ۹۷۱-۹۷۰، ۶۶۶-۶۶۷، ۱۳۳۰ ج ۲، تهران، (այսուհետև) «اسکندر منشی»):

ԺԲԻ (12000) մարդով ՌՄԲ<sup>38</sup> (1603) թուին ապստամբեցաւ Այս Թաւուլիս եղբայրն՝ զորոյ անունն ո՛չ գտաք<sup>39</sup>: Եթե պատմիչն օգտված լիներ Մունշու գործից, ապա կիմանար, որ Թավուլի<sup>40</sup> եղբայրը Մուհամմադ-բեկն էր, որը 2—3 հազար մարդկանցով միացել էր ապստամբներին<sup>41</sup>: Բացի դրանից, Դավրիժեցին որոշակի ասում է, որ ջալալիները մասին գրում է ականատեսների պատմածների հիման վրա<sup>42</sup>: Կամ, ինչպես իրավացիորեն նկատում է Հ. Դ. Փափազյանը<sup>43</sup>, և՛ Դավրիժեցու, և՛ Մունշու մոտ նշվում է շորանբեկի<sup>44</sup> մասին, սակայն, եթե Մունշին միաժամանակ հաղորդում է նաև այլ հարկերի մասին, որ շահ Աբբասը զիջել էր բնակիչներին, ապա Դավրիժեցին պատմում է միայն շորանբեկի (քոդավի) մասին<sup>45</sup>: Ակնհայտ է, որ Դավրիժեցին դա հաղորդում է ըստ բանավոր զրույցների, որի մասին է վկայում և նրա պարզամիտ պատմութունը՝ քոդավի պատճառած նեղութունը շահի կողմից պատահաբար «հայտնաբերելու» և այն անմիջապես վերացնելու մասին: Այս և նման օրինակները հիմք են տալիս ենթադրելու, որ երկու պատմիչների տվյալների համընկնման փաստը կարող է երաշխիք լինել այդ պատմիչների հաղորդած տեղեկութունների ճշտության համար, բայց ոչ անպայման այն բանի, որ Իսքանդար Մունշին Դավրիժեցու աղբյուրն է եղել<sup>46</sup>: Հիշենք նաև, որ Դավրիժեցին ամենայն բարեխղճությամբ նշում է իր օգտագործած թե՛

<sup>38</sup> Գրքում վրիպակ է՝ Ռեմ:

<sup>39</sup> Դավրիժեցի, էջ 87:

<sup>40</sup> Պարսկ.՝ Թավիլ (طویل):

<sup>41</sup> ԿՄ. ասկներ Մենշի, ج 'ر' ص ۷۷:

<sup>42</sup> Դավրիժեցի, էջ 85, 86:

<sup>43</sup> Հ. Դ. Փափազյան, Ազրարային հարաբերությունները Երևանի խառնության մեջ XVII դարում (անտիպ, գտնվում է Մատենադարանում), էջ 45:

<sup>44</sup> Հարկ, որ գանձվում էր մանր եղջերավոր անասունների համար: Դավրիժեցին գործածում է «քոդավ» տերմինը:

<sup>45</sup> Հմմտ. ԵՄ. ասկներ Մենշի, ج 'ا' ص ۱۷۷—۱۷۸:

<sup>46</sup> Դավրիժեցու որոշ տվյալներ համընկնում են նաև թուրքական և և՛լրոպական աղբյուրների հաղորդած տեղեկությունների հետ:

բանավոր, թե՛ գրավոր աղբյուրները: Այնպիսի աշխատութեան անունը, որպիսին Իսթանբուլի Մունշու սովարածավալ երկն է, չէր կարող չնշվել Դավրիժեցու կողմից, եթե վերջինս օգտվեր նրանից: Մնում է իրականութեանը մոտ համարել այն, որ Մունշու գործը Դավրիժեցու համար աղբյուր չի ծառայել:

Անհրաժեշտ է ընդգծել այն մեծ պատասխանատվութիւնը և քննադատական մոտեցումը, որ ցուցաբերում է Դավրիժեցին իր երկի աղբյուրների նկատմամբ, լինեն դրանք գրավոր, թե՛ ականատեսների պատմածներ: Պատմիչը ձգտել է հաղորդել առավելագույն շահով ստույգ տվյալներ և դրա համար, իր խոսքերով ասած՝ «վասն զստուգութիւն բանին գտանելոյ, եղև զի զմի պատմութիւն, տասն անգամ և այլ աւելի կրկնելով գրեցի»<sup>47</sup>: Միևնույն փաստի մասին ձեռքի տակ մի շարք վկայութիւններ ունենալու դեպքում պատմիչը խնամքով ընտրութիւն է կատարել. «...Գտաք բազում վկայութիւն, զորոց զառաւել հաւաստին առեալ աստէն շարագրեցաք»,—գրում է նա<sup>48</sup>: Դավրիժեցին խուսափել է ոչ արժանահավատ և կամ հակասական վկայութիւններից, ընտրելով միմյանց համընկնող ու միմյանց հավաստող տվյալներ. «...Երկու և երեք օրինակ ի միասին բերեալ,—կարդում ենք գավաղանացանկում,— տեսաք՝ զի ոչ զուգարան ասէին, վասն որոյ և ոչ գրեցաք. և որոց վասն զուգարան ասացին զնոցին թիւն գրեցաք...»<sup>49</sup>: Երբեմն էլ նա հաղորդում է միևնույն փաստի մասին եղած տարբերակները, երբ դժվարանում է որոշել, թե նրանցից որն է հավաստին<sup>50</sup>:

Դավրիժեցին ջանացել է նաև ճիշտ որոշել իր նկարագրած դեպքերի ժամանակը, թեև դա նրան ոչ միշտ է հաջողվել. «...Զորս գտաք,—հայտնում է պատմիչը գրքի նախադրութեան մեջ,—կարգեցաք ընդ պատմութեանն և զթուականն ևս, և զորս ոչ գտաք, առանց թուականի պատմեցաք...»<sup>51</sup>:

<sup>47</sup> Դավրիժեցի, էջ 670:

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 416:

<sup>49</sup> Նույն տեղում, էջ 433:

<sup>50</sup> Տե՛ս, օրինակ՝ նույն տեղում, էջ 219:

<sup>51</sup> Նույն տեղում, էջ [5]:

«Պատմութեան»՝ մասնավորապէս իրանին վերաբերող տվյալների հավաստիութեան երաշխիք է և այն, որ Դավրիժեցին որևէ կախում չունի պարսից պալատական շրջաններից: Եթե XVI—XVII դդ. պարսկական պալատական պատմագրութեանը բնորոշ է ներբողագրութիւնը, ապա Դավրիժեցին հնարավորութիւն է ունեցել և նպատակ՝ տալ պատմութեան ճշմարիտ պատկերը, առանց սքողելու պարսից շահերի քաղաքականութեան ստվերոտ կողմերը:

Ի. Պետրուշևսկու իրավացի կարծիքով՝ Դավրիժեցու «անկախութիւնն իրանական կառավարական պաշտոնական տեսակետից... թույլ է տալիս մեզ օգտուելու Ա. Դավրիժեցու տվյալներին»՝ ստուգելու համար պարսկական աղբյուրների հաղորդած տեղեկութիւնները<sup>52</sup>: Դարձյալ ի տարբերութիւն պարսկական պալատական պատմագիրների, Դավրիժեցին մոտ է կանգնած ժողովրդին, լավ գիտե նրա առօրյան ու հոգսերը և դրանց մասին ամենայն բարեխղճութեամբ հաղորդում է ընթերցողին:

Ուշադրութեան արժանի է Դավրիժեցու անաչառութիւնը թե՛ իր ժողովրդի մասին խոսելիս, որին կարող է պարսավել ու կշտամբել այս կամ այն քայլի համար<sup>53</sup> և թե՛ օտարների բնութագրելիս, որոնց դրվատելու դեպքում խոսքեր չի խնայում<sup>54</sup>:

Այս բոլորը հանգեցնում է նրան, որ հավաստիութիւնը, լինելով հեղինակի մտահոգութեան գլխավոր առարկան, նաև օրյեկտիվ հող է ձեռք բերում և դառնում «Պատմութեան» ոգին ու սկզբունքը: Դա հետազոտողներին իրավունք է տալիս Դավրիժեցուն առանց կասկածանքի անվանելու ստուգապատում պատմիչ:

Դավրիժեցու «Պատմութեան» հավաստիութեան ապացույց են նաև այլ աղբյուրներ՝ ժամանակագրութիւններ, ձեռա-

<sup>52</sup> И П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—нач. XIX вв., Л., 1949, стр. 49, հմմտ. Н. Пигулевская [и др.], *Գրք. աշխ.*, էջ 270,

<sup>53</sup> Տե՛ս, օրինակ՝ Դավրիժեցի, էջ 150, 452...

<sup>54</sup> Նույն տեղում, էջ 86, 242...

գրերի հիշատակարաններ, պատմական երկեր, ճանապարհորդների հուշեր, վավերագրեր, որոնք հաստատում են նրա հաղորդած տեղեկությունները: «Գոհունակությունամբ պետք է նշել,—գրում է Չ. Գ. Փափազյանը պարսկերեն հրովարտականների հրատարակման առթիվ,—որ «Մատենադարանի պարսկերեն հրովարտականների» այս երկրորդ պրակի մեջ ընդգրկված մեծ թվով վավերագրերը կրկին անգամ հաստատում են Դավրիժեցու պատմության տվյալները և ավելի քան ամրապնդում ուսումնասիրողների հավատը նրա հաղորդած պատմական կարևոր տեղեկությունների նկատմամբ»<sup>55</sup>:

Զպետք է մոռանալ, սակայն, որ Դավրիժեցին հոգևորական էր և մի ժամանակի ծնունդ, երբ կրոնը ոչ միայն հավատք էր, այլև տիրապետող գաղափարախոսություն, և դա շէր կարող իր կնիքը չթողնել, Մ. Աբեղյանի արտահայտությամբ՝ «եկեղեցու հարազատ ղավակ, եկեղեցական ոգով սնված» վարդապետ-պատմագրի գրչի վրա: Ուստի և «Պատմությունը» ինչ-որ չափով տուրք է տվել կրոնական մտածողությանը, արտացոլելով հեղինակի համոզմունքն ու հավատը «հրաշքների» և «աստվածային նախասահմանվածության» նկատմամբ: Դավրիժեցին շէր կարող ղերծ մնալ ժամանակի յուրահատկությունը հանդիսացող՝ կրոնական նորմերի այնպիսի դրսևորումից, որպիսին էր թշվառություններն ու պատահարները մարդկանց «մեղքով» («վասն մեղաց մերոց») բացատրելը: Տեղին է այս կապակցությամբ հիշել Գ. Գապպինճյանի խոսքերը, որը XVII դ. արհավիրքները նկարագրելուց հետո գրում է. «Այս ամենքը կըլլան արդյոք հայուն ո՞ր մեղքին, ո՞ր հանցանքին համար: Ժամանակակից գրիչները թող չպատասխանեն, որովհետև անոնք անշուշտ «վասն մեղաց մերոց»-ի պէս դարերով հեղհեղված բանաձևի մը պիտի վերագրեն...»<sup>56</sup>:

<sup>55</sup> ՄՊԶ, պր. 2, էջ 41:

<sup>56</sup> Գ. Գապպինճյան, Հայ ողբերգուհի: Առաքել Դավրիժեցի («Տաճար», Կ. Պոլիս, 1912, էջ 337):

Ուստի հասկանալի է հայացքների այն սահմանափակությունը, որ երբեմն իրեն զգացնել է տալիս «Պատմություն» մեջ: Ինչ-որ տեղ Դավրիժեցին Հայաստանի ավերման, հայ ժողովրդի բոլոր թշվառությունների պատճառը համարում է Մելքիսեթ կաթողիկոսին և Մանվել եպիսկոպոսին, «որք զնացեալք ի Սպահան բերին զազգն Պարսից՝ որք աւերեցին զաշխարհս Հայոց»<sup>57</sup>, նույն կերպ դատելով Վրաստանի իրադարձությունների մասին, հեղինակը գրում է, թե մի «չարաբաստ այրն... եղև պատճառ կործանման թագաւորութեանն քրիստոնէից...»<sup>58</sup>: Սակայն, շնայած այս մտահայեցողությունը, Դավրիժեցին, այնուամենայնիվ, տալիս է Վրաստանի և Հայաստանի պատմության դրվազների ճշմարտապատում նկարագրությունն այնպես, որ նրանց շրջաթափ մեջ ընդգծված ենք տեսնում իրադարձությունների և պատճառները, և՛ հետևանքները:

Անշուշտ, կրոնական սահմանափակության արգասիք է և Դավրիժեցու երբեմն արտահայտված զայրույթը ժողովրդի բողոքի և ընդվզման դեմ. «Ազգս Հայոց... ինքեանք կործանեցին զթագաւորութիւնն իւրեանց՝ նենդութեամբ և անհնազանդութեամբն իւրեանց...»<sup>59</sup>: Նույնպիսի պարսավանքով Դավրիժեցին ընդգծում է, որ ջալալիները «ոչ հնազանդէին թագաւորին», և որ նրանց մեջ կային նույնիսկ քրիստոնյաներ, «որք ո՛չ ունէին զերկիւղն Աստուծոյ յինքեանրս»<sup>60</sup>: Մինչդեռ, երբ խոսքը վերաբերում է ժողովրդի պայքարին ընդդեմ կրոնափոխության, ձուլման, բռնագաղթի և այլն, պատմիչը հիացմունքով է խոսում ինչպես հայ այնպես էլ մյուս ժողովուրդների մասին:

Դավրիժեցին հիանալի է ըմբռնել ժամանակի ոգին, որի համար էլ իրադարձությունները կարողանում է անսխալ մեկնաբանել, մանավանդ շահ Աբբաս Ա-ի քաղաքականու-

<sup>57</sup> Դավրիժեցի, էջ 49:

<sup>58</sup> Նույն տեղում, էջ 129:

<sup>59</sup> Նույն տեղում, էջ 147:

<sup>60</sup> Նույն տեղում, էջ 87, 85:

թյունն ու նպատակները վերլուծելիս: Այստեղ արդեն պատմիչը վեր է բարձրանում իր շրջապատից. իրոք, նա «կարծես մի քաղաքագետ և հոգեբան լինի»<sup>61</sup>:

\* \* \*

Ա. Դավրիժեցու «Պատմությունն» աչքի է ընկնում կենդանի, հյուսիս լեզվով ու պարզ ոճով: Նրա գրաբարն այնքան է մոտիկ աշխարհաբարին, որ առիթ է տվել գրաբարի երկրպագուների դժգոհությանը: Այսպես, ոմանք Դավրիժեցու լեզուն համարում են «աղավաղված», «տկար գրաբար», հեռու «ընտիր» լինելուց, և այդ բանում հեղինակի «մեղքը» կապում են Ոսկան Երևանցու՝ գրքի առաջին հրատարակչի հետ<sup>62</sup>: Նշենք, որ լեզվաբանության մեջ էլ Դավրիժեցու երկը բերվում է իբրև XVII դ. աշխարհաբարի նմուշ<sup>63</sup>: Բոլոր դեպքերում, Դավրիժեցու լեզվի համար բնորոշ են XIX—XVIII դդ. մեր մատենագրության հատկանշական կողմերը, այսինքն՝ և՛ գրաբարի, և՛ աշխարհաբարի տարրերը, ինչպես նաև թուրքերեն ու պարսկերեն բառերի առատ գործածությունը: Մյուս կողմից, Դավրիժեցին շատ հաճախ բառերին կից նշում է դրանց ավելի գործածական հայերեն կամ թեկուզ ոչ հայերեն հոմանիշը, ձգտելով իր լեզուն մատչելի դարձնել ամեն խավի ընթերցողի համար: «Պատմությունը» լի է ժողովրդական դարձվածներով, որոնք առանձին կենդանություն են տալիս շարագրանքին: Խնամքով

<sup>61</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք II, Երևան, 1946, էջ 452:

<sup>62</sup> Տե՛ս Գ. Զարբանալյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 178, Ա. Զամինյան, Հայ գրականության պատմություն, Նոր Նախիջևան, 1914, էջ 39—40:

<sup>63</sup> Տե՛ս Հ. Անառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951, էջ 447, Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954, էջ 380: Տարօրինակ է, սակայն, որ «Պատմությունից» իբրև նմուշ վերցված է հենց այն հատվածը (դ. ՄԳ, էջ 592—593), որը պատկանում է այլ հեղինակի՝ հալեպցի Սարգիս քահանայի գրչին, և որի լեզուն որոշակիորեն տարբերվում է Դավրիժեցու լեզվից:

ընտրված համեմատություններն ու մակդիրները հարստացնում են երկի պատմելիականը, իսկ նրա առանձին հատվածներ հասնում են բարձր գեղարվեստականության: Տպավորիչ են Գառնիի պաշտպանության, քրիստոնյաների մահմեդականացման և, մասնավորապես, հայոց մեծ գաղթի նկարագրությունները, որոնց մասին Մ. Արեղյանն իրավամբ գրում է. «Այսպիսի նկարագիրներ մեր պատմությանց մեջ քիչ կպատահենք Եղիշեի ժամանակից ի վեր»<sup>64</sup>:

\* \* \*

Ըստ մեզ հասած տեղեկությունների, Դավրիժեցու երկն ունեցել է մի քանի ձեռագիր ընդօրինակություններ, որոնցից երկուսը (1663 թ. Կարբիում Աթանաս դպրի և 1666 թ. Երեմիայի Ավետիք երեցի ընդօրինակածները) գտնվում են Երևանի Մատենադարանում՝ 1772 և 1773 համարների տակ<sup>65</sup>: Այստեղ են պահպանվում նաև «Պատմության» մի քանի ոչ լրիվ ձեռագրեր (№№ 4998, 5025, 5081, 5959 և այլն)<sup>66</sup>: Մի օրինակ էլ պահվում է Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում (№ 137, հին № 83), որ 1665 թ. ընդօրինակություն է, կատարված Ավետիք երեցի կողմից Երևանում, Դավրիժեցու հսկողությամբ: «Հանդէս ամսօրեայ»-ի հաղորդմամբ այդ ձեռագրի հիշատակարանը բառ առ բառ նույնն է 1666 թ. ձեռագրի հիշատակարանի հետ, այն տարբերությամբ միայն, որ դա ոչ թե 5-րդ, այլ շրջադարձի գիրք է, որ ինքեան Առաքել Վ-ի ձեռագրագիր օրինակէն գաղափարեցաւ<sup>67</sup>: Այս ձեռագիրը հանգամանորեն նկարագրված

<sup>64</sup> Մ. Արեղյան, նշվ. աշխ., գիրք II, էջ 446:

<sup>65</sup> Այս ձեռագրերը, ընդօրինակված լինելով հեղինակի գրած մայր օրինակից, ունեն որոշ տարբերություններ, որոնք նշվել են գրքի երկրորդ և երրորդ հրատարակություններում:

<sup>66</sup> Այդ մասին հանգամանորեն տե՛ս Հ. Աճառյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, էջ 1151—1152:

<sup>67</sup> Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1896, էջ 314:

է 2. Տաշյանի կողմից և համեմատված 1669 թ. հրատարակութիւն հետ<sup>68</sup>։

Մոսկվայի Լազարյան ճեմարանի հայերեն տպագիր գրքերի ցուցակում (1861 թ.) կարելի է գտնել Դավրիժեցու գրքի վերաբերյալ հետևյալ հիշատակութիւնը՝ «Առաքել պատմագիր, էշմիածին, ՌՈԿԲ (1662)»<sup>69</sup>։ Ելնելով նշված թվականից, Մյուլլերը հավանական է համարում, որ դա վերաբերում է հինգ ձեռագիր օրինակներից մեկին<sup>70</sup>։ «Հանդէս ամսօրեայ»-ի խմբագրութիւնը անհիմն է գտնում Մյուլլերի այս ենթադրութիւնը և հիշյալ ցուցակի մեջ եղած թվականը տպագրական սխալ է համարում։ Իրոք, Լազարյանների գրադարանի ձեռագրերի շարքում Դավրիժեցու գործը բացակայում է ոչ միայն նոր (1888 թ.), այլև հին՝ 1861 թ. ցուցակում, որը վկայակոչում է Մյուլլերը։ Մինչդեռ, տպագիր գրքերի ցուցակում այն առկա է (№ 788)։

Այս կապակցութեամբ հետազոտեցինք նաև Լազարյանների արխիվը, թերթելով բազմաթիվ այլ ցուցակներ, որտեղ Դավրիժեցու երկը հիշատակված է միայն որպես տպագիր՝ «Տեղեկութիւններ մի քանի հայ հիանալի գրողների մասին» վերնագրի տակ<sup>71</sup>, ինչպես նաև Թիֆլիսի էնֆիաճյան եղբայրների գրատանը 1850 թ. վաճառվող գրքերի ցուցակում<sup>72</sup>։

Ուստի, հիշյալ ցուցակում Դավրիժեցու երկի հիշատակութիւնն ամենայն հավանականութեամբ վերաբերում է

<sup>68</sup> 2. Տաշյան [կաղմ.], նշվ. աշխ., էջ 430—432։

<sup>69</sup> Տե՛ս «Catalogue des livres de la bibliotheque fondamentale de l'Institut Lazareff des langues orientales», Moscou, 1861. Այստեղ՝ «Ցուցակ գրչագիր հայ մատենից գրադարանի Լազարեան ճեմարանի արևելիան լեզուաց» (էջ 3—12), «Ցուցակ տպեալ հայ մատենից գրադարանի Լազարեան ճեմարանի արևելիան լեզուաց» (էջ 15—44)։

<sup>70</sup> Fr. Müller, Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, Bd. II, 1888, s. 260—261.

<sup>71</sup> Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 127, գ. 33, վավ. 146։

<sup>72</sup> Նույն տեղում, գ. 61, վավ. 118։

1669 թ. հրատարակութեանը, և ՌՈԿԲ-ի (1662) փոխարեն պետք է լինի ՌՈԿԲ (1669):

\* \* \*

«Պատմութեան» բնագիրն ունեցել է երեք հրատարակութիւն: Առաջին հրատարակութեան մեջ, որն իրականացվել է 1669 թ. Ամստերդամում՝ Ոսկան Երևանցու միջոցով, զգալի է անփութութիւնը. հրատարակիչն իր հայեցողութեամբ խմբագրել է գործը, անհամապատասխանութիւն կա ցանկի և գրքում եղած վերնագրերի միջև, շատ տեղերում տեքստը փոփոխութեան է ենթարկված: Վերջում կցված է «Պատմութեանը» չվերաբերող երկու գլուխ<sup>73</sup>: Նոյմանն այս հրատարակութիւնն իրավացիորեն համարում է «ոչ հատակ»<sup>74</sup>:

Ավելի քան երկու դար հետո՝ 1884 թ., Դավրիժեցու երկը տպագրվում է երկրորդ անգամ, Վաղարշապատում, «քստ խնդրոյ բազմաց մերազնէից», ինչպես ասված է գրքի «Զեկուցման» մեջ: Հրատարակութիւնը կատարվել է Աթանաս դպրի ընդօրինակած ձեռագրի հիման վրա, համեմատութեամբ Ավետիք Երեցի ձեռագրի և առաջին հրատարակութեան, որոնց միջև եղած տարբերութիւնները բերված են տողատակերում:

Այստեղ շկան Ոսկան Երևանցու ավելացրած վերջին երկու գլուխները, բայց ավելացված է մի նոր գլուխ («Պատմութիւն անցից հրէից ազգին...»), որը զետեղված է ՄԾ գլխից հետո և համարակալված չէ: Հեղինակի նախադրութիւնից առաջ կա Դավրիժեցու և նրա երկի վերաբերյալ

<sup>73</sup> Գլ. Մէ՝ «Պատմութիւն վարդապետին Ոսկանայ Երևանցոյ և կենցաղավարութիւն նորին», գլ. ՄԸ՝ «Վասն միութեան և միաւորութեան. նոյնք են եթէ զանազանք. արարեալ նունոյ Ոսկանայ վարդապետի»:

<sup>74</sup> C. F. Neumann, Versuch einer Geschichte der armenischen Literatur, Leipzig, 1836, s. 249.

«Ջեկուցումն», որն անճշտություններ է պարունակում<sup>75</sup>։ Անփույթ է կազմված նաև ցանկը։ Այսուհանդերձ այս հրատարակութիւնը առաջինից ավելի խնամքով է կատարված և ավելի հարազատ է բնագրին։

Առավել հաջողվածը «Պատմության» վերջին՝ երրորդ, հրատարակութիւնն է (1896 թ., Վաղարշապատ), վերատրուված երկրորդ հրատարակության օրինակից։ Այստեղ ևս տրված են Ոսկանի հրատարակության և նշված երկու ձեռագրերի միջև եղած տարբերութիւնները։ Բացի դրանից, բերված են «Պատմության» ձեռագիր օրինակի (Աթանաս դպրի) և երկրորդ հրատարակության միջև եղած տարբերութիւնները։ Այս հրատարակութիւնն ունի նաև առաջաբան, որտեղ ճշգրիտ տվյալներով համառոտակի խոսվում է Դավրիժեցու կենսագրության, «Պատմության» ձեռագրերի և հրատարակութիւնների մասին։ Վերջում կցված է նաև հատուկ անունների ցանկ։

Դավրիժեցու «Պատմութիւն»-ից հրատարակվել են նաև առանձին հատվածներ, ինչպես՝ «Պատմութիւն նեղութեանց և վշտաց, զորս կրեցին հայ ազգաւ քրիստոնեանցն, որք բնակեալք են ի քաղաքն Իլով» (զլ. ԻԸ)<sup>76</sup>, «Տարագրութիւն ջուղայեցւոց ի Սպահան» (զլ. Ե), «Նորոգութիւն անապատական կենաց ի հայս» (զլ. ԻԱ), «Սասանութիւն մեծի անապատին» (զլ. ԻԲ)<sup>77</sup> և այլն։

Հետադոտողներից շատերին Դավրիժեցու երկը հայտնի

<sup>75</sup> Որպես «Պատմութիւնը» գրելու սկիզբ նշված է 1655 թվականը (1651-ի փոխարեն), իբրև Դավրիժեցու մահվան թվական՝ 1669, որով և սխալմամբ հաստատվում է, թե Դավրիժեցին «չէ տեսեալ զտպագրութիւն պատմութեան իւրոյ...»։ Դա թյուրիմացութեան մեջ է գցել ուսումնասիրողներից շատերին, որոնք նույնությամբ կրկնում են այդ սխալը։

<sup>76</sup> Տե՛ս «Բռնի միութիւն հայոց կհհաստանի ընդ եկեղեցւոյն Հոռովմայ. Ժամանակակից յիշատակարանք», Ս. Պետերբուրգ, 1884, էջ ԽԵ—ԿԶ։

<sup>77</sup> Տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, մասն Բ, էջ 611—614, 616—618, 623—625։

է Մ. Բրոսսեի ֆրանսերեն թարգմանությամբ<sup>78</sup>, որը, ցավոք, զերծ չէ թերություններից: Մ. Բրոսսեն ֆրանսերենով առանձին հրատարակել է նաև «Պատմության» ՄԵ զրուխը կազմող ժամանակագրությունը՝ ավելի ընդարձակ ծանոթագրություններով<sup>79</sup>, ինչպես նաև վրաց պատմության վերարբերյալ որոշ հատվածներ<sup>80</sup>: «Պատմությունը», ինչպես և նրա առանձին հատվածներ, թարգմանվել են նաև ռուսերեն<sup>81</sup>, լեհ բանաստեղծ և թարգմանիչ Անշեյ Շիմանսկին ձեռնամուխ է եղել Դավրիժեցու երկի լեհերեն թարգմանությանը<sup>82</sup>:

\* \* \*

Դավրիժեցու երկը որպես արժեքավոր պատմական աղբյուր սկսում է օգտագործվել հենց XVII դ.: Կարելի է ասել, որ շկա Դավրիժեցու «Պատմությունից» հետո հայ պատմա-

<sup>78</sup> M. Brosset, Livre d'Histoires, composé par le vartabiet Arakel de Tauriz (Collectifon d'historiens arméniens, t. 1, St.-Petersbourg, 1874).

<sup>79</sup> M. Brosset, Des historiens arméniens des XVII et XVIII siècles: Arakel de Tauriz, Régistre chronologique, St.-Petersbourg, 1873, p. 22—60.

<sup>80</sup> Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX siècle traduite du Géorgien par M. Brosset, II partie, I livraison, St.-Petersbourg, 1856, p. 421—445: „Extraits de l'Histoire d'Arakel de Tauriz, relatifs aux regnes de Sulmon I et de Georgi X“:

<sup>81</sup> Араке́л Даври́жеци, Книга историй, перевод с армянского, предисловие и комментарии Л. А. Ханларян, М., 1973 (*այս թարգմանության կապակցությամբ լույս է տեսել Մ. Հեյդարովի գրախոսականը* (տե՛ս „Известия АН Азербайджанской ССР“, серия истории, философии и права, 1975, № 2), որտեղ, ի դեպ, լուրջ սխալներ են թույլ տրված ինչպես Դավրիժեցու աշխարհայացքի և նրա «Պատմության» գնահատման հարցում, այնպես էլ պատմական որոշ կարևոր փաստերի մեկնաբանման մեջ), К. Патканов, Драгоценные камни, их названия и свойства по понятиям армян в XVII в., СПб., 1873; X. Кучук-Иоаннесов, Армянская летопись о евреях в Персии XVII в. и о мессии Саббатае-Цеви („Еврейская старина“, т. X, П., 1918, стр. 60—86); Араке́л Даври́жский (Тебризский), История-Пер. на русск. яз. Т. Тер-Григоряна (*անտիպ*);

<sup>82</sup> Տե՛ս «Գրական թերթ», 1975, № 22:

գրութիւն մեջ հանդես եկած շատ թե քիչ խոշոր որևէ երկ, որտեղ XVII դ. առաջին կեսի պատմական իրողութիւններին նկարագրման համար լայնորեն օգտագործված շինեն Դավրիժեցու հաղորդած տեղեկութիւնները:

XVII դ. պատմիչ Զաքարիա սարկավազ Քանաքեռցին «Պատմագրութիւն» մեջ իր լսած տեղեկութիւնները համեմատելով Դավրիժեցու տվյալների հետ, ընդգծում է վերջիններիս ճշմարտացիութիւնը և նշում, որ ինքը ոչ միայն Դավրիժեցու գրքի տվյալներից է օգտվել, այլև լինելով նրա ժամանակակիցը, նրա հետ անմիջականորեն զրույցներ է ունեցել, հարցումներ արել ու պարզել իր համար մութ պատմական հարցերը<sup>83</sup>: Դավրիժեցու տվյալների վրա են հենվում XVIII դ. մատենագիր, հայ և պարսից պատմութիւն արժեքավոր աղբյուրի հեղինակ Խաչատուր Զուղայեցին՝ իր երկի Սեֆյան Իրանին նվիրված մասում<sup>84</sup>, Աբրահամ Կրետացին (XVII դ. վերջ—XVIII դ. սկիզբ)<sup>85</sup> և այլ հեղինակներ<sup>86</sup>: Ղ. Ալիշանի շեշտմամբ՝ Դավրիժեցու «արժանեաց» համար է, որ ինքը «Հայապատում»-ի II մասում ընդարձակ հատվածներ է ընդգրկել նրա երկից, քանի որ «ոչ ամէն տեսակ գրուածներէ ընտրեցի այս ճաշակներս, այլ ի

<sup>83</sup> Զաքարիա Քանաքեռցի, հ. Գ, էջ 4,42:

<sup>84</sup> «Խաչատուր արեղայի Զուղայեցու Պատմութիւն Պարսից», Վաղարշապատ, 1905, էջ 100, 112, 127, 135, 139... (այսուհետև՝ Խաչատուր Զուղայեցի):

<sup>85</sup> «Աբրահամ կաթողիկոսի Կրետացու Պատմագրութիւն անցիցն իւրոց և նատր-Շահին Պարսից», Վաղարշապատ, 1870:

<sup>86</sup> XVIII դ. առաջին կեսին գրված «Ժամանակագրութիւն եւ նամականի Ստեփաննոսի Ռօշբայ»-ում հեղինակն իր օգտագործած աղբյուրների մասին գրում է. «Ունիմ առ այս զհայ պատմագիրս զՄովսէս Խորենացին... զԱռաքելն...» (տե՛ս Ն. Տաշյան [կազմ.], նշվ. աշխ., էջ 683): Մատենադարանի № 1721 ձեռագրում՝ գրված 1696 թ., նույնութիւն կրկնվում է Դավրիժեցու զավազանագրութիւնը, թեև աղբյուրը չի հիշատակվում («Կարգ և թիւք կաթողիկոսաց և ամք նոցա», էջ 134բ—135ա): Բացառված չէ, սակայն, որ նրանք օգտվել են միևնույն աղբյուրից: Նույնը կարելի է ասել նաև մի շարք ժամանակագրութիւնների մասին:

պատմչաց, ըստ վերոյգրելոյս, զասոնք հաճոյագոյն համարելով յընթերցումն քան զայլս»<sup>87</sup>;

Դավրիժեցու տեղեկություններն օգտագործվել և շարունակում են օգտագործվել XVII դ. առաջին կեսի պատմական իրադարձություններին անդրադարձող հետազոտողների կողմից, նպաստելով ոչ միայն այդ դարի, այլև երբեմն ավելի վաղ շրջանի պատմության այս կամ այն կնճռոտ հարցի լուսաբանմանը<sup>88</sup>։

Ճիշտ է, Դավրիժեցու տվյալներն օգտագործողները ոչ միշտ է, որ կիսում են նրա եզրահանգումները։ Առանձին հեղինակներ յուրովի են մեկնաբանում «Պատմության» տվյալները, ինչպես՝ Հ. Տեր-Հովհանյանցը կամ Մ. Թաղիադյանը շահ Աբբաս Ա-ի քաղաքականութունը գնահատելիս, որը ջանում են ներկայացնել մեղմացված<sup>89</sup>։ Նկատենք, որ, այնուամենայնիվ, «Պատմությունից» նրանց վկայակոչած առատ նյութերը պատկերացում են տալիս քննված հարցի բուն էության մասին։

Դավրիժեցու տեղեկությունները հետազոտողների քննության առարկա են եղել առավելապես հայ ժողովրդի պատմության հետ կապված հարցերի լուսաբանման առիթով և ավելի

<sup>87</sup> Ղ. Ալիջան, Հայապատում, մասն Ա, էջ [4], 132։

<sup>88</sup> Այսպես, Ստեփանոս Սալմաստեցու կաթողիկոսության ժամանակի հարցը Հ. Անասյանը պարզում է Դավրիժեցու երկի ԼԱ գլխի տվյալների միջոցով, որը հայոց կաթողիկոսների ժամանակագրությունն է։ Այս գավազանացանկը Հ. Անասյանը համարում է առաջնակարգ սկզբնաղբյուր, իսկ նրա տված թվականները՝ անտարակույս ճշգրիտ, քանի որ դրանք գրված են ժամանակակից հիշատակարանների հիման վրա։ Այսպիսով, Դավրիժեցու տեղեկությունների շնորհիվ մերկացվում է Ստ. Սալմաստեցու անունով կոչվում գտնվող տապանաքարի կեղծութունը, որը շփոթության աղբյուր է եղել հայ պատմագիտության մեջ Սալմաստեցու կենսագրության հարցում։ (Տե՛ս Հ. Անասյան, Դիտողություններ Ստեփանոս Սալմաստեցու կենսագրության վերաբերյալ (սեջմիածին), 1956, № № 8—9, 11—12)։

<sup>89</sup> Հ. Տեր-Հովհանյանց, Պատմութիւն Նոր Զուլայու, որ յԱսպահան, հ. 1, Նոր Զուլա, 1880, էջ 76, Մ. Թաղիադյան, Պատմութիւն Պարսից, հ. Ա, Կալկաթա, 1846, էջ 169։

քիչ՝ ալլ երկրների, մասնավորապես Իրանի պատմութեան կապակցութեամբ:

Դավրիժեցու մասին գրել են մեծ մասամբ հայ գրականութեանը կամ պատմագրութեանը նվիրված ուսումնասիրութեաննոր հեղինակներ, որոնք, ի թիվս ալլ պատմիչների, որոշ էջեր կամ հակիրճ հոդվածներ են նվիրել Դավրիժեցուն:

Պատմիչի մասին եղած գրականութեանն աչքի է ընկնում առավելապես նրա «Պատմութեանից» քաղված տեղեկութեաննոր հաղորդմամբ՝ հեղինակի կյանքի և նրա երկի վերաբերյալ<sup>90</sup>: Թեև շատ հեղինակներ են անդրադարձել Դավրիժեցուն, սակայն քիչ են փորձերը՝ հանգամանորեն վերլուծելու նրա գործը, աշխարհայացքը և «Պատմութեան» հետ կապված շատ հարցեր: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Արժեքավորելով Դավրիժեցուն որպես պատմիչի և ցույց տալով նրա տեղը հայ պատմագրութեան մեջ, Ղ. Ալիշանը նշում է, որ Դավրիժեցին թե՛ իրենից 2—3 դար առաջ և թե՛ իրենից հետո եղած պատմիչների մեջ լավագույնն է<sup>91</sup>: Մեծ նշանակութեան է տալիս Ղ. Ալիշանը «Պատմութեան» «անտարակույս ստուգութեանը» և «օտարաց անձանոթ բաներ հայտնելուն», ընդգծելով նաև, որ Դավրիժեցին իր պատմածների մեծ մասի ականատեսն է և «շատ յարգի և պատուական է ծանօթութեամբ փէ դարու սկիզբէն մինչև ի կէսն և ավելի անդին, այն ժամանակի քաղաքական մեծ դիպաց նկարագրութեամբ...»<sup>92</sup>: «Եթէ և հայաբանութեամբ ստորին

<sup>90</sup> Տե՛ս Մ. Չամչյան, Պատմութեան Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 17, С. Neumann, Եջ. աշխ., էջ 240, С. Назарянц, Обзорение истории Гайканской письменности, Казань, 1846, стр. 42 (Մա. Նազարյանցը վերաշարադրում է նոյմանի հոդվածը), Գ. Զարբաճալյան, Եջ. աշխ., հ. Բ, էջ 172—179, Ա. Ղազիկյան, Հայկական նոր մատենագիտութեան և հանրագիտարան հայ կյանքի, I պրակ, Վենետիկ, 1909, էջ 187, Մ. Պատուրյան, Եջ. աշխ., հ. Ա, էջ 213 և ալլն:

<sup>91</sup> Ղ. Ալիշան, Հայապատում, մասն Ա, էջ 131:

<sup>92</sup> Նույն տեղում:

է,—շարունակում է նա,—բայց կարգաբանութեամբ գովելի»<sup>93</sup>։ «Պատմութեան» մեջ ընդգրկված, «զգայուն և իրավախոհ կերպով գրված» իրադարձությունների մասին խոսելուց հետո հեղինակը թեթևակի անդրադառնում է պատմիչի կենսագրությանը, նշելով, թե նա իր երկը «դադարեցուցած թւականէն քիչ վերջը վախճաններ է», ընդ որում, չի նշում Դավրիժեցու պորժի ավարտման թվականը, և այսպիսով, նրա տեղեկությունը պատմիչի մահվան թվականի մասին դառնում է ավելի անորոշ։ Ղ. Ալիշանը Դավրիժեցու երկի առավելություններից է համարում այն փաստը, որ վերջինս արժանացել է Բրոսսեի և Լանգլուայի ուշադրությանը<sup>94</sup>։

Հենվելով Դավրիժեցու հաղորդած կենսագրական տրվյալների վրա, Լեոն տալիս է նրա աշխատության գրվելու պատմությունն ու դժվարին հանգամանքները։ Նշելով, որ գրական աշխատանքի այդ դժնդակ պայմանները դարերից ի վեր գոյություն ունեին, Դավրիժեցու նման հեղինակների գոյությունը Լեոն միակողմանիորեն բացատրում է բացառապես այն հանգամանքով, «որ այդ մարդիկ ընդունակ են եղել անձնազոհության»<sup>95</sup>։ Ցույց տալով «հավատացյալ վանական» Դավրիժեցու տածած մեծ սերը եկեղեցու նկատմամբ, Լեոն որպես հետևանք նշում է լուկ, թե «այդ սերը դարձնում է նրան երկարաբան, ուշադիր դեպի բոլոր մանրամասնությունները»<sup>96</sup>, շտեմնելով այլ հետևանքներ։ Միաժամանակ, Լեոն ընդգծում է պատմիչի «գրական կիրթ ճաշակը», ժամանակի դեպքերին լավատեղյակ լինելը և իր նկարագրածի նկատմամբ անաչառ վերաբերմունքը։ Նա Դավրիժե-

<sup>93</sup> Նույն տեղում։

<sup>94</sup> Ղ. Ալիշանը սխալմամբ գրում է. «Պրոսէ և Լանկուա, մին փոսնկերէն թարգմանելով, միւսն տպագրութեամբ հրատարակելով զայն...» (նույն տեղում, էջ 132), մինչդեռ Դավրիժեցու գործը, ինչպես գիտենք, թարգմանել և հրատարակել է Բրոսսեն, իսկ Լանգլուան, որ գործել է Բրոսսեից առաջ, հրատարակել է հայոց ավելի վաղ շրջանի պատմիչներին։

<sup>95</sup> Լեո, Հայոց պատմություն, հ. III, Երևան, 1946, էջ 362։

<sup>96</sup> Նույն տեղում, էջ 363։

ցուն համարում է «առաջնակարգ գրական մի աստղ, որ շու- նի իր նմանը թե՛ նախորդ դարում և թե՛ իր ժամանակակից- ների մեջ»<sup>97</sup>: «Հայկական տպագրութիւն» մեջ ևս կեոն անդ- րադառնում է Դավրիժեցու գործին, այն համարելով «XVII դարի ամենալաւ հեղինակութիւնը» և «առաջին տպագրած գիրքը...», որ խոսում էր ժամանակակից կյանքի մասին...»<sup>98</sup>:

Մ. Օրմանյանը, ելնելով գրքի ողջ շարադրանքից, հետե- վութիւններ է անում պատմիչի կյանքի ու նրա երկի վերա- բերյալ: Հենվելով Դավրիժեցու հիշատակարանի այն հա- զորդման վրա, որ աշխատանքն ավարտվել է 1662 թ., ինչպես նաև նկատի ունենալով «գործին կէսին»՝ 30-րդ գլխի վերջում, իբրև այդ գլուխը գրելու թվական նշված 1662 թ., Մ. Օրմանյանը եզրակացնում է, որ «շարայարեալ պատմու- թիւնը մինչև 1 (30) գլուխին վերջն է», իսկ նրանից հետո՝ մնացած 26 գլուխները, «որք իրարմէ անկախ նիւթեր են», հեղինակը պատրաստ ունի և կցել է պատմութիւն վերջում, թերևս մի մասն էլ ավելացնելով<sup>99</sup>: Սակայն «Պատմութիւն» տարբեր գլուխների շարադրման ժամանակի նման սահմա- նազատումը չի համընկնում աշխատութիւն ժամանակագրա- կան տվյալների հետ: Նկատենք, որ Մ. Օրմանյանի հիշատա- կած 30-րդ գլխից հետո դարձյալ կան գլուխներ, որոնք գրվել են 1662 թ., ինչպես ԼԱ (31-րդ) գլուխը՝ գրված նախոր- դից ընդամենը 4 օր հետո<sup>100</sup>, կամ վերջին գլուխներից մեկը՝ ՄԱ (51-րդ)<sup>101</sup>: Բացի դրանից, եթե 30-րդ գլխից հետո կան գլուխներ՝ գրված 1662-ից առաջ<sup>102</sup>, ապա մինչև 30-րդ գը- լուխը կարելի է հանդիպել, ընդհակառակը, 1662-ից հետո

<sup>97</sup> Նույն տեղում, էջ 362:

<sup>98</sup> Ան, Հայկական տպագրութիւն, հ. I, Թիֆլիս, 1901, էջ 159—160:

<sup>99</sup> Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 2492:

<sup>100</sup> Տե՛ս Դավրիժեցի, էջ 440:

<sup>101</sup> Նույն տեղում, էջ 577:

<sup>102</sup> ԼԳ (33) գլուխը գրված է 1659 թ. (տե՛ս Դավրիժեցի, էջ 457), ԼԴ (34) գլուխը՝ 1660 թ. (էջ 477):

կատարված իրադարձությունների հիշատակմանը, որ, բնականաբար, կարող էր գրվել 1662-ից հետո միայն<sup>103</sup>:

Ինչ վերաբերում է Մ. Օրմանյանի այն մտքին, որ «Պատմության» 30-րդ գլխից հետո մնացածներն «իրարմէ անկախ նիւթեր են», ապա պետք է ասել, որ ինչպես նշված գլխից առաջ, այնպես էլ հետո կարելի է գտնել և՛ իրարից անկախ, և՛ միմյանց հետ առնչվող գլուխներ: Բոլոր դեպքերում, 30-րդ գլուխը ընդունել իրրև Դավրիժեցու գործի վերջը՝ ճիշտ չէ: Հիշենք, որ ինքը՝ պատմիչը, 1662 թ. 50-րդ գլխում պարզորեն նշել է այն մասին, որ 11-րդ տարին է, ինչ աշխատում է գրքի վրա և տակավին շարունակում է աշխատել<sup>104</sup>:

Այնպիսի ստույգ տեղեկության մասին, ինչպիսին Դավրիժեցու մահվան թվականն է, Մ. Օրմանյանը ենթադրություններ է անում, ջանալով այդ հարցը լուծել՝ ելնելով այն բանից, որ Դավրիժեցին Փիլիպոս կաթողիկոսի հաջորդի (Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի) գործերից շատ քիչ բան է պատմում և այլն<sup>105</sup>:

Կոստանդնուպոլսում լույս տեսնող «Տաճար» շաբաթաթերթում 1912 թ. Դավրիժեցուն ընդարձակ հոդված է նվիրել Գ. Գապպենճյանը: Դա նրա «Հայ ողբերգուներ» խորագիրը կրող հոդվածաշարից է, որը հրատարակվել է «գերադանցորեն ազգային տոներու» առթիվ, հետևապես և նպատակ է ունեցել կրկին անգամ հիշեցնելու հայոց տառապանքի, հայ մշակույթի, պատմիչների մասին՝ բորբոքելու ընթերցողի հայրենասիրական ոգին: Այդ է պատճառը, որ հեղինակը «Առաքել Դավրիժեցի» հոդվածի մեծ մասը նվիրել է XVII դ. սկզբի հայ ժողովրդի կյանքի, նրա կրած փորձությունների նկարագրությանը: Հոդվածագիրը Դավրիժեցուն բնորոշում է որպես մի պատմիչի, որն ընդունակ է իրերն ու իրողությունները, դեպքերն ու դեմքերը զանազանիլ անկաշառ

<sup>103</sup> Տե՛ս Դավրիժեցի, գլ. ԲԶ (26), էջ 353:

<sup>104</sup> Նույն տեղում, էջ 562:

<sup>105</sup> Մ. Օրմանյան, նշվ. աշխ., մասն Բ, էջ 2492:

ու անկողմնակալ ոգով: «Գեղեցիկին ու վսեմին համար,— իրավամբ նկատում է Գ. Գապպենճյանը,— իր գրիչը հորդ ու ղեղուն է, որքան կնեռեն իր թափն ու խանդավառությունը, մինչդեռ շարին ու տղեղին դեմ կը զայրազնի սուր ու կծու խայթումներով»<sup>106</sup>: Հեղինակն ուշադրության է առնում և Դավրիժեցու միամտությունը, որը բացատրում է կրոնական «միատիկ ոլորտի» առկայութեամբ, ուր մեծացել ու դաստիարակվել է պատմիչը<sup>107</sup>: Սակայն Գ. Գապպենճյանի համոզմունքն իրավացիորեն այն է, որ հեղինակի այս հատկանիշները սովոր չեն դրում պատմական այս արժեքավոր երկի վրա<sup>108</sup>:

«Էջմիածին» ամսագրում լույս տեսած «Առաքել Դավրիժեցի» հոդվածը<sup>109</sup> փաստորեն «Պատմության» վերջին գլխի (գիրքը գրելու հանգամանքների մասին) վերլուծությունն է, որի ընթացքում հոդվածագիրը ջանում է նաև ընդհանրացումներ անել ժամանակի հասարակական կյանքի, Դավրիժեցու երկի ստեղծման պայմանների և նրա նշանակության մասին: Հեղինակն իրավացիորեն Դավրիժեցու «Պատմության» ստեղծումը համարում է հասարակական հասունացած պահանջի արդյունք, թեև դրան զուգընթաց տալիս է ոչ ճիշտ մեկնաբանություն՝ գերազնահատելով անհատների դերը և շտեմնելով տնտեսական-մշակութային այն կորիզն ու այն զարթոնքը, որ ազդակ եղան հայ պատմագրության վերածնմանը:

<sup>106</sup> Գ. Գապպենճյան, նշվ. հոդվ. («Տաճար», 1912, էջ 338):

<sup>107</sup> Նույն տեղում, էջ 339:

<sup>108</sup> Գ. Գապպենճյանի տեղեկությունները «Պատմության» ձեռագրերի, հրատարակությունների մասին վերցված են 1884 թ. հրատարակության կապակցությամբ Յ. Մյուլլերի գրախոսականի հայերեն թարգմանությունից Այդ պատճառով էլ այստեղ 1896 թ. հրատարակության մասին, որը պետք է հայտնի լիներ Գ. Գապպենճյանին, ոչ մի խոսք չի ասվում (տե՛ս նույն տեղում, էջ 408, հմտ. «Հանդես ամսօրեայ», 1889, էջ 139—141):

<sup>109</sup> Ռ. Վ. [Ռուբին վարդապետ], Առաքել Դավրիժեցի («Էջմիածին», 1944, № 10—12): Սույն հոդվածն արտատպվել է թե՛ հրանում լույս տեսնող «Ալիք» օրաթերթում (1945, № 207—210):

Դավրիժեցու մասին ամփոփ հոդվածում Հ. Անասյանն ի մի է բերել պատմիչի վերաբերյալ եղած բոլոր կարևոր տվյալները<sup>110</sup>։ Դավրիժեցին Հ. Անասյանի իրավացի գնահատմամբ «ստուգապատում մատենագիր է և իր ժամանակի պատմության համար վստահելի աղբյուր»<sup>111</sup>։ Միանգամայն ընդունելի է հեղինակի այն միտքը, որ Դավրիժեցին «Պատմությունն» ավարտել է 1662 թ., բայց նրանից հետո էլ ավելացրել է որոշ գլուխներ ու հատվածներ։

Որոշ հեղինակներ «Պատմությունը» գնահատել են այս կամ այն տեսանկյունից։ Այսպես՝ Ծ. Դուրյանը Դավրիժեցու երկը բնութագրում է ավելի շուտ լեզվի տեսակետից։ Ծ. Դուրյանն ընդհանրապես այլ պատմիչների մասին խոսելիս էլ ուշադրության կենտրոնում ունի լեզվի հարցը և ամեն անգամ դժկամություն է հայտնում գրաբարի «խանգարման» կապակցությամբ։ Հետաքրքիր է, սակայն, որ նա Դավրիժեցու երկի լեզվի մասին գովեստով է խոսում (չնայած նրա գրաբարի «խանգարմանը») և նշում, որ եթե Դավրիժեցու երկից դուրս բերվեն հրատարակչի աղավաղումներն ու «սրբագրությունները», ապա կնկատվի «կանոնաւոր լեզուի մը հետեւելու խնամքը»<sup>112</sup>։

Մ. Արեղյանն առավելապես վեր է հանել Դավրիժեցու գործի գեղարվեստական արժանիքները։ Թերևս այդ է պատճառը, որ նա «Պատմությունը» համարում է «զանազան զրույցների անմշակ ժողովածու»<sup>113</sup>։ Սակայն Դավրիժեցու՝ ոչ միայն «Պատմության» նյութերը ժողովելու, այլև իր նկարագրածը գնահատելու, իրադրությունը վերլուծելու և քաղմաթիվ հարցերի նկատմամբ իր վերաբերմունքն արտահայտելու ջանքերը թույլ չեն տալիս նման գնահատական տալ նրա գործին։ Հիշենք Լեոյի խոսքերը Դավրիժեցու «Պատմության» մասին. «Ընթերցողի աչքի առջև շարունակ կանգ-

110 Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, էջ 1144—1155։

111 Նույն տեղում, էջ 1144։

112 Ծ. Դուրյան, Պատմութիւն հայ մատենագրութեան (ի վաղ ժամանակաց մինչև մեր օրերը), Կ. Պոլիս, 1885, էջ 81։

113 Մ. Արեղյան, նշվ. աշխ., գիրք II, էջ 453։

նած է հեղինակի ինքնատիպ պատկերը»<sup>114</sup>։ Մ. Արեղյանը, այնուամենայնիվ, իր հիացմունքն է հայտնում Դավրիժեցու հայրենասիրության առթիվ, այն համեմատելով խորհնացու հայրենասիրական ոգու հետ և ավելացնելով, որ Դավրիժեցին «խորհնացուց ավելի սրտառու է ողբում յուր հայրենիքը, որից ավելի գեղեցիկ չէր կարող ոչ մի իրեն ժամանակակից բանաստեղծ ողբալ»<sup>115</sup>։ Մ. Արեղյանն իրավացիորեն ընդգծում է Դավրիժեցու և՛ սնտոիապաշտությունն ու միամտությունը, և՛ ժամանակի ոգին ճիշտ կերպով ըմբռնելու կարողությունը<sup>116</sup>։

«Պատմության» երկրորդ հրատարակությունից շորտարի անց լույս տեսավ Ֆ. Մյուլլերի գրախոսականը<sup>117</sup>, որտեղ նա Դավրիժեցու «Պատմությունը» դասում է «հազվագյուտ ստեղծագործությունների» շարքը, և ժամանակին կատարված ու օգտակար գործ է համարում նրա նոր հրատարակությունը։ Գրախոսողը բավարարվում է միայն պատմիչի կենսագրության ու նրա երկի վերաբերյալ հանրահայտ տեղեկությունների արձանագրմամբ և մի քանի ոչ էական դիտողություններով։ Ընդ որում, ճիշտ չի նշում Դավրիժեցու մահվան թվականը և «Պատմության» ընդգրկած ժամանակաշրջանը։

Երրորդ հրատարակության առթիվ գրախոսություն կա «Հանդէս ամսօրեայ»-ի էջերում, որտեղ նշվում է նոր հրատարակության առավելությունը նախորդի նկատմամբ և վերապատմվում «Յառաջաբան»-ի տեղեկությունները «Պատմության» ձեռագրերի, հիշատակարանի մասին։ Գրախոսականում հաղորդվում է նաև «Պատմության»՝ Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում գտնվող ձեռագրի և նրա հիշատակարանի մասին<sup>118</sup>։

<sup>114</sup> Ան, Հայոց պատմություն, հ. III, էջ 362։

<sup>115</sup> Մ. Արեղյան, նշվ. աշխ., գիրք II, էջ 448։

<sup>116</sup> Նույն տեղում, էջ 451։

<sup>117</sup> Fr. Müller, նշվ. աշխ., էջ 259—262։

<sup>118</sup> «Հանդէս ամսօրեայ», 1896, էջ 314։

«Պատմության» առաջին հրատարակության մասին տե՛ս Հ. Միրզոյանի հոդվածը («Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 2)։

Բնորոշելով Դավրիժեցուն, Ա. Զամինյանը նրան անվանում է «ճշմարտախօս ու անաշառ պատմիչ», թեև նա «միամիտ հաւատացող մըն է»: Հեղինակն առանձնապես ընդգծում է Դավրիժեցու գեղեցիկ մանրամասնություններով և զգացմունքով լի նկարագրությունները, միաժամանակ շեշտում, որ Դավրիժեցու լեզուն տկար գրաբար է, խառը ժողովրդական և ալլազգի բառերով, իսկ ինքը՝ հեղինակը, «շատ կարդացած ու շատ տեղեր ճանապարհորդած է. ամէն բան տեսած ու յսած»<sup>119</sup>:

Կարելի է շարունակել այնպիսի հեղինակների թվարկումը, որոնք հակիրճ անդրադառնում են Դավրիժեցուն և կամ ուղղակի նշում նրա երկի մասին<sup>120</sup>:

Վերջին տասնամյակներում նկատելի է Դավրիժեցու երկի գնահատման հարցում համեմատաբար առավել բազմակողմանի մոտեցում (թեև այստեղ ևս խոսքը կարող է վերաբերել առավելապես այն դեպքերին, երբ ուսումնասիրողները Դավրիժեցուն անդրադարձել են լոկ իրենց օգտագործած աղբյուրների վերլուծության ժամանակ): Այսպես, ներկայումս «Պատմությունը» դիտվում է նաև որպես XVII դ. հայ փիլիսոփայության պատմության կարևոր աղբյուր, որը վկայում է ժամանակի հայկական մի քանի դպրոցներում փիլիսոփայության դասավանդման, նրա առանձին ներկայացուցիչների մասին<sup>121</sup>: Դավրիժեցու երկը ներկայացված է նաև

<sup>119</sup> Ա. Զամինյան, *Եզվ. աշխ.*, էջ 239—240:

<sup>120</sup> Տե՛ս Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. Ա, էջ 216, Հ. Գաբրելյան, *Պատմութիւն մատենագրութեան Հայոց*, Վիեննա, 1851, H. Petermann, *Reisen im Orient*, Bd. 1, Leipzig, 1860, s. 223; K. Патканов, *Библиографический очерк армянской исторической литературы*, СПб., 1879, նույնի հայերեն թարգմ.՝ «Հայ պատմագիրների ևրկատեղութեանց ցուցակ» («Փորձ», 1880, №1, հավելված, էջ 34—35), H. Thorossian, *Histoire de la litterature armenienne des Origines Jusqu'a nos jours*, Paris, 1951, p. 205—206, A. Salmasian, *Bibliographie de l'Arménie*, Paris, 1946, p. 29 և այլն:

<sup>121</sup> Տե՛ս Վ. Զալոյան, XVII—XVIII դդ. հայ փիլիսոփայության ֆեոդալական ուղղության գնահատման հարցի շուրջը («Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1):

իրբև աղբյուր՝ Ուկրաինայի հայկական գաղութի մասին<sup>122</sup>։ Առանձին կանգ չառնելով սովետական շրջանի այլ հեղինակների կարծիքների վրա, նշենք միայն, որ նրանք ևս բարձր գնահատական են տալիս «Պատմությանը»։

Իր դարաշրջանի ճշմարիտ արտացոլումը լինելով, Դավրիժեցու երկը մինչև օրս էլ նպաստում է վեր հանելու և ճիշտ լուսարանելու պատմության որոշ հարցեր։ Մերկացնելով թուրք կեղծարարների այն պնդումները, ըստ որոնց՝ հայերը թուրքական գերիշխանության ներքո մինչև 1878 թ. իրենց շատ լավ են զգացել, գերմանացի պրոֆեսոր Յ. Մարկվարտը գրում է, որ բավական է ծանոթանալ Առաքել Դավրիժեցու «Պատմությանը»՝ պատկերացնելու համար օսմանցիների վերաբերմունքը հայերի և ընդհանրապես քրիստոնյաների նկատմամբ դեռևս XVI դ.<sup>123</sup>։

Դավրիժեցին ընդհանուրի ուշադրությանն է արժանացել հենց այն ժամանակ, երբ լույս աշխարհ եկավ նրա գիրքը։ Եվ պետք է ասել, որ միայն դրվատանքի խոսքեր չեն, որ բաժին են հասել նրան։ Ինչպես ամեն մի արժեք ներկայացնող և քննադատող երկ, «Պատմությունը» ևս ունեցել է բարեկամներ ու թշնամիներ։ «Դա առաջին հայերէն գիրքն էր, որ թշնամական կրքեր յարուցեց, հալածվեց»,—գրում է Լևոն Որպես ազգասիրության կոշող «հերետիկոս» գիրք, որ կիսանգարեր հայերին կաթոլիկացնելու գործին, Լեհաստանում այն արգելվեց։ Պատճառը՝ լեհահայերի կրած տառապանքի, նիկոլ եպիսկոպոսի և կաթոլիկ կրոնավորների մերկացնող բնութագիրն էր, որ պատմագիրը տալիս է ցասումով և մեծ ճշմարտացիությամբ։ Լատին կրոնավոր Ալոյսիոս Պի-

<sup>122</sup> Г. Пингирян, «История» Аракела Даврижеци и ее источники об антиуниатском движении в армянских колониях на Украине в 20—50-х гг. XVII в. (сб. «Исторические связи и дружба украинского и армянского народов», Ереван, 1971); Я. Дашкевич, Армянские колонии на Украине в источниках и литературе XV—XIX веков, Ереван, 1962, стр. 76—78.

<sup>123</sup> Յե՛ս J. Marquart, L'origine et la reconstitution de la nation armenienne. Traduction de Marie K. J. Basmadjian, Paris, 1919, p: 7.

դուն Դավրիժեցու գրքի արգելումը պատճառաբանում է նրանով, որ «ոչ կարէ ինքն, գոլով ծառայ առաքելութեանն, հաւանիլ ընդ վաճառումն և ընդ ծաւալումն գրոց, յորս են բանք անարգանաց զհոլիուէն իւրեանց»<sup>124</sup>:

Բոլոր դեպքերում մեծ է եղել «Պատմութեան» նվաճած ուշադրութիւնը: Ամստերդամում հրատարակվելուց հետո գրքի օրինակներն ուղարկվում են Արևելք, որտեղ շուտով սպառվում են: Նույնը կատարվում է հաջորդ հրատարակութիւնից հետո: Ֆ. Մյուլլերը գրում է, որ ինքը մի հայ եկեղեցականի օգնութեամբ մեծ դժվարութեամբ և բավականին մեծ գոնարով կարողացել է ձեռք բերել Դավրիժեցու գրքի մի օրինակը<sup>125</sup>: Նույնպիսի դժվարութիւն է կրել նաև Պետերմանը, դեպի Արևելք կատարած ուղևորութեան ժամանակ, մինչև որ Զուդայում գտել է «Պատմութեան» մի օրինակը՝ Բեռլինի պետական մատենադարանի համար<sup>126</sup>:

«Պատմութեան» համընդհանուր ճանաչումն արդյունք է ոչ միայն այն բանի, որ նրա հեղինակը ականատես է, ականջալուր և անաշառ, այլև՝ որովհետև նա տեղեկացնում է Հայաստանից բացի նաև այլ երկրների մասին, հաղորդելով այնպիսի տվյալներ, որոնք բացակայում են նույն դարաշրջանի այլ պատմիչների երկերում:

Նման սկզբնաղբյուրը միանգամայն արժանի է լինելու բազմակողմանի հետազոտութեան առարկա:

---

<sup>124</sup> Տե՛ս «Բռնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հոռովմայ», էջ 215, հմմտ. Լեռ, Հայոց պատմութիւն, հ. III, էջ 451, Եւայեի «Հայկական տպագրութիւն», հ. 1, էջ 160:

<sup>125</sup> Fr. Müller, նշվ. աշխ., էջ 259:

<sup>126</sup> H. Petermann, նշվ. աշխ., էջ 223:

ԻՐԱՆԻ XVII Դ. ՍԿՋՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ ԼՈՒՍԱՐԱՆՄԱՄԲ

Սեֆյան Իրանն իր գոյության երկրորդ հարյուրամյակն սկսեց մարտական գործողութիւններով Թուրքիայի դեմ՝ նպատակ ունենալով կործանիչ հարված տալ հակառակորդին և դրժելով նախապես կնքված ամոթալի պայմանագիրը, վերստին տիրել թուրքական տիրապետութեանն անցած հյուսիս-արևմտյան նահանգներին:

Իրանա-թուրքական պատերազմների այս փուլին վերաբերող խոշոր մասշտաբի ռազմական գործողութիւնների նկարագրմանը Առաքել Դավրիժեցու «Պատմութեան» մեջ զգալի տեղ է հատկացված<sup>1</sup>: Այն դեպքում, երբ նույն իրադարձութիւնները նկարագրելիս թուրք և պարսիկ հեղինակները ջանում են փառաբանել իրենց տիրակալներին հաղթանակները և, ընդհակառակը, նսեմացնել ու նվաստացած ներկայացնել հակառակորդին, Դավրիժեցին տալիս է դեպքերի անաչառ նկարագրութիւնը:

<sup>1</sup> Այստեղ անդրադառնալու ենք Դավրիժեցու երկուս լայնորեն լուսարանված և հիմնականում XVII դ. առաջին տասնամյակին վերաբերող իրադարձութիւններին, կանգ շառնելով հետագա տարիների քաղաքական պատմութեան առանձին դրվագների վրա (տարբեր թվականներին իրանա-թուրքական բախումները Երևանի, Բաղդադի, Քավրիզի համար և այլն), որոնց մասին «Պատմութեան» մի շարք էջերում (զլխավորապես ժամանակագրութեան մեջ) կան որոշ տվյալներ և կամ սոսկ հիշատակութիւն (տե՛ս Դավրիժեցի, էջ 637—646, նաև 300, 355, 357, 574...):

«Պատմութիւն» մեջ արտացոլում գտած պատերազմական գործողութիւնները կարելի է բաժանել հետևյալ փուլերի. ա) պարսկական աջազանքի սկիզբը և թափախումը, նախիջևանի, Երևանի գրավումը. բ) օսմանյան բանակի հակահարձակումը, պարսից նահանջը և դրա հետ միաժամանակ մեծ բռնագաղթը. գ) ղրզըլբաշները<sup>2</sup> հետագա նվաճումները:

Նախքան այս իրադարձութիւնների վերաբերյալ Դավրիժեցու տվյալների քննարկմանն անցնելը, երկու խոսք՝ պատերազմի նախօրյակին այդ երկրների վիճակի և այն նախադրյալների մասին, որոնք հիմք հանդիսացան մարտական գործողութիւնների վերսկսման համար՝ XVII դ. սկզբին:

Ա) ԻՐԱՆԸ, ԹՈՒՐԻՔԻԱՆ ԵՎ ԱՆԴԿՈՎԿԱՍԸ  
XVII դ. ՇԵՄԻՆ

(համառոտ ակնարկ)

Իրան-թուրքական պատերազմների նոր՝ XVII դ. սկզբված փուլը գալիս էր շարունակելու նախորդ դարի ընթացքում այդ երկու մահճեղական տերութիւնների միջև մղված ավերիչ պատերազմների շղթան. պատերազմներ, որոնց զուխավոր սլաքն ուղղված էր դեպի Անդրկովկաս՝ այնտեղ գերիշխանութիւն ապահովման համար, թեև արտաքնապես դրանք մղվում էին կրոնական քողի տակ, իբրև պայքար շիաների և սուննիների միջև:

XVI դ. ընթացքում իրան-թուրքական պատերազմների նախաձեռնողը թուրքիան էր: Դարակեսին (1555 թ.) կնքված Ամասիայի հաշտութիւն պայմանագիրը, որով Իրանին էին մնում Ադրբեջանը և Հայաստանի ու Վրաստանի արևելյան նահանգները, անշուշտ չէր կարող բավարարել Օսմանյան կայսրութիւնը: Ուստի, 1570 թ., երբ Սեֆյան պետութիւնը թուլացել էր ներքին երկպառակութիւններից, գահակալա-

<sup>2</sup> Սեֆեհիներին անվանում էին նաև ղրզըլբաշներ (կարմրագլուխներ)՝ կարմիր շերտերով շալմա կրելու պատճառով:

կան պայքարից, գյուղացիական ապստամբություններից, համաճարակից ու սովից, Օսմանյան Թուրքիան կրկին հարձակում գործեց Իրանի վրա: Պատերազմը շարունակվեց մինչև 1590 թ., երբ կնքվեց XVI դ. իրանա-թուրքական պատերազմների վերջին շրջանը եղրափակող Կոստանդնուպոլսի հաշտությունը, որով Թուրքիային էին անցնում ամբողջ Անդրկովկասն ու Ատրպատականը (բացի Ղարադաղից, Արդարիից և Թալիշից), ինչպես նաև Քրդստանը և Լորեստանի մեծ մասը: Իրանի համար ծանր ու նվաստացուցիչ մի պայմանագիր էր դա, որը, սակայն, ստեղծված իրադրության մեջ ամենառեալ քայլն էր և միակ ելքը՝ թուրքական առաջխաղացումը դադարեցնելու համար:

Պատերազմական գործողությունների դադարը շահ Արբաս Ա-ն օգտագործեց նախ և առաջ ամրապնդելու երկրի արևելյան սահմանը, 1597 թ. ջախջախելով ուզբեկներին և վերստին գրավելով Խորասանը:

Այնուհետև նա ձեռնամուխ եղավ ներքին վերափոխումներին:

Առաջին հերթին արմատական վերակազմավորման ենթարկվեց բանակը<sup>3</sup> (ակնառու զորավար Ալլահվերդի-խանի անմիջական ղեկավարութայամբ): Ստեղծվեց մշտական բանակ, որը բաղկացած էր 12 հազար հրացանակիրներից (թուֆանգի) և 10 հազար հեծելազորայիններից (ղուլամներ)<sup>4</sup>: Ղրղըլբաշների թիվը կիսով չափ կրճատվեց: Շարք մտավ

<sup>3</sup> Մինչև Արբաս Ա-ն իրանական բանակը բաղկացած էր 60 հազար զրղըլբաշներից: Բանակում գրեթե իսպառ բացակայում էր կարգապահությունը, ի տարբերություն թուրքական բանակի, այն աչքի չէր ընկնում իր կենտրոնացվածությամբ, և զրղըլբաշ զինվորները հաճախ նույնիսկ հրաժարվում էին կատարել շահի հրամանները (տե՛ս احمد تاج بخشى در زمان صفویه، تبریز، ۱۳۴۰، ص ۵۳):

<sup>4</sup> Թուֆանգիները հավաքագրվում էին իրանական բնակչությունից, իսկ զուլամները՝ վրացի և հայ պատանիներ էին, որոնք մանուկ հասակում խլվում էին ծնողներից, սնվում ու դաստիարակվում էին Իրանում, բռնի կերպով ընդունելով մահմեդականություն:

հրետանին: Ստեղծվեց նաև «շահիսևանների»<sup>5</sup> շահի հովանավորությունը վայելող հատուկ ռազմական կազմակերպություն, որը պետք է նպաստեր ոչ միայն բանակի ամրապնդմանը, այլև ղրգըլբաշական ավագանու ազդեցության թուլացմանը և կենտրոնական իշխանության կայունացմանը: Վերջին հարցը կարևոր տեղ էր գրավում շահի պլաններում և մշտապես գտնվում էր նրա ուշադրության կենտրոնում. այդ նպատակին էին ուղղված մի շարք միջոցառումներ ևս, ինչպես երկրի մայրաքաղաքի տեղափոխությունը (1598 թ.) Ղազվինից Սպահան՝ բուն իրանական շրջանների կենտրոնը<sup>6</sup>, պարսկական տարրի ակտիվացումը պետական-վարչական սիստեմում և այլն: Այս տենդենցն արտացոլվեց նաև 1595 թ. սկիզբ առած դրամական ռեֆորմի մեջ<sup>7</sup>: Դրանով շահ Աբբասը նաև նպատակ ուներ պետության մեջ մտցնել միասնական դրամական սիստեմ, որը, սակայն, չհաջողվեց իրականացնել, քանի որ նոր դրամական միավորի՝ «աբբասիի» հետ միասին շարունակում էին շրջանառության մեջ մնալ տարբեր արժեքի դրամներ<sup>8</sup>:

<sup>5</sup> Շահին սիրողներ: Որոշ տվյալներով՝ օրական 10 հազար շահիսևան էր զինվորագրվում, և սրանց թիվը շահ Աբբասի թագավորության վերջին հասնում էր հարյուր հազարների. باستانی پارینزی، جزر ومدسات

و اقتصاد در امپراطوری صفویه («یغما», ۱۳۴۵، شماره ۸، ص ۴۲۴)

<sup>6</sup> Շահ Աբբասի այդ ձեռնարկը պարսից պատմագրության մեջ տարբեր կերպ է գնահատվում: Եթե որոշ հեղինակներ մայրաքաղաքի տեղափոխությունը Սպահան բացատրում են հիմնականում քաղաքական հանգամանքներով (տե՛ս, օրինակ՝ ۴۲۴-۴۲۳ ص شماره ۸، «یغما», ۱۳۴۵)، ապա պատմաբաններից ոմանք, ինչպես Արոլդասեմ Սահարը, դրա հիմքում տեսնում են այնպիսի երկրորդական պատճառներ, ինչպիսիք են, օրինակ, «Սպահանի մաքրությունը և օղի թարմությունը» (اجه انقاسم سعاب، تاریخ زندگانی شاه عباس کبیر، تهران، ۱۳۲۵، ص ۳۳-۳۴):

<sup>7</sup> Աբբաս Ա-ի դրամները մեծ մասամբ դնեին պարսկերեն մակագրություն, հակառակ նախկին արաբերենի (տե՛ս А. М. Раджабли, Монетное дело в Сефевидском государстве (XVI—нач. XVIII вв.), автореф. канд. дис., Баку, 1963, стр. 13).

<sup>8</sup> Տե՛ս Н. Пигулевская [и др.], նշվ. աշխ., էջ 278.

Շահ Աբբասի բարեփոխումները շոշափելի դարձան նաև հարկային քաղաքականության բնագավառում<sup>9</sup>, որի հետևվանքով Իրանում որոշակիորեն նվազեցին բնակչությունից դանձվող հարկերը, իսկ շատ շրջաններ, մասնավորապես Պարսկական Իրաքը, ազատվեցին որոշ ծանր հարկերից: Հարկային քաղաքականության մեջ ևս շահ Աբբասը հետամուտ էր Իրանի կենտրոնական շրջաններին հովանավորելու իր հետևողական գծին, որով առաջնորդվելով նա միջոցներ ձեռնարկեց նաև երկրի տնտեսությունը վերականգնելու, արտադրողական ուժերը զարգացնելու, շինարարական աշխատանքներ ծավալելու, ներքին և արտաքին առևտուրն ընդարձակելու ուղղությամբ:

Այդ ընթացքում շահն ստիպված էր նաև զբաղվել ներքին ապստամբությունների, առանձին խաների կամ վաշկատուն ցեղերի խռովությունների ճնշմամբ, որոնք XVI դ. վերջին քսանամյակում շարունակ բռնկվում էին երկրի տարբեր շրջաններում, ինչպես՝ Լորեստանում, Ֆարսում, Քերմանում, Գիլանում, Խորասանում, Սիսթանում: Մասնավորապես միջոցներ էին ձեռնարկվում սանձելու զրզրբաշ ցեղերին, որոնց նկատմամբ շահն առանձնահատուկ դաժանություն էր հանդես բերում, շահնդուրծելով նրանց օրըստօրև աճող անհնազանդությունը<sup>10</sup>:

Արտաքին հարաբերությունների բարելավման գործում ևս շահ Աբբաս Ա.-ն զգալի քայլ կատարեց, գործունև և աշխույժ մթնոլորտ ստեղծելով Իրանի ու այլ երկրների հարաբերություններում, շխորշելով քրիստոնյա երկրների հետ կապեր հաստատելուց:

<sup>9</sup> Այդ մասին տե՛ս Н. Миклухо-Маклай, К вопросу о налоговой политике в Иране при Аббасе I (1587—1629) («Советское востоковедение», 1949, т. VI).

<sup>10</sup> Այսպես, 1597 թ. շահի հրամանով գլխովին ոչնչացվեց թեքելու ըմբոստ ցեղը (տե՛ս 029 ص 1 ج 'اسکندر منشی):

Գեսապաններ փոխանակելով ուզբեկների<sup>11</sup>, Ռուսաստանի<sup>12</sup> և արևմտաեվրոպական երկրների (Իսպանիա և Պորտուգալիա, Գերմանիա, Հոլմ և այլն) հետ, շահ Աբբասը ջանում էր սերտ կապեր հաստատել առավելապես իր ախոյան թուրքիայի նկատմամբ թշնամի պետությունների հետ, դրանով իսկ հետապնդելով հիմնականում երկու նպատակ՝ ստեղծել հակաթուրքական միություն և զարգացնել իր երկրի արտաքին առևտուրը: Այս ասպարեզում շահ Աբբասը առաջնորդվում էր եվրոպական երկրներին ըստ ամենայնի սիրաշահելու սկզբունքով, անվարան զիջումներ անելով և արտոնություններ շոսյլելով այդ երկրների ներկայացուցիչներին<sup>13</sup>:

Եվրոպական պետությունները, բնականաբար, չէին հպարդում օգտագործել նման բարյացակամ վերաբերմունք՝ ունենալով իրենց ակնկալությունները, մասնավորապես առևտրի և Իրանում կաթոլիկություն տարածելու ասպարեզում:

<sup>11</sup> 1599 թ. Հերաթում տեղի է ունենում շահի դեսպան Մուհամմադ-զուլի-բեկի հանդիպումը Մավերաննահրի էմիր ուզբեկ Արզուլլա-խանի հետ, որն իր հերթին Իրան է ուղարկում Բահադեբին (տե՛ս اسكندر ۱ ص ۵۴۷):

<sup>12</sup> S. A. РИТТИХ, Политико-статистический очерк Персии, СПб., 1896, стр. 195—202; محمد نك، شاه عباس كبير، تهران، ۱۹۵۲ ص ۲۰۸

<sup>13</sup> Բավական է հայացք ձգել շահ Աբբաս Ա-ի այդ շրջանի ֆերմաններին, պատկերացնելու համար, թե ինչպիսի լայն իրավունքներ ու հնարավորություններ էին տրվում արևմտաեվրոպական տերությունների ներկայացուցիչներին, մասնավորապես վաճառականներին և հողերականներին Իրանում. «...Այսօրվանից մեր ողջ երկիրը և տերությունը,—կարդում ենք այդպիսի ֆերմաններից մեկում,—բոլոր քրիստոնյա ժողովուրդների առջև և բոլոր նրանց, ովքեր այդ կրոնն ունեն, բաց լինեն. այնպես, որ ոչ ոք չկարողանա նրանց հետ արհամարհանքով խոսել...: Նրանց ներմուծած ողջ ապրանքը մաքսատուրքից կազատվի...: Մեր կրոնական ղեկավարները, որ դասից էլ լինեն, չպետք է համարձակվեն պատճառ լինել նրանց անհանգստության և որևէ խոսք ասել նրանց կրոնի հասցեին...»: Այնուհետև ֆերմանում ասվում է, որ երկրի դատական կամ իշխանական ոչ մի պաշտոնյա նրանցից չպետք է վճար վերցնի. ոչ ոք չպետք է արգելք լինի նրանց բնակությանն Իրանում, որտեղ նրանք պետք է լիովին ազատ ու բավարարված զգան իրենց (տե՛ս ۱۰۴-۱۰۳ ص... ایران):

Այդուհանդերձ, եթե առևտրի զարգացման ուղղութիւնով շահ Աբրաս Ա-ն հասած որոշակի հաջողութեան, ապա Քուրքիայի դեմ միացյալ ճակատի ստեղծման հարցում նրա ջանքերը ցանկալի արդյունք չտվեցին: Չնայած նախապես կայացած համաձայնութեանը և ապա շահի պարբերաբար հիշեցումներին<sup>14</sup>, եվրոպական տերութիւններից ոչ մեկը շարժարացրեց շահ Աբրասի հույսերը<sup>15</sup>:

Չնայած դրան, Քուրքիայի դեմ պատերազմի նախօրյակին շահ Աբրասը դեռևս հույսեր էր կապում Եվրոպայի հետ, ուստի և ամեն կերպ պայմաններ էր ստեղծում արևմտյան պետութիւնների հետ բարեկամական հարաբերութիւնների համար:

\* \* \*

Անշուշտ, պատերազմի ելքը կախած կլինէր նաև Քուրքիայի վիճակից: Վերջինս այդ շրջանում արդեն կանգնած էր ճգնաժամ հասունացնող լուրջ փոփոխութիւնների շեմին<sup>16</sup>:

XVI դ. դեռ սկզբին Օսմանյան կայսրութիւնում ծանր հարկերի և գյուղացիութեան անողոք ճնշման հետևանքով ծայր էին առել գյուղացիական ապստամբութիւններ և բողոքի զանազան այլ դրսևորումներ, ինչպես՝ գյուղացիների զանգվածային փախուստ իրենց բնակավայրերից:

XVI դ. երկրորդ կեսից արագ կերպով աճում են պետա-

<sup>14</sup> Տե՛ս, օրինակ, շահ Աբրաս Ա-ի 1607թ. նոյեմբերի 8-ի նամակը՝ ուղղված Իսպանիայի թագավոր Ֆելիպ Գ-ին («...ایران...» ص ۱۰۰-۱۰۱):

<sup>15</sup> Այս փաստը խիստ վրդովմունքով է ընդունվում պարսիկ հեղինակների կողմից, որոնք առանձին հանդիմանութեամբ ընդգծում են այդ հարցում եվրոպական պետութիւնների ուխտադրուած վերաբերմունքն Իրանի նկատմամբ (տե՛ս, օրինակ՝ ص ۲۰۳ «...ایران...» ص ۱۰۰-۱۰۱):

<sup>16</sup> Տե՛ս В. А. Гордлевский, Внутреннее состояние Турции во второй половине XVI в. (Труды Ин-та востоковедения АН СССР, сб. 2, 1940).

կան հարկերը, երևան են գալիս նորանոր («ավարիզ» կոչվող) հարկեր, սկսում է կիրառվել գյուղատնտեսական արտադրանքի ստիպողական վաճառք, որ դառնում է գյուղացիութանը կողոպտելու անողորմ միջոցներից մեկը: Հայն ընթացք են ստանում աշխատանքային պարհակները, ինչպես նաև հարկերի գանձումը դրամով, որի հետևանքով ուժեղանում է գյուղացիների կախվածությունը վաշխառուներից և նրանց հողագրկումը: Ստեղծված վիճակը հասցնում է գյուղատնտեսության անկման, պարենային ճգնաժամի և գների ահավոր աճի: XVI դ. վերջին և XVII դ. սկզբին ամբողջ Անատոլիայում մոլեգնում էր սովը:

Այս պայմաններում ողջ կայսրությունում ծնունդ են առնում նոր հուզումներ և գյուղացիական շարժումներ<sup>17</sup>: Չնայած այդ ապստամբությունների պարտությունը, նրանք խոր հետքեր էին թողնում ու խարխում օսմանյան տերության հիմքերը:

Թուրքիան առավելապես ցնցվեց ջալալիների շարժումներից: Իրենց մասշտաբներով և ընդգրկումով աննախընթաց այդ ապստամբությունները, որոնք սկիզբ առան XVI դ. 90-ական թվականներին, արագությամբ տարածվեցին ամբողջ Փոքր Ասիայով մեկ, հասնելով մինչև Անդրկովկաս: Գյուղացիական շարժումները զուգորդվում էին կենտրոնական իշխանության քաղաքականությունից դժգոհ մանր ֆեոդալների ելույթների հետ: Ջալալիական շարժումների հետքերը անջնջելի եղան Օսմանյան կայսրության համար: Նրանք քիչ դեր չխաղացին նաև Թուրքիայի դեմ շահ Աբբաս Ա-ի արշավանքի ձեռնարկման գործում, դառնալով իրանա-թուրքական պատերազմների վերսկսմանը նպաստող ազդակներից մեկը:

Ի վերջո, Թուրքիայի ներքին ճգնաժամի հարուցիչը նրա ռազմա-ավատական սիստեմի քայքայման պրոցեսն էր,

<sup>17</sup> 1572 թ. ապստամբություն է բռնկվում Մոլդավիայում, 1594 թ.՝ Վալախիայում, 1596 և 1598 թթ.՝ Բուլղարիայում, XVI դ. վերջին և XVII դ. սկզբին՝ Հարավային Սերբիայում, Չեռնոգորիայում, Հերցեգովինայում և այլուր (տե՛ս А. Д. Новичев, Турция, М., 1965, стр. 36).

որի նախանշանները երևան էին եկեղ դեռևս XVI դ. առաջին կեսին:

Թուրքիան աստիճանաբար կորցնում է նաև երբեմնի ռազմական հզորութիւնը և պատերազմներում սկսում է պարտութիւն կրել:

Օսմանյան կայսրութիւնը ծվատվում էր նաև ֆեոդալական առանձին խմբավորումների միջև սկսված ներքին երկպառակութիւնների, կենտրոնախույս շարժումների, պալատական հեղաշրջումների, բանակում տեղի ունեցող խռովութիւնների հետևանքով:

Այսպիսով, XVI դ. վերջին և XVII դ. սկզբին, երբ Իրանը նախապատրաստվում էր Օսմանյան կայսրութիւնից վերըստին դրավել իր կորցրած տերիտորիաները, վերջինս բարդ իրավիճակ էր ապրում և՛ ներքին, և՛ միջազգային կյանքում:

\* \* \*

Թուրքիայի վիճակը, անշուշտ, իր անդրադարձումն էր ունենալու նաև Անդրկովկասում:

Դեռևս մինչև Կոստանդնուպոլսի հաշտութիւնը, 1578—1590 թթ. թուրք-պարսկական պատերազմների ընթացքում Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը շարունակ ենթարկվում էին ասպատակութիւնների՝ պատերազմող զորքերի (այդ թվում և Ղրիմի թաթարների) կողմից: Այդ պատերազմները քայքայում էին Անդրկովկասի տնտեսութիւնը, արգելակում արտադրողական ուժերի զարգացումը, կասեցնում հասարակական կյանքի առաջընթացը:

Ներխուժելով Անդրկովկաս և Ատրպատական, թուրք զավթիչները մեկը մյուսի հետևից արհավիրքներ էին բերում բնակչութիւնը. «...Սուլթան Մուրատս առաքեաց բազում զօրս ի վերայ Պարսից աշխարհին և էառ զԹարվէզ և զԵրեւան, զԳանջայ, և զԱրշար, և զՇամախի, մինչ ի դուռն Ալանաց... և. (30) աուր ճանապարհ զլայնութիւնն և զերկայնութիւն տիրեաց աշխարհացն, ժՆ. (15) ամ հեծելակոխ եղեալ,

ի սովու և ի սրոյ բազումք մեռան, և բազում երկիր աւերեցան...»,—հաղորդում է Դավրիժեցին<sup>18</sup>:

Իսքանդար Մունշին ևս մանրամասն տեղեկություններ է տալիս այդ շրջանում թուրք զավթիչների կատարած ավերածությունների ու բռնությունների մասին<sup>19</sup>: Նրա վկայությամբ թուրքերը սոսկալի ավերածության էին ենթարկել շատ քաղաքներ, մասնավորապես Թավրիզը, որի գրավումից (1585 թ.) հետո բնաջինջ արեցին նրա բնակչությանը: «Սպանված թավրիզեցիների դիակները այդպես էլ ընկած էին փողոցներում, տներում ու շուկաներում»,—գրում է Մունշին<sup>20</sup>:

Օսմանյան նվաճողներին միանում էին քուրդ ասպատակողները: Շարաֆ-խան Բիզլիսու վկայությամբ 1583 թ. Ամիրա-բեկը և Մուհամմադ-փաշան միացյալ ուժերով ավերի ու կողոպուտի են ենթարկում Մարաղան<sup>21</sup>:

Հովհ. Մարեցին նկարագրում է 1579 թ. օսմանցիների ասպատակությունը Գանջա, Պարտավ, Ճարաբերդ, Խաչեն, Դիզակ և այլուր, ապա դրան հաջորդած՝ 1579—80 թթ. ահավոր սովը, երբ երեխաներ էին մորթում և ուտում<sup>22</sup>: Պատկերելով թուրքական զորքի արշավանքը Երևանի վրա, նույն հեղինակը գրում է. «...Եւ եկին իսկ և աւերեցին, և բազում եկեղեցիս քակեալ, զքարինս ի շինումն բերդին տանէին...»<sup>23</sup>: «Յերբ Տփղիսում փաշա նստացրին և Գորում սանջաղ,— հաղորդում է վրաց անանուն գրիչը,—...լալա-փաշան... սովխիթցիներին շատ նեղացրեց...»<sup>24</sup>:

<sup>18</sup> Դավրիժեցի, էջ 568:

<sup>19</sup> ٥٠٤ ص ١ ج، اسكندر منشى، հմմտ. Ղ. Ալիշան, Հայաստան, մասն Բ, էջ 598:

<sup>20</sup> ٥٠٤ ص ١ ج، اسكندر منشى، (հմմտ. Դավրիժեցի, էջ 612):

<sup>21</sup> شرفنامه، تأليف الامير شرفخان ابدليسى، قاهره، ١٩٣١ ص ٧٧:

<sup>22</sup> «Մանր ժամանակագրություններ», հ. II, էջ 242—244, Դավրիժեցի, էջ 608—611:

<sup>23</sup> նույն տեղերում, էջ 244 և 611:

<sup>24</sup> Լ. Մելիքսեբ-Քեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 1936, էջ 137:

1590 թ. Անդրկովկասի վրա գերիշխանություն հաստատելուց հետո Թուրքիան սկսեց այդ երկրամասին պարտադրել իր հասարակական-քաղաքական սիստեմը և դաժան կեղեքման ենթարկել տեղի ժողովուրդներին: Անդրկովկասի բազմաթիվ շրջաններ բաժանվեցին սանջակներին, վիլայեթներին, փաշայություններին<sup>25</sup>: Գրաված շրջաններում Թուրքական աստիճանավորներն անց էին կացնում մարդահամար, կազմում հարկացուցակներ<sup>26</sup>, դաժան միջոցներով իրագործում ծանր հարկերի (ինչպես պաշտոնական, այնպես էլ հավելյալ) գանձումը և այլն: Օսմանյան Ջաֆար-փաշան «խիստ էառ հարկս ի ժողովրդեն է յարտաքոյ նոմօսաց իւրեանց»,—վկայում է Հովհ. Մարեցին<sup>27</sup>:

Թուրքերը հսկայական եկամուտ էին ստանում նվաճած շրջաններից: Բիդլիսին հաղորդում է, որ միայն Թավրիզի նահանգից (իսկ հետագայում՝ Մարաղայից) օսմանյան պետական գանձարանն էր մտնում 15 հազար խարվար<sup>28</sup> ոսկի<sup>29</sup>, իսկ նոր նվաճված երկրներից ընդհանուր եկամուտը Թուրք պատմաբանների նվազեցրած թվերով կազմում էր 25 միլիոն 200 հազար ակչե, այսինքն՝ 420 հազար ոսկեդրամ<sup>30</sup>:

Քրիստոնյա ժողովուրդների համար առանձին շարիք

<sup>25</sup> Տե՛ս В. В. Бартольд, Место Прикаспийских областей в истории мусульманского мира, Баку, 1925, стр. 145.

<sup>26</sup> Շարաֆ-խան Բիդլիսին, օրինակ, վկայում է Թավրիզի վիլայեթում կատարված այդպիսի հաշվառումների մասին. տե՛ս «شرفنامه» ۱۷۹۹ ج، նաև՝ «История Грузии», ч. 1, Тбилиси, 1962, стр. 292.

<sup>27</sup> «Մանր ժամանակագրություններ», հ. II, էջ 248, 'Խավրիժեցի', էջ 617:

<sup>28</sup> Կշոի միավոր, որ հավասար էր 300 կիլոգրամի (Թավրիզի մանով հաշված, որ կշռում էր 3000 գրամ, մեկ խարվարը հավասար էր 100 մանի):

<sup>29</sup> ۱۷۹۹ ج، «شرفنامه» (այդ թիվը, անշուշտ, շափազանցված է):

<sup>30</sup> Մ. Կ. Զուլայան, Թուրք-պարսկական պատերազմները Հայաստանի տերիտորիայի վրա և նրանց հետևանքները (1555—1595 թթ.), (ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1961, № 3, էջ 47):

էին պարբերաբար կրկնվող մանկաժողովները (դեվչիրմե)՝<sup>31</sup> Օսմանյան իշխանութիւնները յուրաքանչյուր 3—5 տարին մեկ հավաքագրում էին քրիստոնյաների 8—20 տարեկան տղաներին, որոնք ընդունում էին մահմեդականութուն, անցնում ռազմական ուսուցում և համալրում են իշխանների շարքերը: «Մանկաժողովը աւելի Ասիական գաւառներու մէջ կրկատարուէր,—գրում է Մ. Օրմանյանը,—և քրիստոնեայ տարրերուն մէջ աւելի հարստահարուողը Հայը կըլլար»<sup>32</sup>: Լինում էին և աղջկաժողովներ, երբ քրիստոնյաներից խլվում էին աղջիկներ՝ պալատի և հարեմի համար<sup>33</sup>: Քրիստոնյաները շարունակ ճգնում էին ազատվել մանկաժողովներից զանազան միջոցներով՝ սկսած փրկագնից կամ մանկահասակ աղջիկներին ամուսնացնելուց, մինչև սուլթաններից ու շահերից պաշտոնական գրութիւններ հայցելը՝ մանկաժողովը վերացնելու մասին<sup>34</sup>:

Բնակչության վրա ծանր էր նստում նաև հարկադիր աշխատանքը զանազան կառույցներում, մասնավորապես

<sup>31</sup> Այդ մասին տե՛ս Մ. Կ. Զուլպյան, «Դեվչիրմե»-ն (մանկահավաքը) Օսմանյան կայսրութեան մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների («Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3, էջ 247—256):

<sup>32</sup> Մ. Օրմանյան, նշվ. աշխ., մասն Բ, էջ 2236, տե՛ս նաև Մ. Զուլպյան, նշվ. հոդվ. («Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3, էջ 254): Մանկահավաքը խորթ չէր նաև ղրգըրաշներին, որոնք այդ միջոցով համալրում էին ղոլամների զորաբանակը:

<sup>33</sup> Տե՛ս Լեռ, Հայոց պատմութիւն, հ. III, էջ 125—126:

Աղջկաժողովի մանրամասն նկարագրութիւն է տալիս Զաքարիա Փառեհոցին (տե՛ս Զաքարիա Փառեհոցի, հ. Բ, էջ 138—140):

<sup>34</sup> Այսպես, 1543 թ. Մաղաբիա վարդապետ Դերջանցու կողմից փորձ է արվել (երկրորդ անգամ) սուլթան Սուլեյմանին համոզելու՝ վերացնել մանկաժողովը Դերջանում և Բարեբղում (տե՛ս Դավրիժեցի, էջ 582—583), հմմտ. Մ. Զուլպյան, նշվ. հոդվ. («Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3, էջ 254):

Դոլութիւն ունի ավելի ուշ՝ 1748 թ., Իբրահիմ շահի ռազամը՝ ի պատասխան Ղազար կաթողիկոսի խնդրանքի, որ մահմեդականները «զՀայոց տղայս և զաղջկունս մի՛ քարչեսցեն» (տե՛ս Սիմեոն Երևանցի, Զամբո, Վաղարշապատ, 1873, էջ 225), (այսուհետեւ՝ «Ջամբո»):

բերդերի, ամրոցների շինարարության վրա: Այսպես, մըտնելով Այրարատ, Զաֆար-փաշան նախ հրաման է արձակում, որ շրջապատի բնակիչներն ապահովեն իր զորքի սնունդն ու ձիերի կերը և ապա «թիւս քսան հազարաց արանց արկեալ ոամկաց Հայոց և տաճկաց ամենայն աշխարհաց ունելով ի ձեռս իրեանց որթուց և թիաց, տապարաց, և կացնաց, բահաց և փայտատաց, բրիչ տանց հիմանց...»<sup>35</sup>: Ծանր պարհակը ջլատում էր աշխատավոր գյուղացիության ուժերը, քայքայում տնտեսությունը:

Բազմաթիվ են այն վկայությունները, հիշատակութուններն ու ողբերը, որոնք կարելի է հիշել XVI դ. և մասնավորապես նրա վերջին տասնամյակների ընթացքում նվաճող հրոսակների համար ուղմարեմ դարձած Հայաստանի և հարևան երկրների ժողովուրդների կրածը պատկերելու համար<sup>36</sup>: Բավարարվենք երկու հիշատակությամբ:

«...Արդ գրեցաւ սա յամի Ռ և Լ (1581) թրւականիս մերում... ի թագաւորութեան Տաճկաց Բուզանդիոն, որ այժմ Ստամբոլ ասի, սուլթան Մուրատայ, զոր հրամայեաց նախարարաց իւրոց և առաքեաց ի Վան առ Խոսրով փաշայն իւր, թէ «Բողոքեա զզաւրս քո և ել գնա ի վերայ Կարմիր դիսու աշխարհին ի սահմանս Թարիզոյ յառ և յաւար հար զտեղս և զերկիր նոցա, սպան, գերեցոյ, այրէ և աւերեայ և ի յետս դարձիր»: Եւ յորժամ լուաւ զհրաման թագաւորին իւրոյ մեծ փաշայն Խոսրով և ժողովեալ բազում զաւրս և յաւուր պահոց Առաջաւորին ասպատակեալ դիմեցին և զընացին դէպ յարեւելս ի վերայ գաւառաց շահին, որ Կարմիր դիւխ ասի: Եւ գնացեալ հասին մինչև ի Թավրէզ և ի Նախչուան և զբազում քաղաքս և զգեղս և զգաւառս աւերեալ քանդեցին. զարսն սրով սպանին, զկանայսն և զտղայսն

<sup>35</sup> Դավրիժեցի, էջ 617:

<sup>36</sup> Թուրք-իրանական պատերազմների ժամանակ Հայաստանի վիճակի մասին տե՛ս Մ. Զուլայյան, նշվ. հոդվ. (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1961, № 3), Ն. Անասյան, Թուրքական տիրապետությունը Հայաստանում (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1951, № 5) և այլն:

գերի վարեցին և այնչափ անողորմ արարին, զի զտղայսն որորանով կալեալ և ընկեցին ի վառեալ թոնիրն ի մէջ կրակին... Եւ ետ այնորիկ բրէին նիզակ և հարկանէին զտղայսն ի ծայրս նիզակաց և վերացուցանէին զնիզակսն յերկինս ի վեր և հարկանէին զտղայս ի վերայ քարի և ի վերայ փայտի և սպանանէին... Եւ այլ բազում ազգի ազգի հնարս գործեցին, զի ոչ կարեմք պատմել և ոչ զաղէտսն ընդ զրով արկանել...»<sup>37</sup>։

Ահա Սիմեոն Տիգրանակերտցու վկայութիւնը. «Ի թուականիս Հայոց ՌԻԹ (1580) ...բազում զօրս առաքեաց (Սուլթան Մուրադը—Լ. Դ.) ի Պարսկաստան... և աւերեցին զբազում երկիր՝ և զամենեսեանսն ի սուր սուսերի մաշեցին. և ի քրիստոնէից բազում և անթիւ գերի վարեցին... զոմանս սրոյ ճարակ տուին, և զբազումս գերեցին, զայր և զկին, զմեծ և զփոքր, զաղջկունս և զանմեղ տղայս ի քրիստոնէից. և այլ բազում ոճիրս գործեցին, զոր ոչ կարէ ոք ընդ զրով արկանել կամ լեզուով ճառել զգառնութիւն և զնեղութիւն ժամանակիս...»<sup>38</sup>։

Դավրիժեցու հավաստմամբ «հարկապահանջութիւն այլազգեաց ծանրացեալ էր ի վերայ քրիստոնէից՝ որք կեղեքէին զկեանս նոցա, որև ի կաթուղիկոսէն ևս պահանջէին ինչս յուրովս. և նա զօրս կարէր՝ տայր, և զօրս ոչ կարէր՝ հալածական լինէր և թաքչէր ի պահանջողացն...»<sup>39</sup>։ Այսպիսով, հայ բարձրաստիճան հոգևորականութիւնն էլ ծանր հարկման էր ենթարկվում։ Ակնհայտ է էջմիածնի ու հայ հոգևոր դասի անապահով ու տնտեսական ծանր կացութիւնը, քանի որ «կաթուղիկոսքն ի չբաւորութենէ ոչ ունէին զոյք առ ի վճարել»<sup>40</sup>։ Այս հանգամանքը կրկնապատկում էր ժողովրդի

<sup>37</sup> «Մանր ժամանակագրութիւններ», հ. II, էջ 251։

<sup>38</sup> Հ. Մանանդյան և Հ. Անտոյան, Հայոց նոր վկաները (1155—1843), Վաղարշապատ, 1903, էջ 413—414։

<sup>39</sup> Դավրիժեցի, էջ 6, տե՛ս նաև էջ 7, 9։

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 9։ Դավրիժեցին հաղորդում է, որ օսմանյան իշխանութիւն տարիներին էջմիածնի վրա ծանրացել էր 50.000 զուռուշի պարտք (նույն տեղում, էջ 8)։

թշվառությունը, քանի որ հայ կաթողիկոսները հալածանքից ու պարտքից ազատվելու համար հնշում էին հավատացյալ հոտը և ի հաշիվ նրանց էին հատուցում պետական հարկերը:

Օսմանցիների հարձակումները դեպի Անդրկովկաս խստորեն կասեցնում էին նրա տնտեսության ու առևտրի զարգացումը, խափանում առևտրական ուղիները, ավերակ դարձնում վաճառաշատ քաղաքները: «Խիստ դառն ժամանակ էր: Զուղայ փախել էր յԱգուլիս...» — գրել է ջուղայեցի խոջա Գրումը նոր Զուղայի Բեթղեհեմի եկեղեցում գտնվող մի ավիտարանի հիշատակարանում, որտեղ նաև կարդում ենք «Թվականութեան հայոց ՌԼԴ (°) (1587) որ ուռումն եկաւ Կասրու (Կարսու) Երրվան շինեց, շատ աշխարհ աւերեց, գրեցուց (գերեցուց), ջարդեց: Դժար ժամանակ հասանք փառաք (փախաք) գնացաք Բասեն...»<sup>41</sup>:

Այսպիսով, օսմանյան լուծը, թեև տարբեր չափերով, բաժին էր ընկնում բնակչության բոլոր խավերին:

Նման իրավիճակը, բնականաբար, չէր կարող չծնել դժգոհություն ու ընդվզում: Ապստամբություններ էին բռնկվում Դաղստանում, Շիրվանում, Գորիում, Ախալքալաքում և այլուր: 1595—1596 թթ. մեծ ապստամբություն է բռնկվել Սասունում<sup>42</sup>: Օսմանցիներին լուրջ դիմադրություն է ցույց տվել վրաց Սիմոն Ա թագավորը, որի ղեկավարութեամբ անօրինակ պայքարի էջեր են գրվել: «...Եվ աստված նորից հաջողություն շնորհեց Սիմեոն (Սվիմոն) թագավորին, — հաղորդում է վրաց անանուն գրիչը, — և կոտորեց շատ ոսմանցիներին՝ թվով շորս հարյուր յոթանասուն երեք, Քրիստոսի 1586-ին...»<sup>43</sup>: Դավրիժեցիներ տարբեր առիթներով անդրադառնում է թուրքերի դեմ Սիմոնի գլխավորութեամբ մղված պայքարին<sup>44</sup>:

<sup>41</sup> С. В. Тер-Аветисян, Город Джуга, Тбилиси, 1937, стр. 47—48.

<sup>42</sup> Տե՛ս ԴՎԱ—ԴԴԳ Երկրագրագիտական հանրագրքի հ. Բ, էջ 138:

<sup>43</sup> Լ. Մելիքեյան-Բեկ, նշվ. աշխ., հ. Բ, էջ 138:

<sup>44</sup> Տե՛ս Դավրիժեցի, էջ 30, 616, 617, հմմտ. «История Грузии», ч. 1, стр. 291.

Օսմանյան քաղաքականության դեմ բողոքն արտահայտվում էր նաև թուրքերի գրաված շրջաններից բնակչության մասսայական փախուստով: XVI դ. վերջին հարավ-արևմուտյան վրաստանում կար 296 թափուր բնակավայր, իսկ մնացած 344 գյուղերից յուրաքանչյուրում մնացել էր 1—11 ընտանիք<sup>45</sup>: Բիդլիսու վկայությամբ Մարաղան այնպես էր լքվել բնակիչներից, որ թուրքական պետական գանձարանի համար զգալի է դառնում այդ շրջանից գանձվող հարկերի կտրուկ կասեցումը<sup>46</sup>:

Քիչ չեն փաստերը օսմանյան կեղեքիչների դեմ Անդերկովկասի ժողովուրդների համատեղ պայքարի մասին<sup>47</sup>:

Անշուշտ, Սեֆյան Իրանն անմասն չէր հիշյալ երկրներին կեղևքելուց: Սակայն թուրքական լուծը մնում էր իր ծանրությամբ չգերազանցված: Ուստի պատահական չէ, որ օսմանյան քաղաքականությունից դժգոհ շատերը, և՛ վերնախավից, և՛ աշխատավորության շարքերից, իրենց հայացքն ուղղում էին դեպի ղրզըլբաշների երկիրը, և արդեն XVII դ. առաջին տարիներին հաճախակի են դառնում մասսայական փախուստները անդրկովկասյան երկրներից դեպի Իրան: Դավրիժեցիին այդ կապակցությամբ հարուստ տվյալներ է հաղորդում: «...Բազումք ոմանք յաշխարհէս Ատրպատականի,—գրում է պատմիչը,—իշխանք և կողմնակալք մահմետականք և քրիստոնեայք, գնացեալ էին առ թագաւորն Պարսից, վասն զի յոյժ չարաչար նեղութեամբ նեղէին զնոսա ազգն Օսմանցոց ծանր հարկապահանջութեամբ, և կեղեքմամբ զրկէին և կողոպտէին, և հաւատոց կուռճուրթիւն (խըստութիւն) առնէին, և այլ բազում տառապանօք չարչարէին, ոչ միայն զազգս Հայոց, այլև զազգն Վրաց և զՄահմետականաց, և վասն այնր նեղութեան գնացին առ թագաւորն Պարսից, զի թերևս նովաւ դիւրութիւն գտցեն զերժեալք ի ծառայութենէն Օսմանցոց»<sup>48</sup>:

<sup>45</sup> «История Грузии», ч. 1, стр. 292.

<sup>46</sup> شرفنامه، ص ۷۹

<sup>47</sup> Sh'u, օրինակ, Մ. Զուպլաե, նշվ. հոդվ. (ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1961, № 3, էջ 48):

<sup>48</sup> Դավրիժեցի, էջ 15:

Օսմանյան սուլթանի դեմ ապստամբած քուրդ ցեղերի և հասարակության ստորին շերտերի մասին հիշատակում է նաև Իսրաանդար Մունշին<sup>49</sup>: Սակայն Դավրիժեցու «Պատմության» մեջ պահպանվել են օսմանյան իշխանությունների կողմից հարստահարված գյուղերի, իրենց տիրույթներից դրվված ֆեոդալների և այս կամ այն պատճառով Իրանում ապաստանած շատ անձնավորությունների անուններ: Դրանց թվում էին քուրդ Ղազի-խանը<sup>50</sup>, Ուլամաօղլի Հայբաթ-բեկը (դարձյալ քուրդ), Մեկքիսեթ կաթողիկոսը, Մանվել և Աստվածատուր եպիսկոպոսներն ու նրանց համախոհները, Սարուխան-բեկն իր եղբոր՝ Նազարի հետ՝ Ոսկանապատ գյուղից, Օղլան-բեշիշն իր եղբոր՝ Ղալբեկիի հետ՝ Հաթերք գյուղից, Ջալալ-բեկն իր եղբորորդիների հետ՝ Խաչենից և այլք, ինչպես նաև փախստական եղած ամբողջ գյուղեր, ինչպես Դիզակի շորս գյուղերը, Գողթն գավառից՝ դաշտեցիների երեք բառորդը և այլն: Փախստականների թիվը, ըստ երևույթին, մեծ է եղել, որովհետև նրանց թվարկելուց հետո Դավրիժեցին ավելացնում է՝ «առաւել, քան զսոսա յոլովք զնացեալ էին առ շահն»<sup>51</sup>: Դավրիժեցու տվյալները ցույց են տալիս, որ շահին իրենց հավատարմությունն են հայտնել զանազան ժողովուրդների սոցիալական տարբեր շերտերի ներկայացուցիչներ, որոնք սիրալիք ընդունելություն էին գտնում շահի կողմից: Եվ դա ապտահական չէր: Ղըզըլբաշների տիրությունն այժմ բավականաչափ ամրապնդված էր, որպեսզի կրկին պայքարի մեջ մտնել Թուրքիայի հետ, մանավանդ որ վերջինս ճգնաժամ էր ապրում: Այս հանգամանքն իր հերթին բարենպաստ հող էր ստեղծում շահ Աբբաս Ա-ի կողմից նախապատրաստվող պատերազմի համար և մոտեցնում

<sup>49</sup> ۷۱۶ ج ۱، ص ۷۱

<sup>50</sup> Ղազի-խանը, որը հետապնդվում էր թուրքական իշխանությունների կողմից, իրեն հավատարիմ Խան-Ավդալին առաքեց Իրանի շահի մոտ, որպեսզի վերջինս օգնության գա նրան, իսկ ինքը «լինիցի ի կողմն շահին» (Դավրիժեցի, էջ 15):

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 17:

նրա արշավանքի ձեռնարկման ժամանակը: Նման պայմաններում Իրանի համար ավելի քան շահավետ էր Թուրքիայից դժգոհ տարրերի անցումն իր կողմը: Ուստի «ըստ խորամանկ բարուց իւրոց Շահաբաս սկսաւ մեծարել և պատուել զնոսա (փախստականներին—Լ. Գ.) տրօք և պարզեօք երիվելեօք, և օր ըստ օրէ կոշեալ զնոսա առ ինքն՝ խօսէր ընդ նոսա ըստ մտաց նոցա... և զինքն նոցին հաւատարիմ և բարեկամ ձեւացուցանէր», և դա տեւեց այնքան, «մինչ... զամենայն որպիսութիւն աշխարհաց նոցա զել և զմուտ և զաշխարհակալ արանց իմացաւ»<sup>52</sup>: Այսպիսով, ստեղծված իրավիճակը նպաստավոր էր Իրանի համար նաև այն առումով, որ հնարավորութիւն էր տալիս ունենալ տեղեկութիւնների առատ աղբյուր Թուրքիայում և Անդրկովկասում տիրող իրերի դրութեան վերաբերյալ:

Արդեն հայտնի էր, որ սնակ թագաւորքն Վրաց ունէին կամք, զի Պարսիկք ունիցին զաշխարհս. քանզի ոգուով շափվշտացեալք էին յՕսմանցւոց՝ ոչ միայն վասն նեղութեանց Օսմանցւոց, այլ մանաւանդ վասն ըմբռնմանն մեծ Սիմոն խանին թագաւորին իւրեանց՝ զոր ըմբռնեալ Օսմանցիքն տարան ի Ստամբօլ և անդ սպանին, այլև զթոռն սորա ևս խաբով տարան ի Ստամբօլ և զնա ևս սպանին»<sup>53</sup>: Բացի դրանից, վրացիներն Իրանում մեծ թվով պատանդներ ունեին<sup>54</sup>, որը նույնպես դեր էր խաղում նրանց դիրքորոշման հարցում:

Բոլոր տվյալների համաձայն, Թուրքիայի դեմ պատերազմ սկսելու դեպքում շահը կարող էր հույս դնել հայ, ադրբեջանցի, քուրդ և վրացի վերնախավի աջակցութեան վրա:

<sup>52</sup> Նույն տեղում, էջ 17—18:

<sup>53</sup> Նույն տեղում, էջ 15—16, հմմտ. «История Грузии», ч. 1, стр. 291; Լ. Մելիքսեր-Բեկ, նշվ. աշխ., հ. Բ, էջ 139:

<sup>54</sup> 'Իավրիժեցու հաղորդամբ Իրանում որպես պատանդ էին զտնվում Սիմոնի որդին և դուստրը, Կախեթի Ալեքսանդր թագավորի որդին՝ Կոստանդինը, Սոմխեթի Աթաբեկ իշխանի եղբայր Թահմազուլին և այլք (Դավրիժեցի, էջ 16):

ժամանակը հասունացել էր Իրանի համար՝ իրագործելու վաղեմի ծրագիրը, Թուրքիայից ետ խլելու իր զիջած տերիտորիաները՝ Անդրկովկասն ու Ատրպատականը կամ, ինչպես պարսիկներն էին արտահայտվում՝ «ժառանգական հողերը»։ Դավրիժեցու հաղորդմամբ՝ Զուլֆեղար-խանը, հայտարարելով շահ Աբբաս Ա-ի՝ նախիջևան արշավելու մասին, շեշտում է. «...Ինքնակալ թագաւոր բազում զօրօք եկեալ զհայրենի աշխարհն իւր խնդրէ»...<sup>55</sup>։

ժամանակի այդ մտայնությունն արտահայտվել է պարսից պատմագրության մեջ, որտեղ ակնհայտ է շահ Աբբաս Ա-ի արշավանքներն արդարացնելու, նրանց նվաճողական բնույթը սքողելու միտումը։ Այսպիսի տեսանկյունից հիշյալ արշավանքները դիտվում են իբրև մի ձեռնարկ, որն Իրանի կողմից հետապնդում էր լոկ սեփական, «ժառանգական» (موروثی) տերիտորիաները նվաճելու նպատակ<sup>56</sup>։

Սակայն «ժառանգական հողերի» թեզը միակը չէր շահ Աբբաս Ա-ի նվաճումներն արդարացնելու հարցում։ Այդ միտումն արտահայտվել է նաև իրանա-թուրքական հակամարտությունների պատճառի վերաբերյալ Իրանի որոշ պատմաբանների մեկնաբանություն մեջ<sup>57</sup>, որով անտեսվում է հիմնականը և էականն այդ երկրների բախման մեջ, այն է՝ Անդրկովկասում և Ատրպատականում տնտեսական-քաղաքական գերիշխանություն ձեռք բերելու ձգտումը։ Ավելին, փորձ է արվում շահ Աբբաս Ա-ի արշավանքները ներկայացնել իբրև «փրկություն» տեղի ժողովուրդների համար։ Բավական է նշել, օրինակ, որ Մուհամմադ Փարանգն այդ իրադարձությունները նկարագրում է այսպիսի վերնագրի տակ՝ «Թավրիզից մինչև Շամախի կամ Ադրբեջանի և Կովկասի փրկության շրջանը»<sup>58</sup>։

<sup>55</sup> Նույն տեղում, էջ 23։

<sup>56</sup> اسکندر منشی، ج ۲، ص ۶۳۶-۶۳۷، محمد پرنک، ص ۲۴۰

<sup>57</sup> Sht'u, օրինակ՝ ص ۲۹۹، ابوالقاسم سبحان

<sup>58</sup> محمد پرنک، ص ۱۹۸

Դավրիժեցու տվյալները հնարավորությունն են ընձեռում հերքելու նման միտումները, ընդգծելով շահ Աբբաս Ա-ի ձեռնարկած արշավանքների նվաճողական, զավթողական բնույթը և Անդրկովկասի ժողովուրդների համար նրանց ավերիչ նշանակությունը:

Հենց սկզբից նշենք, որ շահ Աբբասի այս արշավանքները շարդարացրին Անդրկովկասի բնակչության հույսերը՝ ազատվելու դաժան շահագործումից ու ծանր հարկերից: Նվաճվելով Սեֆևիդների կողմից, նրանք նորից ենթարկվեցին զրկանքների ու կողոպուտի, գերեվարության ու տարագրման, իսկ պատերազմից հետո՝ ծանր հարկման ու շահագործման:

\* \* \*

Տեղեկություն ստանալով այն մասին, որ Քավրիզի կայսրը բացակայում է քաղաքից<sup>59</sup>, շահ Աբբաս Ա-ն, որը 1603 թ. գարնանից արդեն հարմար առիթի էր սպասում, 1603 թ. սեպտեմբերի 14-ին (հեջրիի 1012 թ. ռաբի'-ուլ-ախիր ամսի 7-ին)<sup>60</sup> համեմատաբար փոքրաթիվ զորքով դուրս է գալիս Սպահանից և սրընթաց շարժվում դեպի Քավրիզ, լուր տարածելով, թե ցանկություն է հայտնել որսի գնալ Մազանդարանի կողմերը<sup>61</sup>: Նպատակ ունենալով անսպասելի հարձակմամբ հանկարծակիի բերել թշնամուն, պարսից շահը շտապում է կարելվույն չափ, խիստ գաղտնի պահելով պատերազմական գործողությունների պլանը: «...Բնաւ ոչ

<sup>59</sup> Դավրիժեցու հաղորդմամբ. Քավրիզի զորապետը՝ Ալի-փաշան, 20 հազար զորքի գլուխ անցած, հարձակվել էր Սալմաստի վրա՝ ընդդեմ վերոհիշյալ քորդ Ղազի-խանի (տե՛ս Դավրիժեցի, էջ 18):

<sup>60</sup> ԴՊՊՎՎ, Երջ 2, էջ 79, Դավրիժեցի, էջ 36, 634: Որոշ ուսումնասիրություններում արշավանքի սկիզբը սխալմամբ 1602-ին է թվագրված (տե՛ս, օրինակ՝ И. П. Петрушевский, Азербайджан в XVI—XVII вв. («Сборник статей по истории Азербайджана», вып. 1, Баку, 1949, стр. 277).

<sup>61</sup> ԴՊՊՎՎ, Երջ 2, էջ 80.

գիտացեալ զօրացն Օսմանցոց զգալն Պարսից,—գրում է Դավրիժեցին,—քանզի ոչ թէ ի բազում, այլ ի սակաւ աւուրս եհաս ի Թարվիզ»<sup>62</sup>։ Արշավանքի խիստ զաղտնի ծրագրի մասին վկայում են նաև Իսքանդար Մունշին, Քյաթիր Զելեբին, վերջապես հենց շահի հրովարտակը, որտեղ պատերազմական գործողութիւնների պլանի մասին տեղեկութիւնից հետո ասվում է. «Եի հարկե, այս հարցում պետք է զգուշ լինել, որպեսզի... այս բոլորը խիստ զաղտնի պահվի և հաղթական դրոշմների առաջանալու մասին օսմանցիք տեղեկութիւն չունենան»<sup>63</sup>։

Ժամ առաջ Թավրիզ հասնելու և անպաշտպան քաղաքը հեշտութեամբ նվաճելու շահ Աբբասի որոշումն այնքան հաստատուն էր, որ Սպահանից Թավրիզ ընկած ճանապարհը պարսից զորքն անցնում է ամենակարճ ժամանակում և արշավանքի 12-րդ օրը մտնում օսմանյան զորքերից իրոք թափուր քաղաքը։ Այսպիսով, շահին հաջողվում է հմտորեն օգտագործել Ալի-փաշայի բացակայութիւնը Թավրիզից։ Այս հանգամանքը, սակայն, Դավրիժեցին որոշակիորեն չի նշում։ Որ շահը նախապես տեղյակ էր Թավրիզի վիճակին, ավելի հստակ երևում է նրա հրովարտակից, որտեղ ասվում է. «Եվ ոչ մի տեղ կանգ չենք առնելու, որովհետև մտադիր ենք այնպես հասնել Թավրիզ, որպեսզի Թավրիզի փաշային թույլ չտանք քաղաք մտնել»<sup>64</sup>։ Նույն հարցի կապակցութեամբ Իսքանդար Մունշին գրում է. «Առիթը ձեռքից բաց թողնելը խելոքներին վայել չէ. քանի որ այս քանի օր Թավրիզի զորքը և բեկլարբեկին քրդերի հոտից են գնացել... պետք է նախքան Ալի փաշայի Թավրիզ վերադառնալը հասնենք, որպեսզի բերդը հեշտութեամբ ձեռք բերենք»<sup>65</sup>։

Ղազի-խանը սկզբում ամբացել էր Սալմաստում, բայց հետո, խույս տալով օսմանյան զորքից, գնաց Ուրմիա և

<sup>62</sup> Դավրիժեցի, էջ 18, համա. 7-8 Վ ը, 2 ը, 3 ը

<sup>63</sup> ՄՊԸ, պր. 2, էջ 80:

<sup>64</sup> Նույն տեղում:

<sup>65</sup> 7-7 Վ ը, 2 ը, 3 ը

«եմուտ ի յանառիկ բերդն՝ որ ասի Գօգարչին ղալասի, որ է ի մէջ ծովակին Որմուշ և անդ ամրացաւ»<sup>66</sup>,

Սակայն Ալի-փաշայի զորքը, Դավրիժեցու հաղորդամբ, շքնաց Ուրմիա, կամենալով նախ գրավել Սալմաստի Ղառնիեարուխ բերդը, որի երեք ամիս տևած պաշարումը, սակայն, ապարդյուն եղավ: Տեղեկանալով պարսից զորքի հարձակման մասին, օսմանցիներն իսկույն «թողիալ՝ զպատերազմն բերդին, դարձան և եկին մերձ ի գիւղն Սօֆիան»<sup>67</sup>, իսկ ըստ Իսքանդար Մունշու, Ալի-փաշան բերդը «խաղաղութեամբ գրավեց Ղազի-բեկից»<sup>68</sup>: Դավրիժեցու հաղորդումն ավելի հավանական է թվում, քանի որ շահ Աբբասի հանկարծակի հարձակումը պետք է, որ փոխեր օսմանցիներին պլանները և ստիպեր նրանց վերադառնալ՝ ղրզըլբաշներին դիմադրելու:

Երկու բանակները հանդիպեցին Սոֆիանում<sup>69</sup>, որտեղ տեղի ունեցած ճակատամարտը նշանավորեց իրանա-թուրքական պատերազմների այս փուլը: Որոշ տարակուսանքի առիթ է տվել այն հարցը, թե Քավրիզի գրավումը ղրզըլբաշների կողմից նախորդել է Սոֆիանի ճակատամարտին, թե՛ հաջորդել<sup>70</sup>: Բանն այն է, որ Քավրիզի առումն<sup>71</sup> ընդմիջվել է Սոֆիանի ճակատամարտով, որը հաջորդել է քաղաքի և նախորդել նրա բերդի գրավմանը: Դավրիժեցին նշում է, որ շահը Քավրիզ գալով «եթող զքաղաքն» և զնաց օսմանցիներին դեմ պատերազմելու Սոֆիանում<sup>72</sup>: Դա, իհարկե, չի

<sup>66</sup> Դավրիժեցի, էջ 19:

<sup>67</sup> նույն տեղում:

<sup>68</sup> اسکندریه منشی، ج ۲، ص ۷۳

<sup>69</sup> Սոֆիանը գտնվում է Քավրիզից 40 կմ դեպի արևմուտք: Սոֆիանի նկարագրութունը տե՛ս ترجمه محمد شاردن، «سیاحتنامه شاردن»، ج ۲، تهران ۱۳۳۵، ص ۹۰

<sup>70</sup> Տե՛ս Մ. Զուլայան, Թուրք-պարսկական պատերազմները Հայաստանում և նրանց հետևանքները (ՀՄՄՀ ԳԱ «Երաբեր», 1966, № 2, էջ 84):

<sup>71</sup> Քավրիզի գրավման թվականի բացատրութունը տե՛ս ՄՊՀ, պր. 2, էջ 150—151:

<sup>72</sup> Դավրիժեցի, էջ 19:

նշանակում, թե շահն ազատ թողեց քաղաքը: Հիշենք, որ շահի առաջնահերթ խնդիրը Թավրիզի գրավումն էր:

Եվ իրոք, լստ մեզ հասած տեղեկությունների, մինչև Սոֆիանի մարտը Թավրիզը փաստորեն ենթարկված էր զըզըլբաշներին, որոնք տնօրինում էին քաղաքի անցուղարձը և դաժանորեն հաշվեհարդար տեսնում օսմանցիների հետ: Դա միանգամայն համոզիչ է, քանի որ, աղբյուրների վկայությամբ, պարսիկները ոչ միայն չէին հանդիպել դիմադրության, այլև, ընդհակառակը, օսմանցիներից կեղեքված Թավրիզի բնակչությունն ուրախությամբ էր դիմավորել պարսկական զորքին<sup>73</sup>: «Ոչինչ դժվարութիւն ել ընդ առաջ նոյն արշաւանացն նորա,—գրում է Հ. Տեր-Հովհաննյանցը, հենվելով ինչպես Դավրիժեցու, այնպես էլ զանազան հիշատակարանների և գրավոր այլ վկայությունների վրա,—...մտեալ Շահաբասայ ի Դաւրէժ յետ հնազանդեցուցանելոյ զքաղաքն ընդ իշխանութեամբ իւրով, փութացաւ յօգնութիւն Ղազիխան ամիրային. և ի դաշտին Սօֆիանու պատերազմաւ հանդիպեալ Ալիփաշային՝ յաղթեաց նմա»<sup>74</sup>: Նույնն է վկայում և Իսրանդար Մունշին<sup>75</sup>:

Թավրիզում եղած երկու-երեք օրվա ընթացքում շահ Աբրասը կարողացավ ոչ միայն տիրել քաղաքին, այլև կարգավորել իր ուժերը: Սակայն, տեղեկանալով թուրքական զորքի՝ Սալմաստից ետ դառնալու և դեպի Սոֆիան առաջխաղացման մասին, նա հետաձգում է Թավրիզի բերդի գրավումը և սեպտեմբերի 28-ին՝ ճակատամարտի նախօրյակին, շարժվում դեպի Սոֆիան:

Սոֆիանի ճակատամարտը, որ տեղի ունեցավ սեպտեմբերի 29-ին (ուաբի՝ ուլ-ախիր ամսի 22)<sup>76</sup>, մանրամասնու-

<sup>73</sup> Տե՛ս Բ...—199 ص محمد پرنك،

<sup>74</sup> Հ. Տեր-Հովհաննյանց, նշվ. աշխ., հ. 1, էջ 12:

<sup>75</sup> Տե՛ս Բ...—76-8 ص اسكندر منشى، ج ۲،

<sup>76</sup> Համմերի՝ Ք. Զևեբիի «Ֆեզլեբե»-ից կատարված մեջբերման մեջ այդ ճակատամարտը սխալմամբ թվագրված է սեպտեմբերի 25-ին (19 ուաբի՝ ուլ-ախիր), (տե՛ս Մ. Զուլպյան, նշվ. հոդվ. (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1966, № 2, էջ 84):

Թյամբ նկարագրված է ինչպես Դավրիժեցու մոտ, այնպես էլ պարսից ու թուրքական աղբյուրներում:

Դավրիժեցու տվյալները ցույց են տալիս, որ այս ճակատամարտում, որտեղ «յանդուզն բախմամբ» հանդիպեցին թշնամի բանակները, ապստամբ էմիրները, որոնք դիմել էին շահին, արդարացնում են վերջինիս հույսերը, քաջարար կռվելով օսմանցիների դեմ: Պատմիչն առանձնապես հիշատակում է Ուլամաօղլի Հայբաթ-բեկին, «զի քսան գլուխ եբեր առաջի շահին յայնմ պատերազմի»<sup>77</sup>: Նրա սպանությունը կասեցնում է պարսիկների եռանդը, չորով սուղ ինչ պարտեալ երևիւր կողմն պարսից»<sup>78</sup>: Սակայն շուտով դեպքերն ընթանում են հօգուտ պարսից զորքի, իսկ Ալի-փաշան, տեսնելով իր բանակի պարտությունը, որդու հետ ներկայանում է շահին և ազատություն խնդրում. շահը մեծ պատվով պահում է նրան իր մոտ և ապա տանում Սպահան<sup>79</sup>: Մոտավորապես նույնն են պատմում նաև Մունշին ու թուրքական աղբյուրները:

Սակայն աղբյուրների տվյալները համեմատելիս աչքի է զարնում մի բնորոշ գիծ. միևնույն իրադարձությունները նկարագրված են տարբեր լույսի տակ՝ թելադրված աղբյուրի հեղինակի դիրքորոշմամբ: Քյաթիբ Չելեբին, օրինակ, խիստ արհամարհանքով է պատմում Ղազի Կարա Հասանի ձեռքով սպանված պարսից հրամանատար Ալիօղլու մասին<sup>80</sup>, Մունշին, ընդհակառակը, գովեստով է խոսում և շարունակ ընդգծում պարսից զորքի ուժն ու արիությունը: Եվ եթե Դավրիժեցին անկողմնակալ կերպով նկարագրում է տիրող մթնոլորտը ու տալիս իրադարձության առավել կարևոր դրվագները, ապա Ք. Չելեբին մեծ տեղ է հատկացնում թուրքական զորքի հերոսական ոգու վերհանմանը, նկարագրում նրա առաջնորդի՝ «առյուծի պես կովող» Ալի-փաշայի, սխրանք-

<sup>77</sup> Դավրիժեցի, էջ 19:

<sup>78</sup> Նույն տեղում, էջ 20:

<sup>79</sup> Նույն տեղում:

<sup>80</sup> کاتب چلبی، فذلک، ج ۱، استانبول، ۱۲۸۶، ص ۲۰۵

ները, որոնք «դուր եկան նույնիսկ անարգ շահին», և երկար ու տաղտկալի նախապատրաստութիւնից հետո միայն հայտնում թուրքական զորքի պարտութեան մասին<sup>81</sup>:

Առֆիանում տարած հաղթանակից հետո շահ Աբբասը կրկին մտնում է Թավրիզ, ամբողջութեամբ տիրում քաղաքին, բերդին<sup>82</sup> և շրջակա գավառներին: Շու գրեթէ որ էր ի մէջ քաղաքին քարայտակ արարեալ քակեաց ի հիմանց զբովանդակն կացեալ անդէն աւուրս ինչ մինչև զամենայն երկիրն նուաճեաց ընդ ձեռամբ, կարգեաց իշխանս և գործակալս յամենայն սահմանս նորս<sup>83</sup>, իսկ օսմանյան մնացած զորքերը փախչում են Նախիջևան:

Թավրիզում եղած ժամանակ շահն Ամիր-Գունա-խանին ուղարկում է Գանձակ՝ կանխելու համար այնտեղից սպասվելիք ամեն մի վտանգ, ինչպես նաև ավար ձեռք բերելու նպատակով: Խանն այդ շրջանը հրի ճարակ դարձնելուց հետո մեծ թվով բնակիչների զորս կոտորեաց և զորս աւարեալ գերեաց աղխիւք և ընտանեօք և բերեալ էած յճրեան ի լիութիւն և ի յղփութիւն բանակին Պարսից<sup>84</sup>: Այսպիսով, ոչ միայն բուն պատերազմական գործողութիւններին ենթարկվող շրջաններում, այլև շրջակա տերիտորիաներում բնակչութիւնը շարունակ գտնվում էր սրի ու կողոպուտի սպառնալիքի տակ:

Նախիջևան հասած օսմանյան զորքը չի հասցնում լիովին իրագործել իր ծրագիրը՝ ավարառութեան ենթարկել Նախիջևանը, քանի որ շահը շտապ զորք է ուղարկում այնտեղ (Զրադ-սուլթանի գլխավորութեամբ), կասեցնելու օսմանցիների կողոպուտը՝ հատկապես Զուղայում<sup>85</sup>: Օսմանցիները դարձյալ նահանջում են, այս անգամ դեպի Երևան:

<sup>81</sup> Նույն տեղում, էջ 206:

<sup>82</sup> Թավրիզի բերդը գրավվում է ևս 22 օրվա պաշարումից հետո՝ հոկտեմբերի 21-ին (15 շուվադա-ուլ-ավվալ) (նույն տեղում):

<sup>83</sup> Դավրիժեցի, էջ 20:

<sup>84</sup> Նույն տեղում, էջ 27:

<sup>85</sup> Նույն տեղում, էջ 21, հմտ. ٦٢٣ ص ٢٢٠ «اسکندر منشی»:

Դավրիժեցու հաղորդմամբ Նախիջևանը ևս ղրզըլբաշները գրավում են առանց մարտական գործողությունների: Այնտեղ ուղարկված Զուֆեղար-խանը բանակցություններ է վարում օսմանցիների հետ՝ քաղաքը խաղաղությամբ հանձնելու մասին<sup>86</sup>: Հակառակորդի բռնի գերակշռությունն օսմանցիներին ստիպում է համաձայնել դրան և քաղաքից հեռանալ<sup>87</sup>: Սակայն Նախիջևանի բնիկները գերադասում են մնալ քաղաքում և իրենց ծառայությունն առաջարկել Իրանի շահին<sup>88</sup>: Նախիջևանը խաղաղ կերպով հանձնելու փաստը գտնում ենք նաև Իսբանդար Մունշու մոտ և թուրքական աղբյուրներում<sup>89</sup>:

Այսպիսով, շահը գրեթե անարգել մեկը մյուսի ետևից նվաճում էր թուրքական ռազմակալման ենթարկված շրջանները:

Այդ կերպ է նվաճվում նաև մետաքսի առևտրի կենտրոն՝ վաճառաշատ Զուղյան: Զուղայում շահն իջևանում է նախքան Նախիջևան գնալը, երեք օր շարունակ վայելելով ջուղայեցիների, մասնավորապես մեծահարուստ խոջանների ճոխ հյուրասիրությունը<sup>90</sup>: Այստեղ իսկ շահը նորից ականատես է

<sup>86</sup> Դավրիժեցի, էջ 23:

<sup>87</sup> Նույն տեղում: Ամենայն հավանականությամբ այստեղ խոսքը վերաբերում է Նախիջևանի բերդում մնացածներին, քանի որ օսմանյան զորքի գերակշռող մասն արդեն հեռացել էր Նախիջևանից:

<sup>88</sup> Դավրիժեցի, էջ 24:

<sup>89</sup> Չելեբին միաժամանակ նշում է Նախիջևանի բերդի պաշտպանների դիմադրության մասին («Джихан-ньюма» и «Фезлеке» Кятиба Челеби как источник по истории Армении (XVIIв.). Предисловие, перевод и комментарии А. А. Папазяна. Ереван, 1973, стр. 111), (այսուհետև՝ «Фезлеке»), որ չենք հանդիպում այլ աղբյուրներում: Նույնիսկ Նայիման, որ նույնությամբ կրկնում է Չելեբիի հազորածը, տեղեկացնում է, սակայն, որ Նախիջևանի բերդապահները թողնում են բերդը և փախչում Երևան (տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», կազմեց՝ Ա. Մաֆրաստյան, հ. Ա, Երևան, 1961, էջ 71), (այսուհետև՝ Ա. Մաֆրաստյան, նշվ. աշխ.):

<sup>90</sup> Դավրիժեցի, էջ 24—25: Այդ մասին վկայում է նաև 1602—1603 թթ.

լինում հայ խոշաների մեծ հարստութեանը, որին տիրելու համար հետագայում պիտի գործնական քայլեր աներ:

Այդ ընթացքում նախիջևանից նահանջած զորքը հասել էր Երևան և նրա բերդի հարավային կողմում կառուցել պարիսպ ու ևս մի բերդ, որտեղ և պատսպարվել էր<sup>91</sup>:

Մարտական գործողութիւնների հաջորդ կետը Երևանն է դառնում: Ինչպես պատմում է Դավրիժեցին, շահը Երևան հասնելուն պես պաշարում է բերդը: Այստեղ նա ձեռնամուխ է լինում զորքի համալրմանը՝ Արարատյան երկրի գյուղերից մեծ քանակութեամբ բնակիչների միացնելով իր բանակին: «Եւ ի ժամ պատերազմին, — գրում է պատմիչը, — յորժամ երիշ (յարձակումն) առնէին և կամ զսիրայն ի վեր քշէին, զքրիստոնեայն յառաջ խաղացուցեալ ընդդէմ հրոյ և սրոյ մատուցանէին, որովք կոտորեալք լինէին ազգն Հայոց յերկուց կողմանց՝ յառաջուտ յօսմանցուց՝ և յետուստ ի Պարսից»<sup>92</sup>:

Շահ Արբասը նախապես հոգացել էր նաև բանակի բոլոր կարիքները և «հանդարտութեամբ զտեղի առեալ կայրէր զի երբեմն խստագոյնս պատերազմէր, և էր զի թուլագոյնս»<sup>93</sup>, մերթ ընդ մերթ փորձելով նաև բանակցութիւններ վարել օսմանցիների հետ, բերդը խաղաղ կերպով նվաճելու համար<sup>94</sup>, Իսկ Երևանի բնակչութիւնը, Դավրիժեցու վկայութեամբ, բարյացակամորեն էր տրամադրված (ինչպես և պետք էր սպասել) և լավ ընդունելութիւն է ցույց տալիս շահին<sup>95</sup>:

Երևանի բերդում գտնվող թուրքական զորքը ամիսներ

---

Իրան ճանապարհորդած Տեկտանդերը (տե՛ս «Чтения в императорском обществе истории и древностей российских», II., 1896, стр. 33):

<sup>91</sup> Տե՛ս Դավրիժեցի, էջ 21—22, հմմտ. «Թարխիսի նայիմա» (Ա. Մաքրաստյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 71):

<sup>92</sup> Դավրիժեցի, էջ 26:

<sup>93</sup> Նույն տեղում:

<sup>94</sup> Շահի այդ բանակցութիւնների մանրամասնութիւնները գտնում ենք Ք. Չելեբիի մոտ (տե՛ս Ա. Մաքրաստյան, նշվ. աշխ., հ. Բ, Երևան, 1964, էջ 87—89):

<sup>95</sup> Դավրիժեցի, էջ 27:

շարունակ համառ դիմադրութիւնն է ցույց տալիս, որի հետեւանքով պաշարումը ձգձգվում է: Բերդի պաշարման տևողութիւնն հարցում նկատելի տարածայնութիւն կա տարբեր աղբյուրների հաղորդումների միջև: Ըստ Դավրիժեցու պաշարումը տևել է ութ ամիս, և միայն իններորդում բերդը հանձնրվել է<sup>96</sup>: Նույն ժամկետի մասին է վկայում մի ավետարանի հիշատակարանը<sup>97</sup>, ինչպես նաև XVII դ. անանուն ժամանակագրութիւնը, որի համաձայն՝ շահը մեծ բանակով եկավ Արարատյան երկիր, պաշարեաց զղղեակն նոցա ութ ամիս և էառ զնայ<sup>98</sup>: Իսկ Իսքանդար Մունշու հաղորդման համաձայն Երևանը պաշարված է մնացել յոթ ամսից քիչ ավելի, որը նաև հաստատվում է Հովհաննես Մակվեցու ողբի հետևյալ տողերով.

«Չորս կողմըն վրան դըրին,  
Զբերդավանքն պաշարեցին.

Եօթն ամիս հասարակաւ  
Նւ եօթն վերայ աւելի»<sup>99</sup>:

Գրեթե յոթ ամիս է նշում Երևանի պաշարման ժամանակը նաև Քյաթիր Չելեբին<sup>100</sup> (թեև նրա մոտ մի այլ տեղ հանդիպում ենք վեց ամիս տևած պաշարման մասին վկայութիւն)<sup>101</sup>: «Թարիխի Փեշևի»-ում ասված է, որ Երևանի պաշարումը շարունակվեց ինն ամիս և տասը օր<sup>102</sup>, իսկ Նայիմայի

<sup>96</sup> Նույն տեղում, էջ 33:

<sup>97</sup> «Մանր ժամանակագրութիւններ», հ. I, էջ 179:

<sup>98</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 181:

<sup>99</sup> Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 301—302, հմմտ. «Մանր ժամանակագրութիւններ», հ. I, էջ 179:

<sup>100</sup> «Фезлеке», стр. 133.

<sup>101</sup> Տե՛ս Ա. Սաֆրաստյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 89:

<sup>102</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 54, հմմտ. Մատենադարան, ձեռ. № 1282, էջ 261բ, Մ. Զամչյան, Պատմութիւն հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 543:

հաղորդամբ այն տեղի է վեց ամիս<sup>103</sup>։ Տեղեկությունների այս խնճված պատկերը պարզեցնելուն թերևս կարող են օգնել Ք. Չելերիի առավել կոնկրետ տվյալները, որոնց համաձայն Երևանի պաշարումը սկսվել է ջումադա-ուլ-ախիր ամսի 11-ին<sup>104</sup> (նոյեմբերի 16-ին) և տեղի մինչև հաջորդ տարվա մուհարրամի 10-ը (1604 թ. հունիսի 8-ը)<sup>105</sup>։ Եթե ընդունելու լինենք այս տվյալները, ապա Երևանի պաշարումը տեղի է գրեթե յոթ ամիս<sup>106</sup>։

Մարտական գործողությունները տեղի էին ունենում տարբեր ամբուսթյուններում<sup>107</sup>։ Համառ մարտեր են մղվել նաև նոր կառուցված բերդի շուրջը. «...Շինեցին միս և բերդ, և մտին ինքեանք ի ներս պատերազմական զինուր»<sup>108</sup>,— գրում է Դավրիժեցին։ Իսթանդար Մունշին առանձնացնում է հին ու նոր բերդերի գրավումը<sup>109</sup>։ Ակնհայտ է, որ հիմնական ընդհարումները տեղի էին ունենում այս երկու բերդերի համար, և որ հին (կամ մեծ) բերդը հանձնվել է բոլորից ուշ։ Երևանի առումը բավականին դժվարություններ է պատճառել զրգրվաշններին։ Հարկ է եղել համալրել բանակը, ուժեղացնել հրետանին<sup>110</sup>։

<sup>103</sup> Ա. Սաֆրասյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 72։ Աղբյուրների տվյալների նման տարբերությունների հետևանքով հետազոտություններում ևս այս հարցի կապակցությամբ տարբեր ժամկետներ են նշվում՝ 6—9 ամիս։

<sup>104</sup> «Фезлеке», стр. 112 (այստեղ տոմարական հաշվումների մեջ անհշտություններ կան)։

<sup>105</sup> Նույն տեղում, էջ 134։ Իսթանդար Մունշին նույնպես վկայում է, որ Երևանի բերդը գրավվել է 1013 թ. մուհարրամ ամսի 10-ին։

<sup>106</sup> Նույնն է հաղորդում նաև գրիչ Գրիգոր Տաթևացին, որի խոսքերով՝ «Շահն է (?) ամիս և է (?) ար խըսար արաւ զբերդն» (Մատենադարան, ձեռ. № 46, էջ 248բ)։

<sup>107</sup> Երևանն ունեւր երեք բերդ՝ «Հին բերդ» (կառուցված 1583 թ. Յարհազ-փաշայի կողմից), «Գյուզլի-ղալա» («Հսկող բերդ») և Նախիջևանից նահանջած օսմանյան զորքերի կառուցած նոր բերդը, որի մասին հիշատակում է մեր պատմիչը։

<sup>108</sup> Դավրիժեցի, էջ 22, հմտ. «Фезлеке», стр. 131—133.

<sup>109</sup> Տե՛ս 107—109 ص 'ر ج 'اسکندر منشی

<sup>110</sup> Նույն տեղում, էջ 646։

Պաշարման ընթացքում շահ Աբբասը իր բանակի կա-  
րիքներն ապահովելու համար շարունակ առանձին զորագըն-  
դեր էր ուղարկում Արևմտյան Հայաստանի շրջանները, ինչ-  
պես և այլ վայրեր՝ ավարառության: Այսպես, պարսից զոր-  
քերը ասպատակում են Արճեշը, Բասենը, Խնուար, «և զայլս  
ուր և կարացին հասանիլ, քանդեալ՝ ավերեալ՝ այրեալ՝ և  
ասպականեալ զերկիրն և զէնսն, և զինչս, և զստացուածս  
կողոպտեալ և զարս սպանեալ, և զկանայս և զմանկունս  
գերեցուցեալ բերին յԵրևան ի բանակն իւրեանց»<sup>111</sup>: Միայն  
Ալլահվերդի-խանը Արծկեի մարտերից վերադառնալիս<sup>112</sup>,  
ասպատակելով Արճեշը, Բերկրին, Վանը, 23 հազար քրիս-  
տոնյա է գերել: «Եւ ժողովեալ զամենայն գերեալսն,—գրում  
է Դավրիժեցին,— և հօրանս անդէոց, և ջոկս ոչխարաց,

<sup>111</sup> Դավրիժեցի, էջ 30:

<sup>112</sup> Արծկեի իրադարձությունների մասին Դավրիժեցին մանրամասնու-  
թյուններ ունի, որ շեք հանդիպում այլ աղբյուրներում: Արծկեի իշխան  
Մահմադ-փաշան հրաժարվում է հնազանդվել էրզրումի փաշայությանը,  
որը, որպես պարզև (վրաց թագավոր Սիմոնի Կոստանդնուպոլիս տանե-  
լու և խոնդրարին հանձնելու համար), տրված էր դարձյալ Մահմադ ան-  
վամբ մի փաշայի՝ Վերջինիս դիմադրելու համար Արծկեի իշխանը փակվեց  
բերդում՝ վերցնելով իր հետ մեծ զորք և պաշարս նա օգնություն խնդրեց  
շահ Աբբաս Ա-ից, խոստանալով «շահխսեան» լինել և բերդը հանձնել  
ներս: Շահն Արծկե ուղարկեց Ալլահվերդի-խանին, պատվիրելով, որ խա-  
բեության դեպքում ավերի ու գերի երկիրը: Շահի կասկածները տեղին  
էին: Այն բանից հետո, երբ բերդը պաշարող Մահմադ-փաշան, լսելով  
Ալլահվերդի-խանի զալուստը, թողնում է բերդը և հեռանում Մուշ, Արծ-  
կեի իշխանը, հակառակ իր խոստմանը, սկսում է պատերազմել Ալլահ-  
վերդի-խանի դեմ: Բերդի պաշտպանները, Դավրիժեցու հաղորդմամբ,  
ուժեղ են եղել ու գրոհով փախուստի են մատնել պարսիկներին: Միայն  
խորամանկությամբ է վերջիններիս հաջողվում օղակի մեջ առնել բերդից  
զուգս եկած զորքին և կոտորել: Սակայն բերդում մնացած զորքը կրկին  
համառորեն դիմադրում է: Այն ժամանակ, «իրբև ետես խանն զամուր  
միտս բերդականացն թէ ո՛չ տան զբերդն, դարձաւ ի բերդէն՝ և յարձա-  
կեցաւ ի վերայ զաւառաց աշխարհին, և զամենայն երկիրն Արծկէոյ հա-  
ւասար աւերեաց, և հրդէհ արկեալ այրեաց. և զամենայն արու արս կո-  
տորեաց՝ և զինչս, և զստացուածս՝ զուստերս, և զգստերս և զկանայս  
յաւար և ի գերութիւն առեալ» (Դավրիժեցի, էջ 32—33):

և երամակս ձիոց, իբրև մեծ և յորդեալ հեղեղ զամենեսեան վարեալ ածեալ բերեալ հասուցին յԾրեան ի լիութիւն բանակին Պարսից»<sup>113</sup>,

Հակառակ պարսից կողմի՝ նոր ուժեր կենտրոնացնելու և ազատորեն մարտական գործողութիւններ ծավալելու հրահարավորութեանը, Երևանի բերդի պաշարքալինները ուժասպառ էին լինում, օրըստօրե աճում էր օգնութեան կարիքը, որը, սակայն, չէր հասնում<sup>114</sup>, քանի որ Բարձրագույն Դուռը ինքը ճշմարտամի մեջ էր: Այդ օրերին մահացած սուլթան Մուհամմադին (1595—1604) փոխարինել էր նրա մանկահասակ որդին՝ Ահմադը: Փաշաները միաբան չէին միմյանց և սուլթանի հետ: Երկպառակութիւնն իրեն ղգացնել էր տալիս ողջ երկրում: Մյուս կողմից, երկրի շատ նահանգներում տեքու տնօրենն էին դարձել ջալալիները: Այդ բոլորը խանգարում էր հակառակորդի դեմ անհրաժեշտ ուժեր կենտրոնացնել կամ որևէ օգնութիւն ցույց տալ Երևանի բերդում պաշարված թուրքական զորքերին, որոնք Սաիդ-փաշայի (Սեիդ-փաշա) և Սուլեյման-փաշայի զխաւորութեամբ երկարատև դիմադրութիւնից հետո հանձնում են բերդը<sup>115</sup>:

Խոսելով բերդի հանձնման գործում վերոհիշյալ հանգամանքների դերի մասին, Դավրիժեցին այսպիսով նշում է օսմանյան զորքի պարտութեան օբյեկտիվ պատճառները, կապելով դրանք նաև երկրի ներքին վիճակի հետ<sup>116</sup>:

Ղրղըրաշների հաղթանակում իր դերն է ունեցել նաև կախեթի Ալեքսանդր Բ և Քարթլիի Գեորգի Ժ թագավորների ցույց տված օգնութիւնը<sup>117</sup>: Դավրիժեցու հաղորդմամբ, երբ

<sup>113</sup> Նույն տեղում, էջ 33:

<sup>114</sup> Նույն տեղում, «Մանր ժամանակագրութիւններ», հ. II, էջ 182—183:

<sup>115</sup> Դավրիժեցի, էջ 33—34:

<sup>116</sup> Մինչդեռ Չելերին թուրքերի պարտութիւնը բացատրում է լոկ պաշարյալների կրած նեղութեամբ, թշնամու զորքերի թվական գերակշռութեամբ, թուրք զինվորներից շատերի դավաճանութեամբ և այն բանով, որ թուրքական զորքին «բախտը շփտաց» («Фезлеке», стр 131—132):

<sup>117</sup> Դավրիժեցի, էջ 99—100, Լ. Մելիսեք-Բեկ, նշվ. աշխ., հ. Բ, էջ 112, 139:

շահը նրանցից օգնութիւն պահանջեց, վրաց թագավորները ստիպված էին հնազանդվել՝ կանխելու համար շահի անխուսափելի հարձակումը Վրաստանի վրա և մյուս կողմից՝ գերադասելով Սեֆեկներին իշխանութիւնը օսմանյանից: Այսպիսով, դեռևս Երևանի պաշարման ժամանակ լուծվում է նաև Արևելյան Վրաստանի հարցը, որն իրեն ձանաչում է Իրանի վասալ:

Երևանի գրավումից հետո շահ Աբբասը հրաման է արձակում, որով ապահովութիւն էր խոստանում իրենց երկիրը գնալ ցանկացողներին: Սակայն դա լոկ խոստում էր, որովհետև, երբ Սուլեյման-փաշան 5 հազար հեծյալով փորձում է հեռանալ Երևանից, պարսից զորագնդերը հետապնդում են նրան, կոտորում հեծյալներին և կողոպտում<sup>118</sup>: Մյուս զորապետը՝ Սաիդ-փաշան<sup>119</sup>, իրեն «շահիսեան» հայտարարեց՝ հնազանդվելով շահ Աբբասին, որի համար նրանից ստացավ իր խնդրած՝ Իմամ-Ռիզայի տնօրինութիւնը<sup>120</sup>:

<sup>118</sup> Դավրիժեցի, էջ 35:

<sup>119</sup> Ըստ այլ աղբյուրների՝ Շերիֆ-փաշան: Նշենք, որ օսմանյան բաժնակի երկու զորապետների անունները Դավրիժեցու մոտ և մյուս աղբյուրներում տարբեր են: Շերիֆ-փաշայի հետ կապված դեպքերը մեր պատմագրի մոտ վերագրված են Սաիդ անվամբ փաշային, իսկ Մուհամմադ-փաշայինը՝ Սուլեյման-փաշային: Այսպես, Դավրիժեցին գրում է. «Եւ Սայիտ փաշայն եղև շահիսէվան և խնդրեաց ի շահէն զիշխանութիւն և զվերակացութիւնն Իմամուռուզին և ընկալաւ ի նմանէ զխնդրելին իւր և զնաց ի Խորասան ի սպասաւորութիւն Իմամուռուզին» (Դավրիժեցի, էջ 34): Թուրք պատմագիր Փեշեխն նույն փաստի մասին ասում է. «...Շահը Շերիֆ-փաշային մեծ հարգանքներ ու պատիվներ տվեց և նշանակեց Իմամ-Ռիզայի մյուսթեֆիսթիան պաշտոնին» (Ա. Սաֆրաստյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 55): Ըստ Դավրիժեցու, Սուլեյման-փաշան որդին է Խաղը-փաշայի (էջ 33), իսկ մյուս աղբյուրներում վերջինիս որդին Մուհամմադ-փաշան է (Ա. Սաֆրաստյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 55): Թերևս Դավրիժեցին շփոթում է անունները, որովհետև մյուս աղբյուրներում նրա տվյալները շեն հրկնվում:

<sup>120</sup> Դավրիժեցի, էջ 34:

Ա. Ռահմանին Դավրիժեցուն է վկայակոչում ի հաստատումն թուրքա-

Դեռևս Երևանի պաշարման ժամանակ, իսկ ըստ Իսքանդար Մունշու՝ Իրա գրավումից հետո, շահ Աբբասը Երևանի բեկլարբեկիտ.թյունը շնորհում է մարտերում աչքի ընկած Ամիր-Գունա-խանին<sup>121</sup>, որը զաջար ցեղի աղջակոյունլու օյմաղի առաջնորդն էր, Ղազվին քաղաքի դարուղան:

Գավրիժեցին կարևոր տվյալներ է հաղորդում այդ իրադարձությունների ընթացքում շահի և հայ հոգևորականության փոխհարաբերությունների մասին: Սկզբնապես հայ կաթողիկոսները, ինչպես դիտենք, շատերի նման ակնկալություններ ունեին Իրանի շահից և ողջունում էին նրա հաղթանակները: Սակայն արդեն Երևանի պաշարման ժամանակ իրերի դրությունը պարզ է դառնում, և հայ հոգևոր առաջնորդները հասցրնում են հիասթափվել, երբ շահը նրանցից պահանջում է իրեն վճարել օսմանցիներից վերցրած նրանց բոլոր պարտքերը: Օսմանցիների հարստությունը պետք է դառնա պարսից արքունիքի սեփականությունը, «որպէս զերկիր նոցա կալաք, սոյնպէս և ամենայն ինչք նոցա միրիմալի պարտի լինել», — այսպես է հիմնավորում շահն իր պահանջը<sup>122</sup>, Դաժան միջոցներով պարսից իշխանության ներկայացուցիչները կարողանում են հայ հոգևորականներից «բազում գանձ» կորզել: Սոսկալի խոշտանգումների է ենթարկվում Սրապիոն կաթողիկոսը, որին «արարեալ յոյժ անպատիւ, մինչև ի գոհհի ի

կան կայազորի հանձնվելու վերաբերյալ այնպիսի փաստերի, որոնք չենք գտնում մեր պատմագրի մոտ (տե՛ս А. Рахмани, „Тарих-и алам арай-и Аббаси“ как источник по истории Азербайджана, Баку, 1960, стр. 99). Մինչդեռ այդ փաստերը, այսինքն՝ Եերիֆ-փաշայի Մաշադ տեղափոխվելը (այն ձևով, ինչպես ներկայացրել է Ա. Ռահմանին), ինչպես նաև Մուհամմադ-փաշայի մեկնումը Կարս, գտնում ենք այն աղբյուրներում, ինչպես «Ֆեղլեքե»-ում (Ա. Սաֆրաստյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 93—94), Իսքանդար Մունշու մոտ (ص ٦٠٦ ج ٢٢ اسکندر منشی): (տե՛ս նաև ٢١٢—٢١٣ ص محمد پرنك):

<sup>121</sup> Դավրիժեցի, էջ 27, հմմտ. ٦٠٦ ص ٢٢ ج ٢٢ اسکندر منشی, Իսքանդար Մունշին տալիս է նաև տարբեր դավառների ու շրջանների նոր նշանակված տերակալների անունները (էջ 653—657):

<sup>122</sup> Դավրիժեցի, էջ 28:

հրապարակի կախեալ յոտից բրածեծ առնէին զնա ուժգին՝ աւուրս յոլովս»<sup>123</sup>։ Այսպիսի քաղաքականութեան հետեանքն էր հայ կաթողիկոսի փախուստն Արևմտյան Հայաստան<sup>124</sup>։ Դիպուկ է Դավրիժեցու եզրակացութիւնը. «Այս կաթողիկոսքս վասն պարտուցն փախեան և ապաւինեցան ի շահն, զի թերևս շահն զնոսա ազատեսցէ ի պարտատեսարցն. արդ այժմ շահն ինքն յառաջ ածեալ պահանջէ ի նոցունց ըզպարտքն, արդ այս է օգնութիւն շահին յո՛ր ապաւինեցան նոքա»<sup>125</sup>։

Այսպիսով, շահ Աբբաս Ա-ի արշավանքի առաջին փուլն իսկ ցույց տվեց, որ «փրկարար» շահն իր պլաններն ունի, ինքն է, որ Անդրկովկասի հետ հույսեր է կապում, այն դիտելով իբրև նպաստավոր օղակ՝ իրագործելու իր առավել ընդարձակ ծրագրերը։

Այս կապակցութեամբ ուշագրավ են Դավրիժեցու տեղեկութիւնները մեծ գաղթի մտահղացման և նրան նախորդող միջոցառումների վերաբերյալ, երբ ամենուր ծավալվող պատերազմական գործողութիւններին ուղեկցում էին բնակչութեան զանգվածային տեղաշարժերը, երբ շահի զորքերը ասպատակելով բազմաթիւ շրջաններ, ինչպես՝ Գանջան, Արծկեն, Արճեշը, Բերկրին, Վանը, Մանազկերտը, Ալաշկերտը, Մակուն, Կարսը, Կաղզվանը, Բասենը, էրզրումը և այլն, բնակչութեանը գերի վարեցին, որպեսզի «զամենեսեան վարեսցեն յաշխարհն Պարսից»<sup>126</sup>։

Անշուշտ, Երևանի գրավումով չի ավարտւում «ժառանգական» երկրների ետ գրավման համար շահ Աբբաս Ա-ի ձեռնարկած արշավանքը։ Դեռևս այլ շրջաններ՝ մի քանի խոշոր քաղաքներով (ինչպես Գանձակը (Գանջա), Շամախին և այլն) մնում էին թուրքական իշխանութեան ներքո։

<sup>123</sup> Նույն տեղում, էջ 29։

<sup>124</sup> Սրապիոնը հեռացավ Վան, ապա՝ Ամիդ, որտեղ և մահացավ 1606 թ. ապրիլի 23-ին (նույն տեղում, էջ 28—29)։

<sup>125</sup> Նույն տեղում, էջ 28։

<sup>126</sup> Նույն տեղում, էջ 35—36։

Երևանի գրավումից հետո ստեղծված ժամանակավոր դադարը օսմանցիներին հնարավորութիւն տվեց պատրաստվելու հակահարձակման: «...Կարգեցին զոմն գլուխ և սարդար, որում անուն էր Սինան փաշայ՝ զոր մակ անուամբ Զղալօղլի կոչէին, որ գումարեաց զօրս բազումս՝ որով ելեալ ի Կոստանդնուպօլսէ դիմեալ գայր յաշխարհս արևելեան»<sup>127</sup>: Շահն այդ ժամանակ պատրաստվում էր գրավել Կարսը: Պարսից բանակը Շիրակվանում էր, երբ նա տեղեկացավ Զղալօղլի սարդարի հակահարձակման և այն մասին, որ թուրքական զորքն արդեն հասել է էրզրում: Այժմ շահն էր հանկարծակիի եկողը: Փոխելով իր պլանը, նա վերադառնում է Աղջաղալա և հակառակորդի ուժի վերաբերյալ ավելի հաստատուն տեղեկութիւններէց հետո համոզվում, որ դիմադրելն անիմաստ է: Ուստի կտրական որոշում է ընդունում՝ խուսափել վտանգավոր, Իրանի համար պարտութիւն սպառնալիքով հղի ճակատամարտից և արագորեն նահանջել: Սակայն դա լուկ նահանջ չէր: Դա նաև շահի նախօրոք կազմած ծրագրի իրագործումն էր, զուգորդված այսպես կոչված «այրված հողի» կամ «հրկիզման» տակտիկայի հետ: Նախագծվում էր ամբողջութեամբ ամայացնել ու ավերել Արաքսի ձախ ափին ընկած բնակելի շրջանները, ոչնչացնել ու հրի մատնել պարենը և, որ ամենաաղետալին էր՝ բնակչութեանը բռնի կերպով գաղթեցնել Իրան:

Շահ Աբբաս Ա-ի ձեռնարկած այս բռնագաղթը դարձավ հայ ժողովրդի պատմութեան արյունոտ էջերից մեկը, որ կոչվեց «մեծ սուրգուն» (մեծ գաղթ): Այն իր մասշտաբներով, բնութեամբ և հետևանքներով առանձին տեղ գրավեց հայոց պատմութեան մեջ, իբրև նրա ծանր դրվագներից մեկը:

Մեծ գաղթի վերաբերյալ մեզ հասել են արժեքավոր աղբյուրներ, մասնավորապես ժամանակակիցների վկայու-

<sup>127</sup> Նույն տեղում, էջ 35:

թյունները: Սկզբնաղբյուրները մեծ մասամբ նկարագրում են ժողովրդի կրած տառապանքները, հատկապես Արաքսի գետանցի սոսկալի տեսարանը: Ժամանակակիցների համար դժվար էր կողմնորոշվել իրադարձությունների հորձանուտում և իրենց տպավորությունների ու կրած սարսափների նկարագրության հետ մեկտեղ տալ դրանց պատմա-քաղաքական վերլուծությունը: Այլ բան է, երբ դեպքերը դիտվում են ժամանակի պրիզմայի միջով: Այս տեսակետից Դավրիժեցին բավականաչափ նպաստավոր դիրքում է. մի կողմից, թեև գրում է աշխարհացունց դեպքերից կես դար հետո, սակայն կարելի է նրան համարել ժամանակակից, քանի որ նրա տեղեկությունների հիմքում, բացի ժամանակի գրավոր աղբյուրներից, հիշատակարաններից, ողբերից, պահպանված վկայություններից, ընկած են նաև ժամանակակիցների, գաղթի անմիջական մասնակիցների և ականատեսների դեռևս չսպիացած տպավորությունները, կենդանի զրույցներն ու հաղորդումները: Մյուս կողմից, այդ իրադարձություններից անջատված լինելով ժամանակով, Դավրիժեցին հնարավորություն ունի խորանալու դեպքերի ընթացքի մեջ, վերլուծելու իրադրությունը, տեսնելով թեկուզ իր ժամանակը, շահ Աբբաս Ա-ի իրականություն դարձած ծրագրերը, այն հետևանքները, որ ունեցավ մեծ գաղթը:

Գաղթի մասին Դավրիժեցու պատմությունը աչքի է ընկնում ոչ միայն իր սրտառուչ և հուզիչ կողմով, այլև փաստերի լայն ու բազմակողմանի մատուցմամբ, որով հնարավոր է դառնում եզրահանգումներ անել շահի նպատակների, գաղթեցվող բնակչության տարբեր շերտերի դիրքի ու վիճակի և նրանց նկատմամբ իրանական իշխանությունների վերաբերմունքի և այլ հարցերի մասին: Դրանով իսկ լրացվում կամ ճշտվում են այլ աղբյուրների տեղեկությունները, մասնավորապես պարսից պատմագրության կրցկրտուր և հաճախ միտումնավոր հաղորդումները:

Չեռնարկելով բռնագաղթը, շահ Աբբաս Ա-ն հետապնդում էր ինչպես ստրատեգիական, այնպես էլ քաղաքական

ու տնտեսական նպատակներ: Դավրիժեցու արտահայտու-  
թյամբ հիմնական ստրատեգիական նպատակն այն էր,  
«զի կկեալ Օսմանցւոցն անրնակ գտանիցեն զերկիրն ի մարդ-  
կանէ»<sup>128</sup>:

Արարատյան երկիրը թափուր պետք է գտնեին ոչ միայն  
օսմանյան զորքերը, որոնք այնտեղ զուրկ պիտի լինեին և՛  
պարեն, և՛ անասնակեր, և՛ որևէ ձևով օժանդակող ուժ գտնե-  
լուց, այլև իրան գաղթեցվող բնակչութիւնը, եթե փորձեր  
հայրենիք վերադառնալ. «Այլև ելեալ ժողովուրդքն զայն  
տեսեալ սրտակտուրք լիցին և մի դարձցին յետս», — գրում  
է Դավրիժեցին<sup>129</sup>:

Հեղինակների մեծ մասը շահ Աբբասի այդ ձեռնարկը  
վերլուծելիս շեշտը դնում է ռազմա-ստրատեգիական կողմի  
վրա<sup>130</sup>: Հայտնի է, սակայն, որ շահ Աբբասը հետապնդում  
էր նաև ավելի հեռուն գնացող նպատակներ, ձեռնարկելով  
հարյուր հազարավոր մարդկանց իրենց բնակավայրերից  
բոնությամբ տեղահան անելու և իր երկրում տեղավորելու  
դժվարին դորձը: Նկատի ունենալով այն փաստը, որ գերե-  
վարութիւնն անդարձ էր, և ոչ ոք իրավունք չուներ ետ  
վերադառնալու, լեոն իրավամբ նշում է, որ «Շահ-Աբբասը  
միմիայն ռազմադիտական նկատառումներով չէր ղեկավար-  
վում»<sup>131</sup>: Շահի պլանների մեջ էր մտնում զարկ տալ իր  
երկրի արտադրողական ուժերի զարգացմանը, հողագործու-  
թյան, արհեստների, առևտրի ծաղկմանը, իրանի կենտրո-  
նական նահանգների և, մասնավորապես, մայրաքաղաքի

<sup>128</sup> Նույն տեղում, էջ 38:

<sup>129</sup> Նույն տեղում, էջ 41:

<sup>130</sup> Այսպես, օրինակ՝ պարսիկ պատմաբան Բահման-Միրզան բավա-  
րարվում է հետևյալ բացատրութեամբ. շահ Աբբասը նկատելով, որ Ջղալօղ-  
լի սարդարին դիմադրելու ուժ ու կարողութիւն չունի, մտածեց Երևանի,  
Նախիջևանի և նրանց շրջակա տեղերի բնակիչներին վարել իրանի խոր-  
քերը և հրամայեց հրգեհել բոլոր արտերը, որպեսզի Ջղալօղլու զորքը  
չկարողանա պաշար գտնել (տե՛ս Հ. Առաքեյլյան, նշվ. աշխ., մասն Ա,  
էջ 79):

<sup>131</sup> Լեո, Հայոց պատմութիւն, հ. III, էջ 246:

բարգավաճմանը՝ ի հաշիվ ծայրամասային և նվաճած շրջանների: Միաժամանակ, շահը նպատակ ունենր, թուլացնելով պետության էթնիկապես ալլազան շրջանները, ճնշել նրանց դիմադրությունը, ինչպես նաև իրանի կենտրոնական շրջանների տնտեսության ուժեղացմամբ նպաստել ղեկավարող քաղաքական դերի անցմանն ադրբեջանական քոչվոր ֆեոդալներին՝ իրանական քաղաքացիական բյուրոկրատիային<sup>132</sup>: Անդրկովկասի բնակչության մասսայական գաղթեցումով պարսից շահը բարենպաստ հող էր ստեղծում՝ իրագործելու իր այս ծրագրերը: «Նաև տարեալ ժողովուրդքն լինիցին նմա անգերծանելի հարկատուք՝ ծառայք. և հողագործք մինչև ցյաւիտեան»—գրում է Դավրիժեցին, մեկնաբանելով շահ Աբբասի նպատակները<sup>133</sup>,

Շահին քաջ հայտնի էին հատկապես հայ առևտրականների և արհեստավորների<sup>134</sup> ձիրքն ու շնորհքը, որոնք քիչ դեր չէին խաղա նաև իրանում: լԺամանակը հետագայում ցույց տվեց, որ շահը չէր սխալվել իր պլաններում: Առանձնապես հրապուրիչ էր Ջուղայի հայ վաճառականությանը և նրա առևտրական կապիտալն իրանի շահերին ծառայեցնելու ծրագիրը:

Հայտնի է, որ Ջուղան եվրոպա-ասիական մետաքսի առևտրի խոշոր կենտրոն էր<sup>135</sup>: Ջուղայի վաճառականների առևտրական կապիտալի միջնորդությունն ակնառու դեր էր խաղում մետաքսի միջազգային առևտրում: XVI դ. հայ

<sup>132</sup> Н. Пигулевская [и др.], *Եզվ. աշխ.*, էջ 277, М. С. Иванов, *Очерк истории Ирана*, М., 1952, стр. 66.

<sup>133</sup> Դավրիժեցի, էջ 38:

<sup>134</sup> Հայ արհեստավորները միայն շահական իրանին չէ, որ հրապուրել են: Օսմանյան սուլթան Սելիմը 1513 թ. իրանից ետ գրավելով Քավրիչ քաղաքը, այնտեղի հմուտ արհեստավորներին (3000 հայ ընտանիք) գաղթեցրեց Կոստանդնուպոլիս (Հ. Ասաֆյան, *Եզվ. աշխ.*, մասն Ա, էջ 23):

<sup>135</sup> Այդ մասին տե՛ս С. Тер-Аветисян, *Եզվ. աշխ.*, В. А. Байбуртян, *Армянская колония Новой Джульфы в XVII в. (Роль Новой Джульфы в ирано-западноевропейских политических и экономических связях)*, Ереван, 1969 և այլն:

վաճառականները ջուղայեցիների գլխավորութեամբ կարողացել էին կարևոր տեղ գրավել նաև Իրանի առևտրում, մասնավորապես՝ մետաքսի<sup>136</sup>, նրանք առևտրական սերտ կապեր էին հաստատել նաև արևմտաեվրոպական երկրների հետ<sup>137</sup>։ Դավրիժեցիները տարբեր առիթներով նկարագրում է գաղթից առաջ Ջուղայի փարթամ վիճակը, «որ էր մեծ և երևելի շէնն այն ի ժամանակին յայնմիկ ի մէջ արեւելեայ աշխարհիս»<sup>138</sup>։

Իբրև վենետիկի և Ճենովայի՝ Ասիայում մեծ համրավունեցող առևտրական գործակալներ, Ջուղայի հայ վաճառականները շահ Աբբաս Ա-ի ուշադրութունը գրավել էին նրա թագավորութեան հենց առաջին տարիներից<sup>139</sup>։ 1592 թ. ջուղայեցի խոջա Նազարին առևտրական արտոնութուններ շնորհելու մասին նրա հրովարտակը<sup>140</sup> ինքնին վկայում է, թե ինչպիսի նշանակություն էր տալիս շահը Ջուղայի վաճառականների գործունեությանը և Իրանի առևտրին զարկ տալու նպատակով նրանց իր կողմը գրավելու խնդրին։ Քանի որ 1590 թ. Կոստանդնուպոլսի հաշտութեամբ Ջուղան անցել էր Թուրքիային, Իրանի համար կրկնակի անհրաժեշտություն էր, որպեսզի այն իր ձեռներեց բնակիչներով և ողջ հարստութեամբ դառնար պարսից թագավորության սեփականությունը։

Եվրոպա-ասիական առևտրական ճանապարհը անցնում էր Թուրքիայի տերիտորիայի վրայով, նրան բերելով հսկայական շահ։ Աբբաս Ա-ն այնքան համարձակ էր իր պլան-

<sup>136</sup> Մետաքս-հումքը եկամուտների խոշոր աղբյուր էր ինչպես Իրանի համար, այնպես էլ Ջուղայի վաճառականների։

<sup>137</sup> Հայերի միջոցով իրանական մետաքս-հումքը ներմուծվում էր նաև Թուրքիա. տե՛ս Հ. Դ. Փափազյան, Հայերի դերը Թուրքիայի մետաքսագործության մեջ և 1729 թ. Քավրիզում կնքված համաձայնագիրը («Բանբեր Մատենադարանի», Երևան, 1969, № 9)։

<sup>138</sup> Դավրիժեցի, էջ 12։

<sup>139</sup> Ա. Ալպոյանյան, Պատմութիւն հայ գաղթականութեան, մասն Կ, Կահիրե, 1961, էջ 135։

<sup>140</sup> Տե՛ս Հ. Տեր-Հովհանյանց, Եշվ. աշխ., հ. 1, էջ 158—159։

ներում, որ կանգ չառավ նաև մետաքսի միջազգային առևտրի քարավանային ճանապարհը տեղափոխելու հարցում: Նրա ծրագրի համաձայն մետաքսը Եվրոպա պետք է արտահանվեր նոր՝ ծովային ճանապարհով և անցներ Սպահանով ու Պարսից ծոցով, շրջանցելով Աֆրիկան: Իսկ դրա համար անհրաժեշտ էր նախ և առաջ Իրան (Սպահան) տեղափոխել մետաքսի առևտրի խոշոր կենտրոնը՝ Զուղան: Առևտրական ճանապարհի տեղափոխությունը հարավ՝ Իրանի համար եռակի դրական քայլ էր նշանակում: Նախ, ծովային ճանապարհով մետաքսի փոխադրումն ավելի էժան կնստեր: Բացի դրանից, Իրանը կդադարեր մետաքսի արտահանման գործում Թուրքիայից կախում ունենալուց, որով հնարավորություն կստանար ամբողջությամբ տնօրինելու մետաքսի առևտրից ստացվող եկամուտը, ազատվելով ապրանքների դիմաց Թուրքիայի կողմից գանձվող մեծ մաքսից<sup>141</sup>, ինչպես նաև Թուրքիայում հաճախակի կրկնվող կողոպուտից ու ապրանքների բացահայտ բռնագրավումից<sup>142</sup>: Վերջապես, դերերի նման փոխանակման հետևանքով, այն շահից, որն ակնկալում էր Իրանը, Թուրքիան զրկվելու էր, այլ խոսքով՝ վնասվելու էր Իրանի ախոյանի գանձարանը:

Այդ գալթակղիչ ծրագրի իրականացման առաջին օղակը, ինչպես ասվեց, Զուղան էր, որն այնուհետև պիտի գտնվեր պարսկական հողում և պարսից մայրաքաղաքում շարունակեր իր նախկին դերը:

Իր պլանների շահավետության մեջ շահին մեկ անգամ ևս համոզեց այն ճոխ ընդունելությունը, որ ցույց տվեցին նրան ջուղայեցիները: Դավրիժեցու նկարագրությամբ դա շքեղ ընդունելություն էր, որ երևան բերեց Զուղայի ողջ փայլը և ունեցվածքը<sup>143</sup>: Պատմիչը նշում է, որ տեսնելով այդքան հարստությունն ու վայելչությունը, շահը հաստա-

<sup>141</sup> L. L. Bellan, Chah Abbas, sa vie, son histoire, Paris, 1932, p. 95—96.

<sup>142</sup> «اسکندر منشی» ج ۲، ص ۷۱-۷۲

<sup>143</sup> Դավրիժեցի, էջ 25:

տապես շար որոշում ընդունեց, որ պիտի իրագործեր հարմար ժամին<sup>144</sup>:

Հասունացած վերոհիշյալ ծրագրերը կյանքի կոչելու համար շահ Աբբասը հարմար գտավ նահանջի պահը:

Այսպիսով, երբ ակնհայտ են շահի նպատակները, պարզ է դառնում, որ բռնագաղթը նրա կողմից նախապես ծրագրված էր, և դժվար է այս հարցում համաձայնել որոշ հետադատողների, այդ թվում՝ Հ. Առաքելյանի այն կարծիքին, թե «հայերին Պարսկաստան գաղթեցնելու միտքը նրա (շահ Աբբասի—Լ. Կ.) մէջ ծագեց Հայաստան գալուց հետո»<sup>145</sup>: Թերևս այդ բռնագաղթի մասշտաբները և կամ մեթոդներն են թելադրվել հետո՝ ըստ ռազմա-ստրատեգիական հանգամանքների: Ուստի և հիմնավորված ենք գտնում Դավրիժեցու այն հավաստումը, թե շահը «ի վաղ ժամանակաց ունէր ի մտի դրչելն ազգին քրիստոնէից և դաւերելն աշխարհին Հայոց»<sup>146</sup>:

Հետաքրքրութունից զուրկ չէ Դավրիժեցու նկարագրութունը բռնագաղթից առաջ հայոց մեծամեծների հետ շահի վարած բանակցութունների վերաբերյալ, որը հիմք է տալիս եզրակացնելու, որ վերջինս փաստորեն փորձ է կատարել հայերի գաղթեցումն ի կատար ածել հայոց ավագանու իսկ միջոցով, առաջարկելով նրանց՝ բնակիչների «ժամանակավոր» տեղափոխութուն կազմակերպել իրենց բնակավայրերից, իբր Ջղալօղլու պատճառելիք թշվառութուններից նրանց փրկելու նպատակով («վասն որոյ ողորմեալ ձեզ հնարիմ փրկել զձեզ այսու կերպի»), և պատերազմի ավարտից հետո հաղթող կողմին հպատակվելու համար կրկին իրենց տները վերադառնալու պայմանով: Այսպիսով, «զինքն կեղծաւորաբար ցաւակից ցուցանելով ազգին հայոց», շահը

<sup>144</sup> Նույն տեղում:

<sup>145</sup> Հ. Առաքելյան, նշվ. աշխ., մասն Ա, էջ 76, եռյնի՝ Ակնարկ Պարսկաստանի հայերի անցեալի վրայ («Գեղունի», 1904, թիւ 1—10, էջ 17):

<sup>146</sup> Դավրիժեցի, էջ 38:

խոստանում է նրանց ապահովություն և փրկություն, դրանով նպատակ ունենալով, ոչ միայն քողարկել իր իսկական ծրագիրը, այլև գործակիցներ ունենալ տարագրման գործում ի դեմս, մասնավորապես, հայ բարձրաստիճան հոգևորականություն: Հայ հոգևորականները, որոնք արդեն ղգացել էին շահի «բարյացակամությունը», որոշում են խուսանավել և պատճառաբանելով աշնան աննպաստ եղանակը, ճանապարհի դժվարություններն ու ժողովրդի անպատրաստ վիճակը, խնդրում են թագավորին՝ ժամանակ տալ մինչև գարուն: Իր փորձի ձախողումից հետո շահը բացահայտորեն հրաման է տալիս բռնի կերպով գաղթեցնել Արարատյան երկրի և նրա շրջակա վայրերի բնակչությանը, խստորեն հետևելով, որպեսզի ոչ ոք չվերադառնա<sup>147</sup>: Այսպիսով, առավել վստահորեն կարելի է ասել, որ բռնագաղթի մեթոդներն են, որ շահի կողմից ծրագրվել են բուն իրադարձությունների ժամանակ, ըստ հանգամանքների բերման:

\* \* \*

Դավրիժեցու հաղորդման համաձայն բռնագաղթն իրականացվել է մի քանի փուլով. «...Ձի եօթն և ութն անգամ որիշ որիշ զկնի միմեանց քշեալ տարեալ է»<sup>148</sup>, Իսկ բռնագաղթի սկիզբը դրվել էր դեռևս այն ժամանակ, երբ շահը նոր էր սկսել իր արշավանքը դեպի Անդրկովկաս, և տասնյակ հազարավոր մարդիկ Անդրկովկասից և Արևմտյան Հայաստանից տեղահան էին արվել ու քշվել Արարատյան երկիր՝ այնտեղից հետագայում Իրան տեղափոխվելու համար<sup>149</sup>: Սրանց մի մասը Իրան էր գաղթեցվել Քավրիզի գրավումից անմիջապես հետո, մյուսները՝ Երևանի առումից հետո, սակայն նախքան պարսից զորքերի նահանջը և մեծ գաղթը: Վերոհիշյալ նախապատրաստական փուլից հետո, Ջղալօղլի սար-

<sup>147</sup> Նույն տեղում, էջ 38—39:

<sup>148</sup> Նույն տեղում, էջ 148:

<sup>149</sup> Նույն տեղում, էջ 33, 35—36, հմմտ. ۱۱۶ ص'۲ اسکندر منشی

դարի հակահարձակման պահին, սկսվում են բռնագաղթի ուղղութիւամբ հիմնական գործողութիւնները:

Բռնագաղթի տարեթիվը զանազան հեղինակների մոտ տարբեր է: Հետազոտողներից ոմանք «մեծ սուրգունի» թվականը համարում են 1605-ը<sup>150</sup>, իսկ այլք՝ 1604-ը<sup>151</sup>: Ըստ Դավրիժեցու դաղթն սկսվել է Հայոց ՌԾԴ թվականի նավասարդին<sup>152</sup>, նույն թվականն են նշում մեծ թվով աղբյուրներ<sup>153</sup>, Սակայն հանդիպում է նաև ՌԾԴ թվականը, օրինակ՝ 1612 թ. դրված ավետարանի հիշատակարանում<sup>154</sup>: Տոմարների համեմատման ընդունված կանոնների համաձայն Հայոց ՌԾԴ (1054) թ. սկիզբը համապատասխանում է հոռմեական (պրիգորյան) տոմարի 1604 թվականի աշնանը: Այդ թվականի ստուգութիւնն են հավսատում նաև մահմեդական տոմարով արտահայտված տվյալները<sup>155</sup>: Այդ մասին հուշում է նաև դեպքերի հաջորդականութիւնը, այն է՝ Երևանի գրավումը 1604 թ. հունիսին, որին արագորեն, գրեթե միաժամանակ, հետևում են օսմանցիների հակահարձակումը, պարսիկների նահանջը և գաղթը. վերջինս ընդհատվում է

<sup>150</sup> Н. Пигулевская [и др.], *Նշվ. աշխ.*, էջ 277, И. Петрушевский, *Азербайджан в XVI—XVII вв.* (Նշվ. հոդվ. ժող., էջ 275), С. Тер-Аветисян, *Նշվ. աշխ.*, էջ 1, 107, Ա. Գ. Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մարտի պատմութիւն, գ. II*, Երևան, 1959, էջ 84, 2. Առաքելյան, *Հանրագիտական բառարան, հ. Ա*, Թիֆլիս, 1918, էջ 6 և այլն:

<sup>151</sup> Տե՛ս, օրինակ՝ Լեռ, Հայոց պատմութիւն, հ. III, էջ 246, Ա. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմութիւն, հ. II, Երևան, 1965, էջ 216:

<sup>152</sup> Դավրիժեցի, էջ 40:

<sup>153</sup> Տե՛ս «Մարտիրոս դի Առաքելի ժամանակագրութիւնը» («Մանր ժամանակագրութիւններ», հ. II, էջ 428), նոր Զուղայի Սուրբ Մինաս կեկեղեցու 1607 թ. դրված ավետարանի հիշատակարանը (С. Тер-Аветисян, *Նշվ. աշխ.*, էջ 71), Խաչատուր Զուղայեցի, էջ 102 և այլն:

<sup>154</sup> Ա. Նղաբյան, *Իրանի Զհարմհալ գաւառը, Թեհրան*, 1963, էջ 174:

<sup>155</sup> Օրինակ՝ շահ Արբաս Ա-ի պալատական գլխավոր աստղագետ Զալալ-էդ-դին Մուհամմադ Ցազդիի հաղորդամբ բռնագաղթը կատարվել է հեջրիի 1013 թ. ուշար ամսին, որը համընկնում է 1604 թ. վերջերին (տե՛ս Բ. Ն. «تبرستان، ج 3، تهران، ص ۲۰۵»):

ձմռան շրջանում և ավարտվում հաջորդ տարվա գարնանը, Այսպիսով, մեծ գաղթը կատարվել է 1604—1605 թթ.:

Դավրիժեցու տվյալները հնարավորություն են տալիս գծելու բնագաղթին ենթարկված շրջանների գոտին: Այն ընդգրկում էր Նախիջևանը, Երևանը, Եղեգնաձորը, Լոռին, Համզաչիմանը, Ապարանը, Շարաբխանան, Շիրակվանը, Կարսը, Կաղզվանը, Ալաշկերտը, Մակուն, Աղբակը, Սամաստը, Խոյը, Ուրմիան, Թավրիզը, ինչպես նաև Կարինը, Բասենը, Խնուսը, Մանազկերտը, Արծկեն, Արճեշը, Բերկրին, վանը և այլն<sup>156</sup>: Հիշյալ վայրերում նշանակված վերակացուներն իրենց ջոկատներով պարտավոր էին տեղահան անել ողջ բնակչությանն առանց խտրության և առանց որևէ միջոցի առջև կանգ առնելու<sup>157</sup>: Նրանք գործում էին ամենայն դաժանությամբ, ժողովրդին անողորաբար դուրս քշում իրենց տներից և ապա հրկիզում եղած ամեն ինչ՝ տները, պարենի ու խոտի պահեստները և այլն<sup>158</sup>: Սկսված խուճապն ավելի է մեծանում, երբ Զղալոզլին հասնում է Կարս, և շահն արագացնում է նահանջը: Ընդ եղեն երեք բանակը մեծամեծը և անհունք,—գրում է Դավրիժեցին,—առաջին՝ բանակն ժողովրդրդեանն, երկրորդն՝ բանակն Պարսից, երրորդն՝ բանակն Օսմանցուց»<sup>159</sup>: Երկյուղ կրելով, որ օսմանցիները կշարժվեն ավելի արագ և իրենց կհասնեն նախքան Արաքսն անցնելը, պարսից հրամանատարությունը տենդազին շտապում է ու ստիպում, որ զորքը և ժողովրդի բազմահազարանոց բանակը օր առաջ հասնեն գետի մյուս ափը: Դավրիժեցին կենդանի գուլյներով է նկարագրում Արաքսն անցնելու ողբալի տեսարանը: Զորականները ճկարի սաստիկ տագնապալ նեղէին զժողովուրդն, զոմանս մահու հարուածով գանելով, և զոմանց զունչս և զականջս հատանելով, և զոմանց զգլուխն կտրեալ ի

<sup>156</sup> Դավրիժեցի, էջ 53, 450—451, հմմտ. Զաֆարիա Քաևաֆեցի, հ. Ա, էջ 19—20. այստեղ նշվում են նաև Քարթլին և Կախեթը:

<sup>157</sup> Դավրիժեցի, էջ 39—40:

<sup>158</sup> Նույն տեղում, էջ 40—41:

<sup>159</sup> Նույն տեղում, էջ 41:

ձող ցցէին...»<sup>160</sup>, Այդպես վարվեցին Առաքել կաթողիկոսի եղբոր՝ Օհանջանի և այլոց հետ<sup>161</sup>: Խոշտանգելով ու ահաբեկելով ժողովրդին, զինվորները նրանց ստիպում են մտնել գետը՝ շարժվելու դեպի մյուս ափը: Եղած սակավաթիվ փոխադրամիջոցները, որոնք կարող էին բավարարել այդ հոծ բազմության միայն շնչին մասին, զինվորներն էին օգտագործում: Փախչելը բոլորովին անհնար էր, քանի որ Քի զօրացն Պարսից՝ որք վարիչք էին կարգեալք ժողովրդեանն, շրջապատեալ զժողովրդեամբն պահէին՝ զի մի՛ ոք փախիցէ...»<sup>162</sup>: Եվ մարդկային այդ զանգվածն իրեն հանձնում է ջրի ալիքներին: Թույլերը, ծերերը, մանուկները, նրանք, ովքեր լողալ չգիտեին, ջրասույզ էին լինում, «և գետատար մարդով ծածկեալ էր երեսն գետոյն, և թէպէտ անցին, որք անցինն, այլ բաղումք այնք էին՝ որք հեղձամաք ջրոյն մեռան»<sup>163</sup>: Շատերը կառչում են պատահած առարկայից և կամ կենդանուց ու այդպես ափ հասնում: Այդ կերպ է փրկվում և քահանա Ավգուստինոս Բաջեցին, որի, իբրև դեպքերի անմիջական մասնակցի, տողերը հաստատում են Դավրիժեցու պատմության հավաստիութունը: Ահա Ավգուստինոս Բաջեցու նկարագրութունից մի հատված. «Եվկաք հասաք ի գետն, որ կոչի Արաստղ [Արաքս], խիստ մեծ, որ մարդ առանց նախ չէ կարիլ անցնիլ: Ամենայն ժողովուրդն լցին ի մէջն առանց նախ և առանց տաւարի, որն որ անցաւ, որն որ ջուրն տարաւ, որն որ հայրն կանչելով, որն որդի ձայնելով, որն մայրն կանչելով... շատոնք ի գետ խեխտեցան: Ես մեղաւորս այլ գետն կու տանէր. մէկ ջամշի աքի ընկաւ ձեռս. Աստուծով դուրս եկի, լալով դէպի Աստուած հառաչելով. ամենեքեան լալով անցնէին»<sup>164</sup>:

Նկատենք, որ վերոհիշյալ տողերի հեղինակը հոգևոր դասի ներկայացուցիչ է, որը, ինչպես տեսնում ենք, ոչնչով

<sup>160</sup> Նույն տեղում, էջ 42:

<sup>161</sup> Նույն տեղում:

<sup>162</sup> Նույն տեղում, էջ 43:

<sup>163</sup> Նույն տեղում, էջ 44:

<sup>164</sup> «Նշխարք մատենագրութեան Հայոց», ի լոյս էած Ք. Պ[ատկանյան], Ս. Պետերբուրգ, 1884, էջ 6—7:

արտոնված չի եղել և ալեկոծյալ ամբոխի մեջ անցել է գետն ու պատահաբար փրկվել: Դավրիժեցու նկարագրությունը ևս խոսում է այն մասին, որ գաղթի ժամանակ հոգևորականությունը շահի կողմից առանձին ուշադրություն չի հատկացվել, որպիսին ցույց է տրվել շուղայեցիներին, թեև հոգևորականությունը հետագայում դառնալու էր շահի հենարաններից մեկը:

Մեծ տառապանքի և բազում զոհերի գնով Արաբսն անցնելուց հետո էլ ժողովուրդը դադար առնելու հնարավորություն չի ունենում: Այստեղ փոխվում է նրանց գլխավոր վերակացուն: Ամիր-Գունայի փոխարեն շահը նշանակում է իսլիֆալի էլիազ-Սուլթանին, որին հրամայվում է տարագրյալներին դեպի Իրան տանել դժվարանցանելի ճանապարհներով, լեռնային զառիթափերով ու կիրճերով՝ թշնամու հետապընդումից խույս տալու համար<sup>165</sup>: Վրա հասնող ձմեռը թույլ չի տալիս շարունակել ճանապարհը, և գաղթականությունը կանգ է առնում, հասնելով Թարում-խալխալ, Ահար, Մուշկուն ու սրանց մերձակա վայրերը<sup>166</sup>: Գարնանը երթը շարունակվում է, այս անգամ Աբութուրաբ-բեկի վերակացությամբ, և ի վերջո տարագրյալները ոտք են դնում Սպահան: Այստեղ են տեղավորվում քաղաքներից գաղթածները, իսկ գյուղացիները բնակություն են հաստատում շրջակա գավառներում ու գյուղերում, ինչպես Լնջանում, Ալնջանում, Գանդիմանում, Ջդահոռում, Փարիայում, Բուրվարիում: Մեծ թվով տարագրյալների բնակեցնում են Մազանդարանում<sup>167</sup>: Գաղթականներին տեղավորում են նաև Շիրազում, Ֆարահաբադում, Քաշանում, Ղազվինում, Գիլանում, Դարբանդում և այլուր<sup>168</sup>:

<sup>165</sup> Դավրիժեցի, էջ 45:

<sup>166</sup> Նույն տեղում, էջ 45—46:

<sup>167</sup> Շարդենի վկայությամբ շահ Աբրահ Ա-ն Մազանդարանի մասին ասում էր, թե այն ստեղծված է քրիստոնյաների համար, քանի որ այնտեղ առատ են գինին և խոզը (سپاحتنامہ شاردن، ج ۴، ص ۲۷):

<sup>168</sup> Դավրիժեցի, էջ 46, 148, 2. Տեր-Հովհաննես, նշվ. աշխ., հ. 1, էջ 30: Զաքարիա Քանաքեռցու մոտ գտնում ենք գաղթականներով բնակեցված շրջանների ավելի ընդարձակ ցուցակ (տե՛ս Զաքարիա Քանաքեցի, հ. Ա. էջ 19—20):

Ինչպես և պետք էր սպասել, բռնագաղթի ժամանակ շահի հատուկ ուշադրության առարկան Ջուղան էր: Դավրիժեցին մի առանձին դուռն է նվիրել Ջուղայի գաղթի նկարագրությանը<sup>169</sup>, Ջուղայեցիների տեղահանումն ու փոխադրումը հանձնարարվում է Հանիա<sup>170</sup> Թահմազդուլի-բեկին<sup>171</sup>: Շահի հրովարտակն ազդարարում էր. «Հրաման է ի թագաւորութենէս մերմէ ձեզ շուղայեցւոցդ ելանել ի տեղեաց ձերոց և գնալ ի Պարսկաստան աշխարհ»<sup>172</sup>: Ջուղայեցիներին հրաման է տրվում երեք օրվա ընթացքում հեռանալ հայրենի տնից<sup>173</sup>, իսկ ով չի ենթարկվի, «զինքն սպանանեն և զընտանիս և զինչս նորա գերեն»<sup>174</sup>: Ջորականները շարունակ շտապեցնում ու սպառնում էին: Մի պատուհաս էլ շրջակա գյուղերից եկած մահմեդականներն էին, որոնք գաղթողների դուռքին տիրանալու համար այդ օրերին վիտում էին Ջուղայում և Թահմազդուլի-բեկի օգնականները դարձած հսկում էին ու ստիպում շուղայեցիներին՝ ժամ առաջ դուրս գալ իրենց տներից: «...Եւ այսպէս յափշտակումն և կորուստ էր ընչից բրիստոնէից»<sup>175</sup>:

Ջուղայից դուրս գալով, նրա բնակիչներն անհուն կսկիծով իրենց տների ու եկեղեցիների բանալիները գցում են Արաքսը և սկսում գետն անցնել: Այստեղ շահի հրամա-

<sup>169</sup> Դավրիժեցի, զլ. Ե՝ «Յադագս քշելոյ զամենափարթամ գիւղաքաղաքն Ջուղայու յերկիրն Պարսից»:

<sup>170</sup> «Անիս» ախոզոսն է (انيسى—մտերիմ):

<sup>171</sup> Ազգությանը վրացի, որը վրաստանից պատանդ էր տրվել Իրանին, այնտեղ մեծացել և մահմեդականություն էր ընդունել (տե՛ս Դավրիժեցի, էջ 58, 778 Վ ը «ج منشى»):

<sup>172</sup> Դավրիժեցի, էջ 58:

<sup>173</sup> Այդ կապակցությամբ ճիշտ չէ այն տեղեկությունը, թե «Առաքել Դավրիժեցին գրում է, որ պատրաստվելու և քաղաքից հեռանալու համար շուղայեցիներին տվեցին ընդամենը մի քանի ժամ» (տե՛ս «История Азеј байджана», т. I, Баку, 1958, стр. 264):

<sup>174</sup> Դավրիժեցի, էջ 58:

<sup>175</sup> Նուն տեղում, էջ 59:



տով զըզըբաշնների օգնությամբ իրականացվեց»<sup>180</sup>, ապա Դավրիժեցին տալիս է ստեղծված վիճակն իր բոլոր կողմերով, նշելով, որ շնայած ցույց տրված օգնությանը, ջուղայեցիներն թվում էլ շատ զոհեր ու տուժողներ եղան. քիչ նեղություն շպատճառեցին նրանց հենց շահի զինվորները՝ հափշտակելով նրանց ունեցվածքը, առևանգելով կանանց ու երեխաներին<sup>181</sup>: Այդ մասին Դավրիժեցու տվյալներն հավաստումը գտնում ենք Անտոնիո դե Գուվեայի այն հաղորդման մեջ, որի համաձայն՝ երբ շահին լուր հասավ, թե զըզըբաշ զինվորները զաղթականների կանանց և երեխաների մի մասին զերուխյան են վերցրել, հրաման տվեց բոլորին ազատել<sup>182</sup>:

«Հայոց պատմության» մեջ Լեոն արդեն ընդունում է Դավրիժեցու հաղորդման ճշտությունը և եզրակացնում. «Բայց և այնպես ջուղայեցիներն էլ ենթարկվեցին ընդհանուրի ճակատագրին»<sup>183</sup>:

Պետք է ենթադրել, որ Զուղայի խոջայության ստացած օգնությունը նկատի ունեն և այն աղբյուրները, որոնք խոսում են ընդհանրապես բոլոր զաղթականների բարեհաջող փոխադրման մասին: Այսպես, Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի գրադարանում գտնվող ձեռագիր ավետարանի հիշատակարանը վկայում է, որ զաղթի ժամանակ Արաքսն անցնելիս «ոչ ոք վնասեցաւ խնամովն Աստուծոյ»<sup>184</sup>: Դա առիթ

<sup>180</sup> Տե՛ս Բ. 5 Վ. 3, «نصرالله فلسفی» ج 3, ص 10

<sup>181</sup> Դավրիժեցի, էջ 61:

<sup>182</sup> Նշենք, որ Գուվեան դա բացատրում է այն հանգամանքով, որ շահ Արբաս Ա-ն տեղեկանալով՝ հայերին իրան զաղթեցնելիս նրանց նկատմամբ իր պաշտոնյաների դաժան վարքագծի մասին, «ազդվեց» և «Իրանում հայերի ապահովության վերաբերյալ մի քանի հրաման արձակեց»: Տե՛ս Բ. 6 Վ. 3, «نصرالله فلسفی» ج 3, ص 10

<sup>183</sup> Լեո, Հայոց պատմություն, հ. III, էջ 251:

<sup>184</sup> Տե՛ս Հ. Տեր-Հովհաննյանց, նշվ. աշխ., հ. 1, էջ 26, հմմտ. «Հանդէս ամսօրեայ», 1899, թիւ 6, էջ 184:

Գրիգոր Դարանազցիի նույնպես գրում է. «Բայց հայոց ազգացն ոչինչ վնասեաց (շահ Արբաս Ա-ն— Լ. Դ.), այլ միայն սուրկուն արար, տամբք և ամենայն ընդիւրն և տարեալ բնակեցոյց ի Սօս քաղաք, որ ի Սպահէն...»:

է տվել Հ. Տեր-Հովհանյանցին որոշ կասկած ունենալու մեծ գաղթի ժամանակ ժողովրդի կրած տառապանքի ու զոհերի մասին Դավրիժեցու հաղորդած տեղեկությունների նկատմամբ: Մանավանդ, որ Դավրիժեցին այդ մասին գրել է դեպքերից կես դար հետո, ուստի և «ոչ համարի նա ժամանակակից պատմաբան»<sup>185</sup>: Հ. Տեր-Հովհանյանցի հիմնավորումը հետևյալն է: Քանի որ անհերքելի փաստ է, որ ջուղայեցիներն իրենց հարստությունն անվնաս փոխադրել են Նոր Զուղա, և եթե Դավրիժեցու տվյալները ստույգ են, «ուրեմն ժողովուրդը որք զանձինս իւրեանց անվտանգ փոխադրել ոչ մարթնային»<sup>186</sup>, զի ա՞րդ կարելի էր նոցա փոխադրել զստացուածս կամ զինչս իւրեանց...»<sup>187</sup>:

Մենք արդեն նշեցինք ջուղայեցիներին ցույց տրված առանձնահատուկ վերաբերմունքի մասին՝ ի տարբերություն մնացած տարագրյալների: Ուրեմն, պետք է զատել գաղթականների ընդհանուր զանգվածը ջուղայեցիներից (այն էլ՝ ոչ ըստ, այլ մի բուռ խոջայությունից): Դավրիժեցին պարզորոշ բացատրում է. «Եւ թէպէտ կարողքն մարմնով՝ և կամ որք ունէին գոյք ստացուածոց, նոքօք հանդերձէին ի գնալ, բայց որք էին տկարք, այսինքն տնանկ, և այլիք, և ծերք, ո՛չ կարէին ի գնալ, աղաղակ բարձեալ աղիողորմ ձայնիւ արտասուօք... ողբային»<sup>188</sup>:

Ժամանակի գրավոր հիշատակությունները կրկին ու կրկին հաստատում են Դավրիժեցուն: Հ. Տեր-Հովհանյանցի վկայակոչած հիշատակարանն իսկ տալիս է գաղթի սրտա-

---

սակայն այս միտքը նա հայտնում է ի հակադրություն դրան նախորդող տեղեկության, ըստ որի շահը բազում քաղաքներ ու ամրոցներ գրավեց ու հիմնովին ավերեց, թուրքական զորքին սրի մատնեց, կանանց ու երեխաներին գերի վերցրեց... (տե՛ս Գրիգոր Դարեանացի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1915, էջ 38—39):

<sup>185</sup> Հ. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., հ. 1, էջ 25:

<sup>186</sup> Ոչ մարթնային՝ չէին կարող:

<sup>187</sup> Հ. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., հ. 1, էջ 27:

<sup>188</sup> Դավրիժեցի, էջ 59—60:

շարժ մի նկարագիր, պատմելով աղետալի վիճակի ու զոհերի մասին. «...Վա՛յ մեզ թէ յայնմ աւուր նեղութիւնն ո՛վ կարէ պատմել, թէ որպէս անողորմաբար տանէին զազա հայոց. ոչ թողուին որդիս բարձցէ զճերացեալ ծնողսն, կամ առցեն մարք զմանկունս իւրեանց... բազում ծերք և տկարք կոխան եղեալ մեռանէին. և լինէին գէշ գաղանաց...»<sup>189</sup>: նման պատկեր ենք տեսնում և Հ. Տեր-Հովհանյանցի ներկայացրած մյուս վկայութեան մեջ՝ դարձյալ Ամենափրկիչ վանքի ձեռագիր ժողովածուից<sup>190</sup>: Այստեղ էլ, սակայն, նկատելի է Հ. Տեր-Հովհանյանցի հակումը՝ այնուամենայնիվ պնդելու իր հայտնած կասկածը և այն միտքը, որ թերևս ժողովուրդն անվնաս է անցել Արաքսը: Այդ պատճառով, մեկնաբանութուն չպահանջող այնպիսի տողերի առթիվ, ինչպիսիք են՝ «Շատ նազելի ճոթ պատկեր՝ սէվադէմ պարսից ձեռք անկան, շատ զօրաւորք կտրիչ նետողաց ազգէն սպանան:

Շատ գեղեցիկ ճոթ պատկեր՝ կապիկ [^] մանկունք յտնատակ. թաւալմամբ մեռան:

Շատոնք արաստըն ընկան՝ ջրախեխ առ Աստուած փոխեցան»<sup>191</sup>,

Հ. Տեր-Հովհանյանցը տալիս է այսպիսի բացատրութիւն. «...Յաղագս մանկանց խօսի. ուստի ինձ այնպէս թուի՝ թէ մանկունք յանցանելն ընդ Երասխ՝ ոմանք ջրասոյզ մեռան»<sup>192</sup>:

<sup>189</sup> Հ. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., հ. 1, էջ 26:  
<sup>190</sup> Նույն տեղում, էջ 28—29: Սույն վկայութիւնը տարբերակն է գաղթին ժամանակակից Հովհաննես Մակվեցու ողբի, որը գտնում ենք Գ. Ալիշանի մոտ («Այրարատ», էջ 302):

<sup>191</sup> «Այրարատ»-ի տարբերակում՝  
 «Շատ նազելի ճոթ պատկերք  
 Սեւադէմ Պարսից ձեռն անկան.  
 Շատ զօրայեղզուն կտրիճ  
 Ի նոցա ազգէն ըսպանան.  
 Շատ գեղեցկազուն մանկունք  
 Ոտնայատակ թաւալմամբ մեռան.  
 Շատոնք ի յԵրասխն անկան,  
 Զրախեղզ առ Աստուած փոխան»:

<sup>192</sup> Հ. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., հ. 1, էջ 29:



դոնել ժամանակակից և ականատես գրիչների հաղորդումներում, որոնցից է դեպքերի մասնակից, Զուլայի բնակիչ Հակոբ Երեցի թողած նկարագրութունը՝ Նոր Զուլայի Սուրբ Սարգիս եկեղեցում գտնվող 1607 թ. գրված ավետարանի հիշատակարանում: «Ի հուրոյ այրմանէն,—վկայում է նա,— աւուր մի ճանապարհ զայրահոտ դմարդն ի վէմն արգելէր ու րմբոնէր շունչն: Դեռևս այս նեղութիւնս ի թանձրամած միտոյն արեգակն ոչ երևէր»<sup>198</sup>:

Կրնկակոխ հետապնդող թշնամու գրոհը բոլոր միջոցներով կասեցնելու մտադրութունից բացի, շահ Արքային առաջնորդում էր նաև տարագրվող ժողովրդի և հատկապես շուղայեցիների վերադարձի բոլոր կամուրջներն այրելու նըպատակը: Զուլայի կապիտալը դարձի ճամփա չպետք է ունենար:

Նշենք, որ Գունաբաղին Զուլայի ավերումը բացատրում է շահի քաղաքական ու կրոնական նկատառումներով, այն կապելով Նախիջևանի հետ: Վերջինիս մահմեդական բնակիչները, ըստ պարսիկ պատմագրի, լինելով մոլիռանդ սուննիներ, օգնում էին օսմանցիներին և Սեֆեհիների դեմ պայքարը համարում «սրբազան» պատերազմ ընդդեմ այլակրոնների: Այդ պատճառով շահը իր զորքերին հրամայում է հիմնահատակ անել Նախիջևանը: Բայց «Նախիջևանի բարեկարգութունը կախված էր Զուլայի հայերից, որոնք փառաբանված էին իրենց հարստությամբ ու առևտրով»<sup>199</sup>: Ուտի, որպեսզի Նախիջևանն այլևս հնարավորութուն չունենա ավերակներից վեր հանելու, ավերվեց նաև Զուլան: Այս բացատրութունը կարող է օգտագործվել ավելի շուտ իբրև Զուլայի նշանակութունն ու խաղացած դերը հաստատող վկայութուն:

Հետագայում Զուլա այցելած XVII դ. ճանապարհորդների (Շարդեն, Ռոդես և այլն) ուղեգրութուններում կարելի

<sup>198</sup> Տե՛ս С. Тер-Аветисян, նշվ. աշխ., էջ 77:

<sup>199</sup> Տե՛ս А. Рахмани, նշվ. աշխ., էջ 103, 3 ج نصرالله فلسفی،

է գտնել երբեմնի ծաղկուն ու վաճառաշատ Ջուզայի ավերակների նկարագրությունը<sup>200</sup>։

Որոշ հեղինակների կարծիքով ջուլայեցիներն իրենց ողջ հարստությունը տեղափոխել են Իրան<sup>201</sup>։ Դավրիժեցին հաղորդում է, սակայն, որ ջուլայեցիները, այնուամենայնիվ, հնարավորություն չունեցան ողջ ունեցվածքը վերցնել իրենց հետ։ Մի կողմից շահի հրամանը կատարող զինվորների սպառնալիքները և ստեղծված տազնապն ու շտապողականությունը, մյուս կողմից՝ փոխադրման դժվարությունները ստիպում են ջուլայեցիներին՝ իրենց ունեցվածքի մի մասը թողնել, ընդ որում, «զոր ոչ կարացին բառնալ՝ իւրաքանչիւր ոք պահուստ և թաքուստ արարեալ թաղեցին»<sup>202</sup>։ Ի դեպ, այս փաստը խոսում է նաև այն մասին, որ ջուլայեցիները հետագայում հայրենիք վերադառնալու հույս ունեին։ Դա առավել ցայտուն կերպով արտահայտվում է բանալիները գետը զըցելու տեսարանում, երբ ջուլայեցիները բացականչում են. «Ո՛վ սուրբ Աստուածածին, այսոքիկ բանալիք սրբոյ եկեղեցւոյ մերոյ՝ և տանց մերոց քեզ յանձն լիցի. և դու դարձուցես զմեզ ի տեղիս մեր յօտար երկրէն ուր տանին»<sup>203</sup>։ Սակայն վերադարձողները հազիվ թի գտնեին այն, ինչ պահ էին տվել թաքստոցներին, քանի որ շրջակա գավառների

<sup>200</sup> *Sib'ia* 1795—1797, ج ٢، «سياحتنامه شاردن» Divers voyages et missions du P. Alexandre de Rhodes en la Chine et autres royaumes de l'Orient avec son retour en Europe par la Perse et l'Arménie, P., 1854, հմմտ. С. Тер-Аветисян, նշվ. աշխ., էջ 74—82, 107—127.

<sup>201</sup> Հ. Տեր-Հովհաննյանց, նշվ. աշխ., հ. 1, էջ 27, И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852, стр. 158.

<sup>202</sup> Դավրիժեցի, էջ 59, 522։ Հետաքրքիր է նշել, որ այս պայմաններում, այնուամենայնիվ, ջուլայեցիներն իրենց հետ Սպահան փոխադրեցին բազմաթիվ մտավոր գանձեր՝ հայկական ձեռագրեր (տե՛ս Հ. Առաքելյան, նշվ. հոդվ. («Գեղունի», 1904, թիւ 1—10, էջ 20)։

<sup>203</sup> Դավրիժեցի, էջ 60։



քի մասին, Ամիր-Գունա-խանը ստիպված է լինում անձամբ մեկնել Գառնի և ամենադաժան միջոցներով տեղահան անել նրա բնակիչներին, դատաստան տեսնելով նաև Գառնիի մյուս գյուղերի բնակիչների հետ, որոնք թաքնվել էին լեռներում: Պարսիկները մեծ դժվարությամբ կարողանում են հայտնաբերել լեռներում, քարայրներում ու ձորերում ապաստանած շատ փախստականների և հաշվահարգար տեսնել նրանց հետ: Այսպես, նրանք գտնում և գլխատում են Գեղարդի ձորում թաքնված Մանվել և Աստվածատուր հպիսկոպոսներին, ապա խուզարկելով ողջ ձորը, նրա խոռոչներից դուրս են հանում մարդկանց, մի մասին կոտորում, իսկ մյուսներին միացնում գաղթականներին<sup>211</sup>:

Այնուամենայնիվ, ոչ բոլոր գառնեցիներին է, որ Ամիր-Գունայի զորականները կարողացել են իրենց ենթարկել: «...Ձորս ո՛չ կարացին առնուլ՝ թողեալ ի բաց դնացին»,— գրում է պատմիչը<sup>212</sup>: Շատ փախստականների էլ հաջողվում է պատսպարվել Քոռադարա կոչված ձորում, որտեղ պարսիկների թիրախն է դարձել Յախըշխան անվամբ մի քարայր: Դավրիժեցին դառնությամբ նկարագրում է այդ թաքստոցում տեղի ունեցած արյունահեղ միջադեպի մանրամասնությունները, երբ պարսիկ զորականները սրախողխող են անում քարայրում պատսպարված մոտ հազար մարդու՝ մեծից մինչև մանուկ: «...Եւ ծովացաւ յատակ այրին արեամբ քրիստոնէից՝ և ամենայն քարինքն ներկեցան»,— պատմում է Դավրիժեցին,— և զստնդեայ մանկունս ի գրկաց մարցն խլէին և յայրէ անտի ի վայր ձգէին»<sup>213</sup>:

Այսպիսով, հերքվում է այն կարծիքը, թե մեծ գաղթի ժամանակ դիմադրության կամ բողոքի փորձեր չեն եղել<sup>214</sup>:

211 Նույն տեղում, էջ 47—49:

212 Նույն տեղում, էջ 49:

213 Նույն տեղում, էջ 51:

214 Գ. Գապպենճյանը, օրինակ, այն համոզմանն է, որ գաղթի ժամանակ «ոչ բողոքի շեշտ մը կար, և ոչ ալ ընդվզումի շարժում մը» (տե՛ս «Տաճար», 1912, էջ 365):

Բողոքն ու ընդվզումն էին, որ ստիպում էին պարսիկներին՝ արտակարգ միջոցների դիմելու և ետ վերադարձնելու փախըստականներին:

Նշենք, որ գաղթից խուսափողների բանակն ընդգրկում էր բնակչության բոլոր շերտերը, այդ թվում և հոգևորականությունը, որ, թվում է, թե ուրախությամբ պիտի ընդուներ շահի՝ մի ժամանակ այնքան բաղձալի «հրավերը»: Այս առումով հետաքրքիր է այն շրջադարձը, որ, ի վերջո, կատարվում է Իրանի նկատմամբ հայ հոգևորականների ունեցած դիրքորոշման մեջ: Եթե շահ Աբբաս Ա-ի արշավանքի նախօրեին թուրքական իշխանությունների բռնություններից հալածված հոգևորականությունը շատերի նման դեպի Պարսից երկիրն էր հայում՝ նրա հովանու տակ պատասպարվելու հույսով, ապա պարսիկներին՝ Հայաստան մտնելուց հետո, ճաշակելով շահի «բարերարությունը», շուտով հուսախար է լինում իր ակնկալությունների մեջ և նախքան գաղթը, ինչպես տեսանք, շահի խոստացած ապահովությանն արդեն հավատ չի ընծայում, իսկ գաղթի ժամանակ, թեև խմբերի բաժանված և տարբեր կերպ, բայց ընդհանուր առմամբ՝ խուսափողական դիրք է գրավում: Դրա պերճախոս վկայությունը Հավուց-Քառի Մանվել և Գեղարդի Աստվածատուր եպիսկոպոսների փախուստն է գաղթից այն դեպքում, երբ շահ Աբբասի արշավանքի նախօրյակին նրանք անձամբ մեկնել էին Սպահան՝ շահի հովանավորությանն արժանանալու ակնկալությամբ:

\* \* \*

Դավրիժեցին որոշակի տեղեկություն չի հաղորդում տարագրյալների թվի մասին, որը մնում է որպես կնճռոտ հարց: Զանազան սկզբնաղբյուրների և հետազոտությունների տրվյալները բաղդատելիս մեր առջև բացվում է խճճված մի պատկեր, որտեղ կարելի է հանդիպել ամենատարբեր թվերի: Բացի հավասառի և ոչ հավաստի տվյալների տարբերությունից, հարցը բարդացնում է նաև այն հանգամանքը, որ՝ նախ,

գաղթեցվել են տարբեր ժողովուրդներ (թեև մեծամասնությունը՝ հայեր), երկրորդ՝ տարագրությունը կատարվել է բազմաթիվ շրջաններից՝ ինչպես Արարատյան երկրի, այնպես էլ Արևմտյան Հայաստանի, երրորդ՝ գաղթականները տեղավորվել են իրանի տարբեր վայրերում, և վերջապես՝ մեծ գաղթն ունեցել է մի քանի փուլեր, շճաշված հետագայում (օրինակ՝ 1618 թ.) կրկնված գաղթերը: Այս բոլորը խառնաշփոթություն է առաջացնում և հնարավորություն չի տալիս որոշելու գաղթեցված ժողովրդի ընդհանուր թիվը, քանի որ հեղինակներից յուրաքանչյուրի մոտ կարելի է գտնել նշվածներից միայն այս կամ այն պարագան արտացոլող տվյալ, իսկ ավելի հաճախ զգացվում է տվյալների պակաս:

Դավրիժեցին հաղորդում է, որ գաղթեցված հայերից 500-ական ընտանիք տեղավորվել են Սպահանում և Շիրազում<sup>215</sup>, Բացի դրանից, ինչպես արդեն ասվել է, միայն Արժկեից ու նրա շրջակայքից Ալլահվերդի-խանի կողմից գերվել էր 23 հազար քրիստոնյա (հայեր), որոնք քշվեցին իրան<sup>216</sup>: Մնացած դեպքերում գաղթականների թվի մասին Դավրիժեցին հաղորդում է նկարագրական ձևով. ինչպես՝ «ի ստորոտէ լերանցն Գառնույ մինչ ի յեզրն Երասխայ մեծի գետոյն, լայնութիւնն էր բանակին (գաղթականների—լ. Դ.) . իսկ զերկայնութիւնն դովիմբ կշռեաց դու, բայց ես ասեմ աւուր միոյ ճանապարհ. և յայլուր տեսի՝ որ հինգ աւուր ճանապարհ էին գրեալ»<sup>217</sup>: Ըստ երևույթին, պատմիչը դժվարացել է այդ հարցում եզրակացության գալ՝ իր ձեռքի տակ եղած սկզբնաղբյուրների հակասական կամ սուղ տվյալների պատճառով:

Իսթանբուլի Մունշու հաղորդմամբ զըզըլբաշները հասնելով Կարսի և էրզրումի միջև գտնվող Հասանղալասի կոշված վայրը, այնտեղ ամառանոցներ ունեցող հայերից մոտ

<sup>215</sup> Դավրիժեցի, էջ 46:

<sup>216</sup> Նույն տեղում, էջ 33:

<sup>217</sup> Նույն տեղում, էջ 40:

2—3 հազար ընտանիք գաղթեցրին Իրան և մոտ 20 հազար ալլակրոնների գեւեցին, որոնք ղըզըլբաշների շրջանում «արժանացան իսլամին»<sup>218</sup>։ Զուլայից Սպահան գաղթեցվածների թիվն ըստ Խաքանդար Մունշու 3 հազար ընտանիք է<sup>219</sup>։ Գաղթին ժամանակակից Անտոնիո դե Գուվեան 60 հազար է նշում տարագրված ընտանիքների թիվը<sup>220</sup>, իսկ պարսիկների նահանջի ժամանակ գերվածներինը՝ 100 հազար<sup>221</sup>։ Շարդենի վկայությամբ հայերից և վրացիներից 30 հազար ընտանիք գաղթեցվել է Մազանդարան<sup>222</sup>։ Վրացական աղբյուրի համաձայն տարագրյալները կազմել են 80 հազար ընտանիք<sup>223</sup> (այսինքն՝ մոտ 400 հազար մարդ)։

Առանձին կանգ շտոնելով այս հարցի վերաբերյալ բազմաթիվ այլ հեղինակների տվյալների վրա, նշենք միայն, որ դրանք ընդգրկում են դանազան թվեր՝ սկսած 24 հազարից մինչև 600 հազար<sup>224</sup>։ Եղած տեղեկություններն անբավարար են տարագրյալների ստույգ թիվը որոշելու համար։ Սակայն, ի մի բերելով տարբեր ժամանակներում և դանազան վայրերից տեղահանվածների, ինչպես նաև պարսիկների նահանջի ժամանակ ավերի ենթարկված ու թափուր մնացած շրջանների նախկինում ունեցած բնակչության քանակի վերաբերյալ տեղեկությունները, հիմք ենք գտնում ենթադրելու, որ այս հարցում թերևս իրականությունը մոտ են Հ. Առա-

<sup>218</sup> اسکندر منشی، ج ۲، ص ۷۶۶

<sup>219</sup> Նույն տեղում, էջ 668:

<sup>220</sup> Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, стр. V, 471.

<sup>221</sup> Նույն տեղում, էջ 468:

<sup>222</sup> سیاحتنامه شاردن، ج ۴، ص ۳۶

<sup>223</sup> Լ. Մեխիսեթ-Քեկ, նշվ. աշխ., հ. B, էջ 112:

<sup>224</sup> تصواله فلسفی، ج ۳، ص ۲۰۶، عباسی اقبال، تاریخ مفصل ایران، تهران، ۱۳۲۰. Fr. Richards, A Persian journey, L., 1932, p. 80; С. Тер-Аветисян, նշվ. աշխ., էջ 79, Н. Пигулевская [и др.], նշվ. աշխ., էջ 277, И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 253 և այլն:

քելյանի հաշվումները, ըստ որոնց գաղթականների թիվը մոտ 500—600 հազար է եղել, բայց Իրան են հասել մոտ 250 հազարը<sup>225</sup>,

Հայերից բացի գաղթեցվում էին նաև ադրբեջանցիներ, վրացիներ, հրեաներ, գեբրեր (գրադաշտականներ)<sup>226</sup>, Դավրիժեցու արտահայտությունը՝ «...եթէ քրիստոնեայ, եթէ հրէայ, եթէ մահմետական»<sup>227</sup>: Սակայն հայերը բացարձակ մեծամասնությունն են կազմել:

Այսպիսով, գաղթեցվել է մարդկային հսկայական զանգված, անկախ տարիքից, սեռից, դավանանքից կամ սոցիալական վիճակից:

Շահ Աբբաս Ա-ի ձեռնարկած բռնագաղթը մարմին տվեց նրա շատ ծրագրերին: Իրանի համար հայ արհեստավորների և մասնավորապես վաճառականության խաղացած դերը դարձել է հանրահայտ փաստ: Պիեդրո դելա Վալեի արտահայտությամբ՝ «հայերն այնքան էին անհրաժեշտ պարսկական շահին, ինչպես ճենովացիները՝ իսպանական թագավորին»<sup>228</sup>:

Պետք է որ հենց առաջին տարիներից խիստ արդյունավետ եղած լինե՞ր երկրի բնակեցումը նոր՝ հարկատու, արհեստավոր, շինարար, հողագործ և վաճառական բնակիչներով, որպեսզի բռնագաղթե՞ր կրկնվեին նաև հետագա տարիներին: Այսպես, բազմիցս շեշտելով, որ շահ Աբբաս Ա-ի կողմից զանգվածային գաղթեցում է կատարվել մի քանի անգամ, Դավրիժեցիները մանրամասնություններ է հաղորդում դրանցից մեկի՝ 1618 թ. բռնագաղթի վերաբերյալ, որին կրկին ենթարկվել են Երևանի, Թավրիզի, Գանջայի, Արդաբիլի և սրանց շրջակա գավառների բնակիչները: Շահի իշխանությունների կողմից այդ շրջանների բնիկ և եկվոր բնակչության խիստ հաշվառում է անցկացվել, որից հետո

<sup>225</sup> Հ. Առաքելյան, Հանրագիտական բառարան, հ. Ա, էջ 6, նույնի՝ նշվ. հոդվ. («Գեղունի», 1904, թիւ 1—10, էջ 17):

<sup>226</sup> Գեբրերն Սպահան էին տարվել մեծ մասամբ Քերմանից, Եզդից, Շիրազից (տե՛ս Դավրիժեցի, էջ 457):

<sup>227</sup> Նույն տեղում, էջ 38, նաև՝ 35, 635:

<sup>228</sup> Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 442:

«յայլմէ աշխարհէ եկամուտ և ժողովածու» բնակիչներին վարել են Իրան<sup>229</sup>, Մի մասին՝ մոտ 10 հազար հայ ընտանիք, բնակեցրել են Ֆարահաբադում և շրջակա գյուղերում, իսկ քարազոր՝ արհեստավորներին՝ Սպահանում՝ «վասն արուեստին, որ պիտոյանայր անդ ի գործս շինութեանց տան թագաւորին, և համօրէն աղգին Պարսից...»<sup>230</sup>:

Իսքանդար Մունշու մոտ գտնում ենք մեկ այլ՝ 1615 թ. կատարված բռնագաղթի վերաբերյալ վկայություն, երբ «ըրրախտային» Մաղանդարան քշվեց Շիրվանից ու Ղարաբաղից դուրս եկած և Կախեթում հաստատված հայ, հրեա և մահմեդական բնակչությունը<sup>231</sup>:

Այսպիսով, նվաճված երկրներից բնակչության պարբերաբար կրկնվող դանգվածային բնակեցումն Իրան՝ արդեն իսկ ապացույց է շահի համար այդ քաղաքականության ունեցած դրական արդյունքի:

Այլ պատկեր ուներ այդ պրակտիկան գաղթեցվող ժողովուրդների համար, որոնք բազմաթիվ զրկանքներ էին կրում և իսպառ կտրվում մայր հայրենիքից: Մեծ սուրգունը ծանր հետևանքներ ունեցավ մասնավորապես հայ ժողովրդի կյանքում: Հայրենազրկվեց հայ ժողովրդի մի հսկայական հատված, որի սերունդները մինչև օրս ապրում են օտար երկրներում: Քանի որ հայերի վերաբնակեցումն ուղեկցվում էր երկրի ավերումով, ապա հասցված վնասը բազմապատկվում էր: Դավրիժեցին անհուն մորմոքով պատկերում է հայ ժողովրդի աղետը, ողբում ամայացած երկրի, ավերված բերդերի, վանքերի ու եկեղեցիների, հայրենի տների համար<sup>232</sup>: «...Անապատ եղև վայելուչ և քաղցր աշխարհս մեր: Եւ ազգ

<sup>229</sup> Դավրիժեցի, էջ 455—456:

<sup>230</sup> Նույն տեղում, էջ 456: Դավրիժեցու այս վկայությունը Ի. Պետրուշևսկու հոդվածում (Азербайджан в XVI—XVII вв.) (նշվ. հոդվ. ժող. էջ 280) ներկայացված է քիչ այլ տեսքով. դեպքը վերագրված է 1617 թ., և գաղթեցվածների ընդհանուր թիվը 10 հազար ընտանիք է նշված, մինչդեռ դա վերաբերում է նրանց մի մասին:

<sup>231</sup> ասکندر منشی، ج ۲، ص ۸۸۱

<sup>232</sup> Դավրիժեցի, էջ 52—55:

և ժողովուրդ մեր խլեալ ի տեղեաց և անշատեալք ի հայրենի և ի բնիկ ժառանգութեանց... եղեն վտարանդեալք և տարամերժեալք յերկիր օտար և յազգ այլասեռ և այլալեզու...»<sup>233</sup>։

Անտոնիո դե Գուվեան, որ նույնպես պատմում է Արարատյան երկրի ավերածութիւնների մասին, վկայում է, որ հիմնահատակ արվեցին «ավելի քան քսան գեղեցիկ և հոծ բնակչութեամբ քաղաքներ»<sup>234</sup>։ Միայն Երևանի նահանգում ավելի քան 1500 բարեկարգ բնակավայր կար, որոնցից յուրաքանչյուրն ուներ 400—600 բնակչութիւն<sup>235</sup>։

Հայաստանի շատ գավառներ հայազուրկ դարձան, երկրի բնակչութիւնն ավելի նոսրացավ ու տկարացավ և երկար ժամանակ զրկվեց պաշտպանունակութիւնից, իր ինքնուրույնութեան համար պայքարելու հնարավորութիւնից<sup>236</sup>։ Մյուս կողմից, Իրանում հաստատված գաղթականները, ինչպես կտեսնենք, ենթարկվեցին մեծ զրկանքների։ Դավրիժեցու խոսքերով՝ «որք և անդէն օր աւուր առ սակաւ սակաւ նուազին, ոմանք մահուամբ և կորստեամբ, և ոմանք հաւատոյ ուրացութեամբ...»<sup>237</sup>։ Սովը, հիվանդութիւնները, զանազան դժվարութիւնները տասնյակ հազարավոր կյանքեր խլեցին։ Շահ Աբբասի օգնութիւնն ու տված արտոնութիւնները քչերին էին բաժին ընկնում։ Գաղթականների հսկայական զանգվածներն ապրում էին կարիքի ու անիրավութեան ճիրաններում և դառնալով տեղի ժողովրդի բախտակիցները, ենթարկվում միևնույն ճնշմանն ու ֆեոդալական շահագործմանը, որոնց ավելանում է և կրոնական խտրականութիւնը։

Սակայն որոշ պարսիկ և եվրոպացի հեղինակներ այլ կերպ են ներկայացնում մեծ գաղթի հետևանքները, ճգնելով ոչ միայն անտեսել նրա ավերիչ նշանակութիւնը, մասնավորապես Հայաստանի համար, այլև պնդել, թե հայոց մեծ

<sup>233</sup> Նույն տեղում, էջ 54, հմմտ. Մատենադարան, ձեռ. № 1282, էջ 262ա։

<sup>234</sup> نصرالله فلسفی ج ۳، ص ۳۰۳

<sup>235</sup> Նույն տեղում։

<sup>236</sup> Տե՛ս Ս. Պողոսյան, նշվ. աշխ. հ. II, էջ 218։

<sup>237</sup> Դավրիժեցի, էջ 54։

գաղթը կատարվել է ի բարօրություն հայ ժողովրդի: Իսքանդար Մունշու մեկնաբանությունը բռնագաղթը քրիստոնյաների նկատմամբ շահի հոգատարություն արդյունքն էր<sup>238</sup>, և գաղթականությունը՝ մասնավորապես շուղայեցիները, բնակություն հաստատելով Սպահանում, «ժամանակի իրադարձություններից ապահովություն ստացան»<sup>239</sup>:

Անշուշտ, իրանա-թուրքական պատերազմները, ինչպես և օսմանյան տիրապետությունը մեծագույն աղետ էին Հայաստանի համար, սակայն պնդել, թե բռնագաղթը փրկություն էր հայ ժողովրդին, միտումնավոր է և իրականության հետ անհարիր:

Անգլիացի պատմաբան Փ. Սայքսի կարծիքով հայերի նրկատմամբ շահ Աբբաս Ա-ի վարմունքն ապացույց է նրա մեծահոգության և «հայացքների լայնության», քանի որ «փոխանակ այդ քրիստոնյա գերիների հետ վարվելու ինչպես ստրուկների հետ, նա տեղափոխեց 500 հայ ընտանիք իրենց ողջ ունեցվածքով Արաքսի վրայի Ջուղայից Նոր Ջուղա՝ Սպահանի մոտ»<sup>240</sup>: Պարսիկ պատմաբաններ Նասրուլլա Ֆալսաֆին և Աբուլղասեմ Սահաբը խոսելով գաղթի մասին, վկայակոչում են ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնյեի այն միտքը, ըստ որի՝ չպետք է կարծել, որ շահ Աբբասը հայերին իրենց հայրենիքից գաղթեցնելով, նրանց նկատմամբ շարիք է գործել, որովհետև սահմանային շրջաններում բրնակվելիս նրանք շարունակ զրկանքներ էին կրում իրանա-թուրքական պատերազմների հետևանքով<sup>241</sup>:

Դավրիժեցու տեղեկությունները, ինչպես տեսանք, ոչ միայն լրացնում են մեծ գաղթի վերաբերյալ այլ աղբյուրների հաղորդած տվյալները՝ ամբողջական պատկերացում տալով նրա մասին, այլև հնարավորություն են տալիս մերկացնելու և հերքելու պատմական այդ ակնառու փաստի սխալ, հակագիտական մեկնաբանությունները:

<sup>238</sup> اسکندر منشی، ج ۲، ص ۹۶۹

<sup>239</sup> Նույն տեղում, էջ 668:

<sup>240</sup> P. Sykes, A history of Persia, vol. II, London, 1951, p. 181.

<sup>241</sup> نصرالله فلسفی، ج ۳، ص ۲۰۷، ابوالقاسم سحاب، ص ۳۰۸

Բռնագաղթը դեռևս ընթացքի մեջ էր, երբ շահ Աբբաս Ա-ն իր բանակով կանգ առավ Թավրիզում՝ ձմեռելու: Նրա ռազմական գործողությունների արդյունքներն ավելի քան գոհացուցիչ էին: Օսմանյան սարդարը Նախիջևանում լուր առնելով կատարվածի մասին, իրոք, դադարեցրեց արշավանքը: Դավրիժեցու մեկնաբանությունը՝ պարսիկների գործողություններից հանկարծակիի եկած Սինան-փաշան, որը «մեծաւ զարմացմամբ հիացեալ ապուշ մնաց», այդպիսի վճիռ կայացրեց, քանի որ երկյուղ էր կրում, թե հակառակորդի ուժերը կարող են Արաքսի ձորում ոչնչացնել իր զորքը, բացի դրանից, օսմանյան բանակը չէր կարողանա անցնել այն ճանապարհներով, որոնցով անցել էին ղըզլըբաշներն ու գաղթականությունը: Դրան ավելացրած՝ վրա հասնող խրատաշունչ ձմեռը, դժգոհությունը բանակի շարքերում, ինչպես նաև շրջապատի ամայությունը Սինան-փաշային ստիպում են հտ դառնալ և գնալ Վան՝ ձմեռելու:

Թե ինչ է նստում Վանի և նրա շրջակայքի բնակչության վրա օսմանյան բանակի ձմեռումը, ցույց են տալիս Դավրիժեցու հետևյալ խոսքերը. «Եսկ զօրքն, որք նստան ղշաղ ի վերայ երկրին, իբրև զգազանն տեսեան Դանիէլի՝ կերան, և մանրեցին. և զմնացորդսն ոտից կոխան արարին. փոխանակ շինելոյ զերկիրն՝ աւերեալ քայքայեցին՝ և ի վերջին թշուառութիւնն հասուցին, թէ անողորմ կեղեքելով՝ և թէ այլ պղծագործութեամբ»<sup>242</sup>:

Ձմեռվա ընթացքում (1604—1605 թթ.) թշնամի բանակների առանձին ջոկատներ մի քանի բախումներ են ունենում: Թուրքերի փորձը՝ գրավելու Երևանը և Նախիջևանը, ձախողվում է:

Իր հետագա նվաճումների, մասնավորապես Շիրվանի գրավման համար շահը որոշում է օգտագործել իր մոտ որպես պատանդ գտնվող վրաց Ալեքսանդր Բ թագավորի որդի

<sup>242</sup> Դավրիժեցի, էջ 71:

Կոստանդինին<sup>243</sup>: Գրանով շահ Աբբասը հետապնդում էր նաև այլ նպատակ: Երկյուղ կրելով Ռուսաստանի ազդեցության ուժեղացումից, նա շանում էր կորստի մատնել Ռուսաստանի հետ միության կողմնակից Կախեթի թագավոր Ալեքսանդր Բ-ին ու նրա որդուն՝ Գեորգիին<sup>244</sup>: Այդ պատճառով նա Կոստանդինին տվեց Կախեթի թագավորությունը, որի փոխարեն շահի դրածոն պետք է սպաներ իր հորն ու եղբորը<sup>245</sup>: Պատրվակը պետք է լիներ Շամախու նվաճումը:

Կոստանդինն սկզբում անհաջողության է մատնվում: Վրաց ավագանին և զորքը դեմ են դուրս գալիս նրան, որի հետևանքով նա ստիպված է լինում թողնել Շամախու պաշարումը և նահանջել<sup>246</sup>:

Դավրիժեցու հաղորդմամբ շահը կրկին, 30 հազար զորքով, Կոստանդինին Վրաստան է ուղարկում՝ նույն նպատակով: Այս անգամ Կոստանդինին հաջողվում է սպանել հորն ու եղբորը, սակայն Շամախու գրավումը դարձյալ ձախողվում է, քանի որ զայրացած վրաց զորքը Շամախու ճանապարհին հարձակվում է Կոստանդինի վրա և սրախողխող անում նրան, իսկ պարսից զորքը ցրվում է<sup>247</sup>:

Այսպիսով, շահ Աբբասին միառոժամանակ չի հաջողվում նվաճել Շամախին: Հետաձգելով այդ գործը, նա պատրաստվում է ճակատամարտ տալ օսմանյան գլխավոր ուժերին և որպես նախապատրաստական քայլ՝ Ալլահվերդի-խանին մի զորագնդով ուղարկում է Վան՝ թի խնդիր երիվարաց Սար-

<sup>243</sup> Կոստանդինը մանուկ հասակում, դեռևս շահ Քահամասպի օրոք, պատանդ էր տրվել պարսից արքունիքին: Մեծանալով զբոսաշրջների ոգով և ընդունելով մահմեդականություն, նա դառնում է պալատի նշանավոր անձանցից և շահի մերձավորներից մեկը: Նա մասնակցում էր նաև շահի Անդրկովկաս կատարած արշավանքին (Դավրիժեցի, էջ 98—99):

<sup>244</sup> „История Грузии“, ч. I, стр. 296.

<sup>245</sup> Դավրիժեցի, էջ 102—103:

<sup>246</sup> Նույն տեղում, էջ 103—104, հմմտ. ‘اسکندر منشی

79. — 788 ص ٢ ج

<sup>247</sup> Դավրիժեցի, էջ 104—105:

դարին, այլև զոր ինչ առնել կարիցէ արասցէ»<sup>248</sup>: Հանկարծակիի եկած Սինան-փաշայի ջանքերը՝ ետ մղելու զըզըլբաշներին, ապարդյուն են անցնում: Թուրքական կողմը մեծ կորուստներից հետո պարտվում է, իսկ Սինան-փաշան հազիվ կարողանում է ճողոպրել՝ նավակով անցնելով Վանա լիճը<sup>249</sup>:

Կարճ ժամանակում Սինան-փաշան կատարում է նոր զորահավաք, օսմանյան բանակի մեջ ներգրավելով շատ կուսակալների զորագնդերը, այդ թվում՝ քուրդ իշխան Միր-Շարաֆի և Հալեպի Նասիֆ-փաշայի զորքերը: Այնուհետև նա հսկայական բանակով շարժվում է դեպի Ադրբեջան: Հակառակորդները բախվում են Ուրմիա լճի մոտ՝ Սոֆիանում, 1605 թ. հոկտեմբերի 25-ին<sup>250</sup>: Պարսից զորքը բաժանված էր չորս գնդի, որոնք ղեկավարում էին Ալլահվերդի-խանը, Զուլֆեղար-խանը, Ղարչղա-խանը և Փիրբուղաղ-խանը<sup>251</sup>: Դավրիժեցիին մանրամասն նկարագրում է շահի գործադրած տակտիկական հնարները, որոնց շնորհիվ զըզըլբաշները կարողանում են պարտության մատնել հակառակորդի թվական գերակշռությունն ունեցող բանակին<sup>252</sup>: Օսմանյան նորակազմ զորագնդերն անկայունութուն են ցուցաբերում և լքում պատերազմի դաշտը<sup>253</sup>:

Ճակատամարտի ժամանակ պարսիկները գերում են օսմանյան 34 անվանի զորապետերի, փաշաների և խոշոր պաշտոնյաների, ինչպես նաև ձեռք բերում հսկայական քա-

<sup>248</sup> Նույն տեղում, էջ 72: Նժույգների հափշտակումը պատերազմական գործողությունների ընթացքում գործադրվում էր շարունակ և՛ զըզըլբաշների, և՛ թուրքերի կողմից (տե՛ս ԲՎՎ Վ. ۱۰۷۷، «شرفنامه»):

<sup>249</sup> Դավրիժեցի, էջ 74:

<sup>250</sup> Նույն տեղում, էջ 73:

<sup>251</sup> Նույն տեղում, էջ 75:

<sup>252</sup> Որոշ տվյալներով Զղալօղլու զորքը կազմում էր ավելի քան 100 հազար, իսկ զըզըլբաշներինը՝ 62 հազար մարդ (տե՛ս ԲՎՎ Վ. ۱۰۷۷، «عباسی اقبال»):

<sup>253</sup> Դավրիժեցի, էջ 76—77, հմմտ. «Մանր ժամանակագրություններ», հ. I, էջ 185—186, Վ. 0 Վ. ۲، «اسکندر منشی»:

նակությամբ զենք ու հարստություն: Սինան-փաշային այս անգամ էլ է հաջողվում փախուստի դիմել, սակայն, հասնելով Ամիդ (Դիարբեքիր), նա շուտով մահանում է (փետրվարի 6-ին)<sup>254</sup>:

Սոֆիանում տարած հաղթանակից հետո շահը փոքր-ինչ դադար է առնում և 1606 թ. սկզբներին պաշարում Գանջան: Թուրքական կայազորի համառ դիմադրության պատճառով բերդի պաշարումը շարունակվում է շորս ամիս, որից հետո այն դրավվում է<sup>255</sup>: Օսմանցիների պարտությունը Դավրիժեցին բացատրում է հիմնականում Բարձրագույն Դռան վիճակով, ջալալիների օրըստօրե աճող քայքայիչ գործունեությամբ, Թուրքական բանակում խառնաշփոթ վիճակի առկայությամբ, Գանջայի Զընջիլդուան Ալի-փաշայի սպանությամբ, պարսիկների կողմից թնդանոթների գործադրմամբ և այլն:

Ուշագրավ է Դավրիժեցու տեղեկությունը շահ Աբբաս Ա-ի և հայոց մելիքների փոխհարաբերության մասին: Գեղարքունի գավառում շահն իջևանում է Մելիք Շահնազարի տանը և վայելուչ ընդունելություն գտնում նրա կողմից, որն «էր ինքն բարեկամ և մտերիմ և արգոյ առաջի թագաւորին»: Ի նշան փոխադարձ բարեկամության, «թագաւորն պատուական և ազնիւ զգեստուք շքեղացուցեալ խիւլայեաց. և պարզեեաց նմա զիշխանութիւն մէլիքութեան գաւառին, և այլ ևս դաստակերտս և գեղօրայս ետ նմա եւ եղբարց նորա»<sup>256</sup>: Այս փաստը հավաստում է այն իրողությունը, որ ի դեմս

<sup>254</sup> Ըստ Փեչեքի՝ զեկտեմբերի 2-ին (Մ. Զուլայյան, նշվ. հոդվ. (ՀՍՍՀ ԳԱ «Լրարեր», 1966, № 2, էջ 87): Դավրիժեցին գրում է, որ ոմանց կարծիքով Սինան-փաշան «ինքն զինքն զեղակուր արար վասն ամոթոյ պարտութեանն» (Դավրիժեցի, էջ 78): Նույնն է հաղորդում և Փեչեքին:

<sup>255</sup> Դավրիժեցի, էջ 94, հմտ. Վ17-Վ10 ص «ج ٢» اسکندر منشی, «Թարիխի Փեչեք» (Ա. Սաֆրաստյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 55), ըստ որի Գանձակի բերդը պաշարված է մնացել յոթ ամիս:

<sup>256</sup> Դավրիժեցի, էջ 96: XVII դ. Անանուն ժամանակագրության համաձայն Մելիք Շահնազարին գավառի իշխանության պարզեումը այլ առիթով է լինում (տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. I, էջ 184—186):

մելիքների՝ շահը տեսնում էր նվաճված երկրներում իրանի համար անհրաժեշտ հենարաններից մեկին և ջանում էր սիրաշահել նրանց։ Այդ են վկայում նաև շահի տարբեր հրովարտակները՝ այս կամ այն մելիքի իրավունքները պաշտպանելու մասին<sup>257</sup>։ Իրենց հերթին մելիքներից ոմանք, այդ թվում և Շահնազարը, որոնք իրենց հպատակութունն էին հայտնել շահին, հնարավոր միջոցներով օժանդակում էին նրան, հատկապես օսմանցիների դեմ պատերազմում։

Շահի պլաններում դեռևս մնում էր Շամախու գրավումը, որի նախապատրաստումը բավական ժամանակ պահանջեց։ Շամախու բերդը պաշարվեց 1607 թ. սկզբին։ Դավրիժեցին խիստ համալուրտակի տեղեկացնում է այդ մասին, նշելով. «Եւ որպէս պատմեցաք վասն Գանջայոյ՝ նովին օրինակաւ պատերազմեալ ընդ Շամախույ էառ զնա յՕսմանցւոց։ Եւ զգօրսն Օսմանցւոց սրով կոտորեաց. և զընտանիս և զինչս աւարեալ յափշտակեաց։ Եւ կարգեաց ի նմա իշխան զԶլֆիղար խանն, և ինքն շու արարեալ բանական իւրով զնաց ի թարվէզ»<sup>258</sup>։

Շահ Աբբասն ամրապնդում է նաև Շիրվանի հյուսիսային սահմանները՝ բանակցութունների մեջ մտնելով Դաղըստանի իշխանների հետ։ Այսպիսով, Սեֆյան իրանին է ենթարկվում գրեթե ողջ Անդրկովկասը։ Լիովին հաղթող դուրս գալով 1603—1607 թթ. իրանա-թուրքական պատերազմներում, իրանը տիրում է Հայաստանին, Արևելյան Վրաստանին ու Ադրբեջանին։

Դեռևս Գանջայի պաշարման ժամանակ էր (1606 թ.),

<sup>257</sup> Տե՛ս, օրինակ՝ Սեֆյան շահ Աբբաս Ա-ի 1609 թ. հրովարտակը Քաշաթաղի Մելիք Հայկազի իրավունքները նրա հակառակորդների դեմ պաշտպանելու վերաբերյալ (ՄՊՀ, պր. 2, վավ. 9, էջ 89—90, տե՛ս նաև վավ. 15, 21)։

<sup>258</sup> Դավրիժեցի, էջ 97։ Այդ մասին հանգամանորեն պատմում է Իսթանդար Մունշին (տե՛ս ՎՃ - ՎԲ1 Կ Գ 2, «اسکندر منشی»)։ Նրա տվյալներով Շամախու բերդի պաշարումը սկսվել է 1607 թ. հունվարի 9-ին և տևել մինչև հուլիսի 27-ը։ Հմմտ. «Թարիխի Փեշևե» (Ա. Սաֆրաստյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 55)։

որ շահ Աբբասը Կախեթի թագավոր հաստատեց Թեյմուրազին (Դավրիժեցու մոտ՝ Քամրազ), որը վրաց Ալեքսանդր Բ թագավորի թոռն էր և մինչ այդ պահվում էր պարսից արքունիքում՝ իբրև պատանդ<sup>259</sup>։ Շահը նաև համաձայնություն տվեց Քարթլիի դահը հանձնելու վրաց ավագանու կողմից առաջադրված պատանի Լուարսաբ Բ-ին (Դավրիժեցու մոտ՝ Լավասափ)՝ Գեորգի Ժ-ի որդուն։ Այսպիսով, պարսից շահը ստիպված էր ղիջումներ անել վրաստանին, որը դեռ փոթորկված էր Կոստանդինի դավաճանությունից առիթով և, բացի դրանից, Ռուսաստանի հետ մտերմության գործնական քայլեր էր սկսել՝ գաղտնի կերպով Մոսկվա ուղարկելով թագաժառանգ Բագրատին<sup>260</sup>։ Դավրիժեցիին իրավացիորեն այսպես է մեկնարանում շահի դիրքը. «Այլ և քաջ գիտէր շահն՝ զի թէ յազգէն Պարսից առաքեսցէ իշխող աշխարհին Կախէթու, ո՛չ ընդունին իշխանքն Կախէթու, վասն որոյ զՔամրազս առաքեսց»<sup>261</sup>։ Սակայն դա ժամանակավոր նահանջ էր, որին պետք է հետևեին շահի կտրուկ միջոցառումները՝ ողջ վրաստանը վերջնականապես իրեն ենթարկելու համար։

1614 թ., երբ Իրանը բավականաչափ նախապատրաստվել էր, և մյուս կողմից, երբ իրեն զգացնել էր տալիս Ռուսաստանի ներքին և միջազգային դրությունն ամրապնդումն ու նրա պատրաստակամությունը՝ օգնություն ցույց տալու Անդրկովկասի ժողովուրդներին, շահ Աբբաս Ա-ն արշավանք ձեռնարկեց դեպի Կախեթ։ Դրան նախորդել էր շահի կողմից կազմակերպված դավերի ու որոգայթների տեսական մի շրջթա՝ օգտագործելու Թիֆլիսի մովրովի (կառավարիչ) և Լուարսաբ Բ-ի միջև ծագած հակամարտությունը<sup>262</sup>, Իրան կանչելու և կորստի մատնելու Լուարսաբին ու նրա մերձավորներին և այլն<sup>263</sup>։ Այդ ընթացքում շահի գլխավոր նպատակ-

<sup>259</sup> Դավրիժեցի, էջ 93, «История Грузии», ч. 1, стр. 296.

<sup>260</sup> «История Грузии», ч. 1, стр. 296.

<sup>261</sup> Դավրիժեցի, էջ 105:

<sup>262</sup> Դավրիժեցիին այդ հակամարտության հիմքում տեսնում է լոկ անձնական զրդապատճառ (տե՛ս Դավրիժեցի, էջ 107—111):

<sup>263</sup> Նույն տեղում, էջ 106—114:

ներից էր վրաց թագավորների միջև երկպառակություն սերմանելը, որին նա ջանում էր հասնել զանազան նենգ միջոցներով<sup>264</sup>։ Սակայն նման ձեռնարկումները ցանկալի արդյունք չտվեցին։ Ընդհակառակը, Կախեթի ու Քարթլիի թագավորները միացյալ ուժերով պարսիկներին դիմադրելու վճիռ կայացրին։ Դավրիժեցու արտահայտությունները՝ «Իսկ թամրազ... հոգևով շահի յօժար էր ի միաբանութիւն։ Վասն որոյ յարուցեալ եկն ի Թիֆլիս. որոյ գալն եղև ուրախութիւն անպատմելի Լաւասափին և իւրոցն»<sup>265</sup>։ «Եւ փոխանակ թըշնամութեանն,—գրում է պատմիչը մեկ այլ առիթով,—«էր անխզելի և բարեկամութիւն անքակտելի հաստատեցին ի միջի իւրեանց»<sup>266</sup>։

Այս հանգամանքը, անշուշտ, դժվարացնում է շահի պլանների իրագործումը։ Այսուհանդերձ, շահ Աբբասին հաջողվում է կոտրել վրացիների դիմադրությունը։ Դավրիժեցու մոտ կարող ենք գտնել Վրաստանում մղված կռիվների և այն ավերածությունների ու թշվառությունների մանրամասնությունները, որոնց ենթարկվեց վրաց ժողովուրդը։ Կախեթում շահի զորքերը մնացին հիսուն օր։ «Եւ այսքան աւուրս՝ որ կացին անդէն, թէ զինչ գործեցին, բերան ո՛չ բաւէ խօսիլ և ո՛չ լեզու ճառել... և զինչս և զստացուածս յափշտակեցին, և զշինուածս հրդեհեալ այրեցին և քանդեցին, և զեկեղիցիսն քակեցին, զսեղանն սուրբ՝ և զնշան սրբոյ խաչին կործանեցին։ Եւ զգերեալսն պահէին ի մէջ բանակին առ իւրեանս. և պէս-պէս վշտօք տառապեցուցանէին՝ ցրտով և մերկութեամբ՝ քաղցիւ և ծարաւով՝ և այլ բազում կերպիւ»<sup>267</sup>։ Կախեթի իսպառ ավերման մասին է վկայում և Իսքանդար Մուշշի<sup>268</sup>։

<sup>264</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 102, 105, 116—117...

<sup>265</sup> Նույն տեղում, էջ 115—116, հմմտ. «История Грузии», ч. 1, стр. 296.

<sup>266</sup> Դավրիժեցի, էջ 117։

<sup>267</sup> Նույն տեղում, էջ 121։

<sup>268</sup> Գ. ۲ ص ۱۰۰ اسكندر منشى՝ Մուշշին թեև հաճախ մխտում-նավոր մեկնաբանություններ, սակայն ընդարձակ տեղեկություններ է հաղորդում այս իրադարձությունների մասին (տե՛ս էջ 868—893)։

Դավրիժեցու հաղորդմամբ, Կախեթում մի շարք ամբու-  
թյուններ կառուցելուց հետո, շահը մի քանի ղորամասեր է  
թողնում այնտեղ և իշխաններ կարգում Սելիմ-խանին, Փե-  
րար-խանին ու Բեքդաշ-խանին:

Ավերվում են նաև Քարթլին և Գրեմիխ<sup>269</sup>:

Շահի հրամանով՝ գրավված շրջաններում անց է կաց-  
վում բնակչության հաշվառում, և առանձին ցուցակներում  
գրանցվում են իրենց «շահիսևան» համարող վրացիները, ո-  
րոնց շահը խոստացել էր լիովին ապահովություն և ազատում  
գերությունից: Որոշ ժամանակ անց այդ ցուցակների հի-  
ման վրա մեծ թվով վրացիների բռնի կերպով գաղթեցրին  
Իրան և տեղավորեցին Ֆարահաբադում, Ղազվինում ու նը-  
րանց մերձակա գյուղերում<sup>270</sup>:

Շահը մեկ տարի վրաստանում մնալուց հետո վերա-  
դառնում է Իրան: Բազում նկրտումներից հետո նրան հա-  
ջողվում է կուարսաբին հեռացնել իր հայրենի երկրից և Բ  
վերջո սպանել տալ<sup>271</sup>:

Այսպիսով, շահ Աբբաս Ա-ի արշավանքները մեծ վնաս  
հասցրին նաև վրաց քաղաքներին ու գյուղերին: Ավերվեցին  
առևտրական ու արդյունաբերական շատ կենտրոններ: Առա-  
վելապես տուժեց Կախեթը, որը XVI դ. զարգացած գյուղա-  
տնտեսական շրջան էր, իսկ շահ Աբբասի արշավանքներից  
հետո նրա սոցիալ-տնտեսական կյանքը դատապարտված  
էր լճացման:

\* \* \*

Դեռևս 1603—1605 թթ. սլատերազմներին անմիջապես  
հաջորդելու է գալիս մի նոր աղետ՝ Արարատյան երկիրը  
հեղեղում են օսմանցիներից հալածված ջալալիները<sup>272</sup>:

<sup>269</sup> Դավրիժեցի, էջ 123:

<sup>270</sup> Նույն տեղում, էջ 132:

<sup>271</sup> Նույն տեղում, էջ 138—142:

<sup>272</sup> 1519 թ. Թոխատի շրջակայքում բռնկված ապստամբության մաս-  
նակիցներն իրենց ղեկավարի՝ Զելալի անունով կոչվում էին ջելալիներ  
(կամ ջալալիներ): Հետագայում այդպես էին անվանում Օսմանյան պետու-  
թյան դեմ ապստամբողներին ընդհանրապես:

XVI դ. վերջին տարիներին Արևելյան Անատոլիայում ծայր առած ջալալիական շարժումները<sup>273</sup> նշանակալից երևույթ դարձան ոչ միայն Թուրքիայի պատմության մեջ: Նրանք ծավալվեցին և Սեֆյան տերության սահմաններում: 1608 թ. հետո, երբ ջալալիների ջոկատները վերջնականապես պարտություն կրեցին օսմանյան զորքերի կողմից, մնացած ջալալիներն իրենց փրկությունը տեսան Սեֆյան Իրանի կողմը՝ անցնելու մեջ: Ջալալիների առաջնորդներից մեկը՝ Ղալենդարօղլին, որն առաջինն անցավ Իրան, շահին ներկայացրած իր դիմումի մեջ հավաստիացնում էր նույնիսկ, որ Թուրքական իշխանությունների հետ ջալալիների բոլոր հակամարտությունները բխում էին շահի և Սեֆյան տերության նկատմամբ վաղուց ի վեր նրանց տածած սիրուց ու բարեկամությունից<sup>274</sup>: Իսքանդար Մունշու տվյալները վկայում են, որ շահ Աբբասը մեծ պատրաստակամությամբ է ընդունել ջալալիներին: Այդ ընդունելությունը մինչև իսկ ճոխ հանդեսների ու խրախճանքների տեղիք է տվել, և Իրան տեղափոխված ջալալիները շահից առատորեն պարգևներ են ստացել<sup>275</sup>: Շահը, անշուշտ, իր նպատակներն ուներ և պատրաստվում էր ջալալիներին օգտագործել՝ ճնշելու քրդական ցեղերի դիմադրությունը, ինչպես նաև՝ ներգրավել նրանց հենց Թուրքիայի դեմ մղվող պատերազմի ոլորտը: Առանձին կարեվորություն էր տրվում ջալալիների օգնության հարցին՝ քրդական բրադոստ ցեղի ապստամբությունը ճնշելու և Դըմզըմ բերդը գրավելու գործում, որի համար ջալալիները նախապես ստացել էին 5000 թուման ոսկի<sup>276</sup>: Սակայն ջալալիներին

<sup>273</sup> Ջալալիների շարժման վերաբերյալ արժեքավոր են Ա. Ս. Տվերիտինովայի «Восстание Кара Языджи-Дели Хасана в Турции» (Մ.—Պ., 1946), Մ. Կ. Ջուլալյանի «Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ» (Երևան, 1966) աշխատությունները:

<sup>274</sup> اسکندر منشی، ج ۲، ص ۷۷۱-۷۷۲

<sup>275</sup> Նույն տեղում, էջ 775—776:

<sup>276</sup> Նույն տեղում, էջ 797:

օգտագործելու այդ ձեռնարկը լիակատար ավարտի չի հասնում, քանի որ շատ շուտով փախստական ջալալիները, Սեֆեւիլիների քաղաքականութիւնից հիասթափված, ջոկատ առ ջոկատ հեռանում են, հատկապես այն բանից հետո, երբ Դրմդրմի պաշարման ընթացքում Ղալենդարօղլին մեռնում է<sup>277</sup>։

Սակայն այդքանով չի սահմանափակվում Թուրքիայից եկած ջալալիների գործունեութիւնը Սեֆյան տերութեան շրջանակներում։ Մեզ հասած բազմաթիվ վկայութիւններ խոսում են Արարատյան երկրում նրանց կատարած ասպատակութիւնների մասին։

Միանգամայն ընդունելի է Մ. Կ. Զուլայանի այն ենթադրութիւնը, որ ջալալիներն առաջին անգամ պիտի Անդրկովկաս մուտք գործած լինեն Սինան-փաշայի զորքի հետ<sup>278</sup>։ Հայտնի է, որ իր առաջին արշավանքից հետո Սինան-փաշան, ձեռնամուխ լինելով բանակի համալրմանը, կազմակերպեց հսկայական զորահավաք, ներգրավելով նաև մեծ թվով ջալալիների, որոնց սիրաշահել էր բազմապիսի խոստումներով։ Շարձեալ ի սոյն թուին (1604/5—Լ. Դ.),—գրում է Դավրիժեցին,—Ջղալօղլի Սարդարն եկն՝ զինչ որ Զալալի կայր զամէնն ժողովեաց և զՂարաղաշն այլ եբիր ի հետն, տարաւ ի Շահին վերայ»<sup>279</sup>։

Բայց Դավրիժեցու հաղորդումից ակնհայտ է, որ դեպի Արարատյան երկիր ջալալիների հախուռն հոսք է տեղի ունեցել շահ Աբրաս Ա-ի արշավանքներից անմիջապես հետո, երբ «ամայի մնաց երկիրն Արարատու իւրովք մասնաւոր գաւառօքն. քանզի շահն զնաց ի Թարվէզ և ոչ է ձեռնհաս. և Սարդարն Օսմանցւոց մեռաւ, և ինքեանք ի մէջ իւրեանց ի խռովութեան կան, զի ոչ են միաբանք։ Վասն որոյ պարոնայք ոմանք՝ որք խրախուսեալ յուսային ի զօրութիւնս անձանց իւրեանց, գային և տիրէին երկրին Արարատու՝ այ-

<sup>277</sup> Նույն տեղում, էջ 802, հմմտ. Մ. Զուլայան, նշվ. աշխ., էջ 181։

<sup>278</sup> Մ. Զուլայան, նշվ. աշխ., էջ 169։

<sup>279</sup> Դավրիժեցի, էջ 634, հմմտ. Գր. Դաւաւազցի, Ժամանակագրութիւն, էջ 43։

սինքն Երևանայ»<sup>280</sup>։ Այս փաստը, ինչպես նաև այլ աղբյուրների տվյալները շեն խոսում Ի. Պ. Պետրուշևսկու հայտնած այն կարծիքի օգտին, թե ջալալիներն Անդրկովկաս էին մուտք գործել նախքան շահ Աբբաս Ա-ի արշավանքը, և ջալալիների շարժումներից ազատվելու համար էր, որ «ադրբեջանական ու քրդական ֆեոդալական ավագանին և հայ բարձրաստիճան հոգևորականությունը» դիմել էին շահի օգնությանը<sup>281</sup>։ Շահ Աբբաս Ա-ի արշավանքի շարժառիթների հարցը նոր լույսի տակ ներկայացնելու Ի. Պ. Պետրուշևսկու այս փորձը իրավացիորեն քննադատվել է ակադ. Ա. Գ. Հովհաննիսյանի կողմից<sup>282</sup>։

Ի. Պ. Պետրուշևսկին հենվում է Իսքանդար Մունշու այն հաղորդման վրա, թե 1603 թ. Հարավային Ադրբեջանն ու Շիրվանը գտնվում էին ջալալիների իշխանության տակ<sup>283</sup>։ Սակայն այս վկայությունը չի հաստատվում այլ աղբյուրների կողմից։ Ամենայն հավանականությամբ, ջալալիներին հիշելով, Իսքանդար Մունշին ցանկացել է ընդգծել թուրքիայի ներքին անկայուն վիճակը, ջալալիների խռովությունների ազդեցությունը նրա վրա՝ առավել ևս շեշտված ներկայացնելու թուրքիայի տիրապետությունից Իրանի ռազմական տերիտորիաները ետ գրավելու անհրաժեշտությունը։ Ահա Իսքանդար Մունշու տողերը. «Ադրբեջանի և Շիրվանի երկրները, որ նորին մեծության ժառանգական մուլքն են, թողնել մի խումբ ջալալի խռովարարների իշխանության տակ, որոնք իրենց թագավորի դեմ էլ ապստամբել են... խելոքներին վայել չէ...»<sup>284</sup>։ Նշենք նաև, որ Մունշին դրանից քիչ առաջ խոսելով Անդրկովկասում տիրող հուզումների մասին (անշուշտ, խիստ բացասական տրամադրությամբ), դրանք

<sup>280</sup> Դավրիժեցի, էջ 79։

<sup>281</sup> И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 326։

<sup>282</sup> Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., գ. II, էջ 81—82, Մ. Զուլայան, նշվ. աշխ., էջ 169։

<sup>283</sup> И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 326։

<sup>284</sup> اسکندر منشی، ج ۲، ص ۷۳

համեմատում է ջալալիների շարժումների հետ (جشيو جلاليان<sup>285</sup>). մի հանգամանք, որն ինքնին ցույց է տալիս, որ հեղինակն Անդրկովկասում ծավալված խռովությունները առանձնացնում է Քուրքիայի ջալալիական շարժումներից, որոնք ավելի ուշ միայն պիտի մուտք գործեին Անդրկովկաս:

Սակայն, ի Պետրուշևսկին վկայակոչում է նաև Դավրիժեցուն<sup>286</sup> ի հավաստումն այն բանի, որ շահ Աբբաս Ա-ի արշավանքի նախօրեին Անդրկովկասում շահի օգնությունն էին դիմում՝ ջալալիներից ազատվելու համար: Մինչդեռ, ինչպես այդ մասին խոսվել է վերևում, շահից օգնություն խնդրելու փաստը Դավրիժեցին պարզորոշ կերպով բացատրում է օսմանցիների դաժան քաղաքականությունը՝ իրենց նվաճած անդրկովկասյան շրջաններում, իսկ ջալալիների սովոր խրմբերի երևան գալն Անդրկովկասում դնում է 1603—1605 թթ. պատերազմներից հետո, դա կապելով արբասյան արշավանքների հետևանքների հետ: Դավրիժեցին միայնակ չէ. նույն փաստի հավաստումը գտնում ենք նաև այլ աղբյուրներում, ինչպես XVII դ. Անանուն ժամանակագրության մեջ, որտեղ կարդում ենք. «Դարձեալ յորժամ Այրարատեան երկիրն անտիրացաւ, գունդ մի ելուզակ, զոր ջալալի ասեն ի Տաճկաց կողմանէն, եկեալ բնակեցան անդ և բազում ոճիրս շարեաց գործեցին...»<sup>286</sup>:

Այսպիսով, իրանա-թուրքական պատերազմները, որոնց վերսկսմանը (1603 թ.) նպաստող հանգամանքներից մեկը Քուրքիայում ծավալված ջալալիական շարժումներն էին, որոշ առումով պատճառ հանդիսացան ջալալիների ներթափանցման համար Անդրկովկաս: Պարտություն կրելով թուրքական իշխանությունների հետ ունեցած վճռական մենամարտերում, ավարառության սովոր ջալալիների հրոսակախմբերն ուղղություն են վերցնում դեպի պատերազմներից ու ասպատակություններից հոգնած և նվաճողներից թափուր մնացած Արարատյան երկիրը, որն այժմ ամենից քիչ էր ի վիճակի դիմագրավելու նոր կողոպտիչներին:

<sup>285</sup> Նույն տեղում:

<sup>286</sup> «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 184—185:

Հայտնի է, որ ջալալիական շարժումները որոշակի փուլում օգտագործվել են դրանք ղեկավարող մանր ֆեոդալների կողմից՝ իրենց նեղ դասակարգային շահերի համար<sup>287</sup>։ Ակադ. Ա. Հովհաննիսյանի արտահայտությունները՝ «գործիք դառնալով ի վերջո ֆեոդալ ջարդարարների ձեռքին, ջալալիների շարժումը մեծ ավերածություններ առաջացրեց թե՛ Հայաստանում և թե՛ Անդրկովկասում»<sup>288</sup>։

Այս իրողությունն է, որ հանգամանորեն արտացոլվել է «Պատմություն» մեջ։ Այրարատ ներխուժած ջալալիներից Դավրիժեցին մասնավորապես նշում է Օսման-փաշային, որը հեռացնում է իրենից առաջ Ղրիբուլաղում հաստատված ջալալի Քանաքըլու Մահմատին (Մուհամմադ), հաստատվում է Կարբիում և ապա սկսում ավարառությունը շրջակա գավառներում<sup>289</sup>։

Ջալալիների ղեկավարներից Աբդուռըզման Մուսալիմը կազմակերպում է Հովհաննավանքի կողոպուտը, որի ժամանակ հափշտակում են նաև արժեքավոր գրչագրեր<sup>290</sup>։

Իրենց ապրուստը ապահովելու համար ջալալիները հատկապես հետամուտ էին հացահատիկ և անասունների հոտեր հափշտակելուն և այդ նպատակով հարձակվում էին գյուղերի վրա, կողոպտում ու գերում բնակիչներին<sup>291</sup>։ Ջալալիներից երկյուղած բնակիչները լքում էին իրենց բնակավայրերը և թաքնվում լեռներում։

Դավրիժեցու հաղորդամբ ջալալիները ոտնատակ են անում Կարբին, Ապարանը, Ղրիբուլաղը, Մաղկաձորը, Գառնին, Ուրծաձորը, «յայնկոյս գետոյն Երասխայ՝ զՍահաթայ Երկիրն՝ զԿողբ և զԱղջաղալէն»<sup>292</sup>։

<sup>287</sup> А. Тверитинова, նշվ. աշխ., էջ 78, Մ. Ջուլալյան, նշվ. աշխ., էջ 257.

<sup>288</sup> Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., գ. II, էջ 82.

<sup>289</sup> Դավրիժեցի, էջ 80.

<sup>290</sup> Նույն տեղում, էջ 81.

<sup>291</sup> Նույն տեղում, էջ 84—85.

<sup>292</sup> Նույն տեղում, էջ 81.

Անշուշտ, Հայաստանի շրջաններով շին սահմանափակվում ջալալիների բռնություններն ու թալանչիական գործերը նրանք լինում են նաև Անդրկովկասի այլ շրջաններում, ինչպես՝ Ախալցխայում, «և անդ ևս դայն գործ կատարեցին»։ Ամփոփելու համար ջալալիների կատարած ոճիրները, պատմիչը նրանց կողքին դնում է շահ Աբբաս Ա-ին և Սինանփաշային, ներկայացնելով նրանց իբրև մեկը մյուսից գերադույն «աւերիչք և ապականիչք»<sup>293</sup>։ Պատմագրի հիշյալ տեղեկությունները խոսում են այն մասին, որ Սեֆյան տերության սահմաններում ջալալիական շարժումներին բնորոշ են եղել կողոպուտն ու ավերը։

Դավրիժեցին հաղորդում է նաև որոշակի հետաքրքրություն ներկայացնող տվյալներ բուն Թուրքիայում ջալալիների շարժման պատմության վերաբերյալ։ Ցավոք պետք է նշել, որ պատմագրի այս տեղեկություններից շատերը թյուրիմացաբար սխալ են ընկալվում մի շարք ուսումնասիրողների կողմից։ Ուստի, թույլ ենք տալիս, փոքր-ինչ հեռանալով բուն նյութից, համառոտակի անդրադառնալ այս հարցին, նշելով առանձին փաստեր։

Հիմք ընդունելով ականատեսների վկայությունները («զօր ինչ լուաք յականատես պատմողաց՝ դայն գրեմք»), Դավրիժեցին հաղորդում է ջալալիական շարժումների մեծ թվով ղեկավարների անուններ, նշելով նրանցից շատերի ապստամբության վայրը, ժամանակը, զորքերի թիվը և այլն<sup>294</sup>։ Ուսումնասիրողներից ոմանք, հենվելով, ըստ երեւվույթին, Ի. Պ. Պետրուշևսկու հաղորդման վրա, կրկնում են, թե Դավրիժեցին նշում է ջալալիների 23 առաջնորդների անուններ<sup>295</sup>։ մինչդեռ 21 անունների միատեղ թվարկումից դատ Դավրիժեցին տարբեր առիթներով հաղորդում է ևս 9 անուն<sup>296</sup>։

<sup>293</sup> Նույն տեղում, էջ 86։

<sup>294</sup> Նույն տեղում, էջ 86—87, 632—634։

<sup>295</sup> Տե՛ս, օրինակ՝ А. Рахмани, նշվ. աշխ., էջ 155։

<sup>296</sup> Դավրիժեցի, էջ 79, 80, 81, 86, 569, 573, 632, 639, 646։

Զալալիները դեկավարների շարքում Դավրիժեցիին հիշատակում է նաև Քյոոզլի անունը: Հայտնի է, որ Քյոոզլին (Ռովշենը) եղել է մեծ ժողովրդականություն վայելող անձնավորություն, և հարյուրամյակներ շարունակ նրա անվան շուրջ տարբեր լեզուներով լեզենդներ ու երգեր են հյուսվել: Քյոոզլու ազգային պատկանելության և նրա հետ կապված այլ հարցերը թողնելով հետազոտողներին, նշենք միայն, որ նրա վերաբերյալ Դավրիժեցու տվյալները հաճախ ճշտության մեր չեն ներկայացվում՝ սխալ թարգմանության կամ այլ պատճառներով: Այսպես, Դավրիժեցու մոտ կարգում ենք. «...Այս այն Քյոոզլին է, որ բազում խաղ է ասացել՝ զոր այժմ աշղներն եղանակեն»<sup>297</sup>: Այս տեղեկությունը, որը վկայում է ջալալի Քյոոզլուն՝ երգերի հեղինակ լինելու մասին, ըստ Ի. Պետրուշևսկու մեջբերման<sup>298</sup> (որը հիմնվում է Բրոսսեի թարգմանության վրա և որին կրկնում են մի շարք հետազոտողներ) այնպիսի տպավորություն է թողնում, թե Քյոոզլին ի՛նքն է երգվել աշուղների կողմից և ոչ թե երգեր ստեղծել: Քյոոզլու ընկերոջ՝ ջալալի Գզիրօղլի Մուստաֆա-բեկի մասին Դավրիժեցու տված տեղեկության մեջ<sup>299</sup> դարձյալ ընդգծված է Քյոոզլուն՝ «խաղերի» հեղինակ լինելու հանգամանքը, որը, սակայն, դարձյալ չի արտացոլվել Ի. Պետրուշևսկու կատարած մեջբերումում<sup>300</sup>:

Պատմական Քյոոզլուն տարբերակելով ժողովրդական պատմաների հերոս Քյոոզլուց, Ի. Պետրուշևսկին ապացույցների թվում նշում է հետևյալը. «Առաքել Դավրիժեցու վկայությունը ցույց է տալիս, որ պատմական Քյոոզլին գործում էր Հայաստանում և Ադրբեջանում: Ավանդությունը

<sup>297</sup> Դավրիժեցի, էջ 87:

<sup>298</sup> „Кёр-оглу—это тот, о котором сложено много песен, ныне распеваемых ашугами“ (И. Петрушевский, *Նշվ. աշխ.*, էջ 328):

<sup>299</sup> «...Սա ևս ընկեր է Քյոոզլուն, զոր յուով տեղիս ի մէջ իւր խաղին զսա յիշէ» (Դավրիժեցի, էջ 87):

<sup>300</sup> „Мустафа-бек Гзир оглу...—это товарищ Кёр-оглу, часто упоминаемый в песнях“ (И. Петрушевский, *Նշվ. աշխ.*, էջ 328):

նշում է նախիջևանի և Սալմաստ-խոյի շրջանը (Հարավային Ադրբեջանում), որպես վայրեր, որտեղ նա առավել (եռանդուն) գործունեություն է ծավալել<sup>301</sup>։ Մինչդեռ, մեր պատմագրի մոտ նման վկայության շենք հանդիպում, ուստի և այս փաստարկը նախորդի նման կորցնում է իր նշանակությունը և՛ տվյալ դեպքում, և՛ այլ հետազոտողների կողմից օգտագործվելիս։

Դավրիժեցին ջալալի ղեկավարների թվարկումն ավարտում է Աղաջղանփիրի անվան հիշատակմամբ, առանց նրա մասին որևէ տեղեկություն տալու։ Չնայած դրան, Ա. Ռահմանին այս ջալալու մասին գրում է, որ նրան «Առաքել Դավրիժեցին դասում է Քյոոսդլու և նրա մոտիկ ընկեր Գզիրօղլի Մուստաֆա-բեկի զինակիցների շարքը»<sup>302</sup>։

Հետազոտողների համար առանձին արժեք են ներկայացնում Դավրիժեցու հաղորդած մանրամասներն այնպիսի փաստերի վերաբերյալ, ինչպիսիք են ջալալիական ապստամբությունները Կարա Յազըջիի, Դելի Հասանի, Գզիրօղլու, իսկ ավելի ուշ՝ Աբաղա-փաշայի գլխավորությամբ, թուրքական իշխանությունների ձեռք առած միջոցներն այդ ապստամբությունները ճնշելու կամ ապստամբներին օգտագործելու արտաքին թշնամիների դեմ, կենսագրական կարևոր տեղեկությունները շարժումների ղեկավարների, մասնավորապես Կարա Յազըջիի մասին, ապստամբների օրական ծախսերը, զորքերի թիվը և այլն<sup>303</sup>։ մանրամասներ, որոնք լրացնում են նշված հարցերի շուրջ թուրքական, պարսկական և հայկական այլ աղբյուրների հաղորդած տեղեկությունները։

Ե. Պետրուշևսկին նշում է, որ Դավրիժեցին ջանում է ջալալիների շարժումը ներկայացնել իբրև զուտ մահադական, հակաքրիստոնեական և հակահայկական<sup>304</sup>։ Թվում է,

<sup>301</sup> նույն տեղում։

<sup>302</sup> А. Рахмани, նշվ. աշխ., էջ 156։

<sup>303</sup> Տե՛ս Դավրիժեցի, էջ 86—87, 569—570, 573, 619, 632—634, 636, 639...

<sup>304</sup> И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 327։

Թե այս հարցում Դավրիժեցու դիրքորոշումը քիչ այլ բացատրութիւնն է պահանջում:

Անվիճելի է Դավրիժեցու բացասական վերաբերմունքը ջալալիական շարժման նկատմամբ: Սակայն դա ունի իր հիմքը, որն այս անգամ բացատրվում է ոչ այնքան պատմագրի հայացքներով, կրոնական սահմանափակութեամբ և ժողովրդական շարժումներն ու ընդհանրապես անհնազանդութիւնը մերժելու միտումով, որքան գոյութիւն ունեցած իրականութեամբ, ջալալիական շարժմանը հատուկ՝ իրոք կողոպտիչ ու ավերիչ գործունեութեամբ: Անժխտելի է, որ այդ բարդ ու հակասութիւններով լի շարժումը, որը վերջին հաշվով սարագացրեց ու դուրացրեց Թուրքիայի անդրկովկասյան տիրակալութեան լիկվիդացումը<sup>305</sup>, այդուհանդերձ, իր սուր կողմերից մեկով հարվածում էր ջալալի հրոսակների ու նրանց ֆեոդալ պարագլուխների նեղ շահերի զոհը դարձած աշխատավորական զանգվածներին: Այս պարագան է, որ այնպիսի կրքոտութեամբ արտացոլվել է Դավրիժեցու մոտ. և ոչ միայն Դավրիժեցու, ժամանակի աղբյուրները ջալալիների գործերի մասին պատմում են սարսուռ ազդող նկարագրութիւններով, որոնք կրկին հավաստում են Դավրիժեցու սովյալների ճշտութիւնը<sup>306</sup>:

Պատմութիւնը հավաստիորեն արտացոլելու ձգտումը չի լքում Դավրիժեցուն և այստեղ, երբ ջալալիների ավերածութիւնները հակակրանքով ու ցավով նկարագրելով հանդերձ, պատմիչը չի կարկամում ընդգծել նրանց արիութիւնն ու խիզախութիւնը<sup>307</sup>:

Ջալալիների նմանօրինակ գործողութիւններն Անդրկովկասում չէին կարող շթողնել իրենց բացասական հետքը: Իրրև ջալալիական ապստամբութիւնների, ավելի ճիշտ՝ աս-

<sup>305</sup> Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., գ. II, էջ 82:

<sup>306</sup> Ջալալիների պատճառած թշվառութեան ու ծանր կացութեան մասին հարուստ տվյալներ ունեն մեզ հասած ժամանակագրութիւնները, ողբերը, ձեռագրերի բազում հիշատակարանները և այլն (տե՛ս ջալալիների վերաբերյալ Մ. Զուպյանի հիշյալ աշխատութիւնը):

<sup>307</sup> Դավրիժեցի, էջ 86:

պատակութիւնների անմիջական հետեանք, Դավրիժեցիին շնորհ է դրողացիների զանգվածային փախուստն իրենց բնակավայրերից, որից մեծապես տուժում էր երկրագործութիւնը: «Եւ յայսմ պատճառէ հողագործք և երկրագործք՝ որք լիւրաբանչիւր տեղիս գոյին, յերկիւղէ և յահէ սոցա փախուցեալք ի բերդս և ի դղեակս, և ի փապարս լերանց ամրանային. և ոչ կարէին առնել զերկրագործութիւն, վասն որոյ սերմանել և հնձել և կալ և կուտ բարձաւ ամենեին և սկսաւ լինիլ սղութիւն հացի և ամենայն ուտելի իրաց և ո՛չ գտանիւր. և թէ ուրեք ուրեք ևս գտանիւր, և այն ևս ծանր զնոյ»<sup>308</sup>: Դրան ավելանում է բնական պատուհասը՝ մորեխը:

Այդ բոլորի հետեանքով (նախ և առաջ՝ պատերազմների) Անդրկովկասում և ողջ Փոքր Ասիայում ահաւոր ուժգնութեամբ մոլեգնում է սովը: Այն ընդգրկում է գրեթե նույն սահմանները, ինչ ջալալիների շարժումը: «Եւ եղև սովս այս ի մէջ երկուց մեծ ծովուցն, յայսինքն Սպիտակ ծովուն և Սեաւ ծովուն ի մերձակայ գաւառացն Կոստանդնուպօլսոյ մինչև ի գաւառսն Թարվիզու, ի Բաղդատայ մինչև ի Դամուրղափուն...»<sup>309</sup>: Սովն այն աստիճանի սարսկացավ, որ «ղշուն և զկատու և զայլ անսուրբ կենդանոյ, և զմարդոյ միս կերան մարդիկ...»<sup>310</sup>: Դավրիժեցիին մեծ թվով ականատեսներից լսած դրվագներ է պատմում, որոնք վկայում են սովի ճիրաններում հեծող մարդկանց հրեշավոր ոճրագործութիւնների մասին<sup>311</sup>:

Դավրիժեցու տեղեկութիւնների արձագանքը կարելի է գտնել ժամանակի գրեթե բոլոր աղբյուրներում, որոնք մեզ են հասցրել երեք ու կես հարյուրամյակ առաջ ժողովուրդների պատմութեան մեջ խոր ակոսներ թողած տազնապալի տարիների շունչը: «Եւ եղև սով,— գրում է անանուն ժամա-

<sup>308</sup> Նույն տեղում, էջ 87:

<sup>309</sup> Նույն տեղում, էջ 92:

<sup>310</sup> Նույն տեղում, հմմտ. Հ. Խալիֆայանի ժամանակագրութիւնը («Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 124):

<sup>311</sup> Դավրիժեցի, էջ 88—92:

նակագիրը, —...զի ոչ է լեալ այսպիսի սով, զոր մեք տեսաք»<sup>312</sup>, «...Սով սաստիկ է եղեալ, որ մարդ զմարդ, շուն և կատու կերեալ են այս վերին աշխարհս բովանդակ՝ Յանկիրու և Ղայսարու հետ մինչև ի Թարվէզ...» — արձանագրել է Հակոբ Կարնեցին<sup>313</sup>:

Ստեղծված անեկանելի պայմաններում հայ բնակչության սովար խմբեր դիմում են արտագաղթի դեպի տարբեր երկրներ: «Եւ յայսմ ժամանակի եղեն ցիր և ցան ազգ: Հայոց, — գրում է Դավրիժեցին, — և զնացին իւրաքանչիւր ոք հանդէպ երեսաց իւրոց գտանել տեղի կելոյ և ապրելոյ: Ոմանք յՈւտումէլի, ոմանք ի Բուղդան, ոմանք ի Լէհ, ոմանք ի Կաֆայ, ոմանք ի ծովեզերսն Պոնդոսի, ոմանք ի Թարվէզ և յԱրտաւէլ՝ և ի գաւառս սոցա»<sup>314</sup>,

Այսպիսով, XVII դ. սկզբի իրանա-թուրքական պատերազմները նախորդների նման աղետաբեր եղան Անդրկովկասի ժողովուրդների համար: Դավրիժեցին այսպես է պատկերում այդ պատերազմների հետևանքները. «Եւ ի շարժմանէ այսց երկուց տիեզերակալացս՝ որք զարթուցեալք են ի պատերազմ, եթէ Սարդարն՝ որ եկն յարևմտից, և թէ շահն՝ որ ի կողմս արևելից՝ թէ որքան աւերումն և քանդումն եղև աշխարհի, թէ ի գալև և թէ ի դառնալն, թէ որքան ծանրաբեռն հարկապահանջութիւն եղեալ ի վերայ ժողովրդեանն... կամ զքանդումն տանց և այգեստանաց, և զկոխումն արտորէից՝ և զհանումն համբարաց՝ ցորենոյ և զայլ սերմանեաց, և աւարումն, և յափշտակումն ընչից և ստացուածոց, զուստերաց և զգստերաց, և սպանումն անպարտ անձանց, զորս ի յայտնի և զորս ի գաղտնի, և զայլ ամենայն շարիսն զոր

<sup>312</sup> «Մանր ժամանակագրություններ», հ. I, էջ 185—186: Նույնը գրուում ենք Գրիգոր դպիր Վարագեցու, Ղևոնդ Տոսպեցու և այլոց ժամանակագրություններում («Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ժ, էջ 61—62, 503, 48...):

<sup>313</sup> «Մանր ժամանակագրություններ» հ. I, էջ 239, հմմտ. էջ 246—247, 355, հ. II, էջ 283, 394, 412, 482 ۷۰۸ ص ۲ ج 'اسکندر منشی'

<sup>314</sup> Դավրիժեցի, էջ 88:

ածին ի վերայ աշխարհի. մեզ ոչ գոյ կար թուելոյ, այլ այնմ, որ թուէ զբազմութիւն աստեղաց, և ստեղծ զայնքան անձինս որք մատնեցան անողորմ և մարդադեմ գազանացն այնոցիկ»<sup>315</sup>,

Պատերազմ, կողոպուտ, տարագրութիւն, ջալալիներ, սով՝ ահա XVII դ. սկզբին շահ Աբբաս Ա-ի արշավանքներին և նրանց հաջորդող պատուհասներին ենթարկված Անդրկովկասի ժողովուրդների պատմութեան այս շրջանի հակիրճ բնութագիրը, որը գալիս է հերքելու շահ Աբբաս Ա-ի արշավանքների բարերար հետեանքների և Անդրկովկասի ժողովուրդների փրկութեան մասին եղած կարծիքները:

<sup>315</sup> Նույն տեղում, էջ 78—79.

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ

Սեֆյան պետությունը, որը կազմավորվել էր XVI դ. սկզբին՝ թրքալեզու քոչվոր ցեղերի ուժերով, ընդգրկում էր ինչպես բուն իրանական շրջանները, այնպես էլ նվաճված՝ ոչ պարսկական բնակչությամբ շրջաններ, ինչպես Անդրըկովկասը: Մինչև XVI դ. վերջը Սեֆյան պետության մեջ տիրապետող դիրք ունեւր ադրբեջանական քոչվոր ցեղերի ավագանին: XVI դ. վերջին և XVII դ. սկզբին, հատկապես շահ Աբբաս Ա-ի ջանքերի շնորհիվ երկրում սկսում է վճռական դեր խաղալ իրանական տարրը, դառնալով ղեկավար ուժ: Պետական կրոնն էր շիիզմը, որն իրանի բազմացեղ շրջանների միավորման կարևոր ազդակներից մեկն էր:

Սեֆյան շրջանն իրանի պատմության մեջ նշանակալից է հղել: Պարսիկ պատմաբանների բնութագրմամբ այն՝ «ամենափայլուն շրջանն է իրանի ողջ պատմության մեջ»<sup>1</sup>, երբ «իրանն աշխարհի ամենահայտնի և ուժեղագույն պետություններից մեկն էր»<sup>2</sup>:

XVII դ. առաջին կեսն աչքի է ընկնում իրանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի առավել աշխուժացմամբ: Այդ շրջանին բնորոշ են պետական հողերի նշանակալից աճը, կենտրոնաձիգ քաղաքականության ուժեղացումը:

<sup>1</sup> سیاحتنامه شاردن، ج ۱، ص ۵۴

<sup>2</sup> سعید نفیسی، تاریخ معاصر ایران، تهران، ۱۳۴۵، ص ۱۴

առևտրական ու դիվանագիտական կապերի ընդլայնումը, բաղադրանքների, արհեստների, ներքին առևտրի զարգացումը և այլն: Հողագործությունը մնում էր որպես տնտեսության գերիշխող ձև: Գյուղատնտեսության զարկերակը արհեստական: ռոտգումն էր: Ֆեոդալական հողային սեփականության զարգացումն ուղեկցվում էր արտադրողական ուժերի հարաբերական զարգացմամբ և դրան հետևող ֆեոդալական շահագործման ուժեղացմամբ:

Սեֆյան Իրանում ֆեոդալական հարաբերությունները դուրակցվում էին քոչվոր բնակչության մեջ իշխող նահապետական-տոհմատիրական հարաբերությունների հետ: Բընակչության 1/3-ը քոչվոր կյանք էր վարում: Ընդ որում, քոչվոր ցեղերը տիրում էին մեծ քանակությամբ հողերի:

Գոյություն ունեին հողի ֆեոդալական սեփականության հետևյալ կատեգորիաները. ա) պետական կամ դիվանի (արաղիե մամալեք), բ) շահի ընտանիքի սեփականությունը կաղմող հողեր (արազիե խասսե), գ) կրոնական հաստատություններին պատկանող (վակֆ), դ) մոլք կամ արբաբի կոչվող հողեր: Նշվում են նաև խորդեմալեքը (մանր գյուղացիական սեփականություն) և համայնքապատկան հողերը<sup>3</sup>:

Մեծ տարածում ունեին պայմանական ժառանգության հետ կապված հողային սեփականության ձևերը: Դիվանի կամ խասսե հողային ֆոնդերից մեծ բաժին էր տրվում ֆեոդալներին՝ որպես ավատ (թիուլ, սոյուրդալ): Ավատային նվիրատվություններից գլխավոր տեղ էր գրավում թիուլը, որը, ի տարբերություն սոյուրդալի, ժառանգական չէր: Գոյություն ունեին թիուլի երկու տարատեսակ. այն տրվում էր կամ պաշտոնի առթիվ՝ պաշտոնավորելու ընթացքում, կամ էլ անձնական արժանիքների համար՝ ցմահ, սակայն առանց հարկային ու դատա-վարչական իմունիտետի իրավունքի:

Դավրիժեցու մոտ հանդիպում ենք հողային նվիրատվության վերաբերյալ հետաքրքիր փաստի: Դավրիժ կաթողիկոսը,

<sup>3</sup> Այդ կատեգորիաների էություն մասին տ'ես Н. Пигулевская [и др.], Նշվ. աշխ., էջ 256, 1. 0, 1350 «شما» և այլն:

հրաժարվելով կաթողիկոսությունից, մեկնում է Սպահան, դրա համար խնդրելով շահ Աբբաս Ա-ի թույլտվությունը և հրամանը: Շահը թույլտվության հետ մեկտեղ նրան նվիրում է մի գյուղ (Ջղախոռ գավառում), «զի կերիցէ զմուտս գեղջն այնմիկ և աղօթեսցէ վասն կենաց թագաւորին»<sup>4</sup>: Ամենայն հավանականությամբ այստեղ գործ ունենք թիուլի մի տարբերակի հետ, քանի որ այս նվիրատվության հիմքում ընկած է թիուլին հատուկ պայման, այսինքն՝ հողային հարկի կամ նրա մի մասի (և ոչ՝ հողի ու նրա բնակիչների) պարգևումը: Ըստ որում, թիուլը տրված է ոչ թե զինվորական կամ քաղաքացիական պաշտոնյայի՝ ծառայության համար (ինչպես ընդունված էր), այլ՝ այլակրոն բարձրաստիճան հոգևորականի: Մյուս կողմից, այդ նվիրատվությունը կատարվել է հարկային իմունիտետի շնորհմամբ<sup>5</sup>, մի երևույթ, որ հատուկ է եղել սոյուրդալին:

Այսպիսով, հիշյալ փաստը դիտվում է իբրև հողային այնպիսի նվիրատվություն, որին բնորոշ են ինչպես թիուլին, այնպես էլ սոյուրդալին հատուկ գծեր: Սա վկայում է սեֆյան շրջանում հողային նվիրատվության դանազան տարբերակների առկայության մասին և զալիս է հավաստելու Ի. Պետրուշևսկու այն միտքը, որ «թիուլը որպես տերիտորիա, որից շնորհվում էր ռենտա-հարկի մի մասը, կարող էր շատ տարբեր հասկացություններ արտահայտել»<sup>6</sup>:

Հողային նվիրատվության մի այլ ձևի մասին է վկայում Դավրիժեցու հաղորդումը շահ Աբբաս Ա-ի կողմից Մելիք Շահնազարին և նրա եղբայրներին պարգևած գյուղերի մասին: Այդ նվիրատվությունն արդեն ժառանգական պայմանով է՝ «զի անփոփոխ լիցի ժառանգութիւնն այն նոցա և զաւակաց նոցա յազգէ յազգ մինչև յաւիտեան»<sup>7</sup>: Ժառանգական իրավունքը, ինչպես հայտնի է, հատկանշական է

<sup>4</sup> Դավրիժեցի, էջ 217:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 232—233:

<sup>6</sup> И. Петрушевский, №24. աշխ., էջ 210:

<sup>7</sup> Դավրիժեցի, էջ 96—97:

սոյուրդալին. սակայն տվյալ դեպքում դժվար է որոշակիորեն խոսել սոյուրդալի մասին, քանի որ հիշյալ նվիրատվության վերաբերյալ այլ պայմաններ հայտնի չեն:

Սեֆեկիների օրոք գյուղացիների դրության հարցը դեռևս րավարար չափով ուսումնասիրված չէ: Հայտնի է, սակայն, որ ուսյաթի վրա դրված էին մեծ թվով հարկեր ու պարտավորութուններ, որոնք նա հաճախ ի վիճակի չէր լինում վճարել և կատարել: Ռենտայի հիմքը կազմում էր մալոջը-հաթը (խարաջ, բահրե), որը տարբեր ժամանակներում և տարբեր նահանգներում կազմում էր բերքի 1/6-ից մինչև 1/3 մասը: Գոյութուն ունեցող բազմաթիվ այլ հարկերից ու պարհակներից էին՝ ավարիզ, ուլաղ և ուլամ, բիգար, շիզյա, թաուչիհ, շեքար, մոհլաթանե, ղոնալղա և այլն<sup>8</sup>:

Դավրիժեցու հաղորդած առանձին տեղեկութուններ հաստատում, երբեմն և լրացնում են Սեֆեկիների օրոք բրնակչությանը պարտադրված հարկերի, նրանց գանձման ձևերի, ինչպես նաև աշխատավորության վիճակի մասին եղած տվյալները:

Շահ Աբբաս Ա-ի ներքին քաղաքականության բնորոշ գծերից մեկը, ինչպես նշվել է վերևում, նրա ձգտումն էր՝ ապահովել երկրի կենտրոնական շրջանների, մասնավորապես Պարսկական Իրաքի, բարգավաճումը: Այդ գիծը շոշափելի էր նաև հարկային քաղաքականության մեջ<sup>9</sup> և դրա

<sup>8</sup> Այս և մյուս հարկերի մասին տե՛ս «میںورسکی، سازمان اداری حکومت صفوی (ترجمہ مسعود رجبلیا) تهران، ۱۳۳۴، ص ۱۱۷-۱۹۴ احمد تاج پخش، ایران در زمان صفویہ، (میںورسکی) ۳۸۹-۳۸۱ ص Н. Пигулевская [и др.], 224. աշխ., էջ 256, И. Петрушевский, 224. աշխ., էջ 266—292, А. Д. Палазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII веках, Ереван, 1972. Վերջին երկու աշխատութունների մեջ թեև խոսքը Ադրբեջանի և Հայաստանի մասին է, սակայն նրանցում բերված հարկերի հարուստ ցանկը և բացատրութունները կարող են պատկերացում տալ և Իրանի հիշյալ շրջանի հարկային սխտեմի մասին:

<sup>9</sup> Այդ մասին տե՛ս Н. Миклухо-Маклай, К вопросу о налоговой политике в Иране при шахе Аббасе I (1587—1629), („Советское востоковедение“, 1949, V1).

ցայտուն արտահայտություններից մեկը եղավ 1598/99 թ. (հեջրիի 1007 թ.) Պարսկական Իրաքի բնակչության ազատումը մեծ թվով հարկերից, որոնց գումարը կազմում էր մոտ 100 հազար իրաքյան թուման<sup>10</sup>:

Դավրիժեցիին մանրամասներ ունի այդ հարկերից շրանբեկիի մասին, որը գանձվում էր մանր եղջերավոր անասունների համար<sup>11</sup>: Նրա հաղորդմամբ այս հարկը շափազանց ծանր է եղել և քայքայիչ ներգործություն է ունեցել բնակչության տնտեսական վիճակի վրա: Պատմիչը նշում է, որ շրանբեկիի կամ, ինչպես անվանում է նա՝ քոդավի, ստույգ շափը գյուղացիներին հայտնի չի եղել<sup>12</sup>, և հարկահանները այն գանձել են ըստ իրենց հայեցողության: Դավրիժեցու հաղորդմամբ խոտմաբադ գյուղի բնակիչներից մեկն այսպես է նկարագրել քոդավի հետևանքները. «Որքան գնաց, ծանրացաւ քոդսւն, և այնքան ծանրացաւ, որ զնոյն ինքն ոչխարսն զամենայն վաճառեալ տուաք ի քոդան, և այնու ոչ կարացաք զերծանիլ, զպարտս ևս առաք և տուաք քոդաւ, և ապա զինչս և զստացուածս օր յաւուր վաճառելով, զորս ի քոդան տուաք, և զորս պարտատեարցն վճարեցաք. ոչինչ մնաց, քանզի կարի յոյժ ծանր է հարկն քոդաւին»<sup>13</sup>: Այսպիսով, գյուղացին քոդավի ծանրության հետևանքով ի վերջո զրկվում էր ոչխարներից և դրանով միայն ազատվում այդ հարկից:

<sup>10</sup> اسکندر منشی، ج ۱، ص ۵۸۷

<sup>11</sup> Իսքանդար Մունշու հաղորդման համաձայն շրանբեկիից արքունի գանձարան էր մտնում տարեկան 20 հազար իրաքյան թուման. ( اسکندر منشی، ج ۱، ص ۵۸۷ )

<sup>12</sup> Պաշտոնական ցուցակով ոչխարների դիմաց գանձվող գումարը պետք է հավասար լիներ ոչխարների և գառների ընդհանուր թվի  $\frac{1}{7}$  մասի և հզի ոչխարների  $\frac{1}{3}$  մասի արժեքին ( حمدتاج بخش، ایران... ) ( ص ۳۸۹ )

<sup>13</sup> Դավրիժեցի, էջ 174.

Չորանրեկիի վերացումը Պարսկական Իրաքում<sup>14</sup>, ինչպես ասվեց, ինքնին խոսում է նվաճված երկրների հաշվին Իրանի կենտրոնական շրջանների տնտեսության ամրապնդման և նրանց բնակչության վիճակի բարելավման ուղղությամբ շահ Աբբաս Ա-ի հետևողական քաղաքականության մասին: Այս հանգամանքը, սակայն, չի նկատվել Դավրիժեցու կողմից՝ Չորանրեկիի վերացման հարցը մեկնաբանելիս, որը պատմիչը դիտում է իբրև շահի խղճահարության և ողորմածության արտահայտություն: Այսուհանդերձ, Դավրիժեցու նկարագրությունն արժեքավոր է փաստական առումով և պատկերացում է տալիս ոչ միայն վերոհիշյալ հարկի, այլև ընդհանրապես ուսյաթի կյանքի մասին:

Քանի որ գյուղացին քողավի հետ միասին վճարում էր նաև բաղմաթիվ այլ հարկեր, ապա այդ հարկերը և նրանց դիմաց գոյացած պարտքերը մարելով՝ նույնիսկ տնտեսապես ապահով վիճակում ապրող գյուղացին հետզհետե ընկնում էր աղքատության մեջ: Դավրիժեցու նկարագրած ընտանիքն իսպառ զրկվել էր իր երբեմնի ունեցվածքից (մեծ քանակությամբ անասուններ, այգի, ջրաղաց և այլն): Նույն վիճակում էին գյուղի մյուս ընտանիքները: Եվ հոռոմաբադ գյուղը, որի մասին հիշատակվում է, միակը չէր. «Ծոյ յայսմ պատճառէ չքաւորեցաք,— գանգատվում է հոռոմաբադի

<sup>14</sup> Այլ նահանգներում, այդ թվում և նվաճված ծայրամասային շրջաններում Չորանրեկին շարունակում էր մնալ իբրև գլխավոր հարկերից մեկը: Դրա վկայությունն են նաև 1647 և 1649 թթ. Երևանի բեկլարբեկի Քելխոսրով-խանի հրամանագրերը էջմիածնի վանքի այգիների և ջրաղացների մալուխաթը և Չորանրեկիի գումարները Փիլիպոս կոթողիկոսին նվիրելու մասին (ՄՊԷ, պր. 2, վավ. 34 և 36): Տե՛ս նաև շահ Աբբաս Բ-ի շրթ 1651 թ. Քերմանում Չորանրեկիի գանձման չափերի կարգավորման վերաբերյալ փաստաթղթերը (097-098 ص شماره 11, «یغما» 1750): Սակայն ավելի ուշ հանդիպում ենք որոշ վայրերում գյուղացիներին Չորանրեկիի վճարումից ազատելու դեպքերի (տե՛ս 1664/5 թ. Նահրեղաբորի բնակիչներին Չորանրեկիի վճարումից ազատելու վերաբերյալ հրամանը՝ «Грузино-персидские исторические документы», Тбилиси, 1955, стр. 309)։

գեղջկուհին,— ոչ միայն մեք զոր տեսանեսս, այլ և բազում մեծատունք այսպէս եղեն, ոմանք ի մեր գեղջէս՝ և այլք յայլոց գեղորէից գաւառիս. որ և սկսաւ պառան զայնոսիկ զամենեսան յանուանէ յիշել»<sup>15</sup>;

Ռայաթի համար անձնապես ծանր է եղել մի ամբողջ շարք պարտավորությունների կատարումը՝ կապված շահի կամ բարձրաստիճան մարդկանց այցելությունների հետ: Գյուղացիները պարտավոր էին ոչ միայն օթևան տալ նրանց, այլև հոգալ նրանց բոլոր կարիքները: Այդպիսի պարհակներ էին սավարին (سوارى), նզուլը (نزل), ղոնալղան (قنلغا), ալաֆե-ուլուֆեն (أهف علفه), խեղմաթանենն (خامتاآن) և այլն: Դավրիժեցու շատ տվյալներ վկայում են ոայաթների կողմից այդ պարտավորությունների կատարման մասին: Այսպես, երբ շահ Աբբաս Ա-ն իր շքախմբով իջևանում է խոռոմաբադ գյուղում, նրա բնակիչները շրջա հարկահանաց իշխանացն հոգային զհոգս կարեաց արքայի՝ և այլոց իշխանաց»<sup>16</sup>: Պատմիչի հաղորդմամբ մի քանի գյուղացիներ կյանքով են հատուցում այն քանի համար, որ անտեղյակ լինելով, մերժել էին օթևան տալ ծպտված շրջող շահին: «Այլ և առաքեաց (շահը—Լ. Պ.) զիշխանս ի գիւղն խոռոմապատ. առ ի սպանանել զարսն, որք ոչ ընկալան զնա...»<sup>17</sup>:

Գոյություն ունեւր և սուրսաթ (سورسات) կոչվող պարհակը, որը մասնավորապես, պարտավորեցնում էր գյուղացիներին պատերազմի ժամանակ հացահատիկ հասցնել բանակի զորամասերին: Նկարագրելով 1603—1605 թթ. իրանա-թուրքական պատերազմների պատճառած ավերածություններն ու թշվառությունները, Դավրիժեցին նշում է նաև զանազան հարկերի, ինչպես նաև սուրսաթի ծանրության մասին: «...Թէ որքան ծանրաբեռն հարկապահանջութիւն եղեալ ի վերայ ժողովրդեանն,— գրում է պատմիչը,— և բռնութեամբ առին, նոյնպէս և զսուրուսաթն, որ զկնի զօրացն բերել տային, և թէ

<sup>15</sup> Դավրիժեցի, էջ 175:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 172:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 176:

զօրքն՝ և ի ձմեռն երիվարօքն իւրեանց ղշլաղ տային...»<sup>18</sup>։

Դավրիժեցու բազմաթիվ տեղեկութիւններ վկայում են Սեֆեհիների օրոք հարկային սիստեմում տեղ գտած շարաշահումների և կամայականութիւնների մասին։ Թեև բռնութիւնն ենթարկվողն առաջին հերթին ռայաթն էր, սակայն առկա էին նաև բնակչութիւնն վերսին շերտերի, այդ թվում քրիստոնյա բարձրաստիճան հոգեւորականութիւնն նկատմամբ գործադրվող կամայականութիւնն դեպքեր։ Պատմիչի հաղորդմամբ Դավիթ կաթողիկոսին պատկանող Ֆոնգիկան գյուղը, որ նա պարզե էր ստացել շահ Աբբաս Բ-ից, բռնի կերպով հարկման է ենթարկվում։ «...Այն Չութլուկն (գիւղ) զոր շահն պարզեեալ է ինձ, ոմանք յիշխանաց բռնութեամբ և պատճառանօք իմն հարկ առնուն վասն նորա,— ասում է Դավիթը,— վասն այնր երթամ ի դուռն թագաւորին, որ ազատութեան թուղթ առնում Չութլուկին»<sup>19</sup>։ Կատարվածի մասին շահին իրազեկ դարձնելուց հետո կաթողիկոսը «էառ դհրաման տիրելոյ զնա ազատ ի հարկաց արբունի»<sup>20</sup>։ Այստեղ առկա է նաև այսպես կոչված մուսֆութիւն կամ հարկային իմունիտետի փաստը, որը Սեֆյան Իրանի ֆեոդալական ինստիտուտներից էր և լայն կիրառում է ունեցել<sup>21</sup>։

Դավրիժեցին հիշատակում է նաև գլխահարկի (كسب زرخ-յա) մասին, որը հեջրիի I դ. սկսած (մ. թ. VII դ.) գանձվում էր ոչ մահմեդական բնակչութիւնից։ Գլխահարկը տարիների ընթացքում նրա վրա բարդվող վերադրով ու տոկոսներով (تفاوت و فرج — «թափավաթ» և «ֆար») բավական խոշոր գումար էր կազմում և նշանակալից տեղ գրավում պետական ֆինանսների մեջ<sup>22</sup>։

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 78։

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 232։

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 233։

<sup>21</sup> Տե՛ս ՄՊՀ, պր. 2, վավ. 29։

<sup>22</sup> Տե՛ս Հ. Դ. Փափազյան, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականութիւնն հարցի շուրջ («Բանբեր Մատենադարանի», 1956, № 3, էջ 87)։

Սեֆեհինների կենտրոնական կառավարական մեքենան աչքի էր ընկնում բազմանդամությամբ: Թեև շահը հանդիսանում էր երկրի անսահմանափակ տիրակալը, սակայն պետութայն կառավարման մեջ խոշոր դեր ունեին նաև մեծ թվով պալատական բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնց անվանում էին «պետութայն սյուններ» (ستون دولت): Երկրի կառավարումը իրականացվում էր քաղաքացիական, ռազմական և հոգևոր իշխանությունների բազմաթիվ ներկայացուցիչների միջոցով:

Շահնշահից հետո երկրի առաջին դեմքը է՛թեմադ-էդդոուլեն<sup>23</sup> էր կամ մեծ վեզիրը (وزیر اعظم)<sup>24</sup>, որի վերահսկողութայնն էին ենթակա պետութայն բոլոր վարչական ու ֆինանսական գործերը<sup>25</sup>: Ղրզըլբաշ էմիրների ազդեցութայն թուլացումից հետո մեծ վեզիրը նշանակալից կշիռ է ձեռք բերում, վճռական դիրք գրավելով պետութայն կառավարման գործում<sup>26</sup>: Ըստ «Թազքիրաթ-ու մոլուք»-ի<sup>27</sup> մեծ վեզիրի իրավասութայն մեջ էին մտնում բարձր պաշտոնների նշանակումը, երկրի ֆինանսական ու հարկային գործերի

<sup>23</sup> Բառացի՝ «պետութայն վստահություն» (արար.):

<sup>24</sup> Ավելի ուշ նա սկսել է կոչվել առաջին վեզիր, (نخست وزیر):

<sup>25</sup> Սեֆեհինների իշխանութայն սկզբնական շրջանում այս կոչումը գոյություն չի ունեցել, և իշխանութայն բարձրագույն պաշտոնյան կոչվել է «վաքիլ» (میانوسگی, ص ٨١): XVII դ. մեծ տարածում է զտնում «է՛թեմադ-էդդոուլեն» անվանումը, որի մասին վկայում է նաև Դավրիմեցին:

<sup>26</sup> Շարդենը նշում է նույնիսկ, որ Իրանի շահերը լոկ ձևական իշխանություն ունեն, և երկրի իսկական շահը մեծ վեզիրն է [Ch. Chardin], Voyages du Chevalier Chardin en Perse et autres lieux de l'Orient, P., 1811, vol. V, p. 430): Դա, անշուշտ, չափազանցություն է, մասնավաճ շահաբրայն շրջանի համար:

<sup>27</sup> Tadhkirat-al-muluk, a manual of Safavid administration by prof. V. Minorsky, G., M., S., Cambridge, 1943—Սեֆյան Իրանի վարչական սիստեմի վերաբերյալ արժեքավոր աղբյուր, սրբ գրվել է Իրանի՝ աֆղանների կողմից նվաճվելուց հետո Մահմադ շահի հրամանով, անհայտ հեղինակի՝ Իրանի բարձրաստիճան պաշտոնյայի կողմից:

կառավարումը, ինչպես նաև բոլոր բարձր աստիճանավոր-  
ների գործունեության նկատմամբ վերահսկողությունը<sup>28</sup>։

Դավրիժեցու երկը տեղեկություն է տալիս է՛թեմադ-էդ-  
դուլեի գործունեության նաև այլ ոլորտների մասին, մոտի-  
կից ցույց տալիս նրա անմիջական մասնակցությունը քա-  
ղաքային կյանքի ղանադան հարցերի կարգավորման գործին։  
Պատմիչի տվյալները ցույց են տալիս, որ XVII դ. կեսերին  
ևս է՛թեմադ-էդ-դուլեն հանդիսացել է շահի աջ թևը, նրա  
ամենաակտիվ գործակիցը։ Սպահանաբնակ այլակրոն ըն-  
տանիքների բնակատեղին փոխելու համար իշխանություն-  
ների գործադրած միջոցառումների մասին Դավրիժեցու նը-  
կարագրության մեջ ակնհայտ է է՛թեմադ-էդ-դուլե Մահ-  
մատ-բեկի (Մուհամմադ-բեկ) ակտիվ մասնակցությունը  
շահ Աբբաս Բ-ի հրամանների իրագործման ուղղությամբ  
կատարվող բոլոր միջոցառումներին<sup>29</sup>։ Ընդ որում, մեծ  
վեղիրը գործում էր շահի հետ լիովին համաձայնեցված ծրա-  
գրով, երբեմն թելադրելով նրան անհրաժեշտ որոշումը,  
մշտապես, սակայն, բարձրության վրա պահելով շահի  
հրամանը և գործելով միայն նրա անունից։ Է՛թեմադ-էդ-  
դուլեն համագործակցում էր նաև իշխանավորների ու  
պալատականների հետ։ «...Համախորհուրդ եղեալ ընդ այլ  
ևս իշխանացն Պարսից»<sup>30</sup>, նա բնակավայր է ընտրում Սպա-  
հանից արտաքսվող հրեաների համար։ Ըստ Դավրիժեցու տըվ-  
յալների, մեծ վեղիրը նաև անմիջական շփման մեջ էր քա-  
ղաքապետի, վարչական զանազան պաշտոնյաների հետ,  
ընդհուպ մինչև գաղթականների տարբեր խմբերի ներկայա-  
ցուցիչները՝ ավագները. «կոչեաց էհտիմալ-Դօլվաթն առաջի  
խր զաւագն Երևանցւոց՝ որում անունն էր խօջայ Յակոբջան,  
ընդ այլ ևս արանց, և ծանոցց նոցա զհրաման թագա-  
ւորին...»<sup>31</sup>։

28 «ص ۸۲، مینورسکی»

29 Դավրիժեցի, էջ 442—480։

30 Նույն տեղում, էջ 462։

31 Նույն տեղում, էջ 451։

Մեծ վեզիրին պաշտոնանկ կարող էր անել միայն շահը<sup>32</sup>,  
ինչպես պետության մյուս «սյուները», այնպես էլ  
է՛թեմադ-էդ-դոուլեն իր գործունեության ընթացքում ուղե-  
ցույց ունեւր շարիաթի սկզբունքները և այդ պատճառով  
ամենասերտ կապի մեջ էր հոգևոր գերագույն առաջնորդի՝  
սադրի հետ: Այս փաստը ցայտուն կերպով արտացոլված է  
Դավրիժեցու մոտ<sup>33</sup>:

Սադրը, լինելով կրոնական առաջնորդ ու հոգևոր բարձ-  
րագույն ասյանի պետ, մեծ կշիռ ունեւր պետության կա-  
ռավարման մեջ: Սեֆեկների օրոք սադրի պաշտոնը փոփո-  
խությունների է ենթարկվում, և շահ Թահմասպի ժամա-  
նակներից սկսած այն վարում են երկու հոգևորականներ,  
որոնք կոչվում էին «սադրե-ամմե», «սադրե խասսե»<sup>34</sup>:  
Վերջինս ավելի խոշոր դեր ունեւր և օգտվում էր մեծ իրա-  
վունքներից: Կրոնական աշխարհի բոլոր տեսակի գործերը,  
այդ թվում և հոգևոր ասյանը գլխավորելուց բացի, նա  
մասնակցում էր նաև քաղաքացիական դատարանի որոշ  
աշխատանքներին: Այսպիսով, սադրի վճիռն անհրաժեշտ  
էր և գերագույն դատավորի՝ դիվանբեկիի համար, թեև  
վերջինիս կողմից վավերացվելուց հետո էր միայն, որ վճի-  
ռը գործադրման ուժ էր ստանում:

Դիվանբեկին ևս Սեֆեկների վարչական մարմինների  
շարքում վճռական դեր ունեւր և կոչված էր գլխավորելու  
արդարադատության գործը: «Թագքիրաթ-ուլ-մոլուք»-ում նըշ-  
ված՝ դիվանբեկիի պարտականությունները (ամբողջ երկրի  
մասշտաբով տուգանքների և գանգատների քննումը, շարիա-  
թի սկզբունքների կիրառումը, շաբաթական երկու անգամ  
մարդկանց ընդունելություն դատական գործերով)<sup>35</sup> պատկե-  
րացում են տալիս դիվանբեկիի գործունեության մասին՝

<sup>32</sup> Օրինակ, 1661 թ. շահ Աբբաս Բ-ն «զէհտիմալ դովաթն ընկեց լիշխա-  
նութենէ» (Դավրիժեցի, էջ 648):

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 464:

<sup>34</sup> اسکندر منشی، ج ۱، ص ۱۴۴، مینورسکی، ص ۷۴-۷۳

<sup>35</sup> مینورسکی، ص ۹۲-۹۳

կապված գլխավորապես մահամեղականների միջև վիճելի հարցերի կարգավորման հետ:

Դավրիժեցին տվյալներ է հաղորդում դիվանբեկիի կողմից Իրանի ալլակրոն բնակիչների դատական հարցերի քննությունից մասին: 1657 թ. մի սպանության առիթով՝ հրեաների դատավարության ժամանակ դիվանբեկին ներկայանում է իբրև գլխավոր քննող և վճռող անձ, որի կայացրած մահվան վճիռը նոր մահամեղականությունն ընդունած հրեային (կամ որ միևնույն է՝ մահամեղականին) սպանող երեք հրեաների նկատմամբ անհապաղ ի կատար է ածվում<sup>36</sup>, իսկ մինչև դատավարությունը հանցագործներին գտնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելիս դիվանբեկին գործում էր է՛թմադ-էդ-դոուլեի հետ միասին<sup>37</sup>:

«Պատմության» մեջ տեղեկություններ կան բարձրաստիճան հայ հոգևորականների հարուցած տարբեր հարցերի քննման ժամանակ դիվանբեկիի ունեցած մասնակցություն վերաբերյալ: Առաքել պատմիչի հաղորդմամբ կաթողիկոսական իշխանության հաստատման վերաբերյալ երկրորդ ռաղամի համար շահ Աբբաս Ա.-ն Սահակ կաթողիկոսին ուղարկում է դիվանբեկիի մոտ<sup>38</sup>: Այս փաստը վկայում է, որ կրկին ռաղամի անհրաժեշտության դեպքում կաթողիկոսական իշխանության հաստատման գործը, որի իրավասունը շահն էր, կարող էր և հանձնվել դիվանբեկիին: Քիսկ Դիւան բէկին վասն թամահի խստութեամբ էր պատասխանեալ Սահակայ, մինչ որ թամահն իւր լցեալ էր, և ապա գրեալ էր նոր ռաղամ, բայց ոչ էր կնքեալ»<sup>39</sup>: Ռաղամը կնքելու համար Սահակ կաթողիկոսը

<sup>36</sup> Դավրիժեցի, էջ 475—476: Նման դատավարությունները (քրեական մեծ հանցանքների, այդ թվում՝ մարդասպանության դեպքում) կատարվում էին ուրֆի (սովորութային) օրենքներով:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 473—474:

<sup>38</sup> Առաջին անգամ շահից ստացած ռաղամը կնքել տալու նպատակով Սահակ կաթողիկոսն այն հանձնել էր կնքապահ Քահաղղուլի-խանին, որը հանգամանքների բերումով մեկնել էր Երևան, իսկ Սահակը գերադասել էր շահից խնդրել նոր ռաղամ, ասելով, որ նախկինը կորցրել է:

<sup>39</sup> Դավրիժեցի, էջ 231:

մեծ դժվարութիւններ է կրում, ամենուրեք հանդիպելով կաշառակերութեան փաստերի<sup>40</sup>:

Դավրիժեցիին հաղորդում է նաև Իրանում օտարերկրացիների դատական գործի քննութեան փաստեր: Ուշադրութեան արժանի է 1610/11 թ. եվրոպացի միսիոներներին (Գլելուն և Արքանջելի) դատը՝ կապված նրանց կողմից Ս. Հռիփսիմեի մասունքների հափշտակման հետ: Այս դատավարութեան ժամանակ գլխավոր քննող և վճիռ կայացնող անձն արդեն դիվանբեկին չէ, այլ ինքը՝ շահը (Աբբաս Ա-ն): Ընդ որում, շահն առաջնորդվում է ոչ թե շարժի կամ ուրֆի օրենքներով, որոնցով ղեկավարվում էին հոգևոր կամ քաղաքացիական դատարաններում, այլ զուտ քաղաքական ու դիվանագիտական նկատառումներով, ջանալով իր վճռով առիթ շտալ Իրանի լավ հարաբերութիւններին խաթարմանը ինչպես Եվրոպայի, որի ներկայացուցիչներն էին հիշյալ միսիոներները, այնպես էլ հայ խոշալութեան ու բարձր հոգևորականութեան հետ, որոնք խիստ վրդովված էին կատարված հափշտակութեան առիթով<sup>41</sup>: Այսպիսով, շահ Աբբաս Ա-ի օրոք նկատելի է օտարերկրացիների հետ կապված դատական հարցերում դիվանբեկիի իրավասութիւնների սահմանափակում:

<sup>40</sup> Նույն տեղում: Ջաքարիա Ագուլեցիին, որն իր եղբոր՝ Սիմոնի պարտատերերի դրդամամբ պատասխանատվութեան էր կանչվել շահի և դիվանբեկիի կողմից (1671 թ.), գործի վախճանն այսպես է արձանագրել. «Ես Ջաքարիայ մին քանի թուման խարջեցի, պրծայ» («Ջաքարիա Ագուլեցու Որագրութիւնը», Երևան, 1938, էջ 104), (այսուհետև՝ Ջաքարիա Ագուլեցի), հմմտ. Ջաֆարիա Քանաֆեցի, հ. Ա, էջ 71—74:

<sup>41</sup> Գոյութիւն ունի շահ Աբբաս Ա-ի ռազմը Ամիր-Գունա-խանին՝ ի պատասխան Դավիթ կաթողիկոսին, գողացված մասունքները պատրիկներին վերցնելու և էջմիածնին հանձնելու, ինչպես նաև վերջիններիս պատժելու վերաբերյալ (տե՛ս «Ջամբո», էջ 210, հմմտ. ՄՊՁ, պր. 2, վավ. 10): Սակայն, Դավրիժեցու հաղորդամամբ, զբանդի ի ժամանակին յայնմիկ դաշն խաղաղութեան ուխտեալ և հաստատեալ էին շահն և թագաւորն Յոանկաց ընդ միմեանս», շահը պատրիկներին պատժելու փոխարեն ազատ է արձակել (Դավրիժեցի, էջ 191—192):

«Պատմութիւն» մեջ տեղեկութիւններ են հաղորդվում նաև ոստիկանապետի (դարուղա)<sup>42</sup>, կնքապահի (մոհրդար), դիվանական մատյանների վերակացուի և այլ պաշտոնների վերաբերյալ, որոնք հիմնականում հավաստում են այլ աղբյուրների տվյալները:

«Թագքիրաթ-ուլ-մոլուք»-ում հիշատակվում է ռաղամ-նևիսի, որի պաշտոնը դիվանի կառավարական գործերի վերաբերյալ շահի ֆերմանների հետ էր առնչվում<sup>43</sup> և հոքմնե-վիսի մասին, որը «տնօրինում էր հաստատված և կնքման ենթակա փաստաթղթերը»<sup>44</sup>: Հավանաբար սրանցից մեկին կամ ավելի շուտ երկրորդին է վերաբերում Դավրիժեցու տեղեկութիւնն արքունի գրապահի մասին. «...Իշխան ոմն՝ որ էր գրապան թագաւորական գրեանց, զի ամենայն գրեանք թագաւորին նմա յանձնեալ է, զի պահեսցէ...»<sup>45</sup>: Գրապահը, Դավրիժեցու հաղորդմամբ, արքունի առաջատար պաշտոնյաներից էր, որի հետ հաշվի էին նստում պալատում:

Իրանի նահանգները ղեկավարվում էին նահանգապետների կամ բեկլարբեկիների միջոցով, որոնք նշանակվում էին շահի կողմից: Սրանց իշխանութիւնը սահմանափակելու և կենտրոնախույս ձգտումները կասեցնելու նպատակով շահը նշանակում էր պաշտոնյաներ, որոնք վերահսկում էին բեկլարբեկիների կատարած գործերին և այդ մասին ղեկուցում շահին:

Քաղաքների կառավարումը իրականացվում էր քաղաքապետների կամ քալանթարների միջոցով, որոնք ակտիվ մասնակցութիւն էին ունենում քաղաքային կյանքի բոլոր

<sup>42</sup> Ոստիկանապետի իրավասութիւնների մեջ էր մտնում հանցագործութիւնների կանխումը, ինչպես նաև մասնակցութիւնը հարկերի իրացման գործին («عياستنامه يا شرح (دداگانی ۲۲ ساله شاه عباس ثانی، تأليف محمد طاهر وحيد قزوینی، بتصحيح وتحشیه ابراهيم دهگان، ۱۳۲۹، ص ۲۱۴)»:

<sup>43</sup> مينورسكى، ص ۱۱۸

<sup>44</sup> նույն տեղում:

<sup>45</sup> Դավրիժեցի, էջ 445:

հարցերի լուծմանը, սերտ կապի մեջ լինելով վարչական այլ մարմինների, ինչպես նաև շահի հետ: Սպահանի քաղաքապետ Միրզա Մուհամմադի վերաբերյալ Դավրիժեցու տրվյալները ցույց են տալիս նաև, որ մայրաքաղաքի քալանթարը իրավասու էր որոշ հարցերում փոխարինելու շահին՝ նրա բացակայության դեպքում<sup>46</sup>: Քալանթարին իրավունք էր վերապահվում հարկ եղած դեպքում զինված ջոկատների կամ առանձին զինվորների միջոցով կարգավորել այս կամ այն հարցը<sup>47</sup>:

Առաքել պատմիչի հաղորդմամբ կալա-բեկը «ի թագաւորէն քաղաքապետ կարգեալ էր Ասպահանու»<sup>48</sup>: Մեկ այլ առիթով նա գրում է, որ շահ Աբբաս Բ-ն, անսալով Երևանի քաղաքապետ Մուհամմադղուլի-խանի հանդեպ մի քանի մեծամեծ իշխանների բողոքներին, «ընկեց զնա յիշխանութենէն... և զայլ ոմն ի թագաւորական ծառայից առաքեաց յԵրևան իշխող...»<sup>49</sup>: Նույն վկայությունները ցույց են տալիս, որ քաղաքապետին նշանակում և պաշտոնանկ էր անում շահը<sup>50</sup>:

«Պատմության» մեջ հիշատակվում են Սեֆեկիների շերջանում տարբեր քաղաքների քալանթարների անուններ, որոնք լրացնում են այլ աղբյուրների տվյալները: Դավրիժեցու հաղորդմամբ շահ Աբբաս Ա-ի օրոք Սպահանում քաղաքապետ էր Միրզա Մուհամմադը, ապա՝ կալա-բեկը, Թավրիզում՝ Ղարշղա-խանը, Երևանում՝ Թահմազղուլի-խանը,

---

<sup>46</sup> Նույն տեղում, էջ 186—187: Նկատելի է, որ այս պաշտոնի մասին խոսելիս Դավրիժեցին գործածում է՝ «քաղաքապետ», «իշխող քաղաքին», «իշխան քաղաքին», սակայն ոչ «քալանթար» տերմինը: Թերևս XVII դ. առաջին կեսին այս տերմինը լայն գործածություն չի ունեցել Հայաստանում:

<sup>47</sup> Դավրիժեցի, էջ 186—187, 281:

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 301:

<sup>49</sup> Նույն տեղում, էջ 341:

<sup>50</sup> Առանձին դեպքերում քաղաքի բնակիչներին իրավունք էր վերապահվում իրենց հայեցողությամբ քալանթար ընտրել: Տե՛ս Զաֆարիա Ազուլեցի, էջ 139:

Մուհամմադը լույսի-խանը, որին հաջորդել է Նաջաֆը լույսի-խանը և այլն:

Նշենք, որ պատմիչի տեղեկություններն ընդհանուր գրծերով պատկերում են նաև Սեֆեհյանների վարչակարգին բնորոշ մի շարք կողմերը. մի կողմից սերտ կապ և համաձայնեցվածություն բարձր աստիճանավորների, «պետության սյուների» միջև՝ մասնավորապես ժողովրդական զանգվածների կամ նրանց առանձին ներկայացուցիչների հետ կապված հարցերի լուծման ժամանակ, մյուս կողմից՝ տարածայնություններ, կենտրոնախույս ձգտումներ, պալատական դավեր, պաշտոնների վաճառք: Զգալի է հղել կաշառակերությունը, որը հաճախ արտակարգ շահերի է հասել: «Բազում ոսկի և արծաթ» տալը նպատակին հասնելու կարևոր միջոց էր: Դրա պաշտոնական կամ բացահայտ արտահայտությունն էր փիշքաշր<sup>51</sup> (پیشکشی), որ անխուսափելի պարագա էր որևէ հարցի լուծման ճանապարհին և ընդունվում էր վարչական բոլոր մարմինների կողմից, ընդհուպ մինչև շահը: Դավրիժեցու հաղորդմամբ Փիլիպոս կաթողիկոսը լուսավորչի Աջը Նոր Զուղայից էջմիածին տեղափոխելու թույլտվություն ստացավ միայն այն բանից հետո, երբ «սկսաւ շրջել ի դրունս իշխանաց թագաւորին, և առատաձեռն տրօք զսիրտս ամենեցուն հաճեցոյց: Եւ ապա յետ ամենեցուն լցեալ զուտ ոսկի դահեկան յսկտտեղ՝ և ընդ նմին գրեալ թուղթ արզայի՝ մատոյց առաջի Շահսէֆի արքայի...»<sup>52</sup>: Կաթողիկոսական իշխանության հաստատման համար «Սահակն ընծայ ինչ ըստ կարողութեան իւրոյ մատուցեալ էր առաջի արքայի, ընդ որս էր և ձի մի պատուական»<sup>53</sup>: Փիշքաշր նույնիսկ գանձարանը հարստացնող միջոցներից մեկն էր<sup>54</sup>:

<sup>51</sup> Գոյություն ունեւր և հատուկ հարկ՝ փիշքաշ, որ պարտավոր էր տալ առաջը ֆեոդալին՝ վերջինիս ծննդան, ամուսնութան և այլ հանդիսավոր օրերի, ինչպես նաև տոների կապակցութամբ:

<sup>52</sup> Դավրիժեցի, էջ 320:

<sup>53</sup> Նույն տեղում, էջ 230, տե՛ս նաև էջ 309, 311...

<sup>54</sup> Այս հանգամանքն ընդգծում է նաև Շարդենը. տե՛ս سياحتنامه شاردن, ج 3, ص 77

«Պատմութեան» տարբեր գլուխներում կարելի է հանդիպել տվյալների, որոնք շոշափում են Իրանի՝ առևտրի հետ կապված զանազան հարցեր:

Հայտնի է, որ եվրոպա-ասիական առևտրական ծովային նոր ճանապարհը (որի մասին խոսվել է) մեծ շափով ձեռնտու էր Իրանի համար՝ քարավանայինի համեմատությամբ: Մետաքսի արտահանման առավել շահավետ ուղին օգտագործելու դրդապատճառներից էր նաև այն, որ Թուրքիայով անցնող առևտրական տարանցիկ ճանապարհները հեռու էին անվտանգ լինելուց, մի հանգամանք, որ իրեն զգուցնել է տվել շարունակ: Դավրիժեցու հաղորդմամբ վանով անցնող Թավրիզի քարավանները երկար ժամանակ հարձակման էին ենթարկվում խոշաբ բերդի իշխան Սուլեյման-բեկի կողմից, որը զգարաւանսուց բեռինսն բռնութեամբ բանայր և որ ինչ իրաց և հաւանէր, սող ինչ գին ձգէր ի վերայ տիրոջն և կորզեալ ի տիրոջէն յինքն առնոյր զինչսն, և պատճառէր թէ գնով գնեցի»<sup>55</sup>, Իսկ փաշայությունից զըրկված Չոմարը իր շուրջը հավաքելով ավազակների, «դարանամուտ լինէր ի վերայ ճանապարհաց՝ երթեակ կարաւանաց և ի վերայ բախեալ զորս կոտորէր, և զորս փախստական առնէր, և զոսկի և զարծաթ և այլ զոր ինչ կամէր առեալ գնայր... այնքան մինչ զի երթեակութիւն ճանապարհաց խափանեցաւ...»<sup>56</sup>,

Մետաքսի արտահանման նոր ճանապարհը ոչ միայն հարվածում էր նրա ախոյանի՝ Թուրքիայի ֆինանսներին, այլև ազատում էր Իրանին՝ հիշյալ խոչընդոտներից:

Շահի մենաշնորհը հանդիսացող մետաքսի առևտուրը կատարվում էր գլխավորապես հայ վաճառականների միջո-

<sup>55</sup> Դավրիժեցի, էջ 494:

<sup>56</sup> Նույն տեղում, էջ 496, հմտ. Ջաֆարիա Ագուլեցի, էջ 35, 45, 71—72 և այլն, Ջաֆարիա Քանաֆեցի, հ. Բ, էջ 24, «ج اسكندر منشى»:

ցով<sup>57</sup>: Հանձինս ջուղայեցի առևտրականների, որոնք գաղթեցվել էին Իրան, վերջինս ուներ ձեռներեց և հավատարիմ առևտրական գործակալներ, և Ջուղայի առևտրական կապիտալը կովան էր ծառայում Իրանի առևտրի համար: Այդ է պատճառը, որ Ջուղայի վաճառականները, հայ խոջաները ոչ միայն օգտվել են լայն իրավունքներից ու արտոնություններից, այլև եղել են սեֆյան շահերի և հատկապես շահ Աբբաս Ա-ի մերձավորները, հաճախ՝ խորհրդատուները: Այլ մասին Դավրիժեցու երկն ամփոփում է մեծ թվով վկայություններ: Իրանում հայ վաճառականների խաղացած ալանառու դերը համընդհանուր ճանաչում է գտել և նշվել ժամանակակիցների կողմից: «Ամենաշատ և ամենահարուստ վաճառականները Պարսկաստանում,—գրում է Ադամ Օլեարիիսը,—հայ քրիստոնյաներն են, որոնք ամենուր երթևեկում են՝ երկրում և նրանից դուրս»<sup>58</sup>:

Խոսելով Կոստանդնուպոլիս ժամանած հայ վաճառականների մասին, Դավրիժեցին շեշտում է մասնավորապես ջուղայեցիներին և գողթնեցիներին (հավանաբար նկատի ունի աղուլեցիներին)<sup>59</sup>:

<sup>57</sup> Տավերնյի հազորդամբ շահ Աբբաս Ա-ն մետաքսի առևտուրը սկզբում հանձնարարել է իրանցի վաճառականներին, որոնք, սակայն, վատնել են վաճառքից ստացած գումարը, և շահը համոզվելով, որ իրանցիներն այդ գործում ապաշնորհ են, մետաքսի առևտուրը վստահել է հայ վաճառականներին (‘تجره ابقتراب نوری’, تهران, ۱۳۰۱):

<sup>58</sup> Адам Олеарий, Подробное описание путешествия Голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 годах (пер. с нем. П. Барсов), М., 1870, стр. 791.

<sup>59</sup> Դավրիժեցի, էջ 287:

Աղուլեցիների մասին առատ տվյալներ է պարունակում Ջաքարիա Աղուլեցու «Օրագրությունը», որը հարուստ աղբյուր է Սեֆյան Իրանի առևտրական հարաբերությունների վերաբերյալ և արժեքավոր տվյալներ է ընդգրկում XVI—XVII դդ. հայ վաճառականների, նրանց առևտրական գործարքների, ապրանքների գների, առևտրի հիմնական երթուղիների մասին և այլն:

Հայ վաճառականները հաճախ էին լինում Ստամբուլում, Իզմիրում, Էրզրումում, Բուրսայում և այլուր<sup>60</sup>։ Դավրիժեցին պատմում է հայ մեծահարուստ վաճառական Անտոն Չալապիի (Չելեբիի) մասին, որը հիշյալ քաղաքներում գնում էր Իրանից եկած հայ վաճառականների, հաճախ մի ամբողջ քարավանի ապրանքը<sup>61</sup>։

Մետաքսից բացի (հումք և պատրաստի) Իրանից արտահանվում էր կերպաս, թավիշ ու այլ կտորեղեն, գորգեր, սեկ (սաֆյան), բուրդ, ծխախոտ, շոր միրգ և այլն։ Եվրոպացիներն Իրան էին բերում ձիթապտուղ, պղինձ, շաքար, տարբեր տեսակի մահուղ։

Զգալի էր նաև թանկարժեք քարերի առևտուրը, որով զբաղվում էին գլխավորապես հրեաները։ «Պատմության» մեջ, ինչպես ասվեց, ընդարձակ տեղեկություններ կան թանկարժեք քարերի, նրանց հատկությունների, արտահանման ու վաճառքի վայրերի և նրանց գների վերաբերյալ<sup>62</sup>։

Իրանն առևտրական ու դիվանագիտական հարաբերություններ էր հաստատել նաև Ռուսաստանի հետ<sup>63</sup>։ Դավրիժեցու հավաստմամբ, շահ Աբբաս Ա-ի օրոք Սեֆևիդները Ռուսաստանի հետ դեսպանություններ էին փոխանակում։

<sup>60</sup> Դավրիժեցի, էջ 287, հմմտ. Ջաֆարիա Ագուլեցի, էջ 41, 59, 160...

<sup>61</sup> Դավրիժեցի, էջ 338—339։

Թուրքիայում նույնպես մեծ էր ազդեցիկ և խոշոր կապիտալ ունեցող հայ վաճառականների թիվը։ Հատկապես Վանի խոշաները (Ատոմյաններ, Ախիջան, Ռահիջան, Հովհաննես, Միրաք, Փուլադ, Սարուխան և այլք) մեծ հեղինակություն ունեին Թուրքիայի կառավարող շրջաններում (Դավրիժեցի, էջ 240—244, 385, 489—490, 493—494...)։ Հիշյալ բուրսացի Անտոն Չելեբիի մասին պատմիչը տեղեկացնում է, որ նա այդտեղ երևելի և հռչակալ ալնքան, մինչ զի յայտնի էր ի դոտն թագաւորին Օսմանցոց, նաև ի հեռաւոր աշխարհս ի Ֆոանկաց» (նույն տեղում, էջ 338)։

<sup>62</sup> Նույն տեղում, էջ 588—605։

<sup>63</sup> Ահմադ Քաջբախշը թուրքիմացաբար նշում է, թե մինչև Պետրոս Մեծի թագավորության շրջանը (1682—1725) Իրանի և Ռուսաստանի միջև փոխհարաբերություններ գոյություն չեն ունեցել (احمد تاج بخش، تاریخ، روابط ایران و روسیه، تمبریز، ۱۳۰۷، ص ۹)։



Ներքին շուկայում վաճառքի էր հանվում երկրի արհեստագործական արտադրանքը (կտորեղեն, կաշվե իրեր, գորգեր և այլն), որը հաճախ նաև արտահանվում էր:

\* \* \*

XVII դ. սկզբին ներքին առևտրի և արհեստների զարգացումը հատկանշական էր իրանի քաղաքների համար:

Դավրիժեցին հիշատակում է իրանի շատ քաղաքների մասին, ինչպես՝ Սպահան, Թավրիզ, Արդաբիլ, Ղազվին, Շիրազ, Լառ, Համադան, Եզդ, Քերման, Քաշան, Ղում և այլն: Պատմիչն առավել մանրամասն տեղեկություններ է տալիս մայրաքաղաքի՝ Սպահանի<sup>71</sup>, վերաբերյալ: Նրա վրկայակոչած հիշատակարանի (գրված 1461 թ.) հաղորդմամբ XV դ. կեսերին Սպահանը «ամուր և բազմամարդ», բայց և «հողաշէն» քաղաք էր<sup>72</sup>: XVII դ. Սեֆեհիների մայրաքաղաքը լինելով (1598 թ.), Սպահանն աննախընթաց ծաղկում է ապրում և դառնում ժամանակի աչքի ընկնող քաղաքներից մեկը: Ոմանք նույնիսկ այն համարել են Ասիայի լավագույն քաղաքը<sup>73</sup>: Սպահանը, որը հորջորջվել է «աշխարհի կես» մակդիրով, բազմամարդ է եղել<sup>74</sup> և գրավել ավելի քան 37 կմ պարագծով տերիտորիա<sup>75</sup>: Նկարագրելով քաղաքի դիրքը, Դավրիժեցին նշում է, որ այն արևմուտքից արևելք հատվում է մեծ գետով (Ջայենդեհուդ), որի հյուսիսային կողմում տեղավորված են շահի պալատը, մահմեդականների

71 Սպահանն անվանվել է նաև Շոշ կամ Սոս:

72 Դավրիժեցի, էջ 420:

73 Տե՛ս В. Бартольд, Նշվ. աշխ., էջ 112:

74 Ըստ Բեկ-Բայաթ Օրուչի, XVII դ. Սպահանի բնակչությունը կազմել է 80 հազար ընտանիք (تجزه، دوان ایرانی، بیات اوروج، ص 09 (مسعود رجب نیا، تهران، ۱۳۳۸، ص 09): Ընդունված է, որ սպահանաբնակների թիվը եղել է ավելի քան 500 հազար:

75 Անհավանական է այս հարցում: Աբուլգասեմ Սահարի տվյալը, ըստ որի Սպահանը արևմուտքից արևելք ձգվել է 60 ֆարսանգ (տե՛ս ابوالقاسم، ص 176 (سحاب)، (Ֆարսանգը կամ ֆարսախը հավասար է 6—8 կմ),

տները, վաճառանոցները և այլն, իսկ հարավային կողմում շուղայեցիներն են<sup>76</sup>:

Սպահանի բարեկարգման ու բարգավաճման ուղղությամբ առանձնապես մեծ ջանքեր է գործադրել շահ Աբրաս Ա-ն, որի օրոք քաղաքն առանձին շուք է ստանում և ընդարձակվում, մեծ հուշակ է ձեռք բերում, «որոշ ժամանակ դառնում Արևելքի առևտրի կենտրոն»<sup>77</sup>: Ականատեսները XVII դ. Սպահանի մասին հիացական խոսքեր են թողել: Դավրիժեցին այն անվանում է «մեծահանդէս» քաղաք: Խ. Զուղայեցու արտահայտությամբ՝ Սպահանը «ի ձեռս առաջնոյ Շահաբաին՝ յոյժ հրաշալի յօրինուածովք և վայելչազարդ տեսութեամբ յաւէտ շքեղագոյնս պայծառացաւ, ըստ որում և յայտ ի տեսողաց այժմ իսկ է»<sup>78</sup>:

Շահ Աբրաս Ա-ի նախաձեռնությամբ Սպահանը զարգարվեց ճարտարապետական այնպիսի կոթողներով, որպիսիք են Ալի-ղափուն և Զեհելյսոթունը (ապարանքներ)<sup>79</sup>, Մասջադե-Շահը և Մանջադե-Լոթֆոլլան (մզկիթներ), Ալլահվերդի-խանի և Խաջուի կամուրջները և այլն: Ստեղծվեցին հրապարակներ, շուկաներ, այգիներ և այլն:

Սպահանի շինարարության ու բարեկարգման գործին մեծ շափով մասնակցել են Նոր Զուղան կառուցող հայերը, որոնք հաստատվելով Սպահանում, «շինեցին յարկս և բնակութիւնս ինքեանց՝ հրաշալի յօրինուածովք, կամարակապ փողոցօք, թևաւոր ապարանօք, և ամարասուն հովանոցօք...»<sup>80</sup>:

Սպահանի մանրակրկիտ նկարագրությունն է տալիս ուս վաճառական Ֆեդոտ Կոտովը, որը 1623—1624 թթ. դեպի Իրան ճամփորդելիս գրի է առել իր տեսածները<sup>81</sup>, Դավրիժեցու

<sup>76</sup> Դավրիժեցի, էջ 452—453:

<sup>77</sup> ۵۲-۵۳ ص «... احمد تاج بخش، ايران...»

<sup>78</sup> Խաչատուր Զուղայեցի, էջ 98:

<sup>79</sup> Իբրահիմ Դեհզանը դրանց կառուցումը սխալմամբ վերագրում է շահ Աբրաս Ա-ին (عبداسلام، ص ۵):

<sup>80</sup> Դավրիժեցի. էջ 63, 454:

<sup>81</sup> Տե՛ս «Хождение купца Федота Котова в Персию», М., 1958, стр. 78—88.

մոտ, սակայն, գտնում ենք լրացուցիչ փաստեր: Հիշատակելով Սպահանի թաղամասերը (Թորոսկան, Եխշաբանի, Թաղթի-ղարաջա, Բաղաթ)<sup>82</sup>, պատմիչն առանձնապես շեշտում է Շամշապատը (Շամսաբադ), որն ամենահարմարավետ և ամենախիտ բնակեցված թաղն է եղել: Այստեղ են բնակվել մահմեդականներ, գաղթեցված հայեր, ինչպես նաև պալատից արտաքսված բազմաթիվ ներքինիներ: Շամսաբադը մոտ է եղել ինչպես պալատին, այնպես էլ շուկային և, որ ամենակարևորն է, ապահովված է եղել ջրով, «քանզի մեծ առու մի ջուր, սակաւ ինչ փոքր քան զգետ գայ յայն թաղն և գնայ ի Չարբաղն, որ է թագաւորական այգի...»<sup>83</sup>: Այդ գետակն էլ, պատմիչի հաղորդմամբ, օգտագործվել է պալատի կարիքների համար:

Քաղաքը սակավաջուր է եղել: Այդ կապակցությամբ շահ Աբբաս Ա-ի ձեռնարկած միջոցառումներից էր Ավիթուրան գետի<sup>84</sup> հունը փոխելու և այն Ջայենդեռուղին միացնելու փորձը, որի նպատակն էր մայրաքաղաքն ապահովել ջրով<sup>85</sup>: Սակայն այս դժվարին ձեռնարկը, որի առաջին փորձը կատարել էր շահ Թահմասպը, տեղանքի աննպաստ պայմանների պատճառով կրկին անհաջող վախճան է ունենում<sup>86</sup>:

Սպահանը, ինչպես ողջ Իրանը, բազմազգ է եղել: Ֆ. Կոտովը նշում է սպահանաբնակ հայերին, հրեաներին, ադրբեջանցիներին, արաբներին, հնդիկներին<sup>87</sup>: Չաբարիա

<sup>82</sup> Դավրիժեցի, էջ 461, հմմտ. «Хождение купца Федота Котова в Персию», стр. 82—83. Կոտովը սխալմամբ «Ջուղա» անունը գիտում է իբրև հասարակ անուն՝ արվարձան նշանակությամբ (էջ 83):

<sup>83</sup> Դավրիժեցի, էջ 447:

<sup>84</sup> Արե-Քուհրանդ (آب كوهرنگ) (լեռնազույն ջուր) կամ Արե-Դուրանդ (آب كورنگ), այժմ՝ Քարուն:

<sup>85</sup> Դավրիժեցի, էջ 140—141:

<sup>86</sup> 90.—949 Վ. Մ. «اسکندر منشی» Խաչատուր Զուղայեցի, էջ 128—129: Զուղայեցին Ավիթուրանը շփոթում է Քուռ գետի հետ: Արե-Քուրան ջրանցքի ու համանուն հարկի մասին տե՛ս Թ. Ավդալբեկյանի նշված հոդվածը նրա «Հայագիտական հետազոտություններ»-ում, (Երևան, 1969, էջ 457—461) կամ՝ «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1):

<sup>87</sup> «Хождение купца Федота Котова в Персию», стр. 82, 91.

Քունաքեռցու հաղորդմամբ Սպահանում ապրում էին նաև հուլներ, ասորիներ, վրացիներ, ուզբեկներ, քրդեր, ինչպես նաև իրանական զանազան ցեղերի ներկայացուցիչներ<sup>88</sup>։ Դավրիժեցին հիշատակում է «Ֆրանկ»-ների մասին, այդպես անվանելով բոլոր եվրոպացիներին<sup>89</sup>։

Իրանի քաղաքներում այդ շրջանում լայն թափ է ստանում արհեստների զարգացումը։ Գոյությունն ունեին մեծ թվով արհեստանոցներ՝ ինչպես մասնավոր, այնպես էլ պետական կամ շահին պատկանող, որոնք կոչվում էին «բարխանե»։ Դավրիժեցու տեղեկությունները վկայում են, որ հատկապես հմուտ արհեստավորները վայելում էին իշխանության հովանավորությունը։

Այսպիսին է Իրանի սոցիալ-տնտեսական կյանքի վերաբերյալ Դավրիժեցու տված տեղեկությունների պատկերը։ Թեև պատմադիրն առանձին չի անդրադարձել պատմության այս կողմին, սակայն նրա տվյալները կարող են օգտակար լրացում լինել Իրանի պատմության ուսումնասիրման համար։

<sup>88</sup> Ձախարիա Քաեախեցի, հ. Ա, էջ 56, հմտ. Խաչատուր Զուլայեցի, էջ 137.

<sup>89</sup> Պատմագրի տվյալները վկայում են վերջիններիս վայելած լայն արտոնությունների, մասնավորապես կրոնական ազատության մասին։ Միայն Սպահանում նրանք ունեին երեք վանք, որոնցից մեկը Հուսիսյան անունն էր կրում (Դավրիժեցի, էջ 154, 185)։

## ՍԵՖԵՎԻՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՆԱՔՆԱԿ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա) «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՏՎՅԱԼՆԵՐԸ ԻՐԱՆԱՀԱՅ՝ ԵՎ ՄՅՈՒՍ  
ՀԱՄԱՑՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Մեծ սուրգունի» ժամանակ Իրան գաղթեցված հայ բընակչությունը, ինչպես տեսանք, տեղաբաշխվեց երկրի զանազան շրջաններում, հիմնականում Սպահանում ու նրա շրջակայքում: Հիմնվեցին պարսկահայ նոր գաղթօջախներ, որոնցից, այլևայլ պատճառներով, ոչ բոլորը կանգուն մնացին:

Բռնագաղթի անմիջական արգասիքը հանդիսացավ հատկապես Նոր Զուղան, որը դարձավ խոշորագույնը իրանահայ գաղթօջախներից<sup>2</sup>: Շահ Աբբաս Ա-ն հոգ տարավ ջուղայեցիներին տեղավորելու Զայենդեռուդ գետի ափին, Սպահանի մոտ, հողաբաժին հատկացնելով իր անձնական խասսե հողերից, որոնց մի մասը ջուղայեցիներն ստացան իբրև պարգև, իսկ մյուս մասը ձեռք բերեցին դրամով<sup>3</sup>:

<sup>1</sup> Իրանաբնակ համայնքներից Դավրիժեցիներն, բնականաբար, առավել հանգամանալից տեղեկություններ է տալիս հայ համայնքի վերաբերյալ:

<sup>2</sup> Նոր Զուղայի մասին տե՛ս Հ. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., В. Байбуртян, նշվ. աշխ., Ա. Աբրահամյան, Պարսկահայ գաղթօջախը (Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, հ. Ա, 1964, հ. Բ, 1967) և այլն:

<sup>3</sup> Այդ մասին շահի ֆերմանը տե՛ս Հ. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., հ. 1, էջ 36—38:

Շուտով նշված վայրում հայերը կառուցում են Նոր Զուղան՝ Երարձրաբերձ և արքայակերպ շինուածօք, դարդարևալ և յօրինեալ ի ծաղիկս ոսկոյ և լաջվարդի և պէս պէս երանգաց ակնախտիդ տեսողացս<sup>4</sup>։

Հայաստանի տարբեր վայրերից եկածներն այստեղ ունենում են իրենց թաղամասերը (Թորոսկան, Շխշաբանի, Շամսարադ և այլն)<sup>5</sup>։

Դավրիժեցին շի հիշատակում Նոր Զուղայի բնակիչներին ստույգ թիվը, սակայն նրա հաղորդումից երևում է, որ Նոր Զուղայի հիմնումից հետո հայերի հոսք է տեղի ունեցել այնտեղ, և բնակչութունն ավելացել է։ Որոշ տվյալներով Նոր Զուղան XVII դ. 20-ական թվականներին ունեցել է 30 հազար բնակիչ<sup>6</sup>։ Հետագայում այն ընդարձակվում է։ Շարդինը 1672—1673 թթ. Նոր Զուղայի մասին գրում է, որ այն ունի 2 մաս՝ հին և նոր, որը կառուցվել է շահ Աբբաս Բ-ի ժամանակ։ Ֆրանսիացի ճանապարհորդի հաղորդմամբ այն ժամանակ Նոր Զուղան ուներ 3400—3500 ընտանիք<sup>7</sup>։

Գաղութն ուներ ինքնավարության իրավունք, ընտրում էր իր քալանթարը։ Բնակչութունը բաժանված էր առանձին խմբերի, որոնց գլխավորում էին ավագները։ Ավագ էին ընտրվում ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ հայ գործիչները, որոնք հաճախ էլ նշանակվում էին շահի կողմից<sup>8</sup>։

Գաղութի ակնառու անձնավորություններից ընտրվում էր նաև ներկայացուցիչ՝ դատական վեճերը կարգավորելու

<sup>4</sup> Դավրիժեցի, էջ 63—64։

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 451, Հ. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., հ. 1, էջ 33—34։

<sup>6</sup> Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 256, Fr. Richards, նշվ. աշխ., էջ 81, Գ. ՅՅՅՅ, նշվ. աշխ., էջ VII, հմմտ. Ջ. Հաճախյան, Նոր Զուղայի բնակչութունը սկզբից մինչև մեր օրերը («Ալիք», 1852, հուն. 16 և 17)։

<sup>7</sup> Շահ Աբբաս Բ-ի ժամանակ Նոր Զուղան հանդիսացել է շահի մոր թիվը, որից գանձվող հարկը կազմում էր 225 հազար լիվր (1750 «شماره دهم» ص ٥٢٩)։

<sup>8</sup> Դավրիժեցի, էջ 148, 186, 319, 451...

համար: Ըստ շարիաթի, զիմմիների<sup>9</sup> միջև ծագած վեճը կարող էր լուծվել մահմեդական ղազիների (դատավորներ) և կամ զիմմիների հոգևորականների միջոցով: Սակայն, ըստ երևույթին, մահմեդականներն իրենց միջամտությամբ ճնշում էին գործադրում հայ համայնքի վրա: Դրա վկայություներն է 1650 թ. շահ Աբբաս Բ-ի հրովարտակը՝ ի պատասխան հայ համայնքի խնդիրքի, որպեսզի մահմեդականները չմիջամտեն և չնեղեն նրանց դատական հարցերում: Այդ հրովարտակով հայերին թուլատրվում էր իրենց միջև եղած վեճերը հայ հոգևորականների միջոցով հարթել և կողմերից մեկը մահմեդական լինելու դեպքում միայն անպայման շարժին դիմել<sup>10</sup>:

Շահ Աբբաս Ա-ի ֆերմանի համաձայն մահմեդականների և հայերի միջև ծագած վեճերը պետք է լուծվեին հայերի օգտին<sup>11</sup>, Սակայն Դավրիժեցին վկայում է դատական վճիռ կայացնելիս հայերի նկատմամբ մահմեդականների կամայականությունների մասին, որի հավաստումն է հայերի բողոքը՝ դատի ժամանակ նրանցից պահանջվող երդման ստորացուցիչ ձևերի պարտադրման դեմ: Դրան ի պատասխան 1639 թ. տրվում է շահ Սեֆու հրովարտակը, որով մահմեդականներին կարգադրվում էր ստորացուցիչ պահանջներ չներկայացնել հայ ռայաթներին և չվիրավորել նրանց կրոնական զգացմունքները, երբ հարկ է լինում դատի ժամանակ երդում պահանջել նրանցից<sup>12</sup>:

Մահմեդականի սպանության մեջ մեղադրվող հայը դատապարտվում էր մահվան<sup>13</sup>, Ըստ շահ Աբբաս Ա-ի հրամանի, նույն պատիժը պետք է կրեր նաև հային սպանող մահմեդականը<sup>14</sup>: Սակայն հոգևոր (շարժի) դատարանը հա-

<sup>9</sup> Զիմմի բառացի՝ պարտապան. այդպես էին կոչում ոչ մահմեդականներին, որոնք պարտավոր էին շիզյա (զլխահարկ) վճարել:

<sup>10</sup> ՄՊԶ, պր. 2, վավ. 41:

<sup>11</sup> Ն. Տեր-Նովնանյանց, նշվ. աշխ., հ. 1, էջ 46, Դավրիժեցի, էջ 64—65:

<sup>12</sup> ՄՊԶ, պր. 2, վավ. 24:

<sup>13</sup> Դավրիժեցի, էջ 170:

<sup>14</sup> نصرالله فلسفی، ج ٣ ص ٢١٢-٢١٣



Դավրիժեցու հաղորդմամբ՝ «սակաւք էին ազգն Հրէից բնակեալք յԱսպահան քաղաքի, իբրև երեք հարիւր տուն. պակաս և ոչ աւելի»<sup>20</sup>: Դա նշանակում է, որ մոտավորապես 1500 հրեա էր բնակվում Սպահանում: Ըստ Քահիր Վահիդի՝ «հին Սպահանը շատ հրեաներ է ունեցել, այնպես որ նրա երկու քաղաքներից (՝)<sup>21</sup> մեկը հրեական անուն էր կրում»<sup>22</sup>:

Պետք է ենթադրել, որ Իրանում հրեաները XVII դ. կեսին փոքր թիվ չէին կազմում: Դավրիժեցին հիշատակում է մեծ թվով քաղաքներ ու գյուղեր, որտեղ բնակվել են հրեաները: Պատմիչը բերում է նաև այսպիսի թվական տվյալ. «և ամսաշափ միոյ աուրս երեք հարիւր և յիսուն այր դարձուցին յօրէնս Մահմետի»<sup>23</sup> (խոսքը պարսից իշխանութունների կողմից սպահանաբնակ հրեաների բռնի մահմեդականացման մասին է, սակայն, ըստ երևույթին, դա պետք է վերաբերեր ընդհանրապես իրանաբնակ հրեաներին): Նշանակում է՝ մոտ 10500 հրեա մահմեդականութուն էր ընդունել, որից հետո «Երրայեցիքն տկարացան առաջի Պարսից, զի կէս մասն ի նոցունց դարձան յօրէնս Պարսից»<sup>24</sup>: Ուրեմն, կարելի է ենթադրել, որ մոտ 20 հազար էր հրեաների ընդհանուր թիվը: Նույն թիվը նշում է Քահիր Վահիդը, որը, սակայն, նկատի ունի մահմեդականութուն ընդունած ընտանիքներին: Սակայն դա կկազմեր մոտ 100.000 մարդ, որ քիչ հավանական է:

Դավրիժեցու վկայությամբ հրեաներն ունեին իրենց կրոնական առաջնորդը՝ խախամը, որին ենթարկվում էին անվերապահորեն և որի մոտ կրթության էին տալիս իրենց

<sup>20</sup> Դավրիժեցի, էջ 467:

<sup>21</sup> «ازدو شهر آن» — Թերևս խոսքը թաղամասի մասին է, քանի որ Դավրիժեցին, Ֆ. Կոտովը և այլք նույնպես հաղորդում են, որ հրեաներն Սպահանում ունեին իրենց թաղամասը (Դավրիժեցի, էջ 473, «Хождение купца Федота Котова в Персию», стр. 82):

<sup>22</sup> عباستنامة، ص ۲۱۸

<sup>23</sup> Դավրիժեցի, էջ 467:

<sup>24</sup> Նույն տեղում:

երեխաներին: Նրանք ունեին նաև իրենց ժողովարանները, ուր հաճախում էին աղոթելու<sup>25</sup>: Պարսից իշխանությունները կողմից նշանակվում էին վերակացու իշխաններ՝ նրանց հետևելու համար<sup>26</sup>: Հրեաների դատավարության վերաբերյալ Դավրիժեցու տվյալներից ակնհայտ է, որ հրեայի և մահմեդականի միջև վեճը լուծվում էր դիվանբեկի միջոցով, և մահմեդականին (կամ նոր մահմեդականություն ընդունածին) սպանող հրեան պատժվում էր մահվամբ<sup>27</sup>:

Դավրիժեցու տվյալներն անբավարար են պարզելու, թե ինչպես էին լուծվում վիճելի հարցերը իրենց իսկ՝ հրեաների միջև: Ունեի՞ն արդյոք նրանք իրենց դատարանը: Պիեդրո դելա Վալեն նկարագրում է շահ Աբբաս Ա-ի օրոք (1619 թ.) տեղի ունեցած մի դեպք, երբ սպահանաբնակ հրեաների միջև վեճ է ծագում, և հարցը լուծում է շահը<sup>28</sup>: Ն. Ֆալսաֆին, որը վկայակոչում է Պիեդրո դելա Վալենի հիշյալ նկարագրությունը, միանձամանակ գրում է, որ Իրանում այլակրոնները, այդ թվում և հրեաները, ճնույնիսկ իրավունք ունեին իրենց ազգի հանցագործներին դատել ու պատժել, և Իրանի... դատավորները, բացառյալ առանձին դեպքեր, նրանց գործերին չէին միջամտում»<sup>29</sup>:

<sup>25</sup> Դավրիժեցին վկայում է հրեաների մի շարք սովորույթների մասին, որոնք խստորեն պահպանվում էին: Այսպես, նրանք, միայն իրենց տանը իրենց ձեռքով մորթած կենդանու միս էին ուտում, ընդ որում՝ կենդանուն մորթում էին անպայման մի հարվածով և հատուկ սրով, որը խախամի մոտ էր պահվում: Մահմեդականություն ընդունելուց հետո էլ նրանք ծածկարար շարունակում էին իրենց այդ սովորույթը (էջ 466—469): Մեկ այլ սովորույթի համաձայն, այրի հրուհին իրավունք ունեւր կրկին ամուսնանալ միայն այն դեպքում, եթե նրա ամուսնու մահը հավաստվում էր ականատեսների կողմից: Նույնիսկ սպանություն գործելու պահին հրեաները հաշվի էին առնում այդ ավանդույթը՝ իրենց զոհի դիակը թողնելով ի տես բուրբի (Դավրիժեցի, էջ 472—473):

<sup>26</sup> Օրինակ, 1657 թ. Ֆարահբադի հրեաների վերակացու իշխանն էր Միրզա Սադրը:

<sup>27</sup> Դավրիժեցի, էջ 475—476:

<sup>28</sup> 98 نصرالله فلسفی، ج 3، ص 78:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 68: Մոտավորապես նման իրավիճակի հանդիպում ենք այլ երկրներում: Օրինակ, միջնադարյան Գերմանիայում հրեաների՝

Հրեական համայնքը ևս սոցիալապես միատարր չէր նրանց մեջ կային արհեստավորներ, մանր ու խոշոր առևտրականներ: Դավրիժեցիին առանձնապես շեշտում է Ֆարահաբադի հրեաների մասին, որոնք «հարուստք և ընչեղք էին որք յուովք ի սոցանէ ունէին ի մէջ շուկային խանութս՝ ունէ դուքան... և ոչ թէ շափաւոր էր ինչք խանութացն, այլ յուովք»<sup>30</sup>: նրանք հիմնականում զբաղվում էին առևտրով<sup>31</sup>:

Ինչպես մեծ գաղթի ժամանակ, այնպիս էլ նրանից հետո Իրան էին գաղթեցվել նաև վրացիներ: Նրանք տեղաբաշխվել էին գլխավորապես Ֆարահաբադում, Ղազվինում, Շիրազում, ինչպես նաև Սպահանում ու նրա մոտակա գուղերում<sup>32</sup>: Վրացիների մի մասն ընդգրկվեց երկրի ղեկավար պաշտոններում, ինչպես նաև բանակում<sup>33</sup> և շփվելով ռազմաֆեոդալական դասի հետ, սկսեց ձուլվել և ընդունել մահմեդականություն<sup>34</sup>:

Վրացական համայնքի վերաբերյալ Դավրիժեցու տվյալները համեմատաբար սակավ են: Առավել սուղ տեղեկություններ է նա հաղորդում իրանաբնակ գեբրեերի<sup>35</sup> մասին: Սեֆևիդների օրոք նրանք փոքրաթիվ էին և, իբրև այլակրոն,

---

միմյանց հետ վեճի ժամանակ գործում էր հրեական դատարանը, իսկ քրիստոնյաների հետ վեճի դեպքում՝ քաղաքային կամ հոգևոր դատարանը (տե՛ս М. Вишницер, Новые исследования по истории еврейских общин в средневековой Германии („Еврейская старина“, 1909, вып. IV, стр. 296).

<sup>30</sup> Դավրիժեցի, էջ 479:

<sup>31</sup> Նույն տեղում, հմմտ. نصرالله فلسفی، ج ٣، ص ٩٨، اسکندر، منشى، ج ١، ص ٢١٧:

<sup>32</sup> Դավրիժեցի, էջ 132—135:

<sup>33</sup> Իրանում ադրբեջանական տարրի գործունեությունը կասեցնելու ուղղությամբ շահ Աբբաս Ա-ի վարած քաղաքականության հետևանքներից մեկն էր երկրի ղեկավար պաշտոններում և բանակում մեծ թվով վրացիների ընդգրկումը:

<sup>34</sup> Դավրիժեցի, էջ 133—135, հմմտ. نصرالله فلسفی، ج ٣، ص ٦٨-٦٩، اسکندر، منشى، ج ١، ص ٢١٧:

<sup>35</sup> Գեբր, զարբ, գավր կամ գավուր (նշ. «անհավատ»): Սրանք զրագաշտականներ էին, որոնք համարվում էին բնիկ իրացիներ (տե՛ս ر٢٧، ص ٤، ج ٣، ص ٢٧٠، سياحتنامہ شاردن): Գեբրեերի լեզուն շեշտակիորեն տարբերվում էր պարսկերենից (տե՛ս Զաքարիա Գանաբեցի, 6. Գ. էջ 42):

ենթարկվում էին իրանարնակ փոքրամասնությունների նը-  
կատմամբ կիրառվող ընդհանուր քաղաքականությանը: Շահ  
Աբբաս Ա-ն գերբերին Նզդից, Քերմանից, Շիրազից և այլ  
վայրերից տեղափոխեց Սպահան, ներգրավելով մայրաքա-  
ղաքի շինարարական աշխատանքներում<sup>36</sup>: Նրանք բնակվում  
էին առանձին արվարձանում, որ կոչվում էր Գերբաբադ  
(Դավրիժեցու մոտ՝ Գավրապատ)<sup>37</sup>:

Բ) ՍԵՑԵՎԻՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ  
ԱՅԼԱԴԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Դավրիժեցու երկը պատկերացում է տալիս այլադավան  
համայնքների նկատմամբ XVII դ. առաջին կեսին Սեֆևի-  
ների, մասնավորապես շահ Աբբաս Ա-ի վարած քաղաքա-  
կանության շատ կողմերի մասին:

«Պատմությունը» գալիս է հավաստելու, որ, ելնելով  
երկրի տնտեսական ու քաղաքական շահերից, Իրանը հա-  
մայնքների տարբեր շերտերի նկատմամբ այլ նպատակներ  
էր հետապնդում:

Այսպես, ձգտելով իր շահերի համար օգտագործել Զու-  
ղայի վաճառականներին ու նրանց կապիտալը, շահ Աբբաս  
Ա-ն նոր Զուղայի գաղութի կազմավորման առաջին իսկ  
օրերից ըստ ամենայնի օժանդակում էր նրանց, ստեղծելով  
բարենպաստ պայմաններ նրանց առևտրական գործունեու-  
թյան համար, տալով մի շարք արտոնություններ, առևտրի  
ազատություն, անձի և դուլքի ապահովություն և այլն:

Վերևում արդեն ակնարկել ենք այն մասին, որ հայ  
խողաները (Սաֆար, Նաղար, Մելիք, Սուլթանում, Սարֆրազ

<sup>36</sup> Դավրիժեցի, էջ 457:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 450, 460: Պ. Ռիտտիսի հաղորդմամբ գերբերը  
XVIII դ. վերջին տեղափոխվեցին Հնդկաստան (Ս. РИТТНХ, նշվ. աշխ.,  
էջ 177—178):

և այլն<sup>38</sup>) դառնում են շահի առաջին հովանավորյալները, նրա մերձավորները, պալատի ցանկալի հյուրերը: «Ինքն շահն կոչէր զնոսա ի տուն և ի սեղան իւր, և պատուէր ընդ մեծամեծս իւր,—գրում է Դավրիժեցին,—այլ և պատուիրեալ էր իւրոց նախարարաց նոյնպէս առնել»<sup>39</sup>: Սեֆյան կառավարական շրջանների և անձամբ շահի հետ Ջուղայի վաճառականութեան սերտ կապի մասին վկայում են պատմիչի բերած բազմաթիւ փաստեր: «Յոյժ ընդունելիք էին խօջայ Սաֆարս և եղբայրն իւր խօջայ Նազարն առաջի Պարսից թագաւորին և իշխանացն նորա...»<sup>40</sup>: Նման հովանավորութիւնը հնարավորութիւն է տալիս Ջուղայի վաճառականներին ոչ միայն աշխուժացնելու և ընդլայնելու իրենց առևտրական գործունեութիւնը, այլև բարձր դիրք գրավելու պարսից արքունիքում: Ջուղայեցիների ձեռքում կենտրոնացած էր խոշոր կապիտալ: Շարդենի վկայութեամբ շահ Աբբաս Ա-ի և շահ Սեֆու օրոք հայ վաճառականների մեջ քիչ չէին միլիոնատերերը<sup>41</sup>: Ժամանակի աղբյուրների միաձայն վկայութեամբ հայ վաճառականների միջոցով էր կատարվում Իրանի մետաքսի ողջ առևտուրը:

Մեծ էր նոր Ջուղայի վաճառականների դերը այլ երկրներին, այդ թվում և Ռուսաստանի հետ Իրանի կապերի ընդլայնման գործում<sup>42</sup>: Հայ վաճառականները մասնակցում էին

<sup>38</sup> Հիմնվելով Ջուղայի Ամենափրկիչ վանքում եղած փաստաթղթերի, ինչպես նաև Դավրիժեցու տվյալների վրա, Հ. Տեր-Հովհանյանը մանրամասն տեղեկութիւններ է տալիս Ջուղայի մոտ երեք տասնյակ խոջայական տների վերաբերյալ (Հ. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., հ. 1, էջ 86—199):

<sup>39</sup> Դավրիժեցի, էջ 64:

<sup>40</sup> Նոյն տեղում, էջ 186:

<sup>41</sup> سياحتنامه شاردن، ج ۳، ص ۲۲۱

<sup>42</sup> 1660 թ. շուղայեցի հայ վաճառականների մի ընկերութեան կողմից (խոջա Զաքարիա Սարճատյանի միջոցով) Ալեքսեյ Միխայլովիչ ցարին ընծայած ակնազարդ գահը, որը «զուտ ոսկիից՝ ուներ իր վրա 876 մեծ և փոքր ադամանդ, ալ 1239 հակինթ և ընտելուզված էր 3 կարգ մարգարիտներով» (Հ. Առաքելյան, նշվ. հոդվ. («Գեղունիք», 1904, թիւ 1—10, էջ 18)). ներկայումս պահպանվում է Կրեմլի զինապալատում:

Իրանի դիվանագիտական միսիաներին (հաճախ որպես դեսպաններ)<sup>43</sup>, կաղմակերպում օտարերկրյա դեսպանությունների ընդունելություններ: Ականատես լինելով Իրանի հետ մետաքսի առևտրի պայմանագիր կնքելու նպատակով 1637 թ. Իրան ժամանած Հոլլանդացի դեսպանությանը խոջաներ նազարի և Սաֆարի՝ նոր Զուղայում ցույց տված ընդունելությանը, դեսպանության անդամ, խորհրդական Ադամ Օլեարիուսը վկայում է, որ նման ընդունելություն ցույց չէր տրվել երբեք, նույնիսկ շահի կողմից<sup>44</sup>:

Դավրիժեցին վկայում է, որ Զուղայի խոջայությունն ակտիվորեն միջամտում էր ոչ միայն հայ համայնքի, այլև բուն Հայաստանի գործերին: Քիչ չեն փաստերը, երբ էջմիածնի հոգևորականությունը Զուղայի խոջայության օժանդակությամբ լուծել է հայ իրականության առջև ծագացած այս կամ այն խնդիրը: Այսպես, ջուղայեցիների և հատկապես խոջա նազարի ջանքերի շնորհիվ շահ Սեֆու օրոք էջմիածինն ազատվում է տարեկան 100 թուման պարտավորությունից (մուղադա), որի մուծումը 1617 թ. պարտադրվել էր Մելքիսեթ կաթողիկոսին՝ շահ Աբբաս Ա-ի կողմից<sup>45</sup>:

Խոջաների միջամտությամբ է լուծվում միսիոներների կողմից Ս. Հովհիսիմեի առևանգված մասունքները հայերին վերադարձնելու հարցը<sup>46</sup>: Հատկանշական է, որ շահի հետ բանակցություններ վարելիս խոջաները փաստորեն սպառնում էին շահին, որ եթե իրենց պահանջը չբավարարվի, ապա նվրոպայում գտնվող ջուղայեցի վաճառականներն այլևս չեն վերադառնա Իրան<sup>47</sup>: Դա ծանրակշիռ պայման էր, որն

<sup>43</sup> Տե՛ս, օրինակ՝ Ղ. Ալիշան, Սիսական, էջ 443—444, П. РИТТИХ, նշվ. աշխ., էջ 208:

<sup>44</sup> А. Олеарий, նշվ. աշխ., էջ 661—663:

<sup>45</sup> Տե՛ս շահ Սեֆու 1629 թ. հրովարտակը էջմիածինը տարեկան 100 թուման փոխքաշի պարտավորությունից ազատելու մասին (ՄՊԶ, պր. 2, վավ. 19, հմմտ. ՎՋամբոս, էջ 104, 211):

<sup>46</sup> Դավրիժեցի, էջ 186—187, ՄՊԶ, պր. 2, էջ 90, ՎՋամբոս, էջ 210:

<sup>47</sup> Դավրիժեցի, էջ 191:

ամենից շատ էր ստիպում իրանի կառավարութեանը հաշվի  
նստել ջուղայեցիների հետ:

Ջուղայեցի վաճառականները հաճախ էին թելադրում  
իրենց կամքը նաև այս կամ այն կաթողիկոսին նշա-  
նակելու կամ փոխելու հարցում<sup>48</sup>:

Այս ամենը գալիս է հավաստելու խոջայութեան ակնա-  
ռու դերը, որի համար պարարտ հող էր ստեղծում նրանց  
նկատմամբ Սեֆեհիների վարած հովանավորող քաղաքա-  
կանութունը:

\* \* \*

Սեֆեհիները կարևոր նշանակություն էին տալիս նաև  
հայ հոգևորականութեանն իրենց կողմը գրավելու խնդրին,  
նպատակ ունենալով օգտագործել նրա կապերը քրիստոնեա-  
կան աշխարհի հետ, ինչպես նաև նրա ազդեցությունն ինչ-  
պես իրանի, այնպես էլ Հայաստանի հայ բնակչության վրա:  
Եթե դրան ավելացնենք և այն, որ հայ հոգևորականները  
սերտ կապերի մեջ էին Ջուղայի վաճառականների հետ,  
ապա պարզ կլինեն այն հիմքերը, որոնք թելադրում էին  
իրանի կառավարութեանը հանդես գալու զգուշ և հովանա-  
վորող քաղաքականութեամբ նաև հայ հոգևորականության  
նկատմամբ: Այդ քաղաքականության վկայությունն են  
սեֆեհյան շահերի հրովարտակները՝ էջմիածնի միաբաններին  
և կաթողիկոսական նվիրակներին երկրի բոլոր նահանգնե-  
րում ազատ երթևեկության իրավունք շնորհելու, վանքերից  
սահմանված չափից ավելի հարկ չգանձելու, վանքապատկան  
հողերի սեփականատիրական իրավունքների հաստատման ու  
վերահաստատման մասին և այլն<sup>49</sup>: «Պատմությունը» ևս  
ընդգրկում է փաստեր, որոնք խոսում են իշխանութուն-

<sup>48</sup> Օրինակ, ջուղայեցիները շքեղունեցին Սահակ կաթողիկոսին, քանի  
որ համակրում էին Դավթին (Դավրիժեցի, էջ 232):

<sup>49</sup> Տե՛ս ՄՊԷ, պր. 2, վավ. 6, 11, 14, 26, 27, 28, 38:

ների կողմից հոգևորականության նկատմամբ ցուցաբերված բարյացակամ վերաբերմունքի մասին:

Սակայն, դրա հետ մեկտեղ, Դավրիժեցու տեղեկությունները բացահայտում են Սեֆևիների քաղաքականության մի շարք այլ գծեր: Չնայած հրովարտականերով շնորհված արտոնություններին, հայ եկեղեցականների գործունեությունը ենթարկվում էր խիստ հսկողության: Դավրիժեցու տեղեկությունները վկայում են, օրինակ, թե հաճախ որպիսի դժվարությունների հետ էր կապվում շահի ռաղամի ձեռքբերումը, որն անհրաժեշտ էր կաթողիկոսության իրավունքի կամ հոգևոր այլ պաշտոններում հաստատվելու համար: Յուրաքանչյուր մեծ թե փոքր ձեռնարկի համար կառավարության թույլտվություն էր անհրաժեշտ: Իսկ վերջինս հաճախ կախված էր լինում առանձին խաների դիրքից, որը միշտ չէ, որ համահնչուն էր կենտրոնական իշխանության վարած քաղաքական գծին: Եթե Երևանի Ամիր-Գունա և Թահմազդդուլի խաները մեղմությամբ էին վարվում՝ հայ հոգևորականների հետ<sup>50</sup>, ապա Մուհամմադդուլի-խանն աչքի էր ընկնում վերջիններիս նկատմամբ ընդգծված անբարյացակամությամբ:

Սեֆյան իշխանություններն իրենց հովանավորությունն իսկ ջանում էին ծառայեցնել արքունի գանձարանի հարբստացմանը: Օգտագործելով պայքարը կաթողիկոսական աթոռի և հոգևոր պաշտոնների համար, նրանք հանդես էին գալիս պաշտոնների վաճառքով: «Արծաթով և կաշառք», «ղաբալայի և հարկի ի Պարսից թագաւորէն առնուին զիշխանութիւն կաթողիկոսութեան և զսուրբ Աթոռն էջմիածին» — գրում է Դավրիժեցին<sup>51</sup>: Իշխանությունները հովանավորում էին այն հոգևորականներին, որոնց կաշառքն ավելի մեծ էր: Պատմիչը նկատում է. «Մեկքիսէթն առաւել ձեռնբաց և բազմատուր էր դրամօք և այլ իրօք՝ իշխանաց և զինուորաց...», վասն որոյ

<sup>50</sup> Դավրիժեցի, էջ 277, 294, 315:

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 289—290, հմմտ. «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ժ, էջ 49:

խանն և այլք ամենեքեան զՄելքիսէթի կաթողիկոսութիւնն կամէին, և ոչ զԴաւթին<sup>52</sup>: Մելքիսեթն ի վերջո կաթողիկոսութեան իրավունք ստացավ՝ պարտավորվելով տարեկան 100 թուման վճարել արքունի գանձարանին<sup>53</sup>: Դա փաստորեն մի լուծ էր, որ իշխանութեան կողմից դրվեց հայ եկեղեցու վրա: Մելքիսեթ կաթողիկոսն ի վիճակի շեղավ վճարել այդ գումարը, որը հետագայում բարդվեց էջմիածնի կաթողիկոսական աթոռի վրա և տարեցտարի ավելանալով, հասավ 600 թումանի: Դավրիժեցու երկում կարելի է գտնել մանրամասնութիւններ այն ժանր հետեանքներին մասին, որ ունեցավ այդ պարտավորութիւնը և՛ հայ եկեղեցու, և՛ ժողովրդի համար: « Եվ այս եղև բռն ծանր, — գրում է պատմիչը, — և լուծ տաժանելի և անուր անխզելի ի վերայ սրբոյ Աթոռոյն էջմիածնի ի զուր և ի տարապարտուց և ամենայն

<sup>52</sup> Դավրիժեցի, էջ 215—216:

<sup>53</sup> Նույն տեղում, էջ 221, ՄՊԶ, պր. 2, վավ. 12: Եւս Աբրահամ Մելքիսեթին տուգանել էր 300 թուման (նրա երեք հանցանքի համար, որոնցից հիմնականը շահի հրամանին շանսալն էր (տե՛ս Դավրիժեցի, էջ 218): Երկար դեգերումներից հետո Մելքիսեթը պարտավորութիւն է գրում՝ 300 թումանը վճարել երեք տարվա ընթացքում: Դրանով նա ազատ է արձակվում և շահից ստանում օրինական կաթողիկոսութեան իրավունք: Սակայն, ինչպես նշում է Դավրիժեցին, «ի բուն մատեան արքունական դիւանի ոչ ըստ օրինակին էր գրեալ՝ որպէս էր ձեռագիր կաթողիկոսին, թէ երեք հարիւր թուման տամ, և ոչ այլ ինչ աւելի. այլ գրեալ էր շահն թէ, Մելքիսէթ կաթողիկոսն խնդրեաց զէջմիածնի կաթողիկոսութիւնն, և խոստացաւ ի տարին հարիւր թուման մուղազայ տալ ի դիւան թագաւորին, վասն որոյ և մեք շնորհեցաք նմա զիշխանութիւն կաթողիկոսութեան, զի նա վարեցէ՛ս (էջ 221): Իրոք, այդ է վկայում շահ Աբրահամ Ա-ի մեզ հասած 1617 թ. հրովարտակը, որով հաստատվում են Մելքիսեթ կաթողիկոսի կաթողիկոսական իրավունքները, միաժամանակ շեշտելով, որ նա հանձն է առել ամեն տարի 100 թուման որպէս փիշքաշ կանոնավոր կերպով վճարել պետական գանձարանին (տե՛ս ՄՊԶ, պր. 2, վավ. 12):

Վերահիշյալ փոփոխութեան պատճառով այդ տուգանքի շափը շփոթութիւն է առաջացրել ուսումնասիրողների մոտ: Օրինակ, Մ. Օրմանյանն այդ պարագը համարում է 300 թուման, վերապահութեամբ նշելով, թե՛ ոմանք ասում են՝ 100 թուման 3 տարվա համար: (Տե՛ս Մ. Օրմանյան, նշվ. աշխ., մասն Բ, էջ 2338):

ազին շահակայ սուգ անմխիթար և տրամուծիւն անփարատելի  
և կեղեցականաց և աշխարհականաց<sup>54</sup>: Կառավարութեան  
ներկայացուցիչները դաժան միջոցներ էին գործադրում զան-  
ձեկու համար հիշյալ գումարը ինչպես հոգևորականներից,  
այնպես էլ աշխատավորներից: Մեկբիսեթի կողմից նույնիսկ  
դրավ էին դրվել էշմիածնի սրբութունները, ի հույս՝ դուրս  
դալու ստեղծված դրութունից<sup>55</sup>: Ի վերջո, ծանր վիճակից  
ելք շղտնելով, Մեկբիսեթ կաթողիկոսը դիմեց փախուստի,  
ապաստանելով սկզբում Թուրքիայում, ապա Լեհաստանում:  
Իշխանութունների հետապնդումներն ստիպում են փախուստ  
տալ (Թուրքիա) նաև Սահակ կաթողիկոսին<sup>56</sup>:

«Պատմութեան» մեջ քիչ չեն փաստերը հոգևորականնե-  
րին տուգանքի ենթարկելու մասին: «...նվ զՄովսէս վար-  
դապետն՝ և զՊօղոս վարդապետն՝ զսոսա երկոսեան կալիալ  
(շահ Աբբասը—լ. Դ.) արար ի կապանս, և պահանջեալ տու-  
գանս ի նոցունց էառ երեք հարիւր թուման...»<sup>57</sup>: Նման վկա-  
յութուններով հավաստվում է, որ տուգանքի գանձումը, որը  
լայնորեն գործադրվում էր իշխանութունների կողմից (իբ-  
րև արդյունավիտ միջոց և օգտակար նաև արքունի գանձա-  
րանի համար), մեծ շահով տարածվում էր նաև հոգևորա-  
կանութեան վրա:

Կաթողիկոսական երկպառակութունների գաղչ մթնո-  
լորտում ներհակ ուժերը հաճախ միմյանց հալածանքի էին  
ենթարկում, իշխանութեան անունից «հիմնավորելով» իրենց  
վարքագիծը: Այս առումով՝ հենց իշխանութունների կրոնա-  
հալած քաղաքականութեան ապացույց պետք է դիտել այն  
փաստը, որ Սահակ կաթողիկոսն իր համախոհներով նպա-  
տակ ունենալով ասպարեզից հեռացնել Պողոս վարդապե-  
տին, բազում մեքենայութուններից հետո ի վերջո նրան

<sup>54</sup> Դավրիժեցի, էջ 221—222:

<sup>55</sup> Նույն տեղում, էջ 222—228:

<sup>56</sup> Նույն տեղում, էջ 228—237:

<sup>57</sup> Նույն տեղում, էջ 217—218, տե՛ս նաև էջ 169—170, 283, 302, 362—363...

սպանունում է՝ «թէ այսուհետև քարոզես՝ լինիցիս թշնամի թագաւորին, և մահու և սպանման պարտական»<sup>58</sup>: Այսպիսի սպանունալիքը շէր կարող երկյուղ շօնել հետապնդվող վարդապետի և նրա բարեկամների մեջ, որոնցից «ոչ ոք իշխէր օգնել վարդապետին»: Հետևանքը եղավ այն, որ Պողոսը գրավոր հրաժարական տվեց և իր կյանքի մնացորդն անցկացրեց անապատում:

Հոգևորականներն անմասն չեն մնացել և խոշտանգումներից, որոնց միջոցով իշխանությունները նրանց պարտադրել են իրենց կամքը: Դավրիժեցիին այդ մասին շատ դժուրվազներ է պատկերել, այդ թվում այն հալածանքն ու խոշտանգումները, որոնց ենթարկվել է նույն Մելքիսեթ կաթողիկոսը՝ անհնազանդութեան պատճառով. «Հրամայեալ է քեզ թահմազդուլի. զի զՄելքիսէթ կաթողիկոսն կալեալ տանջանօք շարշարեսցես, և զինքեան իսկ զմարմնոյ զմիսն կտրեալ ինքեան ուտեցուցես»<sup>59</sup>: Արքայական այս հրամանը ճշտութեամբ ի կատար է ածվում<sup>60</sup>:

Այս բոլորը փաստեր են, որոնք խոսում են հայ հոգեվորականութեան նկատմամբ սեֆյան իշխանությունների վարած հովանավորող քաղաքականութեան հակառակ կողմի մասին:

\* \* \*

Այլ բնույթ էր կրում Սեֆեհների քաղաքականութունը իրանաբնակ այլադավան համայնքների աշխատավորական զանգվածների նկատմամբ: Եթե նկատի ունենանք Իրանի հասարակական ստորին շերտերի տնտեսական ծանր կացութիւնն ընդհանրապես, ապա առավել հասկանալի կլինի այլազգի համայնքների լայն զանգվածների վիճակը, որոնք ոչ միայն կրում էին ֆեոդալական շահագործման լուծը, այլ նաև ենթարկվում կրոնական ու ազգային ճնշման:

Նշենք, սակայն, որ շահ Աբբաս Ա-ն արել է շատ բան իր

<sup>58</sup> Նույն տեղում, էջ 283:

<sup>59</sup> Նույն տեղում, էջ 207:

<sup>60</sup> Նույն տեղում, էջ 207—208:

կողմից տարագրվածներին ըստ ամենայնի սիրաշահելու, նրանց ետդարձի ճամփան փակելու համար: Անհրաժեշտ էին այնպիսի միջոցառումներ, որոնց շնորհիվ եկվորները հաշտվեին նոր ապրելակերպի հետ: Դավրիժեցիին թվարկում է այդ միջոցառումները, մասնավորապես շեշտելով, որ շահը գաղթականների մի մասին ապահովեց բնակարաններով, այդ նպատակով նույնիսկ տեղահան անելով մահմեդականներին, հոգ տարավ նրանց հարկերով շտանրաբեռնելու և այն մասին, որ տեղի բնակչությունը, ինչպես նաև կառավարող շրջանները նեղություն չպատճառեն նրանց<sup>61</sup>: Այստեղ Դավրիժեցու խոսքը վերաբերում է Սպահանի և նրա շրջակայքի հայ գաղթականներին, որոնց մասին, այսուհանդերձ, պատմիչը թողել է նաև այսպիսի տողեր. «Եւ ազգն Հայոց՝ որք եկին յԱսպահան, զատ ի Զուղայեցւոց և յԵրեւանցւոց ամենեքեան չբաւորեցան... զի զոր ինչ ունէին վաճառեցին և կերան»<sup>62</sup>: Ուրեմն, բարենպաստ պայմանները համատարած և տեական չեն եղել. ավելին, տարագրվածների մեծ մասին ուղեկցել է տնտեսական ծանր կացությունը: Այդ մասին վկայում է նաև Գուվեան, ըստ որի գաղթականներն ապրում էին աղքատ վիճակում և նույնիսկ դիմում էին մուրացկանություն<sup>63</sup>:

Իրրև հետևանք՝ տարագրյալների հիմնած շատ բնակավայրեր շուտով ամայացան: Այսպես, իր կազմավորումից երկար շանցած տարրալուծվեց Մազանդարանի մեծ գաղթօջախը, որտեղ հայերը, վրացիները և այլք հազարներով մահանում էին հիվանդություններից ու սովից<sup>64</sup>: Դավրիժեցու

<sup>61</sup> Նույն տեղում, էջ 64—65: Այդ մասին շահի ֆերմանի թարգմանությունը տալիս է Հ. Տեր-Ղոզհանյանցը (նշվ. աշխ., հ. 1, էջ 46—47):

<sup>62</sup> Դավրիժեցի, էջ 148—149:

<sup>63</sup> نصرالله فلسفی، ج ۳، ص ۲۰۳

<sup>64</sup> 1606—1609 թթ. մուլեզնած սովը մեծ զոհեր խլեց և Իրան հաստատված գաղթականությունից (տե՛ս Դավրիժեցի, էջ 88—92, հմմտ. «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 185, 239, 246, հ. II, էջ 283, 412 և այլն):

արտահայտութեամբ՝ նրանք «ոչ մնացին և ոչ աճեցին, այլ օր յաւուր պակասեալ և վատնեալ սպառեցան, վասն դաժան և մգոահոտ և վնասակաւ օդոյն, որում ո՛չ էին ընտել»<sup>65</sup>: Ըստ Դավրիժեցու՝ Մազանդարան գաղթեցված տաս հազար ընտանիքից 1659 թ. մնացել էր ընդամենը 400-ը<sup>66</sup>: Հակառակ տեղեկութիւն է տալիս Պիեդրո դելա Վալեն, որի հաղորդմամբ այդ շրջանում բնակչութիւնը գաղթից հետո աճեց և հասավ մի քանի հազար ընտանիքի<sup>67</sup>: Սակայն այս տեղեկութիւնը չի հաստատուում, և Դավրիժեցու հաղորդման հավաստիութիւնը կասկած չի հարուցում, քանի որ նույն փաստի մասին հիշատակում են նաև Շարդենը, Տավերնյեն և այլք<sup>68</sup>:

Դավրիժեցին հաղորդում է, որ Ֆարահաբադի անբարեկապատ կլիման և այլևայլ դժվարութիւնները վրացիներին ևս մեծ քանակութեամբ զոհեր խլեցին: Խոսելով Կախեթից տարագրված վրացիների մասին, որոնց սկզբում նույնպես «հտուն... զտեղիս տանց և այգեստանաց՝ և անդաստանաց»<sup>69</sup>, պատմիչը վկայում է, որ չկարողանալով ընտելանալ Իրանի ինչպես կլիմային, այնպես էլ «կենցաղավարութեանը», նրանք «սկսան կոտորիլ և մեռանիլ. և ի սակաւ ժամանակս այնքան կոտորեալ մեռան, հազիվ թէ ի տասնէն մէկն մնաց»<sup>70</sup>: Իսկ մնացյալները մեծ դժվարութիւններ կրելուց հետո «եղեն աղքատք և չքաւորք»: Նյութական ծայրաստիճան սուղ պայմաններն ստիպում են նրանց բողոք բարձրացնել, որին ի պատասխան կրոնափոխութեան վերաբերյալ շահի

<sup>65</sup> Դավրիժեցի, էջ 456:

<sup>66</sup> Նույն տեղում:

<sup>67</sup> نصرالله فلسفی، ج ۳، ص ۲۱۱

<sup>68</sup> Ծարդենի հաղորդմամբ, سياحتنامه شاردن، ج ۴، ص ۲۶

Մազանդարան գաղթեցված 30 հազար հայ և վրացի ընտանիքներից 40 տարի անց մնացել էր միայն 400 ընտանիք), سفرنامه تاورنیه، ص ۱۱۶

P. Sykes, նշվ. աշխ., էջ 181, Մ. Թադիադյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 175, Н. Пигулевская [и др.], նշվ. աշխ., էջ 277:

<sup>69</sup> Դավրիժեցի, էջ 133:

<sup>70</sup> Նույն տեղում:

առաջարկի ընդունումը նրանց կողմից դարձյալ չի փրկում դրուժյունը<sup>71</sup>։

Եիրազում և Ասուփաս կոչված վայրում հաստատված վրացիները լեւ սպառեցան պէս պէս կերպիւ, և մնացեալքն ամենեքեան միահաղոյն դարձան յանօրէն յօրէնսն Մահմե-տի»<sup>72</sup>։ Նման պայմաններում, բնականաբար, հաճախակի էին գաղթականների փախուստի փորձերը հայրենիք կամ այլ վայրեր<sup>73</sup>, որը ստիպում էր սեֆյան իշխանութիւններին, երկրի որոշ շրջաններում խստագույն հսկողութիւն սահմանելու և արգելելու գաղթականների տեղափոխութիւնն այլ վայր։ Այսպես, Ֆարահարդից բնակիչները հեռանալ կարող էին միայն քալանթարի հատուկ թույլտվութիւնը ներկայացնելու դեպքում, իսկ թույլտվութիւնը ենթադրում էր անպայման վերադարձ, քանի որ Քրաղաքապետն նախ առնու ի գնացողէն փոխանակ անձին նորա զայլ ոք յերաշխի, և ապա տայ նմա թուղթ...»<sup>74</sup>։ Նույնպիսի արգելք էր սահմանված Սպահանում<sup>75</sup>, նման միջոցառումների կարիքը, ըստ երևույթին, շարունակ եղել է մեծ գաղթի ժամանակից ի վեր, որից կես դար հետո էլ Դավրիժեցին արձանագրել է, որ հայ դաշտականները ռհեծեն, յոգուց հանեն, հաշին և մաշին, դի թերևս դերժցին յաշխարհէն Պարսից՝ կամ յայտնի և կամ ի ծածուկ գնալ յաշխարհն Հայոց՝ և ո՛չ կարեն։ Քանզի ո՛չ տան թոյլ Պարսիկքն ելանել յերկրէն իւրեանց...<sup>76</sup>։

71 Նույն տեղում։ Այդ մասին տե՛ս ստորև։

72 Նույն տեղում, էջ 135։

73 XVII դ. 40-ական թվականներին Հին Զուղա էին վերադարձել մեծ թվով գաղթականներ (տե՛ս С. Тер-Аветисян, նշվ. աշխ., էջ 80)։

74 Դավրիժեցի, էջ 457։

75 Նույն տեղում, էջ 149։

76 Նույն տեղում, էջ 70։

Նշենք, որ գաղթից տարիներ անց անտիսական ու քաղաքական հանգամանքների թելադրանքով Իրանն ստիպված էր Արարատյան երկրի ամալացած շրջանները կրկին կյանքի կոչելու նպատակով վերաբնակեցնել մեծ թվով գաղթականների (Հ. Ժամկոչյան [և այլք], Հայ ժողովրդի պատմութիւն, Երևան, 1975, էջ 636)։ Սակայն, ըստ երևույթին, Իրանի որոշակի շրջաններում ու քաղաքներում, որտեղից գաղթականների վերադարձը

Դրա հետ մեկտեղ, վարելով ձուլման քաղաքականություն, Իրանի կառավարող շրջանները և շիա բարձրաստիճան հոգևորականությունը ձգտում էին այլակրոն փոքրամասնություններին մահմեդականություն պարտադրել<sup>77</sup>։

Դավրիժեցու երկն այդ քաղաքականության պերճախոս վկայությունն է, որտեղ հանգամանորեն պատկերված են իրանաբնակ փոքր ժողովուրդների կրոնական հալածանքը և նրանց դիմադրությունն ընդդեմ այդ քաղաքականության։

Պատահական չէ, որ ձուլման քաղաքականությունն իրականացնելու ամենատարածված եղանակը կրոնափոխությունն էր։ Հայտնի է, որ իսլամը և շարիաթի օրենքները մեծ դեր են խաղացել Արևելքի երկրների սոցիալ-տնտեսական կյանքում։ Տ. էնգելսի բնորոշմամբ՝ իսլամը «պատմական մեծ շրջադարձ» է եղել այն երկրների համար, որտեղ նա հանդիսացել է տիրապետող գաղափարախոսություն<sup>78</sup>։

Սեֆևիների օրոք շիիզմը տիրող դասի ձեռքում դենք դարձավ՝ միավորելու Իրանի տարացեղ շրջանները մի ամբողջության մեջ, ի հակակշիռ սուննիզմի, որի նկատմամբ ոչ պակաս մոլեռանդ թշնամանք գոյություն ուներ, քան՝ քրիստոնեություն։

Ճիշտ է, շահ Աբբաս Ա-ի թագավորության օրոք կրոնական մոլեռանդությունն Իրանում որոշ չափով քողարկված էր և ձեռք էր բերել նոր երանգներ։ Եթե նախքան այդ Իրանի շահնշահների կրոնական անհանդուրժողականությունը կարող էր առիթ տալ այնպիսի միջադեպերի, որպիսին, օրինակ, նկարագրում է Քերզոնը<sup>79</sup>, ապա շահ Աբբաս Ա-ն, ելնելով

---

նպատակահարմար չի դիտվել, ընդհակառակը, մշտապես արգելք է սահմանվել։

<sup>77</sup> Տե՛ս Հ. Դ. Փափազյան, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը («Բանբեր Մատենադարանի», 1956, №3)։

<sup>78</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XIV, стр. 656.

<sup>79</sup> Քերզոնի հաղորդման համաձայն, երբ 1561 թ. Անտոնի Զենկինսոնն Իվան Ահեղի և Անզլիայի թագուհի էլիզաբեթի կողմից ներկայացավ շահ Քահմասպին և հանձնեց նրանց բարեկամական նամակները, շահը պատասխանեց. «...մենք անհավատների հետ բարեկամության կարիք չու-

իր քաղաքական ու տնտեսական շահերից, ոչ միայն զիջումներ էր անում քրիստոնյաներին, այլև պատրաստ էր նրանց համողել, որ ինքը «քրիստոնեասեր» է: Այս կերպ, ավանդական կրոնական անհանդուրժողականութունը զուգակցվում էր նրան տրամագծորեն հակառակ քաղաքականության հետ: Իրա հետևանքով, ինչպես նաև որոշ աղբյուրների սուբյեկտիվ հաղորդումների պատճառով պատմական գրականության մեջ շահ Աբբաս Ա-ի՝ քրիստոնյաների նկատմամբ վարած կրոնական քաղաքականութունը, նրա դրդապատճառներն ու հետևանքները տարբեր գնահատականների են արժանացել:

Իսբանդար Մունշին, խոսելով «աստծո ստվեր», «նորին սրբութուն» շահ Աբբաս Ա-ի կողմից քրիստոնյաներին բռնի հավատափոխության ենթարկելու մասին, այն արձանագրում է որպես «բարի գործ»՝ կատարված «արքայի աշխարհարար ձայնի» թելադրանքով, հօգուտ մահմեդականացվող քրիստոնյաների<sup>80</sup>: Նասրուլլա Ֆալսաֆին շահ Աբբաս Ա-ի կրոնական հանդուրժողականության և «քրիստոնեասիրության» հիմքում դնում է նրա մեծահոգութունն ու անձնական բարեմասնությունները<sup>81</sup>: Ըստ Մուհամմադ Փարանգի՝ «շահ Աբբասը ոչ միայն Իրանի շահնշահն էր, այլև ողջ աշխարհի հանճարը և երկրագնդի բոլոր քրիստոնյաների լուսատուն ու աչքը»<sup>82</sup>: Հ. Տեր-Հովհանյանցի կարծիքով քրիստոնյաների և հատկապես հայերի նկատմամբ շահ Աբբաս Ա-ի բռնութունները «մեծամեծների» դրդմամբ էին կատարվում<sup>83</sup>: Ա. Ալպոյաճ-

նենք: Եվ այդ «անհավատին» պալատից դուրս տարան ու նրա ոտնահետքերը «մաքրելու» համար մոխիր ցանեցին ճառագարհին (տե՛ս

۷۷ ص ۳، ج 'فلسفی):

<sup>80</sup> اسکندر منشی، ج ۲، ص ۹۶۰

<sup>81</sup> Ն. Ֆալսաֆին միաժամանակ նշում է, որ շահ Աբբասի սիրալիրութունը քրիստոնյաների նկատմամբ բացի նրա պայծառատեսութունից և ազատամտութունից, ուներ նաև քաղաքական պատճառ (تصـیر الله)

<sup>82</sup> (فلسفی، ج ۳، ص ۷۷):

<sup>83</sup> محمد پرنک، ص ۲۰۸

<sup>83</sup> Հ. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., հ. 1, էջ 76:

յանը նրա կատարած կրոնական հալածանքի մասին ասում է, որ դա միայն փորձ էր, որը «ձախողեցաւ, և Շահը... շուտով դադրեցուց կրօնական հալածանքը»<sup>84</sup>։ Շատ հեղինակներ, ի տարբերութիւն այլոց (Պիեդրո դելա Վալե), շահ Աբբաս Ա-ի համար խորթ են համարել կրոնական մոլեռանդութիւնը<sup>85</sup>։

Դավրիժօցու «Պատմութիւնն» իր ընդգրկած փաստերով և անաչառութեամբ առավել հաստատուն խոսք է ասում տարակարծութիւններէ տեղիք տված սուլէն հարցի վերաբերյալ։

Այս պարագան անհրաժեշտութիւն է ստեղծում առանձին անդրադառնալու շահ Աբբաս Ա-ի կրոնական քաղաքականութեան հարցին։

Ինչպես ասվեց, շահ Աբբաս Ա-ից մեծ ջանքեր պահանջվեցին գաղթականութեան ետդարձն արգելելու համար։ Սակայն արգելելու ամենամեծ միջոցը հմուտ պետական զործիչը տեսնում էր քրիստոնյաներին նաև սիրաշահելու մեջ։ Նրա «քրիստոնեասիրական» խոշոր քայլերից էր եկեղեցիներ կառուցելու թույլտվութիւնը։

Դավրիժեցին այս փաստը դիտում է իբրև հայերին Իրանի հետ կապող գլխավոր օղակներից մեկը։ Եկեղեցիներ հիմնվեցին «յամենայն տեղիս ի Զուլայ և ի գեղօրայս... մեծանիստ և բարձրաշէն»<sup>86</sup>։ Միայն նոր Զուլայում XVII դ. 20-ական թվականներին արդեն քսանից ավելի եկեղեցի կար<sup>87</sup>։ Աղբյուրները մեծ թվով վկայութիւններ են պահպանել այն մասին, թե ինչպես շահ Աբբասն անձամբ մասնակցում էր քրիստոնյաների տոնախմբութիւններին, եկեղեցա-

<sup>84</sup> Ա. Ալպոյանյան, նշվ. աշխ., մասն 9, էջ 184։

<sup>85</sup> Տե՛ս, օրինակ՝ Н. Пигулевская [и др.], նշվ. աշխ., էջ 278, Г. Эзов, նշվ. աշխ., էջ XIII, ԲՕԲ ص احمد تاج بخش، ايران...»

<sup>86</sup> Դավրիժեցի, էջ 65, 276։

<sup>87</sup> Г. Эзов, նշվ. աշխ., էջ VI։

Անշուշտ, չափազանցված է Ա. Օլեարիուսի նշած թիվը. ըստ նրա, միայն Ղազվինում և Թավրիզում հայերն ունեին 500 եկեղեցի (տե՛ս նշվ. աշխ., էջ 570)։

կան ծիսակատարութիւններին: Ավելին, նա «հայրաբար» հոգում էր, որ քրիստոնյաներն իրենց կրօնական տոները պատշաճորեն անցկացնեն<sup>88</sup>: Այդ ամենն անհրաժեշտ էր ոչ միայն շարքային քրիստոնյաներին, այլև հոգևոր ու աշխարհիկ բարձր խավերին սիրաշահելու համար:

«Եւ այնքան համարձակութիւն ետ շահն քրիստոնէից,— գրում է Դավրիժեցին,—մինչ ի հրապարակս և ի շուկայս, թէ հանդիպէր կազ և կոիւ քրիստոնէից ընդ մահմետականաց, համահաւասար զմիմեանս հարկանէին և հայհոյէին առանց երկիւղի»<sup>89</sup>: Իսկ եթէ քրիստոնյայի և մահմետականի միջև ծագած վեճը պարզելու առիթ էր լինում, շահը «զքրիստոնեայս իրաւացուցանէր և զմահմետականս դատապարտէր»<sup>90</sup>: Անշուշտ, դա պետք է առաջ բերեր մահմետականների զայրույթը: Պետք է ենթադրել, որ բողոքող մեծամեծների թվում, որոնց մասին խոսում է Դավրիժեցին, եղել են առաջին հերթին շիա բարձրաստիճան հոգևորականութեան ներկայացուցիչները, որոնք անտարբեր չէին ընդունի «անհավատներ» նմանօրինակ ազատութիւնը<sup>91</sup>: Դավրիժեցու հաղորդմամբ ի պատասխան դրա, շահը բողոքողներին տալիս է հետևյալ սրտաբաց բացատրութիւնը. «...Մի վշտանայք՝ և մեղադրէք ինձ, զի ես բազում ծախիւք, ջանիւք և հնարիւք հաղիւ թէ կարացի բերել զնոսա յայս յաշխարհս. ո՛չ թէ վասն օգտի նոցա՝ այլ վասն օգտի մեր՝ զի աշխարհս մեր շինեսցի և ազգն մեր յաւելցի»: Այնուհետև՝ «և վասն

<sup>88</sup> Դավրիժեցի, էջ 234, 302, հմմտ. «تصريفه فلسفي» ج ٣

<sup>90</sup> «ص ٥٨٢»

<sup>89</sup> Դավրիժեցի, էջ 65:

<sup>90</sup> Նույն տեղում:

<sup>91</sup> Այդ հարցում անտարբեր չի կարողացել մնալ նույնիսկ Քուրթիան: Օսմանյան սուլթան Մուրադ Դ-ն դեսպան է ուղարկում Աբբաս Ա-ի մոտ և հայտնում, որ չպետք է Իրանի քրիստոնյաներին ազատութիւն տալ՝ հազնելու մահմետականների համար սրբազան համարվող կանաչ գույնի զգեստներ: Շահը զավեշտորեն պատասխանում է, որ երբ սուլթանը դանախ խոտն ուտող անասուններին արգելք լինի, այն ժամանակ էլ ինքը կկատարի նրա պահանջը (ص ٥٨١ «تصريفه فلسفي» ج ٣):

այնորիկ առնեմ ես զայս սէրս ընդ նոսա, զի այսու կապեալ մնայցեն յաշխարհս մեր...»<sup>92</sup>։ Ինչպես տեսնում ենք, Դավրիժեցու մոտ որոշ պարզունակութեամբ, սակայն ճշմարտացիորեն բացահայտված է շահի նպատակը, որը հաստատվում է նրա հետագա քայլերով։ Որպես «բարություն» հայ գաղթականներին, նրանց վերջնականապես իրենց հայրենիքից կտրելու դիտավորութեամբ շահը փորձ կատարեց մինչև իսկ քանդել էջմիածնի տաճարը և այն տեղափոխել Իրան (1614—1615 թթ.), քանի որ «ի վերայ Աշոյն և էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կան»<sup>93</sup>։ Սակայն այդ նախագիծն ավարտվեց էջմիածնի վանքի մի քանի քարերի և կուսավորչի Աջի փոխարկումով Իրան<sup>94</sup>։

Շահ Աբբաս Ա-ի «քրիստոնեասիրությունը» դրսևորվում էր նաև եվրոպական պետութայնների նկատմամբ, որոնց հանդեպ շահը նույնպես երկդիմի քաղաքականութայն էր վարում։

Մի կողմից նա ջանում էր հայերին հեռու պահել եվրոպական պետութայնների և հատկապես Հռոմի ազդեցութայնից ու նրանց խնամակալութայնից<sup>95</sup>, քանզի Հռոմի կողմից հայ եկեղեցու ենթարկումն իրեն կնշանակեր կաթոլիկութայն կողմը գրավել նաև իրանահայերին և հատկապես ջուղայիցիներին։

Միաժամանակ, ձգտելով Եվրոպայի հետ առևտուրը կատարել առանց Թուրքիայի միջնորդութայն և վերջինիս դեմ ունենալ եվրոպական պետութայնների աջակցութայնը,

<sup>92</sup> Դավրիժեցի, էջ 66։

<sup>93</sup> Նույն տեղում, էջ 200—201։

<sup>94</sup> Դավրիժեցին անձամբ գնացել է Սպահան և տեսել էջմիածնի վանքի տեղափոխված քարերը (Դավրիժեցի, էջ 213)։

<sup>95</sup> Իրանում կաթոլիկ միսիոներների գործունեութայն մասին տե՛ս Տ. Հ. Հակոբյան, Հայերի պայքարը կաթոլիկական միսիոների ասիմիլատորական ձգտումների դեմ Իրանում (XVII—XVIII դդ.), («Արևելագիտական ժողովածու», հ. I, Երևան, 1960), Վ. Բայրուդյան, Նոր Զուղայի հայկական գաղութը և կաթոլիկ միսիոներների կազմակերպութայնները (ՀՍՍՀ ԳՍ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1964, № 9) և այլն։

շահն անհրաժեշտ էր համարում քրիստոնյա Եվրոպայի և հատկապես պապի առաջ հաճոյանալ ու նրա բարեկամութիւնն ու օժանդակութիւնը կորզել: Այդ պատճառով նա Եվրոպական պետութիւններին շնորհել էր լայն արտոնութիւններ, դրան ավելացնելով նաև իր արտակարգ «քրիստոնեասիրութիւնը»՝ ծայրահեղութիւնների հասնող ցուցամոլութեամբ մասնակցելով կրոնական ծեսերին, գինի խմելով և այլն, որի մասին վկայում են ժամանակակիցները. հատկապես՝ Ավգուստինյան միաբանութեան միսիոներ Անտոնիո դե Գուվեան և Պիեդրո դելա Վալեն:

Շահ Աբբասի շռայլ հովանավորութիւնից ավելի թևավորված, կաթոլիկ միսիոներները պարսից պալատում ժրջան բանակցութիւններ են վարում՝ Իրանի քրիստոնյաներին կաթոլիկացնելու և մահմեդականութիւն ընդունածներին քրիստոնեութեան վերադարձնելու ուղղութեամբ<sup>96</sup>:

Շահի երկակի դիրքը, անշուշտ, առիթ էր տալիս իր համար նաև անախորժութեան, մասնավորապես, երբ հարկ էր լինում հարթել Եվրոպացիների և իրանահայերի հետ կապված այս կամ այն կնճռոտ հարցը: Նման կացութիւններն ստիպում էին շահին՝ ըստ ամենայնի խուսանավել, հաճախ կանգնեցնելով կողմերից մեկին մերժելու անցանկալի անհրաժեշտութեան առջև: Այսպես, Եվրոպացիներին բավարարած լինելու համար, հակառակ հայերի պահանջի, նա ազատ է արձակում երկու պատրիկներին, որոնք Ս. Հռիփսիմի տաճարից գողացել էին հայերի համար նվիրական մասունքները և դադտնի տարել Սպահան՝ այնտեղից Եվրոպա փոխադրելու դիտավորութեամբ<sup>97</sup>: Սակայն այս

<sup>96</sup> Այս հարցում շահ Աբբասն ակնհայտ գիշում է հանդես բերել և հրաման արձակել՝ վերստին քրիստոնեութիւն ընդունողներին արգելք չլինելու մասին (տե՛ս Չախրիա Քաւաֆեցի, հ. Ա, էջ 21):

<sup>97</sup> Դավրիժեցի, էջ 178—191: Ուշագրավ է, այսպես ասած՝ պայքարը մասունքների համար, որ լոռային տարվում էր Եվրոպայի և շահի միջև, որոնցից յուրաքանչյուրը լավ էր գիտակցում ժողովրդի ավանդական պաշտամունքը վայելող մասունքների կարևորութիւնը նրան «հրապուրելու» գործում:

նույն անձանց խնդիրքը՝ իրենց տալու մասունքների գեթ մի մասը, շահը մերժում է և գրում Սպահան՝ խոշա Սաֆարին, թե «յաղագս շնորհի երեսաց ձերոց՝ և ըստ յօժարութեան սրտից ձերոց, առի զնշխարս սրբոցն ձերոց ի Ֆուանկաց՝ և պարգևեցի ձեզ»<sup>98</sup>,

Երբ 1601/2 թ. Իսպանիայի թագավոր Ֆիլիպ Գ-ի հրամանով Անտոնիո դե Գուվեան շահին ուղղակի առաջարկում է, որ վերջինս հրամայի հայոց կոթողիկոսին՝ հնազանդվելու պապին, շահը նույնպես մերժում է, շնայած իր «հավատարմությանը» վերջինիս<sup>99</sup>։

Բայց ահա 1607 թ., երբ Իրանի կառավարութունը նորից է առաջարկ ստանում (երկու կաթոլիկ կրոնավորի միջոցով) Ջուղայի հայությանն ստիպելու՝ հնազանդվել Հոմին, շահն այս անգամ որոշում է դրական պատասխան տալ (շնայած իր «հավատարմությանը» հայերին)՝ իրականացման շեմին տեսնելով Եվրոպայի հետ կապված իր ակնկալությունները։ Սակայն շուտով ամեն ինչ փոխվում է։ Ինչպես հաղորդում է Գուվեան, մի քանի օր հետո, երբ լուր է հասնում, որ գերմանական կայսր Ռուդոլֆ Բ-ն օսմանյան սուլթանի հետ դաշն է կնքել<sup>100</sup>, շահը վերահիշյալ կաթոլիկներին զայրույթով պատասխանում է. «Երբ քրիստոնյա թագավորներն իրենց խոստումներից հրաժարվում են և թշնամու հետ դաշն կնքում, դուք ուզում եք իմ երկրում եկեղեցիներ ունենալ, հայերին ձեզ ենթարկել և բարձրաձայն կոչնա՞լ զարկել։ Հանցանքն իմն է, որ ձեր զանգերը չեմ ջարդում և եկեղեցիները չեմ քանդում ու ձեզ իմ հողից չեմ վճնդում»<sup>101</sup>։

Այսուհանդերձ, շահ Աբբասը գրավոր պայման էր կնքել

<sup>98</sup> Նույն տեղում, էջ 192։ Դավրիժեցին գրում է, որ 1658 թ. Սպահանում խոշա Սաֆարի տանը տեսել է այդ մասունքները (նույն տեղում, էջ 196)։

<sup>99</sup> نصرالله فلسفی، ج ٣، ص ٦٨

<sup>100</sup> Տե՛ս Միտլատորոկի դաշնագիրը (А. Новичев, նշվ. աշխ., էջ 42)։

<sup>101</sup> نصرالله فلسفی، ج ٣، ص ٨٤

կաթոլիկների հետ Օսմանյան Թուրքիայից գրավելիք յուրաքանչյուր քաղաքում մի եկեղեցի կառուցել, եթե Իսպանիայի թագավորն իր տված խոստումներին հավատարիմ մնա, այսինքն՝ օսմանյան սուլթանի դեմ պատերազմի մեջ մտնի և Իրանին հրետանի ու զինվորական մասնագետներ տրամադրի: Այդ դեպքում ինք էլ կթուլլատրեր, որ քրիստոնյա բարոյիչները ողջ Իրանում քրիստոնեության տարածմամբ ղրաղվեն<sup>102</sup>:

Այսպիսով տեսնում ենք, թե քաղաքական ու տնտեսական ինչպիսի նկրտումներ կային շահ Աբբաս Ա-ի «քրիստոնեասիրության» ետևում:

Իհարկե, շատերն էին հասկանում շահին: Սակայն դա չի խանդարել նրա՝ քրիստոնեասեր թագավորի այն համբավին, որ պատմական գրականության մեջ արձանագրվելուց առաջ բերնեբերան շրջել է ինչպես նրա կենդանության օրոք, այնպես էլ հետագայում: Չհաշված այն իրողությունը, որ, չափազանց մեծ կարևորություն տալով իր այդօրինակ համբավի տարածմանը, պարսից արքան անձամբ է ղրաղվել այդ խնդրով<sup>103</sup>, այդ հարցում նպաստավոր այլ շատ հանգամանքներ են եղել: Իրանի բարգավաճման համար կատարած հիրավի մեծ ծառայությունների ֆոնի վրա քրիստոնյաներին ցույց տված նրա յուրաքանչյուր բարեգործությունը, անկախ նրա հետապնդած նպատակներից, դիտվել է իբրև քրիստոնեասիրության օրինակ: Քիչ դեր չի խաղացել նաև այն հակադրությունը, որ օբյեկտիվորեն ստեղծվել է քրիստոնյաների նկատմամբ շահ Աբբաս Ա-ի և այլոց վարած քաղաքականության միջև (հարևան Թուրքիայում քրիստոնյաների առավել վատթար վիճակը և նրանցից շատերին շահի ապաստան տալը, այնուհետև, շահ Աբբաս Ա-ից

<sup>102</sup> Նույն տեղում, էջ 73:

<sup>103</sup> Բավական է նշել, օրինակ, այն փաստը, որ նա, ծպտված շրջելով դաղթականների մեջ, քարոզում էր, թե շահը «քաղցր աչքով» է նայում քրիստոնյաներին (տե՛ս Դավրիժեցի, էջ 199): Թեև միշտ չէ, որ դա տվել է ցանկալի արդյունք, այսուհանդերձ, որոշ նշանակություն ունեցել է:

հետո, հատկապես սեֆյան վերջին թագավորների օրոք ֆանատիկ կրոնամոլութունն ու քրիստոնյաներին բացահայտ հալածելը և այլն)<sup>104</sup>։

Վերջապես, շահ Աբբաս Ա-ն «քրիստոնեասեր» թագավոր էր հայ խոջայության մեծ մասի համար։ Ակադ. Ա. Հովհաննիսյանի բնորոշմամբ՝ «Հայաստանի ավերողը նրանց (խոջաների—Լ. Դ.) աչքում դառնում էր նրա վերականուցողը։ Դավրիժեցին զուր չէր հարկ համարում մանրամասնորեն հերքել Շահ-Աբբասի քրիստոնեասիրության, աշխարհաշինության ու խաղաղասիրության մասին տարածված զրույցները»<sup>105</sup>։

Իրոք, Դավրիժեցուն էր վիճակված ճշմարիտ խոսք ասելու շահ Աբբաս Ա-ի քողարկված նպատակների մասին և տալու նրա վարած քաղաքականության դիմակազերծ պատկերը։ Լինելով հոգևորական, պատմիչն ավելի լավ էր ըմբռնում քրիստոնյաներին տված կրոնական «ազատության» էությունը և, մասնավորապես, հայոց եկեղեցու ու հայ համայնքի դեմ դրսևտրվող կրոնական հալածանքների բնույթը։

Դավրիժեցին վկայում է Աբբաս Ա-ի՝ քրիստոնյաներին մահմեդականացնելու բազմազան մեթոդների ու դեպքերի մասին։ «Պատմության» մեջ կարմիր թելի պես առկա է այն իրողությունը, որ «քրիստոնեասեր» շահ Աբբասը մշտապես հետամուտ է եղել քրիստոնյաներին մահմեդապանացնելուն<sup>106</sup>։

<sup>104</sup> Նույնիսկ Դավրիժեցին, ցավով արտահայտվելով շահ Աբբաս Ա-ից հետո հայերի վիճակի մասին, այն համեմատում է Աբբաս Ա-ի ժամանակի հետ և ասում. «Թագաւորն Շահաբաս (Ա—Լ. Դ.)... թէպէտ սուտ և սնտտի և ոչ ճշմարտութեամբ, սակայն սէր ցուցանէր» (Դավրիժեցի, էջ 68)։

<sup>105</sup> Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., գիրք II, էջ 104։

<sup>106</sup> Խոսքն առավելապես հայերի, նաև վրացիների հոծ զանգվածների մասին է (իրանաբնակ քրիստոնյաների մեծամասնությունը հայեր էին)։ Ինչ վերաբերում է հայ խոջայությանը, մեծահարուստ վաճառականներին, ապա նրանց նկատմամբ կրոնական հարցում ևս շահը զիջումներ էր անում և հաճախ ստիպված էր լինում զսպել իր կրոնական կրթերը։ Այդ մասին վկայում է նաև Շարդենը (տե՛ս ԸՐՐ ՎՃՃ, ԳՃՃ, ԳՃՃ)։

և նրանց հետ շփվելիս շահի յուրաքանչյուր քայլը վերջանում էր հավատուրացության առաջարկով:

Առանձնապես օգտադրովում էր քրիստոնյաների՝ նյութական ծանր կացության մեջ գտնվելու հանգամանքը: Այսպես, 1608 թ. Սպահանում հաստատված գաղթականներին, որոնք ծայր աստիճանի շքավորության էին հասել և օգնություն էին խնդրում շահից, վերջինս խոստացավ օգնել և 400 թուման տրամադրել նրանց այն պայմանով, որ երեք տարուց հետո պարտքը չվերադարձնելու դեպքում նրանք կամ մահմեդականություն ընդունեին, կամ իրենց զավակներին հանձնեին թագավորին՝ իրեւ ծառա. ընդ որում, ռզգինս ուստերաց շորս թուման ասաց, և զգինս դատերաց երեք թուման»<sup>107</sup>, 1613 թ.. երբ շահ Աբբասը պահաջեց այդ գումարը, տարագրյալները պատրաստ չէին վճարելու, քանի որ ստացած գումարով հազիվ էին կարողացել իրենց գոյությունը քարշ տալ: Շահական պաշտոնյաների պատճառած սոսկալի տանջանքներից հետո, որոնց մանրամասն նկարագրությունը գտնում ենք Դավրիժեցու մոտ, հայերը որոշում են իրենց զավակներին հանձնել շահին: Սակայն շահը հրաժարվեց այդ երեսաններից: Դավրիժեցին նշում է, որ երկու պատճառ են ենթադրում. ըստ ոմանց, շահը խղճաց ժողովրդին՝ տեսնելով նրա աղիողորմ լացուկոծը երեսանների համար: Բայց պատմիչն իրավացիորեն ավելի հավանական է համարում մյուս կարծիքը, ըստ որի, շեղվելով իր խոստումից, շահը մտադրվեց մահմեդականացնել բոլորին և ոչ թե լոկ երեսաններին:

Շահի զինվորներին ի վերջո հաջողվեց կրոնափոխ անել խոշտանգումներից մահամերձ ու խեղանդամ դարձած սպահանցիների մեծ մասին (թեև, պատմիչի վկայությամբ, հավատուրացությունը միայն առերես էր)<sup>108</sup>:

Դրությունը շէր կարող փոխել և եվրոպացի միսիոների միջամտությունը, որը հայերին առաջարկում է իր օգնությունը՝ անվերադարձ տալով նրանց 250 թուման, հետագա-

<sup>107</sup> Դավրիժեցի, էջ 150:

<sup>108</sup> Նույն տեղում, էջ 148—162:

յում նրանց կաթողիկոսներու միտումով: Շահը, որքան էլ համակրեբ «Ֆրանկների» ներկայացուցչին<sup>109</sup>, չէր կարող հանդուրժել հայերի նմանօրինակ առնչությունը եվրոպացիների հետ: Ի դեպ, այդ հանգամանքը Նասրոլլա Ֆալսաֆին բացատրում է նրանով, որ շահը նման առնչությունը «այն հարգանքի ու հնազանդության տեսակետից, որ իր անձի նկատմամբ պետք է ունենային, պատշաճ չէր համարում»<sup>110</sup>: Ակնհայտ է, սակայն, որ շահին մտահոգողը այդ «գործարքի» անցանկալի հետևանքներն էին, այն է՝ ոչ միայն սպահանցիներին մահմեդականացնելու գործին խոչընդոտումը, այլև նրանց կաթողիկոսյան կողմը գրավելու հնարավորությունը, որը նա շտապում է բռնութայամբ կասեցնել: Միջադեպն ավարտվում է շահի հրամանով՝ մահմեդականացնել բոլոր պարտապաններին, իսկ եվրոպացի միսիոների տված գումարը ըստ նրա պահանջի ետ վերադարձնել<sup>111</sup>:

Մահմեդականությունը պարտադրելու համար քրիստոնյաների նյութական անբարենպաստ վիճակն օգտագործելու փաստի վկայություն է տալիս Դավրիժեցին՝ կապված նաև վրացական համայնքի հետ: Երբ Ֆարահաբադում բնակվող վրացիները շահին տեղեկացրին իրենց չբավորության և տիրող սովի մասին, շահը, ինչպես՝ միշտ, առաջարկեց նրանց մահմեդականությունն ընդունել, խոստանալով լիովին ապահովել նրանց ապրուստը: Սովահար վրացիները ստիպված դավանափոխ են լինում: Սակայն «շահն ոչ ետ նոցա զինչս յոլովս ըստ իւրում խոստմանն՝ այլ ստեաց, քանզի խարեաց զնոսա»<sup>112</sup> և յուրաքանչյուրին տալով միայն մեկ դահեկան, արձակեց իրենց տները:

Կարևոր միջոցառում էր քրիստոնյաների երեխաներին մահմեդական ուսուցման պարտադրումը, որը կատարվում էր մոլլաների միջոցով: Վերջիններս կոչված էին ընդհանրա-

<sup>109</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 154:

<sup>110</sup> نصرالله فلسفی، ج ۳، ص ۸۸

<sup>111</sup> Դավրիժեցի, էջ 156—161:

<sup>112</sup> նույն տեղում, էջ 133:

պես խստորեն հետևելու մահմեդականություն ընդունածներին (աղի... զօրէնս Մահմետի ուսուցեն Հայոց»), ստիպելու նրանց հաճախել մզկիթ և ենթարկվել մահմեդական ապրելակերպին»<sup>113</sup>։

Դավրիժեցու բերած փաստերը վկայում են, որ ժողովուրդն ըստ ամենայնի դիմադրել է կրոնափոխութեանը։ Այսպես, կրոնափոխություն պարտադրելու նպատակով Փարիա և Բուրվարի գավառներն ուղարկված մեծ թվով մուլաներից մի քանիսն սպանվում են, մյուսները՝ փախուստի դիմում։ Բայց դրա հետևանքով երկու տարի շարունակ այդ շրջանների բրիստոնյաները հալածվում էին իշխանությունների կողմից<sup>114</sup>։ Դրությունը փոխվեց այն բանից հետո, երբ Վայոց ձորի (Սղեզնաձոր) Արփա գյուղից Գրիգոր անունով ոմն, որը հետագայում հաստատվել էր Փարիա գավառի Ներքին հոյիկան գյուղում, զանազան միջոցներով, այդ թվում և՛ կաշառելով շահական պաշտոնյաներին<sup>115</sup>, հասավ այն բանին, որ շահից զրավոր թուլլտվություն վերցրեց, որպեսզի հիշյալ գավառներում բրիստոնյաները «համարձակ պաշտեսցեն զբրիստոնէութեան հաւատն իւրեանց»<sup>116</sup>։ Դրա դիմաց, իբրև փոխհատուցում պահանջվեց հազար թուման տուգանք, որի գանձման համար ուղարկվեց զորականների մի մեծ խումբ՝ հոսարով-սուլթանի գլխավորութեամբ։ «Ըն որդրմելի բրիստոնեայքն վասն բրիստոսական հաւատոցն, զայս հազար թումանս... զամենայն վճարեալ հատուցին, և եղեն շքաւորք՝ և աղքատք կարի յոյժ»<sup>117</sup>։

<sup>113</sup> Նույն տեղում, էջ 168, հմմտ. 970 ص 'ج ٢' اسکندر منشی

<sup>114</sup> Դավրիժեցի, էջ 168։

<sup>115</sup> Ի դեպ, կաշառքը մահմեդականացումից փրկվելու միջոցներից մեկն էր։ Ժողովուրդը զրկանքներ կրելով որոշ գումար էր հայթայթում ու դրանով կաշառում շահի ղեկավորներին ու պաշտոնյաներին, որոնք ժամանակավորապես դադարում էին նրանց հետապնդելուց (տե՛ս Դավրիժեցի, էջ 51, 157, 169...)։

<sup>116</sup> Նույն տեղում, էջ 169։

<sup>117</sup> Նույն տեղում, էջ 170։ Պատմիչի հավաստմամբ՝ հիշյալ Գրիգորին, ի վերջո, զրպարտելով մի մահմեդականի սպանութեան մեջ, որին զինքեանք

Քրիստոնյաների դեմ գործադրվող բռնութեան և այն մասին, որ հավաստափոխութեան գործը դյուրութեամբ չէր ընթանում, վկայում է հենց այն փաստը, որ հավատափոխութեանն իրականացվում էր միայն «գորականների» օգնութեամբ:

Այդ «գորականներն» էլ հրաման են ստանում շահից՝ շրջիլ յամենայն գիւղօրայս, և ըմբռնել զամենայն երիցունս՝ և սպառնալեօք ահաջուցանել զնոսա, և առնուլ ուխտ և պայման ի բերանոց նոցա, զի մի պահեսցեն զգիրս ինչ ի գրեանց իւրեանց»<sup>118</sup>,

Քրիստոնյաներին մահմեդականացման մղելու միջոց էր նաև գլխահարկը, որը գանձվում էր քրիստոնյաներից ու հրեաներից և Սեֆեհների օրոք մեծ շափեր էր ընդունել: Լեոյի արտահայտութեամբ՝ գլխահարկը «դաշնագրութիւն էր մուսիլմանի եւ անհաւատի մէջ»<sup>119</sup>:

Մյուս կողմից, համաձայն շիաների՝ Իմամ-Ջաֆարի օրենքի, մահմեդականութեան ընդունածներն իրավունք ունեին իրենց քրիստոնյա ազգականների ունեցվածքն ամբողջապէս գրավելու և նրանց զրկելու ժառանգութեան իրավուն-

---

(պարսիկները—Վ. Գ.) սպանին և բերեալ ի ծածուկ արկին յանդն Գրիգորին», մահվան դատապարտեցին:

<sup>118</sup> Դավրիժեցի, էջ 167:

<sup>119</sup> Լեո, Հայկական տպագրութիւն, հ. I, էջ 205: Ուշագրավ է «Պատմութեան» մեջ հիշատակված վկայութիւնը Տարոնում 1306 թ. Ղարբանդա-խանի կողմից արձակված հրովարտակի մասին, որով նրա իշխանութեանը ենթակա քրիստոնյաներին ազդարարվում էր «կամ դատնալ ի մուլար դաւանութիւն Մահմետի, և կամ տալ խարաճ ամէն մարդ իւր զըլխոյն՝ զութն դահեկան, և թուք և ապտակ ի յերեսն՝ և զմուրտան ճողել, և սև կարկատան մի ի վերայ աշոյ ուսին կարել, նախատինք վասն Քրիստոսի...»: Շատ շանցած այս հրամանը փոխարինվում է նորով, ըստ որի մահմեդականութեան ընդունող քրիստոնյաներին «կամ զամենեսեան ներքինիս առնել կամ զմի ակն հանել» (տե՛ս Դավրիժեցի, էջ 625—626): Նույն վկայութիւնը գտնում ենք Գրիգոր Վարդգեսու ժամանակագրութեան մեջ («Մանր ժամանակագրութիւններ», հ. II, էջ 381):

բից<sup>120</sup>։ Դավրիժեցիին, որպես ականատես, վկայում է այդ օրհնքի գործադրման մասին, որը նույնպես, ինչպես զլխահարկը, հարված էր հասցնում քրիստոնյաների տնտեսական վիճակին։ «Եվ այսպէս զրկեալ զողորմելի քրիստոնեայս,— սլատմում է Դավրիժեցիին,—յափշտակեալ զամենայն ինչս և տան ուրացողացն այնոցիկ»։ Եվ այնուհետև՝ «յափրշտակեցին զժառանգութիւնս քրիստոնէից և ետուն ուրացողացն. զոր մերով աշօք տեսաք»<sup>121</sup>։ Օգտվելով իրենց արտոնություններից և թիկունքում ունենալով մահմեդականների համագործակցությունը, դավանափոխ եղածները (թեև դրանց թիվը մեծ չէր) գնալով դառնում էին ավելի ու ավելի վտանգավոր կեղեքիչներ քրիստոնյա բնակչության համար<sup>122</sup>։

Այս բոլորը հաճախ լրացնում էին քրիստոնյաներից ապօրինաբար դանձվող, բայց հետո «օրինականացվող» գումարները՝ մեծ մասամբ տուգանքների ձևով։

Նյութական զրկանքները, սակայն, չէին կասեցնում իրանահայության պայքարն ընդդեմ կրոնափոխության։ Աղբյուրների վկայութեամբ հայերի կողմից մահմեդականություն ընդունելու դեպքերը սակավ էին։ Այդ մասին Տավերնյեն գրում է. «Հայերն իրենց կրոնի նկատմամբ այնքան մոլեռանդ ու հավատարիմ են, որ նրանց մոտ այլ կրոնի մասին խոսել չի լինի, և եթե երբեմն որևէ մեկը նրանցից կրոնափոխ լինի, դա անշուշտ շահի [օգտի] համար է»<sup>123</sup>։

Հավատափոխության գործին նպաստելու համար, որպես կանոն, շահ Աբբասը քրիստոնեությունն ուրացողներին ներում էր խոստանում, եթե հանցավոր էին և կամ պարտք ունեին։ Սպանության մեջ մեղադրվող Գրիգորին դատարանում առաջարկում են՝ «կամ ուրասցի, կամ սպանցի»<sup>124</sup>։

<sup>120</sup> Տե՛ս «Շեյխ-ու-Իսլամի 1621—1622 թթ. Ֆեթվան Ջիմի ռայաթների մուսուլման ժառանգներին տրվող առանձնաշնորհումների մասին» (ՄՊՀ, սր. 2, վավ. 1Ը, էջ 101)։

<sup>121</sup> Դավրիժեցի, էջ 67—68։

<sup>122</sup> Նույն տեղում, էջ 67, 134...

<sup>123</sup> سفرنامه تاورنیه، ص ۸۱

<sup>124</sup> Դավրիժեցի, էջ 170։

Ավելին, շահը խոստանում էր դրամ տալ (թեև խոստումը կարող էր և չկատարել), նրանց ապրուստը հոգալ, նույնիսկ բարձր պաշտոններ տալ. «Եթէ դառնայք յօրէնս միւր յոյժ բարուք առնէք, զի զոր ինչ և պարտիք զայն ամենայն շնորհեմ, և ի վերայ այնր բազում և այլ ևս պարգևս և զձիրս բաշխեմ ձեզ: Ապա թէ ո՛չ դառնայք, մատնեմ զձեզ ի տանջանս անզերծանելի...»<sup>125</sup>:

Այսպիսով, շահն ամեն քայլափոխում առևտուր էր անում քրիստոնյաների հետ՝ նրանց մահմեդական դարձնելու համար: Հաճախ «գործարքները» կատարվում էին հայ հոգևորականների հետ, որոնց միջոցով իշխանութիւնները ջանում էին հնազանդ պահել իրանահայերին: Փարիս և Բուրվարի գավառների բնակչութեանը բռնի դավանափոխ անելուց հետո շահի զինվորները հրաման են ստանում այդ շրջանի հոգևորականներին իբրև պարգև տալ 40 ոչխար: Ահա թե ինչպես է բացատրում Դավրիժեցին այդ փաստը. «Շահն զայս ոչխարքս վասն այնր ետ երիցանցն, զի ոմանք յերիցանցն ագահեալ յինչսն հեշտասցին այնու տրօք, և մի գրգռեսցն զժողովուրդս իւրեանց դառնալ ի տաճկութենէ. և ոմանք, որք կերեալ և վատնեալ իցեն, յերկիւղէ վճարելոյն կացցեն ի տաճկութեան»<sup>126</sup>:

Քրիստոնյաներին մահմեդականացնելու գործում շահ Աբրահիմ շատ թե քիչ հաջողութիւն էր բերում այն պրակտիկան, երբ ստիպում էր կրոնափոխ լինել հեղինակութիւն վայելող անձանց կամ թեկուզ միայն լուր էր տարածում այդ մասին: Այսպես, «համբաւ հանին, թէ Ղարապաշ մելիքն տաճկացաւ»<sup>127</sup>, որից հետո ժողովրդին ձկեղն ավելի դյուրին էր:

Կրոնափոխութիւնից խուսափելով, քրիստոնյաները հաճախ էին թողնում իրենց տուն ու տեղը, հեռանում լեռները կամ հեռավոր գավառները, փոխում իրենց անունը, և զգրա-

<sup>125</sup> Նույն տեղում, էջ 156—157, տե՛ս նաև էջ 153, 156, 358....

<sup>126</sup> Նույն տեղում, էջ 167:

<sup>127</sup> Նույն տեղում, էջ 157:

դում աւուրս քաղցեալ և սովալլուկ լեալ թափառական շրջէին  
ի լիբիոսս, և ոչ կարէին ի շէնս մտանել՝ կամ ումեք երևել,  
վասն ահի թագաւորին և թլպատողաց»<sup>128</sup>,

Առանձին վտանգ էր սպանում քրիստոնյաների երեխա-  
ներին, որոնցից շատերին տանում էին և դարձնում «թագա-  
վորական ծառա»: Այդ էր պատճառը, որ Ագուլիս գյուղի  
բնակիչները, պատրաստվելով դիմավորել շահ Աբբաս Ա-ին,  
իրենց երեխաների գլուխները սափրում են, «որպէս Վի մի  
վալիլլադեդ երևեսցին մանկունքն յաշս նորա, և հաճեալ ի  
նոսա առցէ ի նոցանէ»<sup>129</sup>. Նկատելով դա, շահը հրամայում է  
դանել և սպանել նախաձեռնողին: Իր աշակերտների ծնող-  
ներին փրկելու համար «հանցանքն» իր վրա է վերցնում  
Ագուլիսի դպրապետ Անդրեասը, որի նահատակութեան պատ-  
մութեանը Դավրիժեցին ամբողջ էջեր է նվիրել<sup>130</sup>: «Պատմու-  
թեան» մեջ բերված փաստերն անհերքելիորեն ապացուցում  
են շահ Աբբաս Ա-ի դատանութունը քրիստոնյաների նկատ-  
մամբ: Նրա մասին են ասված լեռնի հետևյալ խոսքերը.  
«Արևելյան այն թագավորները, որոնք ժողովրդականութուն  
են ստացել իրենց մեծագործութուններով, ունեին և մի  
բնորոշ հատկութուն—անգթութուն գերազանց շափերով»<sup>131</sup>,

Դավրիժեցու տվյալներով, որոնք ականատեսների հա-  
ղորդումներ են, «զթառատ» շահ Աբբաս Ա-ն պատկերանում  
է որպես անագորույն բռնակալ, որը կարող էր ցասումով  
բռնված՝ կացնահար անել մահամեղականանալու առաջարկը  
մերժող այլակրոն հոգևորականի գլուխը, կամ քրիստոնյա  
զահի գլխին դնել տալ պղնձե շիկացած սաղավարտ, պատ-  
ռել կենդանի մարդու որովայնը, անդամահատել ու խեղել  
քրիստոնյաներին և կամ անհնազանդ կաթողիկոսին ստիպել  
սեփական միտն ուտել<sup>132</sup>:

<sup>128</sup> Նույն տեղում, էջ 165—166:

<sup>129</sup> Նույն տեղում, էջ 357:

<sup>130</sup> Նույն տեղում, էջ 354—363:

<sup>131</sup> Լեո, Հայոց պատմութուն, հ. III, էջ 229:

<sup>132</sup> Տե՛ս Դավրիժեցի, էջ 146, 165, 360, 208....

Շահ Աբբաս Ա-ի պատճառած զրկանքները քրիստոնյաներին՝ նրանց մահմեդականություն պարտադրելու համար ոչ միայն չեն խոսում նրա քրիստոնեասիրության մասին եղած կարծիքների օգտին, այլև ցույց են տալիս այն մոլեգին կիրքը, որով նա ջանացել է իր երկրի քրիստոնյաներին վերջնական ձուլման ենթարկել՝ նրանց հավատափոխ անելու ճանապարհով: Թյուր կարծիքների և իրականության հակադրությունն է ընդգծում Դավրիժեցին, գրելով. «Արդ՝ որք գովեն զայս շահս թէ քրիստոնէասէր և աշխարհաշէն և խաղաղարար թագաւոր էր, այս է նորա քրիստոնէասիրութիւնն, որ զամենայն աշխարհն քրիստոնէից՝ զՀայոց և զՎրաց աւերեաց, և զամենեսեան սպառեաց սրով և սովու և գերութեամբ. և զմնացեալսն վարեալ տարաւ ի Ֆահրապատ և յԱսպահան, որ նոքա ևս օր աւուր անդէն սպառին պէս պէս կերպիւ: Եւ ով ոք որ գովել կամի զնա, թող յառաջ հայեցեալ նկատեսցէ զարարեալ գործս նորա, զոր արար ընդ քրիստոնէից՝ և ապա գովեսցէ զնա»<sup>133</sup>:

Անհրաժեշտ է նկատել, որ շնայած իշխանությունների կողմից կիրառվող հիշյալ քաղաքականությանը, Իրանի ժողովրդին խորթ չէր բարյացակամ վերաբերմունքը քրիստոնյաների նկատմամբ: Դավրիժեցու որոշ տվյալներ մահմեդականների և հայերի միջև բարեկամական հարաբերությունների դրսևորման վկայություն են<sup>134</sup>:

\* \* \*

Սեֆևիների կողմից կրոնափոխության պարտադրանքը՝ իբրև այլակրոն համայնքներին ձուլման ենթարկելու միջոց, գործադրվում էր ոչ միայն քրիստոնյաների նկատմամբ: Դավրիժեցու նկարագրած դավազները տալիս են շահ Աբբաս Ա-ի օրոք իրանաբնակ հրեաների նկատմամբ կիրառված՝ Սեֆևիների հիշյալ քաղաքականության պատկերը:

<sup>133</sup> Նույն տեղում, էջ 134:

<sup>134</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 274, 313, 325...

Հատկանշական է, որ XVII դ. 50-ական թվականներին բռնի կրոնափոխությունն իրականացվում էր գրեթե նույն մեթոդներով ու ձևերով, ինչ դարասկզբին, և միայն պատրվակներն էին տարբեր. օրինակ՝ 1657 թ. սպահանաբնակ հրեաներին դավանափոխություն պարտադրելու համար առիթ է ծառայել իշխանությունների կողմից նրանց բնակության անբարենպաստ պայմանների հարկադրումը: Սպահանից հեռացված հրեաներին էր հատկացվել «անպատեհ և անձեռնտու» վայր (Գողալդարա կոչված), ուր գնալ նրանք չէին կարող, իսկ Սպահանում կարող էին մնալ միայն մահ-մեղականություն ընդունելու դեպքում:

Բայց կրոնափոխության պարտադրանքը կարող էր լինել և առանց որևէ պատճառաբանության, արքայական հրամանով: Այսպես, «Էհտիմալ-Դօլվաթն հրովարտակ հանեալ ի թագաւորէն առաքեաց ընդ ամենայն աշխարհս տէրութեանն Պարսից... զի ուր և իցեն ազգք և ժողովուրդք Հրէից թէ ի դիւշս և թէ ի քաղաքս ամենեքեան թողցեն զօրէնս հրէութեան և ստասցին զօրէնս Մահմետի. որք կամաւ հնազանդեացին բարւոք է, և որք ընդդիմացին՝ բռնութեամբ և տանջանօք ածցեն իշխանքն զայնպիսիսն ի հաւատն պղծոյն անապատի»<sup>135</sup>, «Պատմության» մեջ հանգամանորեն խոսվում է նախ Սպահանի և ապա ողջ Իրանի հրեաների զանգվածային մահմեդականացման մասին: Հետաքրքիր է, որ մահմեդականության պարտադրման հարցում իշխանությունները, փաստորեն, չէին կարող իրենց քաղաքականությունն օրինականացնել շարիաթի սկզբունքներով, քանի որ դրանք արգելում էին բռնի կրոնափոխությունը<sup>136</sup>: Ուստի և փորձ էր արվում սքողել կրոնափոխության բռնի բնույթը, շեշտը դնելով դավանափոխության համար նախատեսված վարձատրության վրա: Դավրիժեցու հաղորդմամբ՝ է՛թեմադ-էդ-դոուլեն կրոնական գերագույն առաջնորդի՝ սադրի, հետ խորհրդակցելուց հետո հայտարարում է. «...Ով ոք

<sup>135</sup> Նույն տեղում, էջ 477:

<sup>136</sup> Նույն տեղում, էջ 464:

գայ յօրէնս մեր տամք նմա զպարզևս երկու թուման<sup>137</sup> և նա ազատի ի տանջանաց և նստի հանդարտութեամբ ի տան իւրում. և ով որ յառաջագոյն գայցէ ի հաւատս, տամք նմա պետութիւն և իշխանութիւն»<sup>138</sup>, Անշուշտ, կամավոր կրօնափոխութիւնը, ի պատասխան բազմապիսի խոստումների, նույնպէս տեղ ուներ: Դավրիժեցին պատմում է Ավատիա անունով սպահանարնակ մի հրեայի մասին, որն առաջինը հոժարակամ ընդունում է մահմեդականութիւն և ստանալով պատշաճ պարգև մեծ վեզիրից (այդպիսիք դառնում էին օգտակար գործիք իշխանութեան ձեռքում), խորհուրդներ է տալիս նրան՝ նախ ստիպել կրօնափոխ լինելու խախամ Սայիդին, ձգի թէ նա դարձաւ, ամենեքեան դառնան»: Խոշտանգումների սպառնալիքի տակ հրեաների հոգևոր հովիվը դավանափոխ է լինում<sup>139</sup>, որից հետո մահմեդականութիւն ընդունողների թիվն սկսում է աճել: Անցնելով արդեն բացահայտ բռնութեան և ազատագրկումն ունենալով որպէս գլխավոր զենք, էթեմադ-էդ-դոուլին իր վերակացունների և զորականների օգնութեամբ հաջողութեամբ վարում է դավանափոխութեան գործը: Դավրիժեցին հանգամանորեն նկարագրել է այդ իրադարձութիւնները: Պատմիչի հավաստմամբ՝ իշխանութիւնները նաև բռնագրավում էին նրանց ունեցվածքը, կողոպտում հրեա խանութպաններին, «այլ և զօրականս ի տունս նոցա առաքել (իշխանը—Լ. Դ.) առ ի զինչս նոցա յաւարել և զկանայս նոցա խայտառակել»<sup>140</sup>:

Դավանափոխ եղածները ստանում էին երկու թուման դրամ, նոր հագուստ և թուլլովութիւն՝ վերադառնալու

<sup>137</sup> Ըստ երևութիւն, այս հարցում Աբրաս Ա-ն ավելի «առատաձեռն» է եղել և իսլամ ընդունած յուրաքանչյուր հրեային վարձատրել է 4 թումանով (տե՛ս 97 ص ٢٠ ج 'سقى'): (تصريفه فلسفي):

<sup>138</sup> Դավրիժեցի, էջ 464:

<sup>139</sup> Նույն տեղում, էջ 466:

<sup>140</sup> Նույն տեղում, էջ 479:

տուն<sup>141</sup>: Այնուհետև նրանք ենթարկվում էին վերակացու մոլլայի հսկողությունը, որ «հանապազ տարցի յաղօթանոցն Պարսից»<sup>142</sup>, իսկ մուսուլմանական ապրելակերպից խուսափողները հետապնդվում էին ու պատժվում<sup>143</sup>:

Առանձին ուշադրություն էր հատկացվում ձուլմանն անմիջականորեն նպաստող գործոնների վրա: «Այլ և օրինադրեցին Հրէից զի զդատերս իւրեանց տացեն մահմետականաց, և ի դատերաց նոցա ինքեանք առցեն»—գրում է Դավրիժեցին<sup>144</sup>: Բացի դրանից, մեծ նշանակություն էր տրվում հատկապես մանուկների՝ մահմեդական ոգով կրթմանն ու ուսուցմանը<sup>145</sup>:

Հրեաների նկատմամբ ևս կիրառվում էր իմամ-Ջաֆարի օրենքը, որի ցայտուն օրինակը նկարագրում է Դավրիժեցին՝ հիշյալ Ավատիայի սպանությունն մասնակիցների հայտնաբերման պատմության կապակցությամբ<sup>146</sup>:

Դավրիժեցու հաղորդումները վկայում են հավատափողության դեմ եղած դիմադրության մասին. «Եւ ամենայն ազգն Հրէից՝ ուր և կային, ոչ կամէին մտանել յօրէնս Մահմետի. այլ ոմանք կաշառօք, և ոմանք փախստեամբ, և ոմանք՝ այլ ինչ հնարիւք զերծանէին»<sup>147</sup>: Դիմադրության արտահայտություն էր մահմեդականությունն ընդունողների նկատմամբ եղած անհաշտ վերաբերմունքը: Դավրիժեցին

<sup>141</sup> Նույն տեղում, էջ 466—467, հմմտ. ۲۱۹—۲۱۸ ص «عاستانام»

<sup>142</sup> Դավրիժեցի, էջ 467, հմմտ. ۲۱۹ ص «عاستانام»

<sup>143</sup> Դավրիժեցի, էջ 469:

<sup>144</sup> Նույն տեղում, էջ 467:

<sup>145</sup> Մատաղ սերունդը միշտ էլ հույսեր է ներշնչել ձուլող կողմին: Այս առումով բնորոշ են բազմաթիվ մանկաժողովները տարբեր երկրներում ու ժամանակներում, որ կատարյալ չարիք է եղել ժողովրդի համար: Իսլամաթիվ վկայություններ կան զինվորագրման համար հավաքած երեխաների՝ կանտոնիստների մասին, որոնք ենթարկվում էին ամենադաժան փորձությունների: Տե՛ս М. Шпигель, Из записок кантониста («Еврейская старина», 1911, вып. II); С. Гинзбург, Мученики-дети («Еврейская старина», 1930, т. XIII).

<sup>146</sup> Տե՛ս Դավրիժեցի, էջ 474—475:

<sup>147</sup> Նույն տեղում, էջ 478:

մանրամասն նկարագրում է առաջինը կրոնափոխ եղած Ավատիայի սպանութունը՝ կատարված շորս հրեաների կողմից<sup>148</sup>, և իշխանութունների հաշվհարդարը նրանց հետ: Դիմադրության յուրօրինակ ձև էր կաշառքը, որի միջոցով հրեաները ևս հաճախ ազատվում էին հետապնդումներից կամ կանխում հրեա աղջիկների բռնի ամուսնութունը մահ-մեղականների հետ<sup>149</sup>: Կրոնափոխության նկատմամբ անհանդուրժողականութունն արտահայտվում էր և զանազան պարտադրանքների ընդունմամբ՝ սկսած գլխահարկից մինչև ազգային պատկանելիութունը մատնող յուրահատուկ նշան կրելը: Ֆարահաբադ քաղաքի հրեաների վերակացուն՝ Միրզա Սադղը, երեք-չորս ամիս տևած կրոնափոխության ապարդյուն ջանքերից հետո հրամայեց նրանց այնուհետև իբրև պախարակող նշան, կրել ծաղրի ենթակա տարօրինակ վզնոց. «որովհետև ոչ կամիք մեկնիլ ի Հրէութենէն, առէք ի վերայ ձեր զնշան ինչ յայտնի, որով ամենայն տեսողք ծանիցեն ձեզ, թէ Հրէայ էք»<sup>150</sup>...

Դավրիժեցին տալիս է այն քաղաքների անունները, որտեղ հրեաները «անհնար լեալք ակամայ կամօք և առ երեսօք մտին յօրէնս Պարսից»: Դրանք էին՝ Քաշան, Ղուժ, Քավրիզ, Արդաբիլ, Ղազվին, Լառ, Շիրազ և Պարսից ծոցի առափնյա քաղաքները<sup>151</sup>: Պատմիչի հաղորդմամբ Իրանի որոշ վայրերում (Գուլփայեզան, Խոնասար, Բանդար, Շուշթար, Ֆարահաբադի գյուղերը) երկար հալածանքից հետո, այնուամենայնիվ, հրեաներն ի վերջո մնացին իրենց դավանանքին<sup>152</sup>: Դա, ըստ երևույթին, եղել է մի կողմից իշխանու-

<sup>148</sup> Նույն տեղում, էջ 470—479:

<sup>149</sup> Նույն տեղում, էջ 469, 470, 474, 478...

<sup>150</sup> Նույն տեղում, էջ 480: Այդ պարտադրանքը հիշեցնում է այլ երկրներում և տարբեր ժամանակներում գործադրվող միջոցառումները նույն հրեաների տարազի, սանրվածքի և ազգային ավանդները շեշտող այլ պարագաների հարցում (տե՛ս, օրինակ՝ Ս. Иерусалимский, Гонения на еврейскую одежду („Еврейская старина“, 1912, вып. III).

<sup>151</sup> Դավրիժեցի, էջ 478:

<sup>152</sup> Նույն տեղում:

թյունների անհետևողականության և մյուս կողմից՝ հրեաների դիմադրության հետևանք:

Այս բոլոր փաստերով ակնհայտ է դառնում իրանաբրնակ փոքրամասնությունների նկատմամբ կրոնական սահմանափակման, ձուլման քաղաքականությունը ինչպես շահ Աբբաս Ա-ի օրոք, այնպես և նրանից հետո: Փոքրամասնությունների նկատմամբ կիրառվող քաղաքականության նմանօրինակ պատկերն ստեղծող փաստերի կողքին, կարծում ենք, անհամատեղելի են այն կարծիքները, ըստ որոնց՝ շահ Աբբաս Ա-ի թագավորության շրջանում «բոլոր կրոնների հետևորդները՝ քրիստոնյա, հրեադավան, զրադաշտական, յուրաքանչյուր քաղաքում իրենց հատուկ թաղամասն ունեին և այնտեղ ապրում էին կատարյալ ազատությամբ՝ իրենց պապերի և կրոնական ու ազգային սովորություններով»<sup>153</sup>:

Շահ Աբբաս Ա-ի ժամանակ այլադավան հպատակներին սրող կրոնական ու այլ ազատությունների փաստը, որոնցից բաժին էին ստանում առավելապես վաճառականությունն ու մասամբ հոգևորականությունը, հաճախ օգտագործվում է ընդհանրացնելու և եզրակացություններ անելու իրանաբնակ այլադավան ժողովուրդների բոլոր շերտերի վերաբերյալ, դրանով իսկ խեղաթյուրելով պատմական անցյալի իրական պատկերը:

\* \* \*

Եթե փորձենք «Պատմության» տվյալներով ուրվագծել իրանաբնակ այլադավան համայնքների նկատմամբ կիրառված քաղաքականության պատկերը XVII դ. սկզբից մինչև 60-ական թվականները, ապա այն կլինի հետևյալը. դարասկզբի փոթորկալի իրադարձություններով և շահ Աբբաս Ա-ի հեռատես ծրագրերով պայմանավորված՝ բազմադեմ ու բազմակողմանի, յուրաքանչյուր սոցիալական շերտի նրկատմամբ ու յուրաքանչյուր իրադրության համար առանձին դրսևորում ունեցած, զգույշ ու պրակտիկ քաղաքականությունից անցնում առավել անսքող ու «շղաձիգ», առավել

<sup>153</sup> نصرالله فلسفی، ج ۳، ص ۷۸

ուղղագիծ քաղաքականութեան: Ըստ «Պատմութեան», ավելի ուշ շրջանում Սեֆևիների քաղաքականութիւնը մեզ ներկայանում է թոթափած զիջումների ու խուսանավումների տակաւիկան, առավել բացահայտ անհանդուրժողական շեշտով՝ հանդեպ այլակրոն համայնքները: Հենց այս տենդենցն է նկատում ու ընդգծում Դավրիժեցին, արձանագրելով արդեն դարակեսին հայ գաղթականութեան վիճակի տխուր նկարագիրը<sup>154</sup>: Այդ տենդենցն էլ հետագայում որակ դարձավ ու գաղութը կանգնեցրեց ծանր կացութեան առջև<sup>155</sup>: Անշուշտ, այս պրոցեսի հիմքում ընկած էին և Սեֆեան հարստութեան բարձմանը նախորդող՝ Իրանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական դրութեան որակական փոփոխութիւնները և ոչ թե լոկ առանձին շահերի սուբյեկտիվ վերաբերմունքը, ինչպես գտնում են որոշ հեղինակներ, այդ թվում և Դավրիժեցին:

Սեֆևիների քաղաքականութեան նոր ուղղութեան ցայտուն արտահայտութիւնը եղավ մեկուսացման պրակտիկան՝ կիրառված մասնավորապես 1650-ական թվականներին: Եթե կրոնափոխութեան պարտադրանքը, որի մասին վերևում խոսվեց, ընդհանուր երևույթ է դիտված, ապա այլակրոնների մեկուսացումը մահմեդականներից, դատելով պատմիչի հիշատակած տարեթիւերից, հատուկ է եղել շահ Արբաս Բ-ի թագավորութեան շրջանին: Ընդ որում, այն եղել է համատարած և հորձանքի մեջ է առել անգամ՝ դարասկզբից բավականին արտոնութիւններ վայելած սպահանաբնակ հայերին: Դրա վկայութիւնն է 1655—1656 թթ. իշխանութիւնների կողմից մեծ թվով սպահանցիների բռնի տեղափոխութիւնն իրենց բնակավայրից Զայենդեռուդ գետի մյուս ափը: Տեղա-

<sup>154</sup> Դավրիժեցի, էջ 69—70...

<sup>155</sup> Խաչատուր Զուղայեցի իբրև ականատես վկայում է XVIII դ. առաջին կեսին իրանահայ համայնքի դժվարին կացութեան մասին: Նա մասնավորապես նշում է նոր Զուղայի անշքանալն ու նրա վաճառականների վիճակը, որոնք «զբիրակերպ նեղութեան... կրեալք, փախեան ամենեքեան... ոմանք ի Հնդկս, և այլք ոմանք յայլ վայրս աշխարհաց զետեղ կալեալ բնակեցան» (Խաչատուր Զուղայեցի, էջ 102):

հանումը պատճառարանված էր նրանով, որ հայերը գինի են պատրաստում ու գործածում և դրանով գինեմոլության մղում նաև մահմեդականներին:

Հայտնի է, որ շարիաթը մահմեդականներին արգելում է գինու գործածությունը, այն համարելով սրբապղծություն: Սակայն, ըստ երևույթին, մահմեդականները թերացել են իրենց մարգարեի այս պատգամի կատարման մեջ<sup>156</sup>, և սեֆյան շահերի կողմից պարբերաբար միջոցներ են ձեռնարկվել դրա դեմ, թեև խախտումը կատարվել է նաև իրենց իսկ՝ շահերի, կողմից<sup>157</sup>: Շահ Աբբաս Բ-ն ևս հրաման է տալիս գինին արգելելու, մասնավորապես մայրաքաղաքում նրա գործածությունը կանխելու մասին<sup>158</sup>, Եվ քանի որ դա լինում է դարձյալ ապարդյուն, իշխանության ներկայացուցիչները ձեռնարկման անհաջողության պատճառը համարում են սպահանաբնակ հայերին, որոնք ազատորեն գինի էին գործածում, և որոնց հարևանությամբ մահմեդականների համար «անհնար» էր հեռու մնալ այդ դայթակղիչ հանցանքից: Ուստի, անհապաղ միջոցներ են ձեռնարկվում հայերին արտաքսելու Սպահանից: Դավրիժեցիին իրավացիորեն ընդգծում է, որ գինու հարցը պատրվակ էր. Շամսաբադ կոչված թաղամասը, որտեղից հայերը արտաքսվեցին, բնակեցվել էր մեծ թվով մահմեդականներով, որոնք «սկսան հարստահարել զղաշտեցի քրիստոնեայսն, զի արտաքսեսցեն զնոսա ի տեղոշէն, որպեսզի ինքեանց ընդարձակութիւն լի-

<sup>156</sup> Շարդինի վկայությամբ, շնայած շարիաթի օրենքին, գրեթե բոլոր իրանցիները գինի էին խմում (۲۷۹—۲۷۸ ص ۴ ج ۱) (سياحتنامه شاردن):

<sup>157</sup> Շահ Քահմասպը իր թագավորության երրորդ տասնամյակում միայն ձեռնամուխ եղավ շարիաթի այս կետի կատարմանը և, ի նշան զղջման, հրամայեց գինի խմող սալատականներից մի քանիսին կախաղան բարձրացնել: Իսկ շահ Աբբաս Ա-ն ոչ միայն չէր խորշում գինի խմելուց, այլև այն դարձրել էր քրիստոնեյաների նկատմամբ համակրանք արտահայտելու ձևերից մեկը: Չնայժ դրան, 1620 թ. նա հրաման է արձակում գինին արգելելու վերաբերյալ, որով խստագույն պատիժ էր սահմանվում գինու պատրաստման և գործածության համար (تصريح الله ص ۳ ج ۳ ص ۲۶۶):

<sup>158</sup> Դավրիժեցի, էջ 442—443, հմմտ. Ջաֆարիա Ագուլեցի, էջ 41:

ցի»<sup>159</sup>, քանի որ «ոչ բաւէր տեղին տանել զամենեսին»: Այդ էր պատճառը, որ «բազում բանս ամբաստանութեան ասէին» դաշտեցիներէ<sup>160</sup> հասցեին. և դրանցից ամենաարդունավետը եղավ գինու «գործը»: Այն բանից հետո, երբ շահին կարողացան համոզել «հայոց հանցանքը», հրաման արձակվեց, «թէ ով ոք գինարբու ազգք են, ելեալք բաժանեսցեն ի մահ-մետականաց և գնացեալ յեզր քաղաքին որիչ բնակեսցին»<sup>161</sup>: Տեղահանումը կատարվում է մաս-մաս. նախ հեռացնում են դաշտեցիներին, ապա երևանցիներին ու մյուս խմբերին: Դավրիժեցիին «Պատմության» մի ընդարձակ գրքով մանրամասնությամբ պատմում է այդ մասին<sup>162</sup>, ընդ որում, դժգոհություն հայտնելով, որ հայերի մի մասը բողոք բարձրացրեց և չէր հնազանդվում, դրա համար հնթարկվելով բռնությունների<sup>163</sup>, ի վերջո իշխանությունների հաջողվում է իրականացնել իրենց որոշումը, և սպահանարնակ հայերը, լքելով իրենց բնակատեղին, մի մասը Զուղայում ու Գեբրաբադում տուն են վարձում, մյուսները՝ հաստատվում Զուղային մոտ տարածքում, կառուցելով նոր տներ:

Անշուշտ, այդ ձեռնարկը, որի հիմնական նպատակն էր վերջ տալ Սպահանում մահմեդականների և այլակրոնների միատեղ բնակությանը, շուտեց և չէր կարող լուծել գինու արգելման հարցը, և շարիաթի այս օրենքը շարունակում էր խախտվել<sup>164</sup>:

Նշենք, որ հայերը միայնակ չէին: 1657 և 1659 թթ. իշխանությունների կողմից նույնպիսի պահանջ ներկայացվեց գեբրեբրին և հրեաներին<sup>165</sup>, մի հանգամանք, որ վկայում

<sup>159</sup> Դավրիժեցի, էջ 448:

<sup>160</sup> Նկատի են առնվում Գողթն գավառի Դաշտ գյուղից գաղթածները:

<sup>161</sup> Դավրիժեցի, էջ 449—450:

<sup>162</sup> Նույն տեղում, գլ. 19 (էջ 442—455): Այդ տեղափոխության վերաբերյալ Աբբաս Բ-ի հրովարտակի թարգմանությունը տալիս է Ն. Հեյ-Նով-հանյանցը (նշվ. աշխ., հ. 1, էջ 84—86):

<sup>163</sup> Դավրիժեցի, էջ 451:

<sup>164</sup> Տե՛ս Մ. Թաղիադյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 176: P. Sykes, նշվ. աշխ., էջ 211, 217, ص ۲۸۷, 'ایران...'

<sup>165</sup> Դավրիժեցի, էջ 457—461:

է մայրաքաղաքի և նրա շրջակայքի այլակրոններին մահմեդականներին մեկուսացնելու հետևողական քաղաքականութեան մասին:

Նման փաստերը վկայում են, որ Իրանում այլակրոն փոքրամասնութիւնների նկատմամբ անհանդուրժողականութիւնն ու հալածանքը շահ Աբբաս Բ-ից սկսած ընդունում են առավել ընդգծված երանգ:

«Պատմութեան»՝ իրանաբնակ փոքրամասնութիւնների վիճակը բացահայտող տվյալների գերակշռող մասը, բնականաբար, վերաբերում է հայ համայնքին, որի նկարագիրը մեկ անգամ ևս հավաստում է այն իրողութիւնը, որ համայնքը մշտապես հանդես է եկել անդուլ պայքարով՝ հանուն ինքնապահպանման: Այդ պայքարի հիմքում ընկած է եղել ինչպես ուղղակի դիմադրութիւնն ընդդէմ կրոնափոխութեան ու ձուլման, այնպես էլ մշակույթի զարգացումը, հոգևոր գանձերի ստեղծումը, Իրանում կատարած նրա հասարակական-տնտեսական դերը:

Շփվելով եվրոպական բազմաթիվ երկրների հետ, հայ համայնքի նեկայացուցիչները, մասնավորապես ջուղայեցիները, հաղորդակից էին լինում այդ երկրների մշակույթին ու գիտութեան նվաճումներին և նպաստում դրանք Իրանում ներդնելու գործին:

Իրանահայ մշակույթի խոշոր կենտրոն էր Նոր Զուղան, որը նշանակալից դեր էր կատարում և պարսից իրականութեան մեջ: Ընդհանուր ճանաչում ունեւր Խաչատուր Կեսարացու կողմից Նոր Զուղայում հիմնված դպրոցը, որն առանձնահատուկ դեր է ունեցել «արտաքին» գիտութիւնների դասավանդման և մեծ թվով շնորհալի մտավորականների, այդ թվում՝ մատենագիրների (ինչպես Խաչատուր Զուղայեցու) պատրաստման գործում:

Դավրիժեցու վկայութեամբ հիշյալ դպրոցում կազմակերպում էին նաև բնավեճեր պարսիկ մտավորականների հետ<sup>166</sup>, Ստեղծված պայմաններում, երբ անհրաժեշտութիւն

<sup>166</sup> Նույն տեղում, էջ 403:

էր դարձել պայքարը մի կողմից կաթոլիկ քարոզիչներին, մյուս կողմից պարսից իշխանութիւններին կրօնափոխման քաղաքականութեան դեմ, առանձին նշանակութիւն ունենալով կրօնական վեճերը, որոնք միջոց էին հիմնավորելու կրօնական սկզբունքները: Այդ հակաճառութիւնները տարվում էին ոչ միայն բանավոր. տպագրվում էին մեծ թվով կրօնական գրքեր: 1636 թ. նոր Զուղայում հիմնվում է տպարան նույն Կեսարացու ջանքերով, որը Դավրիժեցու հաղորդմամբ «յուրով հարանց վարք և ժամագիրք տպագրեաց»<sup>167</sup>: Դա մեծ նվաճում էր իրանահայ համայնքի կյանքում և առաջինն էր Իրանում<sup>168</sup>: Այստեղ տպագրված գրքերի թվում են «Պարզատումար»-ը (1647 թ.), հայ եկեղեցու դիրքերը պաշտպանող դավանաբանական այնպիսի գրքեր, ինչպիսիք են Հովհաննես Մրթուզի «Գիրք պատմութեան վիճաբանութեան առ շահն Սլէման Պարսից», Ստեփանոս եպիսկոպոսի «Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց» և այլն<sup>169</sup>:

Սպահանում, նոր Զուղայում և այլուր նաև ընդօրինակվում էին մեծ թվով ձեռագրեր ու տպագիր գրքեր՝ կրօնական, պատմական և այլ բովանդակութեամբ<sup>170</sup>:

XVII դ. նոր Զուղան աչքի էր ընկնում արհեստներով և զարգացած արվեստով, մասնավորապես որմնանկարչութեամբ ու մանրանկարչութեամբ: Այդ ասպարեզում հայ վարպետների աշխատանքները մինչև օրս էլ ուշադրութիւն են գրավում և հիացմունք պատճառում: Նրանց թվում հրոշակված է եղել հատկապես Մինաս նկարիչը (Մինաս ծաղ-

<sup>167</sup> Նույն տեղում, էջ 402:

<sup>168</sup> Պարսկական առաջին տպարանը սկսել է գործել միայն XVIII դ. վերջին: Շարդենը հաղորդում է, որ Իրանի արքունիքում մի քանի անգամ իրեն առաջարկել են Սպահանում տպարան հիմնել, սակայն գործնականում այդ ուղղութեամբ ոչինչ չի արվել (اسیاحتنامہ شاردن، ج ۱۰، ص ۸۸):

<sup>169</sup> Մեզ են հասել նաև այդ թեմայով ձեռագրեր: Ահա դրանցից մեկի հիշատակարանը. «...Արդ գրուեցաւ սա որ է գիր հակաճառութեան ընդդէմ թերահաւատից վասն աստուածասիրութեան ի քաղաքն Շոշ, որ կոչի Սըֆայհուն...» (Մատենադարան, ձեռ. № 672, էջ 91 բ):

<sup>170</sup> Նույն տեղում, ձեռ. № № 2370, 34, 2271, 1889 և այլն:

կող), որի մասին Դավրիժեցին մանրամասն տեղեկություններ է տալիս: Հալեպում եվրոպացի նկարչի մոտ ուսանելուց հետո Մինասը տեղափոխվում է Նոր Զուղա: Նրա վրձինն են պատկանում հայ խոջանների ապարանքների, ինչպես նաև պալատի նկարազարդումները: Մինասն ունեցել է բազմաթիվ աշակերտներ, որոնք հմտացել են ինչպես բնանկարչության, այնպես էլ դիմանկարչության ասպարեզում<sup>171</sup>: Պատմիչի հաղորդմամբ Մինասը եղել է նաև բժիշկ և դեղագործ<sup>172</sup>: Անվանի նկարիչ էր նաև Հակոբջանը<sup>173</sup>, որի (ինչպես նաև Մինասի) աշխատանքները ցարդ պահպանվում են Նոր Զուղայում:

Հայ շնորհալի արհեստավորներից շատերը հրավիրվում էին արքունիք և շահի ցուցումով զբաղվում իրենց արհեստի ուսուցմամբ: Հետաքրքիր է, որ նրանց թվում կային նաև հողեկորականներ: Դավրիժեցու հաղորդմամբ շահ Աբբաս Ա-ի պատվերով Մովսես վարդապետը, որը Երուսաղեմում ձեռք էր բերել մոմ սպիտակեցնելու գաղտնիքը, ութ ամիս շարունակ Սպահանում Թիլիմ-խանի այգում, ուսուցանում է շահի առաջադրած մարդկանց (Ֆարուխ, Ղարըղա, Բեհզադ) այդ արհեստը<sup>174</sup>, դրա փոխարեն ստանալով էջմիածնի լուսարարության պաշտոնը<sup>175</sup>:

Այդ կերպ էր ընթանում պայքարը սեֆյան իշխանությունների ձուլման քաղաքականության դեմ: Այդ պայքարի մի մասն էր նաև Հայաստանում կատարվող հսկայական նորոգությունը, կրթական գործի կազմակերպումը, անապատների, դպրատների, մշակութային օջախների հիմնումը, որոնց մանրամասն պատկերը գտնում ենք Դավրիժեցու «Պատմության» մեջ<sup>176</sup>:

<sup>171</sup> Դավրիժեցի, էջ 403—412, հմմտ. Ա. Երեմյան, Նոր Զուղայի ժէզարու որմնանկարչական հուշարձանը, Նյու-Յորք, 1942, էջ 28, 30—31...

<sup>172</sup> Դավրիժեցի, էջ 413:

<sup>173</sup> Նույն տեղում, էջ 402:

<sup>174</sup> Նույն տեղում, էջ 233, 299—301:

<sup>175</sup> Նույն տեղում, էջ 302: Այդ մասին շահի հրովարտակը՝ տե՛ս ՄՊՀ, պր. 2, վավ. 18:

<sup>176</sup> Դավրիժեցի, էջ 326, 338, 353, 355...

«ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՒՈՐԱՑՆ»

Դավրիժեցու «Պատմութիւնն» ընդգրկում է նաև սեֆյան շահերի տոհմաբանութիւնը՝ հակիրճ տվյալներով: Գրված լինելով, ըստ երևութին, սակավաթիվ տվյալների հիման վրա, այն ուշագրավ փաստերի հետ մեկտեղ պարունակում է և որոշ ոչ ճիշտ տեղեկութիւններ: Ստորև բերում ենք «Ազգաբանութիւն» մեջ, ինչպես նաև «Պատմութիւն» առանձին էջերում տեղ գտած տվյալները պարսից սերնդաբանութիւն վերաբերյալ:

«Պատմութիւն» հիշյալ հատվածում խոսվում է Սեֆյան պետութիւն հիմնադիր շահ Իսմայիլ Ա-ի նախորդներից շեյխ Հեյդարի և շեյխ Սեֆու մասին<sup>1</sup>: Այստեղ սխալմամբ Հեյդարը՝ Իսմայիլի հայրը, ներկայացված է իբրև շեյխ Սեֆու որդին: Մինչդեռ Հեյդարի հայրը եղել է Ջունեյդը, որը Սեֆու շորորդ սերնդից էր<sup>2</sup>:

«Ազգաբանութիւն» մեջ նշված է, որ Իսմայիլի մայրը Ջհանշահի թոռան՝ Յաղուբ թագավորի, քույրն էր<sup>3</sup>: Այս տեղեկութիւնը ևս անճշտութիւն է պարունակում: Յաղուբը՝ Ուզուն Հասանի (Հասան-բեկ) որդին, Աղ-կոյունլու թուրք-մենական միավորումից էր, իսկ Ջհանշահը՝ Կարա-կոյունլու<sup>4</sup>: Իսմայիլի պապը՝ Ջունեյդը, մեծ քանակութեամբ հետևորդներ ունենալու պատճառով Ջհանշահի կողմից աքսորվում է իր

<sup>1</sup> Դավրիժեցի, էջ 584:

<sup>2</sup> Այսպես՝ շեյխ Սեֆի-էդ-դինի որդին էր Սադր-ադ-դին Մուան, ապա հաջորդաբար՝ Աշահիր-շեյխ-շահ, Սուլթան Իբրահիմ, Ջունեյդ, Հեյդար, Իսմայիլ (ص 1 ج، اسكندر منشى):

<sup>3</sup> Դավրիժեցի, էջ 584:

<sup>4</sup> ص 19 ج، اسكندر منشى հաշտուր Ջուդայեցի, էջ 352:

հայրենի Արդաբիլից, որից հետո, անցնելով Դիարբեքի՝ Ուղուն Հասանի մոտ, լավ ընդունելութիւն է գտնում, ապա ամուսնանում վերջինիս քրոջ հետ: Իսմայիլի հայրը՝ Հեյդարը, ժառանգելով Աղ-կոյունլունների ռազմական ոգին, նույնպես վայելում է Ուղուն Հասանի համակրանքը, որն իր դատրե-րից մեկին կնության է տալիս նրան<sup>5</sup>:

Դավրիժեցու երկում, ինչպես նաև հայկական այլ աղբյուրներում տեղ է գտել Յաղուբի, Հեյդարի և նրա կնոջ սպանության պատմութիւնը, ըստ որի Հեյդարը և նրա կինը, թագավորութիւնը ձեռք բերելու նպատակով, խաբեութեամբ թունավորում են Յաղուբին, իրենք ևս դառնալով իրենց դավի գոհը<sup>6</sup>:

Սակայն իսբանդար Մունշու հաղորդմամբ Հեյդարը սպանվել է թաբարսարանի մոտ՝ շիրվանշահ Իբն Խալիլի դեմ կռոււմ<sup>7</sup>: Այստեղ էլ թաղվել է, իսկ հետագայում՝ 22 տարի անց, նրա դիակը իսմայիլ Ա-ի հրամանով տեղափոխել են Արդաբիլ:

Սեֆեհիների սերնդաբանության մեջ մութ հարցերից են իսմայիլ Ա-ի թագավորութեանը նախորդող իրադարձութիւնները: Ըստ Դավրիժեցու և մի շարք այլ աղբյուրների, Հեյդարի և նրա կնոջ մահվանից հետո նրանց որդուն՝ մանուկ իսմայիլին, փախցնում են Աղթամար, որտեղ նա մնում է մինչև իշխանութեան հասնելը<sup>8</sup>: Դենիսոն Ռոսի հաղորդմամբ հետագայում իսմայիլն ապաստան է գտնում Գիլանի տիրակալ Միրզա Ալու մոտ<sup>9</sup>: Մունշու և այլոց տվյալներով Հեյդարի մահվանից հետո Յաղուբը իր թագավորութիւնը կորցնելուց երկյուղած, նրա երեք որդիներին (Իսմայիլ, Ալի

<sup>5</sup> P. Sykes, նշվ. աշխ., էջ 158—159.

<sup>6</sup> Դավրիժեցի, էջ 584.

<sup>7</sup> Դ 1—2. ص 1 ج 1 اسكندر منشى

<sup>8</sup> Դավրիժեցի, էջ 585, Խաչատուր Զուլայեցի, էջ 98, հմտ. „A narrative of Italian Travels in Persia in the XV, XVI centuries“ (Hakluyt series I, vol. 49, L., 1873, p. 101—103).

<sup>9</sup> E. Denison Ross, The early years of Shah Ismail, founder of the Safawi dynasty („Journal of the Royal Asiatic Society“, L., 1896, p. 271).

և Իբրահիմ) բանտարկել է տալիս Յարսում գտնվող ամ-  
րոցում՝ Իսթախրում<sup>10</sup>: Յաղուբին հաջորդած Ռոստոմ-բեկն  
ազատում է Իսթախրի բանտարկյալ արքայազններին և փո-  
խադրել տալիս Քավրիզ: Սակայն ինչ-ինչ հանգամանքներում  
Սուլթան Ալին սպանվում է, Իբրահիմ-Միրզան նույնպես  
մեռնում է, և միակ թագաժառանգը մնում է Իսմայիլը:

Բոլոր դեպքերում ակնհայտ է, որ Իսմայիլը մանկուց  
հեռացված է եղել իր նախնիների «օրրանից» և ապա (դեռևս  
պատանի) վերադարձել է ու սկսել պայքարը թագավորու-  
թյան համար:

Իսմայիլ Ա-ն թագավորում է մինչև 1524 թ. (սկսած  
1502-ից): Դավրիժեցու ժամանակագրության մեջ սխալմամբ  
նշված է 1526 թ.<sup>11</sup>, որի հետ էլ կապվում է շահ Քահմասպի  
թագավորության սկիզբը ցույց տվող թվականի անճշտու-  
թյունը: Շահ Քահմասպը հաջորդել է Իսմայիլ Ա-ին՝ ան-  
միջապես նրա մահվանից հետո:

Քահմասպի թագավորությունը, որ շարունակվել է ավելի  
քան կես դար, ամենատևականն էր Սեֆեհիների պատմու-  
թյան մեջ: Նրա մահվան տարեթիվը ևս զանազան աղբյուր-  
ներում տարբեր է. միայն Դավրիժեցու երկում երեք թվական  
է նշված՝ 1573, 1575, 1576<sup>12</sup>: Ստույգը վերջին թվականն է:

Իսմայիլ Բ-ն (1576—1578), որն աչքի էր ընկնում  
արտակարգ դաժանությունք, իր թագավորությունը հիմ-  
նավոր դարձնելու համար ոչնչացնում է թագի մյուս բոլոր  
հավակնորդներին և իշխանությունը խոչընդոտող անձանց՝  
սկսած իր եղբայրներից<sup>13</sup> և մյուս հարազատներից մինչև  
բազմաթիվ պալատականները և էմիրները: Այդ արյունոտ  
քաղաքականության հետևանքը լինում է այն, որ թագավորու-  
թյան երկրորդ տարին չլրացած ինքը՝ քենոտ շահը, դառնում է

<sup>10</sup> اسکندر منشی، ج ۱، ص ۲۱

<sup>11</sup> Դավրիժեցի, էջ 630, հմտ. Զաֆարիա Փանաֆեղի, հ. Ա, էջ 9,  
«Մանր ժամանակագրություններ», հ. II, էջ 427:

<sup>12</sup> Դավրիժեցի, էջ 606, 631:

<sup>13</sup> Հ. Մարեցու և Խ. Ջուղայեցու հաղորդմամբ նա սպանել է իր յոթ  
երբայրներին (Դավրիժեցի, էջ 606), Խաչատուր Ջուղայեցի, էջ 100):

դավադրութեան զոհ և մեռնում հանելուկային մահով<sup>14</sup>,  
Իսմայիլ Բ-ի մահւման թվականը Դավրիժեցու երկում 1576  
է 1578-ի փոխարեն:

1578—1587 թթ. Սեֆեհների «աստծո սովերը» Թահ-  
մասպի կույր, տկար որդին էր՝ Սուլթան Մուհամմադ Խուրա-  
բանդին. «անարի և վատթար ի գործ թագաւորութեան և  
պակասեալ ի լուսոյ ևս»<sup>15</sup>, Նա դահ է բարձրանում զըզըլբաշ  
ցեղերի առաջնորդների միահամուռ որոշմամբ: Այսօրինակ  
զահակալի ընտրութեան հարցում նման ներդաշնակ համա-  
ձայնութիւնը պատահական չէր: Դրա ետևում ապաշնորհ ու  
թուլակամ շահին իրենց կամքին ենթարկելու և գործնակա-  
նում երկրի ղեկավարումն իրենց ձեռքը վերցնելու էմիրների  
ոնալ հեռանկարն էր, որը և իրականութիւնն դարձավ:

Սուլթան Մուհամմադ Խուրաբանդեի օրոք զահի անկաս-  
կած թեկնածուն նրա ավագ որդին՝ Համզա-Միրզան էր<sup>16</sup>:  
Սակայն խելացի և ձեռներեց թագաժառանգը, ենթարկվելով  
չգրված օրենքին, դարձավ զահի ու թագի հերթական զոհը<sup>17</sup>:

Համզա-Միրզայի մահից հետո ուժեղանում են երկ-  
պառակութիւնները զըզըլբաշ ցեղերի առանձին խմբավո-  
րումների միջև, որոնք պայքար էին մղում ինչպես միմյանց,  
այնպես էլ կենտրոնական իշխանութեան դեմ: էմիրների մի  
խումբ կողմնակից էր զահի համար Մուհամմադ Խուրա-  
բանդեի որդիներից Աբու-Թալիբ-Միրզայի թեկնածութեանը:  
Մի այլ խմբավորում, որ կազմում էին շամլու և ուսթաջլու  
ցեղերը, տարիներ ի վեր ջանում էր զահ բարձրացնել շահի  
կրտսեր (դեռևս անչափահաս) որդուն՝ Աբբաս-Միրզային:  
Վերջինիս խնամակալն էր աղդեցիկ քաղաքական գործիչ  
Մուրշիդ-ղուլի-խանը, որի նախաձեռնութեամբ էլ դեռևս

<sup>14</sup> Դավրիժեցի, էջ 606:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 607:

<sup>16</sup> Հայկական աղբյուրներում՝ Ամիր-Համզա:

<sup>17</sup> Նրա սպանութիւնը, որ կազմակերպել էին բարձրաստիճան էմիր-  
ները, կատարվեց 1585/6 թ. Գանջալում, իր սպիրիչի՝ Խուրավերդիի միջոցով  
(Խոշատուր Զուլայեցի, էջ 124):

1581 թ. Խորասանի շամլու և ութաշու ցեղերի առաջնորդները ապստամբութիւն բարձրացնելով, փոքրահասակ Աբբաս-Միրզային շահ հայտարարեցին և սկսեցին նրա անունից կառավարել Խորասանը<sup>18</sup>: Այս փաստն է ընկած հայկական աղբյուրներից շատերի հիմքում, որոնք շահ Աբբաս Ա-ի թագավորութեան սկիզբը համարում են 1580 թ.<sup>19</sup>: Հայկական աղբյուրների հաղորդած այս տեղեկութեան անճշտութեան մասին պետք է վերապահութեամբ խոսել, քանի որ նրանցում շեշտվում է Աբբասի թագավորութեան վայրը (Մաշադ), որը համապատասխանում է իրականութեանը<sup>20</sup>:

Խորասանի հիշյալ խմբավորումն էլ դարձյալ Մուրշիդ-ղուլի-խանի գլխավորութեամբ 1587 թ. մայրաքաղաքում՝ Ղազվինում, գրավեց իշխանութիւնը և գահ նստեցրեց իր սանին՝ 16-ամյա Աբբաս-Միրզային, որը և պատմութեան մեջ մտավ շահ Աբբաս Մեծ անվամբ: Ըստ «Պատմութեան» Մուհամմադ Խուրամանդին, ընկճված իր որդուն՝ Ամիր-Համ-զայի սպանութեամբ և Թուրքիայի դեմ պատերազմներով, ինքն է Խորասանից բերում Աբբասին և թագը հանձնում նրան<sup>21</sup>:

Աբբաս Ա-ն թագավորեց 42 տարի: Նա մեռավ Աշրաֆ քաղաքում (այժմ՝ Բեհշահ) 1629 թ. հունվարի 7-ին<sup>22</sup> (ըստ Իսքանդար Մունշու հունվարի 19-ին): Որոշ հեղինակների մոտ կարելի է հանդիպել 1628 թ.: Սակայն «Պատմութեան» տվյալն ստույգ է, քանի որ այն համընկնում է (մի քանի

<sup>18</sup> اسکندر منشی، ج 1 ص ۲۷۹-۲۸۸

<sup>19</sup> Դավրիժեցի, էջ 631, «Մանր ժամանակագրութիւններ», հ. 11, էջ 428, 482, Խաչատուր Զուղայեցի, էջ 101 և այլն:

<sup>20</sup> Այսպես՝ «Դարձեալ ի սոյն թուին (1580) մեծ և առաջին Շահ-արասն ի Մաշատումն ի թախտ նստաւ» (Դավրիժեցի, էջ 631, հմմտ. Խաչատուր Զուղայեցի, էջ 101...), (Ջաքարիա Քանաքեռցին (հ. Ա, էջ 14) չի նշում Մաշադը):

<sup>21</sup> Դավրիժեցի, էջ 613, հմմտ. Խաչատուր Զուղայեցի, էջ 125:

<sup>22</sup> Դավրիժեցի, էջ 308, 640:

օրվա տարբերությունը) Մունշու, Նայիմայի, հայ ժամանակագիրների և այլոց հաղորդումներին<sup>23</sup>:

Շահ Աբբաս Ա-ին, իր կողմից համաձայն, փոխարինեց նրա թոռը՝ Սեֆի Ա-ն: Որդիներից ոչ մեկը չարժանացավ զահին. Աբբասը ժամանակին հոգացել էր վերացնելու նրանց կողմից իշխանությունը գրավելու հնարավոր վտանգը: «...Աբբասյ Շահարաս զորդիս իւր զոմանս սպան՝ և զոմանս կուրացոյց, վասն երկիւղի՝ զի մի գուցէ թագաւորեսցեն իշխանքն...»,—գրում է Դավրիժեցիին<sup>24</sup>, Սեֆի Ա-ն իշխեց մինչև 1642 թ. մայիսը<sup>25</sup>: Նրա մահվանից մի քանի օր անց Սեֆևիների գահն զբաղեցնում է նրա որդին՝ Աբբաս Բ-ն<sup>26</sup>, որը թագավորում է 24 տարի (մահացել է 1666 թ. սեպտեմբերին)<sup>27</sup>: Ապա գահակալում է նրա որդին՝ Սուլեյմանը, որին, ժամանակակիցների վկայությամբ, նախապես անվանել են Սեֆի (Բ): Սակայն շահը «հանապազ հիւանդ և ցաւազար մարմնով կայր...»<sup>28</sup>: Աստղագուշակներն ու հմայողները զրա պատճառը տեսնում են նրա «ոչ բախտավոր» անվան և թագադրության շար օրվա մեջ: Ուստի ընտրում են «բախտավոր» օր և կրկին թագադրելով, շահին վերանվանում Սուլեյման:

Սրանով ավարտվում են Սեֆևիների տոհմաբանությունը վերաբերյալ «Պատմություն» տվյալները, որոնք, առանձին անճշտություններով հանդերձ, լրացնում և կամ հավաստում են այլ աղբյուրների տեղեկություններն այդ մասին:

<sup>23</sup> ۱۰۷۷ ص ۲، اسکندر منشی، Ա. Սաֆրաստյան, Նշվ. աշխ., հ. Ա, էջ 96, «Մանր ժամանակագրություններ», հ. II, էջ 272, 428, 519 (Ս. Լեն-Պուլի ուսերին թարգմանության մեջ 1629-ի փոխարեն սխալմամբ նշված է 1628: Տե՛ս С. Лэн-Пуль, Мусульманские династии. Пер. с англ., СПб., 1899, стр. 219).

<sup>24</sup> Դավրիժեցի, էջ 308—309:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 644, հմմտ. عباسنامه، ص ۱۰۷۷،

<sup>26</sup> Դավրիժեցի, էջ 644:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 585, 650: Որոշ հեղինակներ սխալմամբ նշում են 1667 թ. (տե՛ս, օրինակ, Р. Dykes, Նշվ. աշխ., էջ 211):

<sup>28</sup> Դավրիժեցի, էջ 650:

## РЕЗЮМЕ

История армянского народа теснейшим образом связана с историей Ирана, которая нашла отражение в армянской историографии, особенно в таком ценном первоисточнике XVII в., как «История» Аракела Даврижеци.

Будучи посвященной истории Армении, она содержит богатый материал и об истории ряда других стран, в частности—Ирана. Не случайно, что в некоторых рукописях этот труд именуется «Историей персидских царей». Необходимость специального иранистского исследования труда Аракела Даврижеци назрела давно, особенно, если иметь в виду слабую изученность данных армянских источников по истории Ирана, важность которых отмечают и иранские историки (Саид Нафиси и др.).

Даврижеци был современником и очевидцем большей части описанных им событий; в этом—исключительная ценность его «Истории». Другая ее часть написана на основе данных очевидцев и непосредственных участников событий, которые он записывал во время своих странствий. Автором использованы и письменные источники—памятные записи рукописей, исторические сочинения, религиозно-догматические труды и т. д.

В научной литературе давно обсуждается вопрос о том, пользовался ли Даврижеци сочинением Искандара Мунши. Основанные на тщательном сличении данных трудов Даврижеци и Мунши факты показывают абсолютную оригинальность «Истории» Даврижеци.

Необходимо подчеркнуть большую ответственность и критический подход, которые проявляет Даврижеци к источникам—как письменным, так и рассказам очевидцев. Особо следует отметить его независимость от официальной иранской точки зрения, что «позволяет нам пользоваться данными Аракела Тебризского для проверки сведений, сообщаемых персидскими источниками» (И. Петрушевский). В свою очередь различные источники—хроники, памятные записи рукописей, архивные документы и т. д.—подтверждают сведения, сообщаемые Даврижеци.

Не следует, однако, забывать, что Даврижеци был духовным лицом, и это не могло не наложить своего

отпечатка на его «Историю», особенно по части мировоззрения автора, его веры в «чудеса», «божественную предопределенность».

«История» написана живым и сочным языком. Несмотря на грабар (древнеармянский язык), автор стремится максимально приблизить свой стиль к армянской народной речи.

Сочинение Даврижеци имело несколько рукописных экземпляров, из которых до нас дошли два.

Текст «Истории» имел три издания: в 1669 г. в Амстердаме, в 1884 и 1896 гг.—Вагаршапате (Эчмиадзин).

Многим исследователям труд Даврижеци известен по французскому переводу М. Броссе, который, однако, имеет ряд недостатков, часто искажающих смысл тех или иных сообщений источника. «История», а также отдельные ее отрывки переведены и на русский язык.

Литература о Даврижеци (статьи или краткие сообщения) охватывает главным образом данные о его жизни, извлеченные из «Истории». Попыток тщательно проанализировать труд и мировоззрение автора было мало. В советский период, в частности в последние годы, заметен более разносторонний подход исследователей к оценке «Истории».

Труд А. Даврижеци охватывает историю первых шести десятилетий XVII в. (1602—1662). Сведения об истории Ирана относятся как к политической, так и социально-экономической жизни. Однако «История» имеет исключительное значение как первоисточник, освещающий в первую очередь политическую историю указанного периода, данные которого помогают выяснить множество вопросов, обойденных персидской историографией. Сопоставление этих данных со сведениями Искандара Мунши, Кятиба Челеби, Мустафы Наима, Ибрагима Печеви, грузинского анонимного автора, Шараф-хана Бидлиси, А. Тер-Ованянца, Григора Даранакци, армянских мелких хроник и других источников, а также с рукописями Матенадарана им. М. Маштоца и Указами сефевидских шахов не только обнаруживает новые данные, сообщаемые Аракемом Даврижеци, но и показывает, что одни и те же события часто описаны разными авторами с совершенно разных точек зрения. В то время, когда турецкие и персидские исто-

риографы, увлеченные панегирикой, стараются восславить победы своих правителей и, наоборот, очернить противника (тем самым искажая исторические факты), Даврижеци дает объективное описание событий, при том имея в виду состояние народных масс.

В исторических событиях важное место занимают развернувшиеся в начале XVII в. военные действия, в частности поход шаха Аббаса I в 1603 г., целью которого было, в основном, отвоевать у Турции Атрпатакан и Закавказье. Этот факт в персидской историографии рассматривается как предприятие, имевшее целью отвоевать у Турции «собственные» территории, «наследственные» земли (Искандар Мунши, Абулгасем Сахаб, Мухаммад Паранг). Тенденция такого оправдания завоеваний шаха Аббаса нашла свое выражение, в частности, в объяснении причин ирано-турецкого противоборства, где игнорируются захватнические устремления самого шаха Аббаса и, более того, делается попытка доказать, что-де его политика была для народов Закавказья спасением. Так, Мухаммад Паранг поход шаха Аббаса в Закавказье описывает под заголовком: «От Тавриза до Шамахи или период спасения Азербайджана и Кавказа». Однако данные «Истории», в которой нашли широкое отражение упомянутые события, вскрывают захватнический характер «освободительных» действий шаха Аббаса и показывают их пагубные последствия для народов Закавказья. Между тем, последние возлагали немало надежд на Сефевидский Иран. Жестокая налоговая политика турецких властей в Закавказье, разруха, голод и т. п. создавали почву для антитурецкого движения в этой части Османской империи и развития здесь иранской ориентации. Даврижеци сообщает богатый материал о часто повторявшихся в первые годы XVII в. массовых бегствах из закавказских стран в Иран. Шах Аббас поддерживал их антитурецкие настроения с целью в случае войны получить их поддержку. Надежды шаха оправдались. Но вот чаяния народов Закавказья не были осуществлены. Характерен в этой связи факт, сообщаемый Аракемом Даврижеци о взаимоотношениях шаха Аббаса и армянского духовенства во время этих событий. Надеясь освободиться от османского гнета,

армянское духовенство также приветствовало победы кызылбашей. Однако их надежды были обмануты: не говоря о разрухе и разорении в ходе военных действий, завладев Ереваном, Шах Аббас потребовал от католиков выплаты всех долгов, «сокровищ, взятых ими займы у османов». «Эти католики из-за долгов бежали и прибегли к помощи шаха, с надеждой, что шах освободит их от кредиторов. Но вот теперь шах сам требует от них долг. Так вот какова помощь шаха, на которого они уповали»,—таков вывод автора «Истории».

Первый этап ирано-турецких войн начала XVII в. завершился захватом Ираном Тавриза, Нахичевана, Джульфы, Еревана, после взятия которого турецкая сторона перешла в контрнаступление. Будучи вынужден отступить, шах Аббас решил одновременно претворить в жизнь намеченную им программу переселения, которое сочеталось с тактикой «выжженной земли». Войскам было приказано, отступая, разрушать все на своем пути и насильственно переселять население районов, расположенных на левом берегу Аракса, в Иран. Это переселение вошло в историю под названием «великого сургуна» и является одной из трагических страниц истории народов Закавказья, в частности, армян. В труде Аракеда Даврижеци большое место уделено этому событию, происшедшему в 1604—1605 гг. Многие стороны его не только не получили надлежащей оценки в научной литературе, но и часто искажаются или находят тенденциозное истолкование.

Хотя Аракед Даврижеци не современник «великого сургуна», но в своем описании он опирается как на данные письменных источников, так и свидетельства очевидцев и непосредственных участников событий. Ценным является и то, что автор, будучи отделен от упомянутого переселения определенным временем, имел возможность взглянуть на него в исторической перспективе и оценить его последствия в свои дни.

Вопреки ошибочным мнениям, что мысль о переселении возникла у шаха Аббаса лишь во время отступления из Армении (А. Аракелян и др.), сообщения Даврижеци и других авторов показывают, что оно было запланировано заранее и обусловлено как страте-

гическим, так и экономическим и политическим мотивами. С помощью данных «Истории» и других источников вносится ясность в ставшие объектом разногласий в исторической литературе такие вопросы, как: дата переселения; приблизительное число переселенцев; факты о помощи, оказанной шахом Аббасом джюльфинцам во время переселения; сопротивление переселенцев, факты их бегства и т. д. Нельзя согласиться с оценкой, данной упомянутому событию рядом авторов (Искандар Мунши, Тавернье, Перси Сайкс, Абулгасем Сахаб), по мнению которых насильственное переселение с родины на чужбину было «благодеением» шаха Аббаса в отношении народов Закавказья, и особенно армян, которые, дескать, переселившись в Иран, получили возможность развивать в безопасности свое хозяйство и заняться торговлей и ремеслами. Даврижеци свидетельствует о бедственных последствиях, которые имел «великий сургун» для переселяемых народов. Особенно тяжелыми были они для армянского народа. Не говоря о всех последствиях—разрушение и опустошение страны, оскудение материальных и производительных сил, разрежение населения страны, ослабление оборонспособности и сопротивляемости нашим захватчиков и т. д.—политика «сургуна», какие бы цели ни преследовал шах Аббас с точки зрения Сефевидского Ирана (главным образом: подчинение интересам Ирана армянского купечества Джульфы и его капиталов, стимулирование развития в Иране торговли, ремесел, земледелия и т. д.), стоило самим переселенцам огромных жертв, лишений и страданий. Помощью и льготами, предоставленными шахом Аббасом, пользовались лишь немногие. Оказавшись под иранским игмом, огромные массы переселенцев подпали под гнет феодалов, жили в нищете и бесправии.

После осуществления своего стратегического плана—предотвращения продвижения противника—шах Аббас приступил к дальнейшим завоеваниям, захватив Ширван, Гянджу, Шамахи и т. д. Таким образом, одержав полную победу в ирано-турецких войнах 1603—1607 гг., Иран завладел Арменией, Восточной Грузией, Азербайджаном. Однако его власть здесь была непрочной, и в 1614 г. шах Аббас предпринял поход в Гру-

